**Д. АДИКЯН – Перевод риторических конструкций как выражение межкультурного взаимодействия.** – Риторические конструкции являются неотъемлемой частью произведения искусства и языка, в целом. Они используются во всех языках, но не всегда сохраняют ту же форму при переходе с одного языка на другой. Иногда слова автора могут быть выражены намного точнее, только в случае если они не переведены дословно. При этом условии оригинальная риторическая конструкция может быть сохранена. Во всех случаях во время перевода риторических конструкций имеет место межкультурное взаимодействие со всеми возможными последствиями.

**Ключевые слова:** риторическая конструкция, риторический вопрос, риторическое восклицание, риторическое примечание, межкультурное взаимодействие, эквивалент

**D. ADIKYAN – The Translation of Rhetoric Clauses as an Expression of Intercultural Interplay.** – The rhetoric clauses are an inseparable part of the workart and the language, in general. They are available in almost all languages but not always can be maintained in the same form while transferring from language to language. Sometimes the author's words may be more accurate if the translator uses non-literal, but equivalent translation. The original clause, thus, can be preserved in the same way, expressed in another clause or even with a neutral medium. In all cases, the translation of rhetoric clauses brings about a cross-cultural interaction with all its possible consequences.

**Key words:** rhetoric clause, rhetoric question, rhetoric exclamation, rhetoric application, cross-cultural interaction, equivalent

**Լորետա ԲԱԶԻԿՅԱՆ**

Երևանի Վ. Բյուտովի անվան պետական  
լեզվահասարակագիրական համալսարան

**ՍԱՍՏԿԱԿԱՆ ԱՆԴՐԱՇԱՐՁ ԿԱՌՈՒՅՑՑՆԵՐԻ  
ԿԱՌՈՒՅՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ  
ՀԱՅՑԱԿԵՐՊԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ  
(ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒՅՑԱՄԲ)**

Սույն հեղազուրության մեջ քննության են առնվում անգլերենի սաստկական դերանունները, որոնք դիրքարկվում են անդրադարձ դերանունների շրջանակում: Կառուցվածքային և իմաստային-գործարանական վերլուծությունների միջոցով վեր են հանվում այն ընդհանրություններն ու դարբերությունները, որոնք առկա են անգլերենի վերոնշյալ դերանունների և դրանց հայերեն համարժեքների միջև: Կառուցվածքային դեսակելիք անգլերենի դերանունների անդրադարձ դեսակին հայերենում համարժեք է կամ -վ ածանցով բայց, կամ առանց -վ ածանցի բայց և անձնական դերանվան հոլովական ծևերը (**ինձ, քեզ, իրեն, մեզ, ծեզ**): Անգլերենի շեշտող դերանունները արդահայրվում են **ինքս, ինքդ, ինքն, ինքներս, ինքներդ, ինքներն կամ իրենք** անձնական դերանունների սաստկական ենթադեսակի միջոցով: Իմաստային-գործարանական վերլուծությունը թույլ է դալիս պնդելու, որ ի դարձերություն հայերենի՝ անգլերենի շեշտող կառուցները ավելի բազմաքանույթ են և բազմիմասդ:

**Բանալի բառեր.** անդրադարձ դերանուններ, սաստկացուցիչներ, գործարանական իմաստ, «անսպասելիության» գործոն, կառուցվածքային վերլուծություն, PR միավորներ, իմաստային վերլուծություն

Անգլերենի քերականագիտության մեջ *myself, yourself, himself, herself, itself, ourselves, yourselves, themselves* անդրադարձ դերանունները միշտ եղել են վիճաբանության առարկա /И. Иванова, С. Лукина, L. Brinton, M. Blokh, P. Hopper, R. Huddleston, B. Illyish, Th. Payne և այլ/: Տարբեր տեսակետների առկայության պատճառը այն է, որ տվյալ դերանունները ունեն երկակի բնույթ. դրանք կարող են հանդես գալ երկու գործառույթով՝

1) անդրադարձ բայաձևի ցուցիչներ, **անդրադարձ դերանուններ** (*reflexive pronouns* կամ *self-pronouns*),

2) սաստկական իմաստի ցուցիչներ, **սաստկացուցիչներ կամ շեշտող դերանուններ** (*intensifiers* կամ *emphatic pronouns*):

Որոշ լեզվաբաններ տարանջատում են այդ երկու գործառույթները՝ ներկայացնելով դրանք որպես դերանունների երկու առանձին տեսակ՝

1) **անդրադարձ դերանուններ (reflexive pronouns), 2) սաստկական դերանուններ (emphatic pronouns)** /Կօբրինա և ճր., 2007: 143-144; Eastwood, 1997: 187; Gordon, Krylova, 1986: 351-352; Veihman, 2002: 46; Tokmajian, 1995: 41-42/: Մենք կարծում ենք, որ այդպիսի մոտեցումը հակասում է խոսքի-մասային դասակարգման սկզբունքին, ըստ որի հաշվի պետք է առնվեն ոչ միայն գործառական, այլև իմաստային և ծևական չափանիշները: Իմաստարանորեն այդ դերանունների երկու տեսակները նման են, քանի որ բնութագրում են նոյն առարկան: Զևաբանորեն երկու տեսակներն անգիրենում կազմվում են նոյն ձևով՝ ստացական կամ օբյեկտային հոլովով դրված անձնական դերանվանը ավելացնելով *-self/selves* մասնիկները: Գործառական տարբերությունները չեն կարող հիմք հանդիսանալ այդ երկու տարրեր տեսակների դերանունների առանձին ձևեր համարվելու համար: Մենք հակված ենք ընդունելու այն լեզվաբանների կարծիքը, ըստ որոնց երկու տեսակներն էլ անդրադարձ դերանուններ են, որոնցից մեկը շեշտում է դեմքի գաղափարը: Այդ մասին կարելի է տեղեկանալ Մշիմարյանի և Բագիկյանի հոդվածից, բայց վերլուծությունը այնտեղ կատարվել է միայն անգիրենի հիման վրա /Mkhitaryan, Bazikyan, 2016: 428-432/: Այսպիսով՝ այսպես կոչված, շեշտող դերանունները առանձին խումբ են կազմում անդրադարձ դերանունների մեջ, որոնց գործառույթը սահմանափակվում է հատուկ «շեշտող» (emphatic) իմաստ հաղորդելու ասույթի այն ամդամին, որի հետ այն հարաբերակցում է:

Անգիրենի անդրադարձ դերանունների առաջին տեսակին հայերենում համարժեք է կամ **-վ** ածանցով բայց, կամ առանց **-վ** ածանցի բայց և անձնական դերանվան հոլովական ձևերը (ինձ, քեզ, իրեն, մեզ, ձեզ): Անգիրենի շեշտող դերանունները արտահայտվում են **ինքս, ինքդ, ինքն, ինքներս, ինքներդ, ինքներն կամ իրենք** անձնական դերանունների սաստկական ենթատեսակի միջոցով՝ «կատարելով հատուկ ոճական դեր և առանձնահատուկ շեշտելով դիմային գաղափարը» /Ասատրյան, 1983: 182/: Հայ քերականագետները դրանք համարում են բաղադրյալ ենթակա, որի բաղադրիչներից ոչ մեկը մյուսի լրացումը չէ: Առաջին և երկրորդ դեմքերում իբրև ենթակա գործածվելիս՝ դրանք ստանում են **ս, դ** դիմորդ հոդերը, ինչպես՝ **ինքս-ինքներս, ինքդ-ինքներդ** /Արքահամյան, 1975: 134, 143/: Ինչպես տեսնում ենք, և՝ անգիրենում, և՝ հայերենում սաստկական իմաստ ունեցող դերանունները չեն կազմում առանձին տեսակ, այլ հանդիսանում են որպես ենթախումբ անգիրենի անդրադարձ դերանուններում կամ հայերենի անձնական դերանուններում:

Մեր ուսումնասիրության առարկան անգիրենի շեշտող դերանուններով կառուցվածքները և դրանց հայերեն համարժեքներն են: Անգիրենի շեշտող անդրադարձ կառուցները բազմաթիվ են և բազմաբնույթ: Համեմատությանն ենթարկելով դրանք հայերենի անդրադարձ կառույց-

ների հետ՝ մենք առանձնացնում ենք հետևյալ կառուցվածքային և իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները:

### 1. Կառուցվածքային վերլուծություն

Շեշտող դերանունները կատարում են կարևոր հաղորդակցական դեր. դրվելով դերանունից (գոյականից) հետո կամ նախադասության վերջում՝ շեշտում են դրանց իմաստը: Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում, հիշյալ դերանուններին հատուկ են թվի և դեմքի քերականական կարգերը: Կառուցվածքային տեսանկյունից շեշտող դերանունները ցուցաբերում են նմանություններ և տարբերություններ: Ուսումնասիրենք դրանք առանձին-առանձին:

1. Երկու լեզուներում էլ սաստկական դերանունները, հարաբերակցվելով անձնական դերանունների հետ, հանդես են գալիս որպես մեկ միավոր (PR = personal + reflexive) և սովորաբար միասին են գործածվում. անգլերեն՝ *I-myself, you-yourself/yourselves, she-herself, he-himself, we-ourselves, they-themselves, հայերեն՝* ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, նրանք ինքները: Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում անձնական դերանվան փոխարեն կարող է գործածվել գոյականը (հատուկ և հասարակ), օր՝

ա) *I myself* felt as badly as he did and could not understand why I had not gone. (Hemingway, 9)

**Ես ինքս էլ** նույնքան վատ էի զգում դրա համար: Եվ, իսկապես, այնպես էլ չհասկացա, թե ինչու չգնացի: (Հեմինգվուէ, 12)

բ) Half an hour later *Daisy herself* telephoned and seemed relieved to find that I was coming. (Fitzgerald, 99)

Կես ժամ անց **Դեյզին ինքը** զանգահարեց և ուրախացավ, որ գալիս եմ: (Ֆիցերալդ, 93)

Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում, PR միավորի հարաբերակցվող բաղկացուցիչները նախադասությունում կարող են անջատվել իրարից՝ ընդմիջարկվելով այլ անդամներով, սակայն հայերենում այդ երևույթը այնքան էլ տարածված չէ, օր՝

ա) *I'm on the school board myself*, you know. (Steinbeck, 73)

բ) ...at three o'clock, just as I was feeling safe, along comes a chap with a message from Mrs. Ryan that *I* was to go to confession *myself* on Saturday... (O'Connor, 16)

գ) **Նա** իր տան համար պաշարեղենն **ինքն** է տուն բերում իր ծեռքով առավոտները կանուխ: (ԱՐԵՎԱԿ)

Ինչպես տեսնում ենք օրինակներից, անգլերենում *they-themselves* և *you-yourself* միավորների բաղկացուցիչները /P և R/ նախադասություններում ցրադեցնում են տարբեր դիրքեր: Հայերենում **ինքը** (ինքս, ինքդ, ինքն, ինքներս, ինքներդ, ինքներն կամ իրենք) դերանունը գործածվում է անձ ցուց տվող գոյականների հետ և նախադասությունում հանդես է

գալիս տարբեր շարադասությամբ, ինչը բոլորովին չի փոխում նախադասության իմաստը /Աբրահամյան, 1975: 143/, օր՝

ա) **Հայրս ինքը** մոտեցավ:

բ) **Ինքը որդին** ճանաչեց:

Անգլերենում լեզվաբանների մեծամասնությունը այն կարծիքի են, որ շեշտող դերանվան տեղաշարժը չի հանգեցնում իմաստային փոփոխության /Quirk and Greenbaum, 1987: 8; Leech and Svartvik, 1983: 166-167/: Սակայն, Գ.Վեյխմանը տեսնում է որոշակի իմաստային տարբերություն հետևյալ նախադասությունների միջև /Veihman, 2003: 41/:

ա) *The owner himself* built the house.

բ) *The owner* built the house *himself*.

Ըստ Գ.Վեյխմանի՝ (ա) օրինակում շեշտադրվում է այն միտքը, որ տունը կառուցվել է տիրոջ կողմից, (բ) օրինակում ընդգծվում է այն գաղափարը, որ տանտերը կառուցել է տունը մենակ, առանց որևէ մեկի օգնության: Դժվար է ասել՝ որքանով է նման մեկնաբանումը ընդունելի, քանի որ իմաստները այնքան մոտ են իրար, որ դառնում են գործեաննշմարելի:

2. Ի տարբերություն անգլերենի՝ հայերենում ենթական կարող է արտահայտված լինել միայն անձնական դերանվան սաստկական ենթատեսակով, ինչպես **ինքս**, **ինքներս**, **ինքդ**, **ինքներդ**, ինչը բոլորովին չի փոփոխում նախադասության իմաստը, օր՝

ա) Then *you* must go into management *yourself* and make me your leading lady. (Maugham, 32)

Այդ դեպքում **ինքդ** անտրեպրենյոր դարձիր և ինձ դարձրու քո թատրոնի աստղը: (Մոեմ, 32)

բ) They did not have a maid or anything, and *they* always opened the door *themselves*. (Salinger, 31)

Նրանք սպասավոր չունեն, ընդհանրապես ոչ ոք չունեն, միշտ **իրենք** են բացում դրությունը: (Մելինցեր, 13)

զ) On the other hand if he was shattered and *tongue-tied*, *she*'d be all tremulous **herself**, sobs in her voice and all that ... (Maugham, 69)

Մյուս կողմից, եթե նա հուզված ու կաշկանդված լիներ, **ինքը** ևս կհուզվեր. արտասվալից ձայն ու նման բաներ... (Մոեմ, 80-81)

Անգլերենում, ինչպես տեսնում ենք, անդրադարձ դերանվան այդպիսի կիրառությունն անհնարին է:

3. Հայերենում հնարավոր է *PR* բաղադրիչների դիրքի փոխանակում *RP*, հատկապես եթք *P*-ն արտահայտված է գոյականով: Անգլերենում չի դիտարկվում այդպիսի երևույթ, օր՝

ա) Sometimes in his leisurely movements and the secure position of his feet upon the lawn suggested that it was **Mr. Gatsby himself** come to determine what share was his of our local heavens. (Fitzgerald, 21)

բ) Նրա անկաշկանդ շարժումները, ոտքերի հաստատուն դիրքը խոսի վրա ինձ հուշեցին, որ դա **ինքը պարոն Գեթսին է** դուրս եկել՝ որոշելու իր բաժինը տեղական երկնակամարում: (Ֆիցջերալի, 22)

Անուամենայնիվ, անգլերենի ‘*myself*’ անդրադարձ դերանունը «կարծիք հայտնելու» իմաստով ստանձնում է ‘*Personally*’ եղանակավորող մակրայի գործառույթը և գործածվում նախադասության սկզբում՝ անձնական դերանունից առաջ (R+P) /Brians:2016; Payne 2011:309/: Այս իմաստով երբեմն հանդիպում ենք *me+R+P* կապակցությանը, որն էլ ավելի է շեշտում անձնական տեսակետը տվյալ հարցի շուրջ: Այս իմաստը փոխանցվում է հայերեն «**Ես ինքս (ա)**, **Ես անձամբ (բ)**, **ինչ վերաբերվում է ինձ**» արտահայտություններով, օր.’

ա) *Myself, I can't stand dried parmesan cheese.*

**Ես ինքս** տանել չեմ կարող չորացրած պարմեզան պանիրը:

*Myself, I came when I was eighteen – too young, a hot shot, a shit on a speed trip looking for boomtown pussy and my share of the oil.* (COCA)

բ) *Me, myself I'm just looking forward to it.* (COCA)

**Ես անձամբ** անհամբեր սպասում եմ դրան:

4. Անգլերենին բնորոշ է հետևյալ կապակցությունը՝ *Abs N+itself* (վերացական գոյական+itself) կամ *R+AbsN* (անդրադարձ դերանուն+վերացական գոյական): Նախադասությունում ամբողջ կապակցությունը հանդես է գալիս որպես ստորոգելիական վերադիր, այսինքն բաղադրյալ անվանական ստորոգայի բաղկացուցիչ մաս, օր.’

ա) She would be *sweetness itself*, she would wheedle it all out of her, and never give her an inkling that she was angry. (Maugham, 124)

**Ինքը** ոչչով զգացնել չի տա, որ բարկացած է, **համակ քնքշություն** կիխի հետը ու այդպիսով դուրս կկորզի ամեն ինչ: (Մոեմ, 151)

բ) There was one photograph of the three of them, Michael very manly and incredibly handsome, **herself all tenderness** looking down at Roger with maternal feeling, and Roger a little boy with a curly head, which had been an enormous success. (Maugham, 19)

Լուսանկարներից մեկը, որը մեծ հաջողություն ունեցավ, պատկերում էր երեքին միասին. Մայքլը խիստ առնական ու նախանձելիորեն գեղեցիկ, **ինքը՝ մարմնացած քնքշություն՝** մայրական սիրով լի հայացք Ռոջերին, որը մի փոքրիկ գանգրահեր տղա էր: (Մոեմ, 15)

Ինչպես տեսնում ենք, անգլերենի անդրադարձ դերանուններին հայերենում համարժեք են այլ խոսքի մասերը՝ ածականը, դերբայը (համակ, մարմնացած), որոնք դրվում են անմիջապես վերացական գոյականից առաջ: Հայերենում վերափոխվում է ամբողջ կառուցվածքը՝ *Abs N+itself* կաղապարը փոխակերպվելով *Adj+AbsN* և *R+AbsN* կաղապարը՝ *Part II+AbsN* կաղապարի: Հարկ է նշել, որ անգլերենում, երբ վերացական դերանունների հետ *itself-ի* փոխարեն գործածվում է ուրիշ անդրադարձ դերանուն, վերջինս գալիս է առաջ՝ *R+AbsN* (օրինակ բ):

5. Անգլերենում PR բաղադրիչները կարող են անջատվել միմյանցից և ստեղծել ենթակա+սպորոզյալ հարաբերություն: Հայերենում այդ կաղապարը արտացոլում չի գտնում և հաղորդվում է բայի դիմավոր ձևերով, օր՝

ա) With the first night before me *I'm not* really *myself* today. (Maugham, 196)

Այսօրվա պրեմիերան է պատճառը, ասես **ինքս ինձ կորցրել եմ:** (Մոեմ, 245)

բ) On the other hand if he was shattered and tongue-tied, *she'd be all tremulous herself*, sobs in her voice and all that ... (Maugham, 69)

Մյուս կողմից, եթե նա հուզված ու կաշկանդված լիներ, **ինքը ևս կհուզվեր.** արտասվալից ձայն ու նման բաներ... (Մոեմ, 80-81)

6. Անգլերենում անձի բացառիկ դերը առավելագույնս ընդգծելու համար գործում է նաև հետևյալ կաղապարը. օբյեկտային հոլովով դրված անձնական դերանուն (*me, him, her, it*) + անդրադարձ դերանուն (*Pobj.+R*): Այս կապակցությունը նախադասության մեջ գործածվում է որպես անուղղակի խնդիր և հաճախակի հանդիպում է 'me' (*me+R*) դերանվան հետ: Օրինակ՝

ա) It seemed no more dangerous to *me myself* than war in the movies. (Hemingway, 27)

Դա **ինձ համար** նույնքան վտանգավոր էր, որքան պատերազմը կինոնկարներում: (Հեմինգվուէ, 34)

բ) Would you mind asking *him himself*? (Lawrence, 136)

Դուք դեմ չե՞ք լինի դա **անձամբ իրենից** հարցնել:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն (բ) օրինակի, (ա) օրինակում հայերեն թարգմանության մեջ անդրադարձ դերանուն *myself-ը* չի արտացոլվում: Կարծում ենք՝ դրա իմաստը կարելի էր փոխանցել **անձամբ** բառով. դա **ինձ համար** -> **անձամբ ինձ համար**:

Այսպիսով՝ վերոնշյալ օրինակներից պարզ է, թե ում են հասցեագրվում **'myself, himself'** դերանունները՝ **'me->myself', 'him->himself'**: Այնուամենայնիվ, անգլերենում հնարավոր են նաև այնպիսի դեպքեր, երբ բավականին դժվար է տարանջատել, թե ում է վերաբերում սաստկական դերանունը: Այստեղ մեզ օգնության է գալիս համատեքստը: Օրինակ,

She must find out from *Dolly herself*. (Maugham, 124)

Ոչ, պետք է իմանալ հենց **իրենից՝ Դոլլից**: (Մոեմ, 151)

Ի տարբերություն հայերենի, որտեղ հայտնի է, որ հեղինակը *իրենից-ը* վերագրում է **Դոլլիին**, անգլերենում անորոշ է՝ *herself-ը* վերաբերում է 'she' ենթակային, թե՝ 'Dolly' նախդրավոր խնդրին: Համատեքստից պարզ է դառնում, որ այն վերաբերում է 'Dolly' նախդրավոր խնդրին, օր՝

It would not do to ask Michael, that would look as though she attached importance to it; she must find out from *Dolly herself*. (Maugham, 124)

Ամփոփելով հետազոտության այս մասը՝ կարելի է ասել, որ կառուցվածքային տեսակետից անգիրենի և հայերենի սաստկական կառուցները ցուցաբերում են և՝ ընդհանրություններ (1,4,6), և՝ տարբերություններ (2,3,5):

## 2. Իմաստային-գործաբանական վերլուծություն

Իմաստային առումով անգիրենի և հայերենի սաստկական դերանունները հիմնականում համընկնում են, թեև կան որոշ տարբերակիչ գծեր: Հարկ է նշել, որ հայերենում այդ միավորները չեն եղել հատուկ իմաստաբանական ուսումնասիրության առարկա, և ինչ նշվում է այս հոդվածում դրանց վերաբերյալ, ներկա հետազոտության արդյունք է: Մենք առանձնացրել ենք հետևյալ իմաստները՝

1. Գործողությունը կատարում է ենթական՝ առանց որևէ մեկի օգնության: Երկու լեզուներում էլ առկա է այս իմաստը, օր՝

ա) *I* always design the sets *myself* for our plays. (Maugham, 14)

Որպես կանոն, **ինքս** եմ ծևավորում մեր ներկայացումները: (Մոեմ, 7)

Անգիրենում գործածվում է նաև ‘*by myself*’ կամ ‘*all by myself*’ կապակցությունները՝ էլ ավելի շեշտելով ենթակայի գործողությունը, օր՝

բ) He went off *by himself*, vaguely, in a childish way, seeking for the clue to “luck”. (Lawrence, 134)

Նա **մենակ** դուրս եկավ, անվստահ, երեխայի պես՝ փնտրելով հաջողության բանալին:

գ) I saw one kid about her age, though, sitting on a bench *all by herself*, tightening her skate. (Salinger, 129)

Հանկարծ ես մի աղջնակ տեսա նրա տարիքին, նստարանին նստած՝ չմուշկներն էր ամրացնում: (Սելինջեր, 125)

Ինչպես տեսնում ենք, տվյալ օրինակներից ‘*by myself*’ և ‘*all by myself*’ բառակապակցությունները կամ «**մենակ**» մակրայով, կամ ընդհանրապես չեն թարգմանվում հայերեն:

2. Ենթական մասնակցում է գործողությանը կամ դրա ականատեսն է լինում, օր՝

ա) And *I* wanted to see her *myself*. (Miller, 371)

**Ես ինքս** ցանկանում էի նրան տեսնել:

բ) I admit...that your wife is not particularly fond of this Miss Fosli.

Is that all? *I* have noticed that *myself*. (Ibsen, 102)

Ես կարծում եմ, որ քո կինը առանձնապես չի սիրում Միս Ֆոսլիին:

Այդքանը: **Ես ինքս** դա նկատեցի:

գ) Here he is now, you can ask him *yourself*. (Coward, 286)

Ահա և նա, **դու ինքդ** կարող ես նրան հարցնել:

դ) Only *she herself*, and her *children themselves*, knew it wasn’t so. (Lawrence, 132)

Հենց միայն նա և իր երեխաները գիտեին, որ դա այդպես չէր:

Ե) Սակայն **կալանավորն ինքը**, դուան բացվելը լսելով, երևաց խցի խորքում և նայեց սպասողական և հետաքրքիր: (ԱՐԵՎԱԿ)

3. Ենթական վկայակոչում է հայտնի, ականավոր և այլ կարևոր մարդկանց բառերը՝ սեփական գործողությունը արդարացնելու նպատակով, օր՝

ա) *You* said *yourself*, only just now, that no one but I ought to be allowed to build. (Ibsen, 140)

**Դու ինքդ** հենց հիմա ասացիր, որ ինձանից բացի ոչ ոքի չի թուլատրվում այն կառուցել:

բ) *The doctor* said it *himself*. (OALD)

**Ինքը բժիշկն** ասաց դա:

զ) *Old Solomon himself* couldn't make nothing by 'un. (Lee, 52)

**Անգամ ինքը՝ Շեր Սոլոմոնը** չէր կարող ոչինչ անել՝ բացի...

դ) - Կարող էր գուցե սխալվել, բայց ոչ ստել կամ զրպարտել, քանզի պիտի խորհեր, որ իր հաղորդածը **ինքը՝ թագավորը** կարող է ստուգել... (ԱՐԵՎԱԿ)

Հայերենում այս իմաստը հաճախակի է հանդիպում և նախադասության մեջ հանդես է գալիս բացահայտչի գործառույթով:

4. Ենթական կատարում մի գործողություն, որը իրեն բնորոշ չէ, անսովոր է, անսպասելի է՝ ելնելով իր հասարակական, բարոյական կամ նյութական նկատառումներից, օր՝

ա) Sometimes in his leisurely movements and the secure position of his feet upon the lawn suggested that it was **Mr. Gatsby himself** come out to determine what share was his of our local heavens. (Fitzgerald, 21)

Նրա անկաշկանդ շարժումները, ոսքերի հաստատուն դիրքը խոսի վրա ինձ հուշեցին, որ դա **ինքը պարոն Գեթսբին է** դուրս եկել՝ որոշելու իր բաժինը տեղական երկնակամարում: (Ֆիցջերալդ, 22)

բ) Part of George's duty was ... to find out what they really thought of Harvard, the seminar and - *even Kissinger himself*. (Segal, 159)

Զորջի պարտականություններից մեկն էլ իմանալն էր, թե ինչ են մտածում նրանք Հարվարդի մասին, սեմինարի, անգամ **հենց Կիսինգերի** մասին:

Հարկ է նշել, որ հայերենում տվյալ իմաստը արտահայտելու համար «ինքը» անձնական դերանունը պետք է նախադաս դիրքում լինի, հակառակ դեպքում՝ այն նոր իմաստ է ստանձնում, որը բացակայում է անգլերենում, օր՝

զ) *Sir Paul McCartney himself* sang the final song. (<https://learnenglish.britishcouncil.org/en>)

**Հենց ինքը՝ սեր Պոլ Մակարդնին** երգեց վերջին երգը:

Վերոնշյալ օրինակում անհավանական փաստ է, որ տվյալ անձն ինքն է կատարում գործողությունը, այսինքն՝ այստեղ գործում է «անսպասելիության» գործոնը:

Այստեղ կարելի է ընդգրկել նաև որևէ անհավանական վայրում տեղի ունեցող գործողություն: Այս իմաստը հիմնականում արտահայտվում է ‘*itself*’ դերանվամբ, ինչպես՝

Crossing the field, I did not know but that someone would fire on us from the trees near the farmhouse or from *the farmhouse itself*. (Hemingway, 154)

Անցնում էի դաշտի միջով և անընդհատ սպասում, որ ահա ուր վոր է կակսեն կրակել ազարակատան ծառերի ետևից կամ **հենց ազարակապնից:** (Հեմինգվուէ, 34)

Ինչպես տեսնում ենք, հայերենում տվյալ իմաստը ներկայացված է «ինքը» անձնական դերանվամբ, «ինքնին» մակրայով, «հենց» վերաբերականով:

5. Անզերենում ենթական և ստորոգյալը անջատվելով միմյանցից՝ ստանձնում են նոր իմաստ՝ «մնալ հավաքարիմ իրեն, չկորցնել ինքնությունը, չնմանվել մյուսներին»: Այս դեպքում յուրաքանչյուրը կատարում է առանձին գործառույթ նախադասությունում՝ ենթակա և ստորոգելիական վերադիր (հաճախ ժխտական ձևով), օր՝

ա) Unusual for one so young, *she* had the courage to always be *herself*.  
(<https://gma.com/Georgia>)

Անսովոր էր, որ այդքան երիտասարդ էր, բայց համարձակություն ուներ միշտ **հավաքարիմ մնալ իր սկզբունքներին:**

բ) *She* didn't seem quite *herself*. (OALD)

Նա, կարծես, **դուրս էր գալիս իր հունից:**

գ) None of these people are Meghan Markle. *She is herself*.  
(<https://www.yahoo.com/celebrity/Meghan-markle-family>)

Այս մարդկանցից ոչ ոք Մեգան Մարկլ չէ: Նա **լրաբերվում է մյուսներից:**

դ) *John* needed space *to be himself*. (OALD)

Չոնին մի վայր էր պետք **մյուսներից մեկուսանալու համար:**

Հայերենին այս կաղապարը բնորոշ չէ, և այդ է պատճառը, որ այն թարգմանվում է բառային և շարահյուսական տարբեր միջոցներով:

6. Անզերենին հատկանշական է նաև հետևյալ իմաստը. «որևէ հավկության, որակի արդացոլում, ընդհանրական բնութագիր», որն արտահայտվում է հետևյալ անդրադարձ կառուցով՝ վերացական իմաստով հասարակ գոյականով և ‘*itself*’ շեշտող դերանունով (*abstract noun+itself*): Այս կապակցությունը նախադասության մեջ հանդես է գալիս որպես ստորոգելիական վերադիր: Երբեմն ‘*itself*’ դերանվան փոխարեն կարող է գործածվել ‘*herself*’ և ‘*himself*’ դերանունները, օր՝

ա) Later she remembered all the hours of the afternoon as happy – one of those uneventful times that seem at the moment only a link between past and future pleasure but turn out to have been **the pleasure itself**. (Fitzgerald, 87)

Հետոպայում նա այդ օրվա բոլոր ժամերը վերիիշում էր իբրև երանելի մի ժամանակ, մեկը այն նվազ ուշագրավ ժամերից կամ

օրերից, որոնք տվյալ պահին թվում են սոսկ որպես անցում՝ երեկվա հաճույքից դեպի վաղվա հաճույքը. մինչդեռ պարզվում է, որ այն **հենց ինքնին հաճույք է եղել:** (Ֆիցերալի, 22)

բ) The manager of the hotel is *courtesy itself*. (OALD)

Հյուրանոցի կառավարիչը **քաղաքավարության մարմնացումն է:**

զ) There was one photograph of the three of them, Michael very manly and incredibly handsome, *herself all tenderness* looking down at Roger with maternal feeling, and Roger a little boy with a curly head, which had been an enormous success. (Maugham, 19)

Լուսանկարներից մեկը, որը մեծ հաջողություն ունեցավ, պատկերում էր երեքին միասին. Մայքլը խիստ առնական ու նախանձելիորեն գեղեցիկ, **ինքը՝ մարմնացած քնքություն՝** մայրական սիրով լի հայացք Ռոջերին, որը մի փոքրիկ գանգրահեր տղա էր: (Մուեմ, 15)

Տվյալ անդրադարձ կառուցները թարգմանվում են հայերեն «*հենց*», «*ինքը*, *ինքնին*» կամ ուրիշ լեզվական միջոցներով և հատուկ են միայն գրական լեզվին և բանաստեղծություններին:

7. Թե՛ անգլերենին, թե՛ հայերենին բնորոշ է «մեղադրանք» կամ «հակարանք» արտահայտող իմաստները: Երկու լեզուներում էլ դրանք արտահայտված են երկրորդ և երրորդ դեմքերով (հաճախ ժխտական ձևով), ինչը հաղորդում է խոսույթին «*հակարանք»-ի երանգավորում, ինչպես՝ *you yourself, he himself, she herself, they themselves; ինքը, ինքը, իրենք, օր.*՝*

“*You haven’t acted ethically yourself today*”, observed the captain. (Bradbury, 111)

- Ձեր վարմունքն էլ էսօր բարոյական չէր, - նկատեց նավապետը: (Բրեդբրուի, 111)

*She herself* doesn’t always know how she reaches her conclusions. (COCA)

...others argued that *she herself* was to blame for the bloodshed in Texas. (COCA)

Նոյնիսկ **դու ինքը** մեզ չխնայեցիր: (ԱՐԵՎԱԿ)

«**Ինքը** լավ գիտի, թե ինչի մասին եմ խոսում և, եթե փորձի շարունակել՝ ես արդեն կվայակոչեմ մարդկանց, որոնց հետ աշխատել է **ինքը**»: (ԱՐԵՎԱԿ)

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն անգլերենի, հայերենում «*ինքը*» անձնական դերանունը էլ ավելի է շեշտում անձի նկատմամբ բացասական վերաբերմունքը:

Այսպիսով, ուսումնասիրության ենթարկելով անգլերենի շեշտող անդրադարձ կառուցները և դրանց հայերեն համարժեքները, մենք հանգում ենք այն եզրակացության, որ երկու լեզուներում սաստկական իմաստն արտահայտող դերանունը առանձին տեսակ չէ, այլ բաղադրյալի երկրորդ բաղկացուցիչ մասը՝ այն տարբերությամբ, որ անգլերենում վերջինս հարաբերակցվում է անդրադարձ դերանվան հետ *I myself, you yourself, he himself* և այլն), մինչդեռ հայերենում՝ անձնականի հետ (**ես**

**ինքս, դու ինքդ, նա ինքը** և այլն): Զուգադրական վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկու լեզուները կառուցվածքային և իմաստային-գործաբանական տեսանկյունից ցուցաբերում են ընդհանրություններ և տարբերություններ, ընդ որում կառուցվածքային տարբերությունները ավելի շատ են՝ ենելով հայերենի շարահյուսական և ծնաբանական հատկություններից: Իմաստային-գործաբանական տեսակետից անգերենի շեշտող կառուցները ավելի բազմաբնույթ են և բազմիմաստ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա. Հայոց լեզու, 2 մաս, շարահյուսություն, Երևան, «Լուս» հրատ., 1975:
2. Ասատրյան Մ. Ե. Ժամանակակից հայոց լեզվի ծնաբանության հարցեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1977:
3. Вейхман Г.А. Новое в грамматике современного английского языка. М.: Издательство ACT, 2002.
4. Кобринна Н. А., Болдырев Н. Н., Худяков А. А. Теоретическая грамматика современного английского языка, учебное пособие. М.: Высшая школа, 2007.
5. Лайонз Дж. Введение в теоретическую лингвистику. М.: Прогресс, 1978.
6. Blokh M. A Course in Theoretical English Grammar. M.: Vissaya shkola, 1983.
7. Brians P. 2016 // URL: <https://brians.wsu.edu>>2016/05/19
8. Eastwood J. Oxford Guide to English Grammar. Oxford: Oxford University Press, 1997.
9. Gordon E., Krylova I. A Grammar of Present-day English. Moscow: Higher School Publishing House, 1986.
10. Ilyish B.A. The structure of Modern English. Leningrad: Prosveshchenie, 2012.
11. Jacobs R. English Syntax. A Grammar for English Language Professionals. Oxford: Oxford University Press, 1995.
12. Leech J., Svartvik J.A. Communicative Grammar of English. Moscow: Prosveshcheniye, 1983.
13. Mkhitaryan Y., Bazikyan L. On Structure and Semantics of Reflexive Constructions in English // *Linguistics and Literature Studies, Horizon Research Publishing Corporation*, vol. 4 (Nov. 2016), No 6.
14. OALD = Oxford Advanced Learner's Dictionary of Current English, A.S. Hornby, Oxford: Oxford University Press, 2005.
15. Payne Th. Understanding English Grammar. Cambridge: CUP, 2011.
16. Quirk R., Greenbaum S. A University Grammar of English. London: Longman, 1978.
17. Tokmajian H. A Modern English Grammar. Yerevan: Pyunik, 1995.

## ԱՐԵՎՈՒՐՆԵՐ

1. Բրեդբրի Ռ. Մարսիան քրոնիկոն, Երևան, «Անտարես», 2015:
2. Հեմինզուեյ Է. Հրամեշտ գենրին, Երևան, «Հայաստան» հրատ., 1972:
3. Մոեմ Ս.Մ. Թատրոն / Անգլ. թարգ. Զ. Հովհաննիսյանը, Երևան, «Սովետ. գրող», 1985:
4. Սելինցեր Զ. Դ. Տարեկանի արտուրմ՝ անդունդի եզրին, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1978:
5. Ֆիցջերալդ Ֆ. Ս. Մեծն Գեթսբին, Երևան, «Սովետ. գրող», 1981:
6. Մօքմ Սիլյամ Ս. Թատր, 2-օ իզդ., Մ.: Վաշինգտոն պատկանական ակադեմիա, 1985.
7. Angelou Maya, Mom & Me & Mom. New York: Random House, 2013.
8. Bradbury R. The Martian chronicals. Санкт-Петербург: Издательство «Каро», 2015.
9. Brown D. Angels and Demons. London: A Random House Group Company, 2009.
10. Carswell D. Count Albany // 24 One-Act Plays selected by J. Hampden. London: J. M. Dent & Sons LTD, 1964.
11. Coward N. Hands Across the Sea // 24 One-Act Plays selected by J. Hampden. London: J. M. Dent & Sons LTD, 1964.
12. Fitzgerald F. Scott. The Great Gatsby. Oxford: Heinemann New Windmills, 1987.
13. Fitzgerald F. Scott. Tender Is the Night. Moscow: Raduga Publishers, 1983.
14. Heller J. Something Happened. New York: Dell Publishing Group, Inc. 1974.
15. Hemingway E. A Farewell to Arms. Ленинград: «Просвещение», 1971.
16. Ibsen H. The Master Builder. Six Great Modern Plays. New York: Dell Publishing Group, Inc. 1967.
17. Kinsella S. The Undomestic Goddess. London: Transworld Publishers, 2006.
18. Lee Ch. Mr. Sampson. 24 One-Act Plays selected by J. Hampden. London: J. M. Dent & Sons LTD, 1964.
19. Mankowitz W. The Bespoke Overcoat. 24 One-Act Plays selected by J. Hampden. London: J. M. Dent & Sons LTD, 1964.
20. Miller A. All My Sons. Six Great Modern Plays. New York: Dell Publishing Group, Inc. 1967.
21. O'Connor F. First Confession // Short Stories for Advanced Learners of English compiled by Badalyan L., Martirosyan S., Hovhannisyanyan S., Sandukhchyan R., Khachatryan L. Երևան, Հինգվա, ԵՊԼՀ, 2008:
22. Steinbeck J. Molly Morgan // Short Stories for Advanced Learners of English compiled by Badalyan L., Martirosyan S., Hovhannisyanyan S., Sandukhchyan R., Khachatryan L. Երևան, Հինգվա, ԵՊԼՀ, 2008:
23. Lawrence D. H. The Rocking Horse Winner // Short Stories for Advanced Learners of English, compiled by Badalyan L., Martirosyan S., Hovhannisyanyan S., Sandukhchyan R., Khachatryan L. Երևան, Հինգվա, ԵՊԼՀ, 2008:

- 
- 24. Salinger J. D. *The Catcher in the Rye*. Moscow: Progress Publishers, 1968.
  - 25. Segal E. *The Class*. New York: Bantam Books, 1985.
  - 26. URL: <https://www.yahoo.com/celebrity/Meghan-markle-family/>

**Լ. ԲԱԶԻԿՅԱՆ – *Структурные и семантико-прагматические аспекты эмфатических возвратных конструкций в английском языке (в сопоставлении с армянским)*.** – Статья посвящена анализу структурных и семантико-прагматических аспектов эмфатических возвратных конструкций в английском и армянском языках. Проведен подробный структурный анализ конструкций с эмфатическими местоимениями в английском и армянском языках с выявлением сходств и различий, обусловленных спецификой морфологического и синтаксического строя исследуемых языков. В работе уделено большое внимание семантико-прагматическому анализу данных эмфатических конструкций как в английском, так и в армянском языке. Выделен ряд различий в употреблении данных конструкций в английском языке.

**Ключевые слова:** возвратные местоимения, эмфатическое местоимение, усилители, прагматическое значение, структурный анализ, эффект неожиданности, ЛВ (личные и возвратные местоимения) составляющие, семантический анализ

**L. BAZIKYAN – *The Structural and Semantic-Pragmatic Aspects of Emphatic Constructions in English (with special reference to Armenian)*.** – The present paper refers to the structural and semantic-pragmatic aspects of emphatic constructions in English and Armenian. The paper gives a structural analysis of constructions with emphatic reflexive pronouns in English and their Armenian counterparts with pointing out the similarities and differences preconditioned by the specificity of the morphological and the syntactic structure of the related languages. Much attention is devoted to the analyses of semantic and pragmatic aspects of the constructions under study. The paper focuses on some differences in the use of English emphatic constructions.

**Key words:** reflexive pronouns, emphatic pronoun, intensifiers, pragmatic meaning, the effect of “unexpectedness”, structural analysis, PR (personal and reflexive pronouns) constituents, semantic analysis

**Հասմիկ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ  
Երևանի պետական համալսարան**

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԵՎ  
ՄԵԿՆՈՂԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՈՐՈՇ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Սույն հոդվածում քննության են առնվում արդի թարգմանաբանության առավել հայտնի մեկնողական, մեկնողական-փիլիսոփայական որոշ դեսություններ, որքեղ թարգմանությունը գերազանցապես դիմարկվում է որպես գործընթաց: Հոդվածի նպատակն է արժնորել այդ դեսությունների դերը արդի թարգմանաբանական միջի զարգացման մեջ: Առանձնահարուկ անդրադարձ է կարարվում հայտնի թարգմանաբան Լ. Վենուսիի՝ թարգմանչի «դեսանելիության» մասին զաղափարներին, որն այսօր թարգմանության դեսության մեջ դարձել է բուն քննարկումների առարկա:

**Բանալի բառեր.** թարգմանաբանություն, մեկնողական դեսություն, մեկնողական-փիլիսոփայական դեսություն, ապակառուցողականություն, համարժեքություն, թիրախ մշակույթ

Արևմտաեվրոպական թարգմանաբանության մեջ անցած դարի 80-ական թվականներին առանձնապես կարևորվում են Զ. Հոլմսի տեսական հիմնարար դրույթները, որը թարգմանության տեսությունը դիտարկում է որպես անկախ գիտակարգ և առանձնացնում երեք ճյուղ՝ տեսական, նկարագրական և կիրառական: Այդ ժամանակներից ի վեր ծևավորվել են նաև թարգմանական ուսումնասիրությունների երեք տարբեր մոտեցումներ՝ թարգմանությունը կարելի է քննել որպես արդյունք, գործառույթ և գործընթաց:

Թարգմանության մեկնողական, մեկնողական-փիլիսոփայական տեսություններում թարգմանությունը գերազանցապես դիմարկվում է որպես գործընթաց (Ժ. Դելիլ, Դ. Սելեսկովիչ, Մ. Լեղերեր, Զ. Սթայներ, Է. Օրտեգա Արխոնիյա, Լ. Վենուսի, Մ. Վիդալ Կլարամոնտե և այլք):

Իր՝ «Խոսքի վերլուծությունը որպես թարգմանական մեթոդ» աշխատության մեջ Ժան Դելիլը թարգմանական գործունեությունը համարում է կրկնակի մեկնաբանության արդյունք: առաջինը հիմնվում է բնագրի լեզվի, իսկ երկրորդը՝ թարգմանող լեզվի նշանների վրա, իսկ իմաստը այս կրկնակի մեկնաբանության միակ նպատակն է: Կարևորելով համեմատական մեթոդի դերը լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրություններում Ժ. Դելիլը գտնում է, որ համեմատաբան-ոճաբանի նպատակը գուտ նկարագրական, նորմատիվ է, մինչդեռ թարգմանչինը՝ մեկնողական, հաղորդակցական: Ահա թե ինչու թարգմանության տեսությունը պետք է հիմնվի մի քանի կարևոր սկզբունքների

վրա. թարգմանության հիմնական նպատակը տվյալ ասույթի իմաստի բացահայտումն է և հաղորդումը՝ իմաստի քննությունը կատարելով բացառապես խոսքի, այլ ոչ թե լեզվի մակարդակում և հաշվի առնելով թարգմանական գործունեության դինամիկան, այլ ոչ միայն պարզապես նրա արդյունքը /Delisle, 1980: 84-94/:

Թարգմանության մեկնողական տեսության հայտնի ներկայացուցիչներ Դ. Սելեսկովիչը և Մ. Լեդերերը «Մեկնաբանել՝ թարգմանելու համար» աշխատության մեջ, հիմնվելով բանավոր թարգմանության իրենց մեծ փորձի վրա, քննում են թարգմանության գործընթացը լուսաբանող հիմնարար խնդիրները: Դ. Սելեսկովիչը պնդում է, որ խոսքի ռիթմին համընթաց կատարվող թարգմանությունն ի ցուց է դնում երկու տարբեր տարրերի մշտական փոխազդեցությունը. մեկը՝ բառային ու քերականական, իսկ մյուսը՝ գաղափարային, այսինքն՝ ոչ խոսքային: Ըստ այս հեղինակի՝ իմաստն ու նրա հաղորդումը լեզվի գոյության նախապայմաններն են, հետևաբար խոսքի ակտը պետք է նախորդի նորմի հասկացությանը, որի գոյությունը հաղորդակցության առաջնային պայմանը չէ, այլ նրա գործիքը. այն լեզվի գործածության արդյունքն է, որը ծևավորվել է դարերի ընթացքում՝ ենթարկվելով խոսողի ազդեցությանը: Դ. Սելեսկովիչը սահմանազատում է հաղորդակցության երեք փուլ. 1) իմաստի փուլը, երբ խոսողը ցանկանում է որևէ բան հաղորդել, իսկ ընդունողը լսում է՝ այն ըմբռնելու մտադրությամբ, 2) ծևի փուլը՝ խոսքի և նրա իմաստային հատկանիշների նյութական հենարանը և, վերջապես, 3) մտադրությունների, այսինքն՝ ներգործության փուլը, որ խոսող սուբյեկտը փորձում է առաջ քաշել՝ գիտակցորեն կամ ենթագիտակցորեն, և մեկնաբանության փուլը, որ լսողը հաղորդում է վերջինս դրդապատճառներին ու նպատակներին: Թարգմանիչները սվորաբար իրենց ուշադրությունը ըստում են իմաստային փուլին, որը նախորդում է մտադրությունների վերլուծությանը: Ընդ որում, վերոհիշյալ աշխատության մեջ իմաստը սահմանվում է որպես երկու տարրերի՝ մասնակիորեն իրացված իմակային խմբերի և հիշողության մեջ ներառնված ճանաչողական հավելումների ծովում /Seleskovitch, Lederer, 1984/:

Ըստ վերոհիշյալ ֆրանսիացի թարգմանաբանների՝ մարդկանց միջև հաղորդակցությունը տեղի է ունենում ոչ թե լեզվական միավորների, այլ խոսքային արտահայտությունների՝ որոշակի իմաստ արտահայտող տեքստերի փոխանակմամբ: Թարգմանական այս կաղապարում թարգմանչին վերագրվում է երկու դեր՝ ելակետային տեքստի ընդունող և թարգմանության տեքստի ստեղծող: Այս կաղապարի կարևորագույն օլակն է թարգմանչի կողմից ելակետային ասույթի իմաստի ընկալումը, որն իրականացվում է մեկնաբանության միջոցով: Մեկնաբանությունը տվյալ կաղապարի հիմնական հասկացությունն է, որն առնչվում է ոչ թե լեզվի միավորների, այլ գաղափարների, մտքերի հետ և սովորաբար հաշվի չի առնում միջլեզվական ծևական համապատասխանությունները:

Մեկնաբանությունը ենթադրում է վեր հանել տվյալ իմաստի արտահայտման համապատասխան միջոցը ժամանակի տվյալ պահին և տվյալ համատեքստում, այսինքն՝ բնագիրն ու թարգմանությունը կարող են համընկնել միայն նշված պայմաններում և, իհարկե, պարտադիր չեն, որ դրանք համարժեք լինեն լեզվական ձևի առումով: Իսկ սա նշանակում է, որ թարգմանության ժամանակ թարգմանիչը իմաստն առանձնացնում է իր լեզվական արտահայտությունից, այսինքն՝ տեղի է ունենում հաղորդման ապախոսքայնացում: Դ. Սելեսկովիչի պատկերավոր նկարագրությամբ՝ թարգմանիչը քանդում, առանձին թելերի է վերածում տվյալ լեզվանյութից հյուսված «գործվածքը», իսկ այնուհետև՝ ստացված թելերից հյուսում նոր գործվածքը: Մինչ նոր խոսքային արտահայտություն ստեղծելը թարգմանիչը հեղինակի միտքը վերածում է մի մտքի, որ դեռևս չունի լեզվական արտահայտություն: Ընդ որում, դա տեղի է ունենում վայրկենական ներհայեցմամբ, իսկ թարգմանչի հիշողության մեջ պահպանվում է միայն վերհանված իմաստը, որը նոր լեզվական մարմնավորում է ստանում թարգմանության մեջ /Seleskovitch, 1994: 37; Շմաբեկար, 2006: 245-248/:

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, թարգմանության մեկնողական տեսության մեջ կամ, ինչպես երբեմն ասվում է՝ իմաստի գործության մեջ թարգմանությունը դիտվում է որպես հաղորդակցական ակտ, որի նպատակն է վերարտադրել տեքստի իմաստը և ոչ թե նրա լեզվական միջոցները: Ըստ այս տեսության՝ թարգմանությունը մի մտավոր գործընթաց է, որը սկսվում է տեքստի ընկալումից՝ մի այլ լեզվում այլ լեզվական միջոցներով այն վերարտադրելու համար: Այս առումով՝ թարգմանական գործընթացն ավելի նման է միալեզվյան հաղորդակցության մեջ ընկալման և արտահայտման գործընթացներին և չի դիտվում որպես զուտ համեմատություն լեզուների միջև: Ընդ որում, այստեղ առանձնացվում է երեք փուլ: Առաջին փուլը լեզվական իմաստների և արտալեզվական գիտելիքների ծովումն է, որից ծագում է իմաստը: Բառի հետ ծովով գիտելիքները անվանվում են ճանաչողական լրացումներ, որոնք որոշակի իմաստ են հաղորդում նախադասություններին և օգնում թարգմանչն՝ խուափելու բառացի վերակողակորման սխալներից: Երկրորդ փուլը ապախոսքայնացումն է, իսկ երրորդը՝ տվյալ իմաստը լեզվական միջոցներով ազատորեն արտահայտելու փուլը:

Իր՝ «Բարելինից հետո» հայտնի աշխատության մեջ Զ. Սթայները նույնպես թարգմանությունը բնութագրում է որպես մեկնողական գործընթաց /Steiner, 1980/: Միջլեզվական թարգմանության մեջ առկա ցանկացած բառ նա վերագրում է ոչ թե լեզուների միջև եղած տարբերություններին, այլ այն փաստին, որ ամեն մի հաղորդակցություն ենթադրում է նաև փոխըմբռնման քիչ թե շատ բացակայություն: Թարգմանության տեսության մեջ Զ. Սթայների գիրքը կարևորվում է թարգմանական գործընթացի ուսումնասիրության առումով, որտեղ արդեն նկատելի է միջգիտակար-

գային մոտեցումը: Այնուամենայնիվ, այսօր՝ թարգմանաբանության բուռն զարգացման ժամանակաշրջանում, այն կարելի է առավելապես դիտարկել որպես մեկնողական-փիլիսոփայական աշխատություն:

Խոսելով թարգմանության մեկնողական-փիլիսոփայական տեսությունների մասին՝ հարկ է անդրադառնալ նաև իսպանացի թարգմանաբան է. Օրտեգա Արխոնիյային: Վերջինս, ելնելով լեզվի մասին փիլիսոփայական խորհրդածություններից, նշում է, որ թագմանիչը բախվում է մի տեքստի, որը ոչ միայն ի ցույց է դնում, այլ նաև լրության մատնում մտադրություններ, ցանկություններ, մշակութային տարրուներ և այլն: Թարգմանության ժամանակ ծագող տարաբնույթ խնդիրներից է, թե արդյոք թարգմանիչը պետք է թիրախ լեզվում հաղորդի այն, ինչ բնագրում հանդես է գալիս «որպես տեքստի ստվեր, որպես քիչ թե շատ պերճախոս լրություն» /Ortega Arjonailla, 1996: 52/:

Թարգմանության մեկնողական տեսություններում կարելի է վիճելի համարել այն միտքը, որ «արտահայտությունը կարող է ծագել ապախոսքայնացված իմաստից և ոչ թե լեզվական տարրերի մանհապովացիայից» /Veyrat Rigat, 1998: 30/: Սա, ինչ խոսք, հնարավորություն է տալիս դիտել լեզվական կողավորման և վերակոդավորման գործընթացները, սակայն ամենսին էլ ակնհայտ չէ, որ մի այլ լեզվում իմաստի վերարտահայտումը ծագում է մի մտքից, որն արդեն անջատվել է իր լեզվական կերպարանքից: Չէ՞ որ իրական խոսքային ստեղծագործության մեջ լեզուն և մտածողությունը ներդաշնակ ամբողջություն են: Վիճելի է նաև թարգմանական գործունեության տեսական հիմքերի փոխարինումը հաղորդակցության տվյալ իրադրության մեջ ծագող ակնթարթային, անկրկնելի, ներհայեցական իմաստի գաղափարով: Չէ՞ որ յուրաքանչյուր ասույթ, ինչպես միալեզվան, այնպես էլ երկլեզվան հաղորդակցության ժամանակ, բացի սուբյեկտիվ և իրադրային իմաստներից, պարունակում է նաև ընդհանուր տեղեկատվություն, որը տվյալ հաղորդակցության ընդհանուր միջուկն է և հնարավոր է դարձնում մարդկային հաղորդակցությունն ընդհանրապես և թարգմանությունը՝ մասնավորապես:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել թարգմանության մեկնողական տեսության որոշ արժանիքներ: Այս տեսությունը կարևորվում է և՛ բանավոր, և՛ գրավոր թարգմանության ժամանակ իմաստաստեղծման գործընթացը ուսումնասիրելիս. լեզվական ծևից «վերանալը», այն է՝ ապախոսքայնացումը, օգնում է նաև հաղթահարել լեզվական փոխներթափանցումները, լեզվական համակարգերի տարբերությունները և թարգմանություններ կատարելիս հիմնվել տվյալ լեզվի նորմերի վրա:

Թարգմանության մեկնողական-փիլիսոփայական տեսություններին է հարում նաև արդի թարգմանաբանության առավել հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Լ. Վենուտին, որը թարգմանությունը քննում է որպես մեկնաբանություն՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ թարգմանելիս արմատապես խզվում է տեքստի կապը տվյալ համա-

տեքստի հետ /Venuti, 2011/: Հաշվի առնելով լեզուների կառուցվածքային տարբերությունները՝ թարգմանիչը կազմաքանդում, վերադասավորում և վերջապես, տեղաշարժում է տեքստակազմից նշանակիչների շղթան: Հեղինակն առանձնացնում է սկզբնաղբյուր լեզվի երեք համատեքստ, որոնք չեն պահպանվում թարգմանելիս: Առաջինը ներտեքստային համատեքստն է՝ սկզբնաղբյուր տեքստի հյուսվածքի, նրա լեզվական նորմերի ու խոսքային կառուցների բաղկացուցիչ տարրը: Երկրորդ համատեքստը միջտեքստային է և միջխոսքային, ու նույնպես բաղկացուցիչ տարր, քանի որ պարունակում է լեզվական այն բոլոր կապերն ու հարաբերությունները, որոնց շնորհիվ ելակետային տեքստը սկզբնաղբյուր լեզվում իմաստ է ձեռք բերում: Երրորդը, որը նույնպես սկզբնաղբյուր տեքստի անբաժանելի մասն է, և միաժամանակ միջտեքստային, միջխոսքային և միջնշանային տարր, հաղորդումն ընդունող համատեքստն է: Սակայն սկզբնաղբյուր տեքստը ոչ միայն խզվում է տվյալ համատեքստից, այլ նաև վերստին տեղակայվում մի նոր համատեքստում այն չափով, որ թարգմանիչը այն նորից վերարտարյում է թարգմանության ընթերցողի համար հասկանալի ձևով՝ այն տեղադրելով այլ լեզվամշակութային արժեքների, այլ գրական ավանդույթների և սոցիալական հաստատությունների համատեքստում:

Ելակետային տեքստը վերստին նոր համատեքստում տեղադրելը ենթադրում է այլ միջտեքստային հարաբերությունների հաստատում թարգմանության մեջ և նրանում «ընդունող միջտեքստի» (intertexto receptor) առկայություն: Թարգմանության ժամանակ սկզբնաղբյուր տեքստը կրում է իմաստի և ձևի կորուատներ, իսկ թարգմանիչը կարող է այնպիսի մեկնաբանություններ զարգացնել, որոնք ավելի ակնհայտ են դարձնում լեզուների միջև մշակութային տարբերությունները: Որպես օրինակ Լ. Վենուտին քննում է մի ստեղծագործության հին հունարենից լատիներեն թարգմանության ժամանակ թիրախ մշակույթում ի հայտ եկած իրակությունները, ինչպես օրինակ՝ *me carpento vehentem (conduciendo carro)* արտահայտության մեջ սայի որոշակի տեսակի հիշատակությունը, որը բնորոշ էր միայն ոռմանական կայսրությանը /Venuti, 2011: 167/: Այսպիսով՝ ոչ միայն թարգմանվում են բառեր և արտահայտություններ, այլ նաև՝ հաստատվում մշակութային առումով յուրահատուկ իմաստներ:

Թարգմանչի մեկնաբանությունը կատարվում է մի մշակութային համատեքստում, որտեղ արժեքները, հավատալիքները, ինչպես նաև սոցիալական խմբերը, որոնց հետ վերջիններս զուգորդվում են, ներկայացված են իշխանության և հեղինակության ստորակարգային հարաբերությունների տեսանկյունից: Իսկ մեկնաբանության շնորհիվ հաստատված միջտեքստային հարաբերությունները ազդում են ինչպես սկզբնաղբյուր, այնպես էլ թիրախ տեքստի վրա:

Ըստ Լ. Վենուտիի՝ էթիկական խորհրդածությունը որպես թարգմանական ընդհանրույթ քննարկելու համար հարկ է որդեգրել պատմական

մոտեցում: Հայտնի է, որ ad sensum ռազմավարությունները շատ ազդեցիկ են և ծնունդ տվեցին թարգմանական այնպիսի ծրագրերի, որոնց արդյունքում ստեղծվեց հսկայական մշակութային ժառանգություն: Սակայն մարդկային սուբյեկտի անհատական՝ ճանաչողական և սոցիալական որակների կարևորման գաղափարը արդի ժամանակներում հարցականի տակ է դնում ad sensum ռազմավարությունները: Որոշ տեսաբաններ և թարգմանիչներ, ինչպես օրինակ՝ Անրի Մեշոնիկը և Անտուան Բերմանը, թարգմանությունը դիտարկում են որպես մշակութային պրակտիկա, որն ունակ է հարգելու օտարալեզու տեքստերի և մշակույթների տարբերությունները, և առաջադրել են խոսքային ռազմավարություններ այս տարբերությունները պահպանելու և արձանագրելու համար /Meschonnic, 2009; Berman, 2014/: Թարգմանությունը զուտ մեկնողական ակտ չէ, այլ նաև ունի տեղայնացնող բնույթ իր մեկնաբանություններում, որը «էթնոկենտրոն բռնություն» կատարելով ոչ միայն կրճատում է օտարալեզու տեքստը, այլ նաև ժամանակավորեալ է հին տեքստերի ժամանակակից փոխադրություններում /Venuti, 2011: 172-173/:

Թարգմանության ապակառուցողական մոտեցումները (Ժ.Դերիդա, Մ. Վիդալ Կլարամոնտե) նույնպես դասվում են մեկնողական-փիլիսոփայական կաղապարների շարքում: Իսպանական թարգմանաբանական դպրոցում այս տեսության ամենահայտնի ներկայացուցիչը Մ. Վիդալ Կլարամոնտեն է, որի կարծիքով թարգմանության վերաբերյալ ամենավիճելի տեսություններից մեկը ծագում է ժակ Դերիդայի՝ թարգմանության ակտի վերաբերյալ ապակառուցողական խորհրդածություններից: Այստեղ առաջադրվում է նորարարական մոտեցում բնագիր/թարգմանություն երկվության վերաբերյալ, որտեղ, ի տարբերություն ավանդական մոտեցումների, բնագիրը ստորադասվում է թարգմանությանը, փորձ է արվում «ի չիք դարձնել» համարժեքության հասկացությունը՝ կարևորելով թարգմանչի մեկնաբանությունները /Vidal Claramonte, 1995: 89/: Այս տեսանկյունից թարգմանությունը սահմանվում է որպես մեկնողական փոխակերպում, որը վեր է հանում բնագրի բազմաթիվ, շատ փոփոխուն, այդ թվում նաև հակասական իմաստները, որի պատճառով թարգմանության հասկացությունը փոխարինվում է փոխակերպում (transformacióն) հասկացությամբ /Vidal Claramonte, 1995: 90-91/: Նման ապակառուցողական տեսություններում թարգմանության խնդիրը դառնում է երկրորդական՝ վերածվելով փիլիսոփայական՝ ապակառուցողական բնույթի խնդիրի պահումը և այնպիսի մշակույթի առաջնային դրամատիկան, ինչպես նաև քիչ նշանակություն է տրվում տեքստի իմաստին՝ առավելապես կարևորելով տեքստի ծնը: Թարգմանության տեքստը գերազանցում է բնագրի տեքստին, աղբյուր տեքստի և թարգմանության տեքստերի միջև սահմաններն այլև նկատելի չեն, իսկ հավատարմության գաղափարը դիտվում է որպես հնացած հասկացություն, քանզի թարգմանությունը, որպես փոխակերպում, մշտապես «քանդվում է և ի չիք դառնում»:

Ապակառուցողականության հիմքերը հարկ է փնտրել հերմենուտիկայում՝ տեքստերի մեկնաբանության մասին ուսմունքում, նրա փիլիսոփայական հիմունքներում, որտեղ ընդունվում է, որ իմաստը յուրահատուկ է ամեն մի մշակույթում, և հնարավոր չէ այն ճգրտորեն վերարտադրել այլ մշակույթում։ Ամեն լեզու պարփակում է ուրույն լեզվական և մշակութային ինքնություն, որն էլ անհնար է դարձնում թարգմանությունը։ Ըստ Օրտեզա ի Գասետի՝ թարգմանությունը ընթերցողին առաջարկում է իր մշակույթին անհարիր և խորթ ինչ-որ բան և «նրան մի պահ զվարճացնում է լինել մի ուրիշը» /Vega, 1994: 308/։ Հերմենուտիկայի տեսանկյունից թարգմանությունը մի միջոց է, որը թույլ է տալիս ընթերցողին հասու լինել բնագրին, բայց այն երբեք չի կարող հավակնել նման լինել բնագրին կամ էլ լինել ինչպես բնագրիր։ Վալտեր Բենիամինը իր հայտնի «Թարգմանչի առաջադրանքը» էսեում նույնպես նշում է, որ իմաստը անքակտելի է տվյալ ստեղծագործությունից, և այն թարգմանությունը, որը փորձում է վերակերտել տվյալ ստեղծագործության բովանդակությունը, նախ և առաջ ձև է /Vega, 1994: 285-296/։ Թարգմանության մեջ որևէ բան հաղորդելու համար թարգմանիչը պետք է շրջանցի իմաստը, քանի որ այն ներհատուկ է միայն տվյալ ստեղծագործությանը։ Այս քառում իմաստը մի այլ՝ նախորդ իմաստի վերստեղծումն է, սա էլ իր հերթին՝ մի այլ նախորդի։ Նշանների միջև հարաբերությունները ստեղծվում են ժամանակի մեջ. չկա սկիզբ, չկա վերջ, սա մի շրջանաձև շարժում է, որտեղ թարգմանված տեքստը երբեք վերջնականը չէ, որովհետև իր գոյությամբ պարտական է նախորդներին և, այսպես, անորոշ և շարունակական ձևով։

Այս տեսությունը ենում է սոսուրյան հայտնի նշանակյալ-նշանակիչ երկանդամությունից, ինչպես նաև լեզվական նշանի կամայականության դրույթից։ Քանդելով նշանակյալ-նշանակիչ հարաբերությունները նոր նշանակյալ առաջարկելու համար՝ թարգմանությունը աղավաղում է իմաստը։ Այս տեսանկյունից թարգմանությունն այլևս վերարտադրություն չէ, այլ վերափոխում։

Այսպիսով, եթե թարգմանության մեկնողական տեսությունները հիմնականում կենտրոնանում են բանվոր թարգմանության ժամանակ իմաստատեղծման գործընթացի վրա, ապա մեկնողական-փիլիսոփայական տեսությունները, հատկապես արդի հայտնի թարգմանաբան Լ. Վենուտիի աշխատությունները մեծ ներդրում ունեն թարգմանության մշակութային հայեցակերպի, հատկապես թիրախ մշակույթի և թարգմանության փոխհարաբերակցության նորովի մեկնաբանման գործում։

Ի հակադրություն թարգմանության տեքստի թափանցիկության, սահունության և թարգմանչի «անտեսանելիության», որը ծեռք է բերվում թարգմանվող տեքստի մշակութային բաղադրիչների կորստի հաշվին՝ Լ. Վենուտին պահանջում է թարգմանչի «տեսանելիություն»՝ վերջինիս աշխատանքը տեսանելի և թափանցիկ դարձնելու նպատակով։ Իսկ սա

Ենթադրում է թարգմանությունը դիտարկել որպես մշակույթի վերակառուցում, որպես տարասեռ մի տեքստ, որտեղ ակնհայտորեն դրսնորվում են գաղափարական հակասությունները ու տարբերությունները, սոցիալ-մշակութային և լեզվական կոնֆլիկտները: Լ. Վենուտին թարգմանությունը քննում է որպես «դիմադրության», ինչպես նաև բանակցության և վերապրումի ծև՝ կարևորելով, որ թարգմանությունը պետք է դիտել որպես թարգմանություն և ոչ թե գերիշխող գաղափարախոսության կամ իշխանության տեսանկյունից բնական և սովորական շարադրանք: Լ. Վենուտին կարծիքով թարգմանության արժեքի և նրա ներունակ ուժի՝ որպես մշակութային և քաղաքական ակտի վերականգնումը, հնարավոր է միայն սահունության և անտեսանելիության գաղափարները հաղթահարելու ճանապարհով, որոնք իրականում մշակութային տարբերությունները միասնականացնում են՝ հիմնվելով թիրախ մշակույթի արժեքների վրա:

Թարգմանության էթիկայի մասին Լ. Վենուտին սկզբունքները սկիզբ են առել Ֆ. Շլյերմախերի գաղափարներից, որը հակված էր տեքստի օտարականացմանը՝ կարևորելով դրան ներհատուկ ուժը թարգմանության մեջ հաղորդելու գաղափարը: Այս խնդրում առավելապես հարում ենք այն թարգմանաբանների կարծիքին, որոնք գտնում են, որ օլորականացնելու և գնայնացնելու երկու հակադիր և միաժամանակ փոխլրացնող դիալեկտիկայի միջև իդեալականը միջակա ուղին է, երբ հարգելով օտարը՝ թարգմանությունը ունակ է նաև այն հաղորդել ընդունող մշակույթում:

Ինչ վերաբերում է թարգմանության ապակառուցողական տեսություններին, ապա վերջիններս կարելի է առավելապես բնութագրել որպես փիլիսոփայական խորհրդածություններ, որոնք գրեթե չեն առնչվում թարգմանական բուն գործընթացին՝ չափազանցելով նաև թարգմանության լեզվական և մշակութային «պատնեշները»:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Berman A. La traducción y la letra o el albergue de lo lejano. Buenos Aires: Dedalus, 2014.
2. Delisle J. L'analyse du discours comme méthode de traduction: initiation à la traduction française de textes pragmatiques anglais: théorie et pratique. Ottawa: Éditions de l'Université d'Ottawa, 1980.
3. Meschonnic H. Ética y Política del Traducir (traducción de Hugo Savino). Buenos Aires: Leviatán, 2009.
4. Ortega Arjonilla E. Apuntes para una teoría hermenéutica de la traducción. Málaga: Universidad de Málaga, Servicio de Publicaciones e Intercambio científico, 1996.
5. Seleskovitch D., Lederer M. Interpréter pour traduire. Paris: Didier Érudition, 1984.

6. Seleskovitch D. Interpreting for international conferences: Problems of language and communication. Washington: Pen and Booth, 1994.
7. Steiner G. Después de Babel: Aspectos del lenguaje y la traducción (traducción de Adolfo Castaño). México: Fondo de Cultura económica, 1980.
8. Vega M. Á. Textos clásicos de teoría de la traducción. Madrid: Cátedra, 1994.
9. Venuti L. “La traducción: entre lo universal y lo local” // Tópicos del seminario (25), Puebla, 2011.
10. Veyrat Rigat M. “Bilingüismo, traducción e interpretación de lenguas: aplicación al lenguaje de signos” // LynX. Cuadernos de Trabajo. Serie Alteraciones comunicativas y lenguas especiales. Volumen 19, Valencia: Universitat, 1998.
11. Vidal Claramonte M. Traducción, manipulación, desconstrucción, Salamanca: Ediciones Colegio de España, 1995.
12. Сдобников В. В., Петрова О. В. Теория перевода. М.: ACT: Восток-Запад, 2006.

**А. БАГДАСАРЯН – *О некоторых современных интерпретативных и интерпретативно-философских теориях перевода.*** – Статья рассматривает некоторые более известные интерпретативные и интерпретативно-философские теории современного переводоведения, в которых перевод преимущественно воспринимается как процесс. Цель статьи – оценить роль этих теорий в развитии новых подходов исследования в современной науке о переводе. Особое внимание уделяется идеям «заметности» переводчика, выдвинутым Л. Венути, которые сегодня стали предметом бурного обсуждения в теории перевода.

**Ключевые слова:** переводоведение, интерпретативная теория, интерпретативно-философская теория, деструктивность, эквивалентность, «незаметность переводчика», культура языка перевода

**Н. BAGHDASARYAN – *On Some Contemporary Interpretative and Interpretative-Philosophical Translation Theories.*** – The present paper examines some prominent interpretative and interpretative-philosophical theories of contemporary translation studies, where translation is mainly viewed as a process. The purpose of the paper is to evaluate the role of those theories in the development of contemporary translation thought. A special reference is made to the ideas of the renowned translation theorist L. Venuti on the translator’s “visibility”, which has nowadays become a source of heated discussions in the theory of translation.

**Key words:** translation studies, interpretative theory, interpretative-philosophical theory, destructiveness, equivalence, translator’s invisibility, target culture

**Մարիաննա ԵՓՐԵՄՅԱՆ  
Երևանի պետական համալսարան**

**ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ՄԱԿԴԻՐԻ ՈՐՈՇ  
ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Սույն հոդվածում քննության են առնվում փոխաբերական մակդիրի դարրեր մեկնաբանություններն արդի լեզվաբանության մեջ, անդրադարձ է կարարվում փոխաբերական մակդիրի դեսակներին, ներկայացվում են փոխաբերական մակդիրի իմաստային հիմնական առանձնահավկությունները, քննվում են ինչպես դրամաբանական որոշի և փոխաբերական մակդիրի, այնպես էլ փոխաբերության և փոխաբերական մակդիրի դարրերակի հավկանիշները: Փորձ է արվում ներկայացնել փոխաբերական մակդիրի իմաստային, ոճական որոշ առանձնահավկություններ Կամիլ Խոսե Սելայի սպեհծագործություններում:

**Բանալի բառեր.** մակդիր, փոխաբերություն, փոխաբերական մակդիր, մակադրյալ, դարրերակի հավկանիշներ, նրբարանություն, անձնավորող փոխաբերական մակդիր

Գոյություն ունի մտածողության երկու եղանակ՝ հասկացական-տրամաբանական և պատկերավոր-հուզական: Մտածողությունը կարող է արտահայտվել այնպիսի միջոցներով, որոնք կամ առարկայորեն են արտացոլում օբյեկտիվ իրականության իրերն ու երևույթները կամ պատկերների միջոցով՝ խոսքի հատուկ կառույցներով՝ հագեցած հոյզերով ու զգացմունքներով: Մտածողության հենց երկրորդ եղանակի դեպքում էլ առնչվում ենք փոխաբերական առումով գործածվող մակդիրների հետ՝ բառերի կապակցություններ, որոնք արտահայտում են պատկերավորություն, զգացականություն ու հուզականություն:

Լեզվաբանական գրականության մեջ մակդիրը դարձել է մի շարք ուսումնասիրությունների առարկա: Էդ. Զերայանն, օրինակ, նշում է, որ փոխաբերական մակդիրների մոտ միշտ առկա է բառի որոշակի իմաստափոխություն. որևէ նմանության կամ զուգահետի հիման վրա բառը ծեռք է բերում նոր, անուղղակի իմաստ, որի շնորհիվ բնորոշումը դառնում է ավելի պատկերավոր և տպավորիչ: Գրականագետը, հակադրելով Զարենցի ստեղծած մակդիրները՝ արևահամ բառ, արնանման ծաղկեներ, լուսապսակ ճակար և հեղածկուն պար, ողբածայն երգ, կարուղած սիրու, մուգ երկինք, ջինջ ջրեր, ցուց է տալիս, որ ներկայացված առաջին շարքի մակդիրները ընկալվում են անուղղակի, պատկերավոր առումով /Զբբայան, 1980: 233/: Պ. Պողոսյանը նույնպես հակադրում է իրար փոխաբերական և ոչ փոխաբերական մակդիրները՝ ընդգծելով, որ

մակդիրների ճնշող մեծամասնությունը հենց փոխաբերական են լինում /Պողոսյան, 1990: 46/:

Հատկանշական է Մ. Փոլադյանի մոտեցումը այս խնդրի շուրջ. «Մակդիրների փոխաբերական հատկությունը չի բացառվում, եթե միայն նրանցում առկա է «տեղափոխում ճանաչողական մի տարածքից մտային-ճանաչողական մի ուրիշ տարածք» /Փոլադյան, 2000: 86/:

Ուստի լեզվաբանները նույնպես զատում են փոխաբերական մակդիրները որպես այլաբերության յուրահատուկ տեսակ, որոնք «ոչ միայն բնորոշում են առարկան կամ ընդգծում նրա որևէ կողմը, այլև ուրիշ առարկայից կամ երևությից նրան կցում են նոր, լրացուցիչ որակ» /Словарь литеатуроведческих терминов, 1974: 469-470/: Համաձայն այս բառարանի բնորոշման՝ մակդիրներն անդրադառնում են ոչ միայն առարկայի հատուկ, հիմնական հատկանիշներին, այլ նաև արտահայտում են հավանական, մտացածին, հատկանիշներ, հետևաբար և կարելի է մակդիրներն ընդգրկել դարձույթների մեջ: Փոխաբերական մակդիրների օրինակներով հարուատ է ի. Գոլութի աշխատությունը, որտեղ տրվում է նաև որոշիչների և փոխաբերաբար գործածվող մակդիրների համեմատություն՝

Լимонный сок – Лимонный свет луны

Седой старик – Седой туман

Лакей лениво прислуживал хозяину-Река лениво катит волны /Голуб, 2008: 139/

Վերոնշյալ օրինակների որոշիչները, ընդգծում, առանձնացնում են իրենց որոշյալի որևէ տրամաբանական հատկանիշ, սակայն օժտված չեն այն հուզական նրբերանգներով, որ հատուկ են փոխաբերական մակդիրներին: Վերջիններիս մեջ ակնհայտորեն դրսնորվում է հեղինակային մտածողության անհատականությունը. այս դեպքում հեղինակն օժտում է այս կամ այն առարկան, երևությունը նոր, առանձնահատուկ, երբեմն մտացածին հատկանիշներով, կանխամտածված կերպով վերահիմաստավորում համատեքստը՝ ստեղծելով նվազագույն համատեքստ մակդիր-մակադրյալ կապակցության մեջ: Այս դեպքում անհրաժեշտ է, որ մակդիր-մակադրյալ կապակցության կապն այնքան նեղ լինի, իսկ ստեղծված բանաստեղծական մթնոլորտն այնքան ամբողջական, որ ընկալելի լինի փոխաբերական մակդիրի իմաստը և, առհասարակ, տվյալ մակդիրի ընտրությունը:

Հայտնի լեզվաբան Բ. Տոմաշևսկին մատնանշում է **փոխաբերության** և **փոխաբերական մակդիրների** էական տարբերությունը. փոխաբերական մակդիրը սովորական փոխաբերությունից տարբերվում է համադրման տարրի առկայությամբ: Հեղինակը որպես օրինակ ներկայացնում է «զբյ» և «շեմպչյուն» բառերի համադրումը: Համատեքստում կարելի է «զբյ» բառը փոխարինել «շեմպչյուն» բառով: Այս դեպքում կառնչվենք ամենալայն իմաստով փոխաբերության հետ, որը հաճախ անվանվում է «մաքուր փոխաբերություն» (իսպ. *metáfora pura*), իսկ նրա

ոճական ողջ արդյունավետությունը «զբա» բառը չկիրառելու մեջ է: Այդուհանդերձ, կարելի է նաև ասել «չեմպույս զբա» կամ «զբա - չեմպույս»: որի դեպքում կառնչվենք բառային համադրության հետ՝ անվանելով և՝ առարկան՝ իր ուղիղ իմաստով, և՝ փոխաբերաբար գործածվող բառը /Տոմաշևսկի, 1999: 38/: Իհարկե, ինչ - ինչ առումով փոխաբերական մակդիրը չունի այն ուժգնությունը, որ բնորոշ է փոխաբերությանը, սակայն նրա յուրահատուկ հմայքը հենց ընթերցողի համար ավելի թեթև, մատչելի և ընկալելի լինելու մեջ է: Հեղինակի պնդմամբ՝ մակդիրը քայլ է դեպի փոխաբերական համեմատություն:

Բ. Տոմաշևսկիի հայեցակետն է կիսում նաև հայտնի լեզվաբան-ոճագետ Ի. Գալյաբերինը, որն, անդրադառնալով մակդիրների և փոխաբերությունների հիմնական տարբերությանը, նշում է, որ փոխաբերություններն ավելի սուր են և պարտադրող, մինչդեռ մակդիրներն ավելի մեղմ են ու խորքային: Հեղինակը նաև անդրադառնում է մակդիրների առանձնահատկությանը հոգեբանական տեսանկյունից. դրանց ենթագիտակցական ազդեցությունն ընթերցողի վրա այնքան ուժգին է, որ վերջինս սեփական կամքից անկախ սկսում է գնահատել և արժևորել երևոյթներն այնպես, ինչպես հեղինակն է ցանկանում /Գալյուրին, 1981: 162/:

Հաճախ փոխաբերության ուժգնությունը պահպանելու համար փոխաբերական մակդիրը փոխարինվում է **նրբարանությամբ (օքսիմորոնով)**, այսինքն՝ այնպիսի մակդիրով, որն իր իմաստով հակասում կամ հակադրվում է իր մակադրյալի իմաստին (*horribly beautiful, low skyscraper, pleasantly ugly face*) /Գալյուրին, 1981: 162/: Սակայն ամեն մի միմյանց ժխտող ու հակադիր հասկացությունների պատահական զուգորդում չի կարող դառնալ նրբարանություն: Այն առաջանում է, եթե իմաստով միմյանց ժխտող բառ-հասկացություններն ընտրվում են այնպես, որ դրանց զուգորդումով արտահայտվի իմաստալից գաղափար /Պողոսյան, 1990: 77/: Նրբարանության առանձնահատկություններից մեկը նրա հակիրճությունն է: Նշված յուրահատկությունների պատճառով կարելի է նրբարանությունը դասել այն այլաբերությունների շարքին, որոնք այնքան էլ գործածական չեն գեղարվեստական գրականության մեջ:

Տվյալ հոդվածում մակդիրի առանձնահատկությունները ըննելու համար որպես փաստական նյութ են ծառայել Կամիլո Խոսե Սելայի «Փեթակը» և «Պասկուալ Դուարտեի ընտանիքը» ստեղծագործությունները: Նշված ստեղծագործություններում կարելի է հանդիպել նրբարանության օրինակներ, սակայն մակդիրի այս տեսակն ավելի քիչ գործածական է և քանակային առումով բավականին զիջում է փոխաբերական մակդիրների կիրառությանը: Օրինակ՝

*El silencio con su larga campana* volvió a llenar el cuarto. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.48)

A lo mejor, es *una vieja pudibunda*. (C. J. Cela, La colmena, p.10)

Վերոնշյալ օրինակներում առանձնանում են *el silencio con su larga campana (լրությունը երկար զրնգունով)* և *una vieja pudibunda (ծերացած օրիորդ)* նրբարանությունները, որոնք յուրահատուկ հմայք են հաղորդում տվյալ նկարագրություններին՝ դրանք դարձնելով ավելի ամբողջական:

Այլ տեսանկյունից է մոտենում փոխաբերական մակդիրների հետազոտությանը Ա. Ն. Վեսելովսկին իր «Историческая поэтика» հանրահայտ աշխատության մեջ: *Հեղինակը մակդիրների զարգացման շղթայում անդրադարձ է կատարում փոխաբերական մակդիրներին՝ հիմք ընդունելով մակդիրային միավորը* (ըստեղականացության): Ա. Ն. Վեսելովսկին պարզաբանող մակդիրները բաժանում է իմաստային ենթախմբերի, որոնց մեջ որպես առավել հատկանշական ենթախմբեր առանձնացնում է **փոխաբերական և սինկրետիկ մակդիրները**: Առաջին ենթախմբի մակդիրներն ենթադրում են տպավորությունների զուգահեռականություն, համեմատում և տրամաբանական հավասարեցում: Որպես օրինակ բերվում է *չերայա տօսկա կապակցությունը*, որը ցույց է տալիս նախ խավարի և լուսի հակասությունը, զուգահեռներ է անցկացնում լուսի և ուրախ տրամադրության, խավարի և տիբության միջև, ապա ընդհանրացնում տեսողական տպավորությունն ու հոգեբանական նշանակությունը, որտեղ սկզ դառնում է տիբության խորհրդանշիչ /Վեսելովսկի, 1989: 61/: Մինչդեռ երկրորդ տեսակի մակդիրներն ունեն ֆիզիոլոգիական սկզբունքներ: Մարդկային տպավորությունները լրանում են զգայարաններով ու հաճախ խոսքի մեջ արտացոլվում չտարրողշված ձևով: Բնության ու կյանքի մասին հասարակական գիտելիքների խորացումն ընդարձակում է հոգեբանական պատկերացումները զանազան երևույթների վերաբերյալ, որի շնորհիվ մակդիրներին բազմազան բնույթ է հաղորդվում: Սակայն նրանցում դժվար է տարբերել զգայական տպավորություններից առաջացած և «երանգների գիտակցական համադրմամբ» ծագած մակդիրները: Այդ նպատակի համար պահանջվում են բազմազան օրինակներ: Զգայական միակցմամբ առաջացող սինկրետիկ մակդիրներ առանձնացնում են նաև այլ հեղինակներ, օրինակ՝ Վ. Ս. Բանսկին և Վ. Ա. Սապոգովը /Յոլյա սովետական էնցիկլոպեդիա, 1978: 30/:

Վերոնշյալ երկու տիպի մակդիրների հիմնական տարբերությունն այն է, որ փոխաբերական մակդիրները ենթադրում են գիտակցականության որոշակի աստիճան, իսկ միախառնված հատկանիշները բնութագրական են սինկրետիկ տիպին /Վեսելովսկի, 1989: 52/: Այնուամենայնիվ, այս երկուսի միջև մնում են բազմաթիվ ընդհանրություններ:

Այլ տեսանկյունից է անդրադառնում մակդիրների և փոխաբերական մակդիրների բնորոշմանը ոուս լեզվաբան Ի. Գալաքերինը՝ հիմնվելով անգիբերենի լեզվանյութի վրա: Վերջինս մակդիրներն ուսումնասիրում է կառուցվածքային և իմաստային տեսանկյունից: *Հեղինակը իմաստային տեսանկյունից տարբերակում է մակդիրների զուգորդված (associated*

*epithets) և չզուգորդված (unassociated epithets)* տեսակները: Չուգորդված մակդիրները մատնանշում են այնպիսի հատկանիշ, որ բնորոշ է տվյալ առարկային, անմիջականորեն առնչվում է նրա հետ (*dark forest, careful attention, fantastic terrors*): Մինչդեռ չզուգորդված մակդիրներն (նկատի են առնվում փոխարերական մակդիրները) իրենց մակադրյալին ոչ բնորոշ, հաճախ նոր, անսպասելի հատկանիշ են փոխանցում՝ զանազան հոգեբանական զուգորդումներ առաջացնելով ընթերցողի մոտ իրենց հանկարծակիությամբ (*heart-burning smile, voiceless sands, bootless cries*) /Գալյուրին, 1981: 158/: Այնուամենայնիվ, հարկ է հաշվի առնել, որ չզուգորդված մակդիրները համարյա միշտ համատեքստային են և ազդեցիկ տպավորություն են գործում միայն տվյալ համատեքստի շրջանակներում: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նույն դասակարգմանն է հարում նաև հայտնի լեզվարան, ոճագետ հ. Առնոլդը /Արհոլյան, 1973: 69/:

Կ. Վ. Գոլուբինան մակդիրները դասակարգում է ճանաչողական մոտեցումով՝ փորձելով ճանաչողական տեսանկյունից ամրագրել մակդիրներում պարփակված ոճական տեղեկատվությունը: <Եղինակը տարրերակում է մակդիրների մտավոր երեք կաղապար՝ **փոխարերական մակդիրներ** (печальное небо), **փոխանվանական մակդիրներ** (громкий город), **փոխարերական-փոխանվանական մակդիրներ** (печальное глаза) /Գոլյուբինա, 1998: 25/:

Վերջին տիպի մակդիրային կապակցության մեջ հանդիպում ենք միաժամանակ և՝ փոխարերական, և՝ փոխանվանական մակդիրներ՝ մի կողմից՝ փոխարերական մակդիր աչքերի հատկանիշի զուգորդման ընկալումով, մյուս կողմից՝ փոխանվանական մակդիր՝ կառուցվածքային իմաստով (глаза печальноого человека): <Եղինակը պնդում է, որ համատեքստային մակարդակում վերոնշյալ երեք տիպերը փոփոխվում են, իսկ փոխարերական մակդիրները համընդհանուր են և իրենց կաղապարը կազմում են նմանության հատկանիշի հիման վրա:

Իսպանական լեզվարանական աղբյուրներում մակդիրի ուսումնասիրությունները մեծապես զիջում են փոխարերության, փոխանունության և այլ դարձույթների շուրջ իրականացված հետազոտություններին: Առավել ծանրակշիռ կարելի է համարել Գ. Սոբեյանոյի պատմական անդրադարձը այս խնդրի առնչությամբ՝ իմմք ընդունելով անմիջապես մի քանի չափանիշներ (ծնաբանական, շարահյուսական, իմաստային, ոճական), սակայն համապարփակ դասակարգում չի տրվում, և շատ տեղերում ինչպես դասակարգումներն, այնպես էլ համապատասխան օրինակները վիճելի են: <Եղինակն առանձնացնում է փոխարերական մակդիրի երկու տեսակ՝ **նկարագրական (epíteto descriptivo)** (manos níveas) և **ներգործող (epíteto sugestivo)**, որն առնչվում է ընթերցողի երևակայությանը և ստիպում մտածել (caía la nieve, blanca, silenciosa, interminable) /Sobejano, 1970: 150-151/:

Փոխաբերական մակդիրների քննության ժամանակ առաջ են գալիս մի շարք կարևոր հարցադրումներ. ի՞նչ լեզվական միջոցներով և ինչպիսի՞ համանմանությունների հիման վրա է կատարվում փոխաբերական մակդիրների իմաստային առկայացումը և ինչպես են ներազդում այսպիսի կապակցություններն ընթերցողի վրա:

Փոխաբերական մակդիրային կապակցությունների համար մեծամասամբ հիմք են ծառայում **անհատի մարդակերպական պատկերացումները** (անտրոպոմորֆիկական պատկերացումները): Մարդը իրեն շրջապատող աշխարհի վերաբերյալ համեմատություններ է կատարում սուրյեկտիվ հիմունքներով, որով և պայմանավորված է գեղարվեստական երկի սուրյեկտիվ բնույթը: Ուստի, փոխաբերական մակդիրները հեղինակի և ընթերցողի միջև փոխգործունեություն են ստեղծում, ենթադրում վառ ու գունեղ պատկերներով հագեցած մակդիրային կապակցություններ, որոնց հիմքում ընկած են թաքնված համեմատություններ: Այս պարագայում անհրաժեշտ է, որ ընթերցողը կարողանա տեսնել և ընկալել բառիմաստի ետևում թաքնված երկրորդ պլանը: Չե՞ որ փոխաբերությունն ինքնին պահանջում է ընթերցողից երևակայության և մտքի թոփչք, իսկ երբեմն նաև հումորի զգացում:

Իմաստային առումով ավելի ոյուրին կերպով են փոխաբերականացվում բազմիմաստ, հարուստ տեղեկատվությամբ հագեցած այն ածականները, որ ցույց են տալիս, թե ինչից է պատրաստված տվյալ առարկան, ինչ ծև և պարունակություն ունի, ինչ գոյնի է և նմանատիպ այլ բնորոշումներ: Քննենք մի քանի օրինակ Կ. Խոսե Սելայի ստեղծագործություններից:

*La tímida, azulencia llama del gas (գազի ամոթխած կապրավուն կրակը) lame, pausadamente, los bordes del puchero. (C. J. Cela, La colmena, p.38)*

“O echa Ud. a puntapiés a ese *hombre rojo irrespetuoso y sinvergüenza* ... (բառացի՝ անհարգալից ու անամոթ շիկնած բրդամարդ) (C. J. Cela, La colmena, p.11)

Անկասկած, փոխաբերությունների ստեղծումը անմիջական կապի մեջ է գտնվում լեզվակիրների հասկացությային համակարգի, նրանց աշխարհընկալման, աշխարհայացքի, ինչպես նաև աշխարհի արժևորման հետ /Մասլովա, 2001: 183/: Այսինքն՝ հոգեբանական փոխաբերական մակդիրները ստեղծվում են՝ հիմնվելով այս կամ այն լեզվամշակությային հանրույթում ընդունված լեզվական համընդհանուր կարծրատիպերի, ավանդույթների ընկալման վրա:

*La Filo pone la voz cariñosa... (քնքուշ ձայնով է խոսում), Filo pone la voz mimosa... (շոյիշ ձայնով է խոսում) (C. J. Cela, La colmena, p.38)*

*...noches tranquilas... (խաղաղ գիշերներ) días tristes... (կիսուր օրեր) (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.65)*

*...el mirar lleno de amargura (դառնությամբ լի հայացքով) (C. J. Cela, La colmena, p.10)*

Rosario se sonreía con su sonrisa triste (պիտուր ժպիլով), la sonrisa de los desgraciados de buen fondo... (բարի ներաշխարհ ունեցող դժբախսի ժպիլով) (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.75)

Նշված օրինակներին, որոնք այսօր շատ գործածական են, հակադրվում են հեղինակային փոխաբերական մակդիրները, որոնց փոխաբերական իմաստը հիմնվում է անհատական գուգորդումների վրա, ինչպես և կարելի է նկատել հետևյալ օրինակներում՝

...con su sonrisa amarga y ruin de hembras enfriadas (բառացի՝ սառած էգերի աննշան ու դառը ժպիլով), con su mirar perdido muchas leguas a través de los muros (ցանկապակից շաբար հեռու կողցրած ժպիլով) (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.48)

Un nido de alacranes (կարիճների բույն) սերվուած առաջինում կիրառված փոխաբերական մակդիրով ներկայացվում է Կ. Խ. Սելայի «Պասկուալ Դուարտեի ընտանիքը» վեպի գլխավոր հերոսի մոր արտաքինը, որի դժբախտ կյանքը արտացոլվել է իր դառն ու սառը ժպիտով: Սակայն ինչպես վերոնշյալ մակդիրների (*amarga, ruin, enfriada*), այնպես էլ մակարդյալի (*hembra*) ընտրության մեջ ակնհայտորեն դրսնորվել է հեղինակի բացասական վերաբերմունքը նշված կերպարի նկատմամբ: Խիստ բացասական հարանշանակությամբ օժտված *hembra* (էգ) բարի փոխարեն կարող էր կիրառվել *mujer* (կին) բառը, սակայն վերջինս ընթերցողի մեջ չէր առաջացնի այն բազմաթիվ բացասական գուգորդումներն ու տրամաբանական դատողությունները, որ առկա են առաջին դեպքում: Երկրորդ օրինակում Կ. Խ. Սելայի կողմից օգտագործվել է *nido de alacranes* (կարիճների բույն) կապակցությունը որպես մակդիր, որի ընտրությունը նույնպես պատահական չէ: Ամբողջ նախադասությունը անհագուրդ վրեժի նկարագրություն է, որ տակնուպար էր անում գլխավոր հերոսի հոգին: Այսպիսով, մի քանի օրինակների վերլուծությունն արդեն բավարար է ցուց տալու համար անհատական-հեղինակային փոխաբերական մակդիրների ուժգին հուզաարտահայտչականությունը և ընտրության դիտավորությունը: Բայցևայնպես, չնայած վերոնշյալ փոխաբերական մակդիրների հուզական ու հոգեբանական կողմի առավելություններին՝ դրանք բոլորն էլ հակված են էվոյուցիա ապրելու և մի օր դառնալու իրենց բազմիմաստ մակարդյալի կայուն իմաստներից մեկը, այսինքն՝ լեզվական կամ «մարած» փոխաբերություն /Կարայլով, 1992: 127/:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ շատ մակդիրային կապակցություններ՝ թե՛ ուղղակի, թե՛ փոխաբերական, անմիջականորեն առնչվում են մարդու զգացողություններին (տեսողական, լսողական, շոշափողական, հոտառական, համային): Սրանց մեջ կարելի է առանձնացնել ինչպես հեղինակային, այնպես էլ կայուն, դրոշմված մակդիրներ: Մեծամա-

սամբ այս կարգի մակրիրները Կ. Խ. Սելայի կողմից կիրառվում են հուզական, հոգեբանական, իսկ երբեմն նույնիսկ ճնշող առեղծվածային մթնոլորտ ստեղծելու համար: Օրինակ՝

... *la mirada llena de pesar...* (թախիծով լի հայացք) (C. J. Cela, La colmena, p.13)

... *sonrían con el aroma de su felicidad...* (ժպում են իրենց երջանկության բույրով) (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p. 11)

Doña Rosa pone *la dulce voz, la persuasiva voz de los consejos...* (ընդունում է խորհուրդներին հապուկ քաղցր, համոզիչ ձայն) (C. J. Cela, La colmena, p.14)

Պասան արյունաբերության մասին առաջարկությունները կազմում են առաջարկայի ձայնով էին հնչում (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.48)

La dueña se ríe por lo bajo *con una risita cruel.* (անգութ ժպիրով) (C. J. Cela, La colmena, p.31)

Pasó por *momentos duros, de graves crisis de ánimo.* (քառացի՝ դաժան ակնթարթներ, ծանր հոգեկան ճգնաժամեր) (C. J. Cela, La colmena, p.13)

Կ. Խ. Սելայի ստեղծագործությունների առանձնահատկություններից է նաև մեկ մակադրյալի հետ մի քանի փոխաբերական մակրիրների կիրառությունը (հաճախ երկուսը, որտեղ առաջինի փոխաբերական իմաստը լրացվում կամ մանրամասնությունը): Օրինակ՝

... *teníamos un burrillo matalón y escurrido de carnes* զարդարությունների առաջարկայի ձայնով (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.13)

Los clientes... adoptaban *un aire serio, ecuánime, un poco vergonzante...* (անկողմնակալ, լուրջ ու մի փոքր ամոթիսած լրեաք) (C. J. Cela, La colmena, p.11)

Se oían *unas agrias, agudas, desabridas notas de flamenco callejero...* (քառացի՝ դառը, սուր ու մոայլ փողոցային ֆլամենկոյի նորաներ) (C. J. Cela, La colmena, p.32)

Փոխաբերական մակրիրների մեջ որպես կարևորագույն ենթախումբ կարելի է առանձնացնել **անձնավորում ցույց տվողները:** Անձնավորող փոխաբերական մակրիրներն այնպիսի փոխաբերություններ են, որտեղ բնությանը, իրերին, երևույթներին, կենդանիներին վերագրվում են մարդուն բնորոշ հատկանիշներ, և դրանք ընկալվում են որպես կենդանի էակներ /Զահուկյան, Խլղաթյան, 2007: 94/: Ավելի հազվադեպ կարող ենք հանդիպել հակառակ երևույթին, երբ մարդուն են վերագրվում ոչ մարդկային հատկանիշներ: Խոսե Սելայի ստեղծագործություններն աչքի են ընկնում անձնավորող փոխաբերական մակրիրների յուրահատուկ ընդգծվածությամբ և առատությամբ: Տվյալ հոդվածում փորձ է կատարվել դասակարգել վերջիններս ըստ նյութական և ոչ նյութական աշխարհների անձնավորման տարբեր փոխաբերությունների.

**Բնությանը վերագրվող մարդկային հայրկանիշներ**

*El mal aire traidor* (չար ու դավաճան քամին) andaba aún por el campo perdido en los olivos ... (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.48)

... tumbado boca arriba sobre el jergón; viendo pasar *las horas paralíticas* ... (քառացի՝ կաթվածահար եղած ժամեր) (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.53)

**Սյութական աշխարհին վերագրվող մարդկային հայրկանիշներ**

... llevándose la mano al ala de *su triste y mugriento sombrero gris*... (մույլ ու կեղպով գլխարկ) (C. J. Cela, La colmena, p.30)

**Վերացական հասկացություններ (կիլիխոփայական, հուզական և այլն)**

Sobre los dos hermanos se cuelgan *unos instantes de silencio, insospechadamente llenos de suavidad.* (անսպասելի լրությամբ լցված քնքանքի ակնթարթներ) (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.37)

Le decía desde dentro del pecho *una vocecita tímida y saltarina* ... (ամորթիած ու երերուն ձայն) (C. J. Cela, La colmena, p.32)

**Կենդանիներին վերագրվող մարդկային հայրկանիշներ**

*La perilla* volvió a echarse frente a mí y volvió a mirarme; ... *tenía la mirada de los confesores, escrutadora y fría*... (ապաշխարող գննող ու սառը հայացք ուներ) (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.13)

**Անշունչ առարկաներին, երևությներին վերագրվող մարդկային հատկանիշներ**

... se le ablandó *la fuerza del bigote* (բեղերի ուժը թուլացավ) y ya para abajo hubo que llevarlo hasta el sepulcro. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.15)

**Մարդուն վերագրվող բնության հայրկանիշներ**

...tener *una primera juventud turbulenta, llena de complicaciones y de veleidades...* (կամակորություններով ու դժվարություններով լի, փորորկուն վաղ երիտասարդություն) (C. J. Cela, La colmena, p.13)

**Մարդուն վերագրվող կենդանիներին բնորոշ հայրկանիշներ**

... *la cara pintado el gesto de la bestia ruin, de la amorosa, suplicante bestia cansada...* (հիվանդ կենդանու մեղմ, հոգնադանջ կենդանու աղերսող դեմքի արդահայլությամբ) (C. J. Cela, La colmena, p. 10)

El niño no tiene *cara de persona, tiene cara de animal doméstico, de sucia bestia, de pervertida bestia de corral.* (Երեխան մարդկային դեմք չունի, ընկանի կենդանու, փարախի կեղպով և արագավոր գազանիկի դեմք ունի) (C. J. Cela, La colmena, p.35)

Կամիլո Խոսե Սելայի ստեղծագործությունների յուրահատկություններից մեկն էլ այն է, որ այստեղ հիմնականում շարահյուսորեն շրջուն և հմաստային առոմենով բարդ փոխաբերություններ են կիրառվում: Նրա վեպերում նկատելի է փոխաբերական մակրիների խրթինություն՝ ծնի և հմաստային առումներով: Անժխտելի է, որ սա համապատասխանում է

գրողի գեղագիտական ճաշակին: Հիմնականում հեղինակի կողմից կիրավող այլաբերական միջոցները դժվարությամբ են ընկալվում:

Seguía de las mismas mañas y de iguales malas artes (Նոյն խորամանկություններին էր դիմում)… (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.77)

... su ademán, siempre hurao y despegado (ինձո՞ւ և անբարեհամբույր շարժուծնով), con su conversación hiriente y siempre intencionada, (չարամիտ, վիրավորական զրոյցներով) con el tonillo de voz (փաղաքշական ձայնով) que usaba para hablarme. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.77)

Միևնույն մակդիրը կարող է օգտագործվել և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստներով:

*tener gran aire, aire de gran señor* (կիսաքերական իմաստ) (գոռող պեսք ունենալ, ազնվազարմ պարոնի պեսք) – *los aires del campo* (ուղիղ իմաստ) (գլուղական օդը)

se veía que era de una gran familia (փոխարերական իմաստ) (հարուսագը ընկանանիրից) - una pena grande (ուղիղ իմաստ) (մեծ ցավ)

Առանձնահատող է հեղինակի ընտրությունը փոխաբերական մակդիրների խնդրում, երբ ներկայացնում է հերոսների արտաքին նկարագրությունը.

atónitos ojos de un pájaro disecado (ξηρωσμένα ματαία μερικάσια αγράμματα); ... Doña Rosa clava sus ojitos de ratón (μάτιαν αγράμματα) ...; dientecillos renegritos, llenos de basura (κατηγορητικά ψεύτικα ματαία μερικάσια αγράμματα) ...

... con la camisa sucia de un mes (մեկ ամսվա կեղպող վերնաշապիկով)  
... (C. J. Cela, La colmena, p.34)

Վերոնշյալ փոխարքերական մակրիների առաջին օրինակներում արտացոլվում է Տիկին Ռոսայի արտաքին նկարագրությունը, որտեղ վերջինս ներկայանում է որպես հսպանիայի տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գյուղական, ոչնչով աչքի չընկնող մի կին: Մակրիների ընտրության մեջ նկատելի է հերինակի պարզ հակակրանքը կնոց արտաքինի հանդեպ:

Բազմաթիվ փոխաբերական մակդիրներ կարելի է հանդիպել հատկապես հերոսների հոյզերը և հոգեվիճակները բացահայտող, բնորոշող հատվածներում.

Por su cabeza vuelan las briznas de la conciencia que se le resisten... (զիսակցության փորբիկ պարտություն) (C. J. Cela, La colmena, p.34)

... llorar largamente, hasta caer rendida, con los nervios destrozados (պարտ-պարտ եղած նյարդերով), pero ya más tranquila, más razonable. (C. J. Cela, la familia de Pascual Duarte, p.61)

Դատելով վերոնշյալ օրինակներից, ինչպես նաև քննվող ստեղծագործությունների ընդհանուր հոգեբանական ճնշող մթնոլորտից՝ կարելի է ասել, որ հերոսների հուզական դաշտը որպես կանոն բացասական է՝ միախառնված համապատասխան տիաճ զգացողություններով՝ տիսրություն, մելամաղձոտություն, անտարբերություն, զգվանք, ատելություն, վրեժի անհագուրդ ծարավ: Անշուշտ, նշանակած բոլոր հոգերի հետ կիրառ-

վլում են բացասական զուգորդումներ առաջացնող համապատասխան մակդիրներ՝ *las briznas de la conciencia* (գիտակցության փոքրիկ պատառներ), *con los nervios destrozados* (պատռ-պատռ եղած նյարդերով):

Կարելի է եզրակացնել, որ հեղինակի երևակայությունը սահմաններ չի ճանաչում և չի կարող պարփակվել բարիմաստի սահմանափակ կաղապարով: Մակդիրային կապակցության մեջ կարող են որպես մակադրյալ ծառայել ամենանհավանական առարկաներ ու երևոյթներ, որտեղ մակդիրները բացահայտում են տվյալ առարկաների, երևոյթների ամենանսպասելի, երբեմն նույնիսկ տարօրինակ հատկանիշներ՝ առաջացնելով ընթերցողի գիտակցության մեջ ամենատարբեր զուգորդումներ: Ուստի, մակդիրների, մասնավորապես փոխարերական մակդիրների գործածության բացառիկ նպատակադրումն անվիճելի է՝ հուզել, մեծ տպավորություն գործել, ընթերցողի ուշադրությունը հրավիրել այս կամ այն առարկայի, երևոյթի այն հատկանիշների վրա, որոնք ինչ-ինչ պատճառով դեռևս չեն նկատվել կամ չեն կարևորվել:

Այսպիսով, փոխարերական մակդիրների շուրջ կատարված հետազոտությունը մեզ բերում է այն համոզման, որ որքան ավելի կարևորվի մակդիրի դերը խոսքում, այնքան խոր և լիարժեք հնարավոր կլինի ներկայացնել պատկերաստեղծման գործում նրա հավելյալ՝ մակադրական արժեքը, ինչպես նաև փոխարերական մակդիրների երկրորդական պլանում թարնված տեղեկությունը, որը մեծապես նպաստում է, որ ընթերցանության ընթացքում հեղինակի հաղորդակցական միտումը ընկալվի ամբողջական ձևով:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Պողոսյան Մ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1990:
- Զահուկյան Գ. Բ., Խլդաթյան Ֆ. Հ. Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2007:
- Զրբաշյան Էդ. Մ. Գրականագիտության տեսություն, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980:
- Փոլայյան Մ. Մտահամակարգային լեզվաբանության և ոճագիտության դասախոսություններ, Երևան, «Մակմիլյան Արմենիա» հրատարակչություն, 2000:
- Арнольд И. В. Стилистика современного английского языка (Стилистика декодирования). Ленинград: «Просвещение», 1973.
- Баевский В. С., Сапогов В. А. Большая советская энциклопедия. М.: Советская энциклопедия, 1978.
- Веселовский А. Н. Историческая поэтика. М.: «Высшая школа», 1989.

8. Гальперин И. Р. Стилистика английского языка. Москва: «Высшая школа», 1981.
9. Голуб И. Б. Стилистика русского языка. М.: Издательство «Айрис- Пресс», 2008.
10. Голубина К. В. Когнитивные основания эпитетов в художественном тексте: Автореферат дисс.... канд. филол. наук. М., 1998.
11. Караулов Ю. Н. Словарь Пушкина и эволюция русской языковой способности. М.: «Наука», 1992.
12. Маслова В. А. Лингвокультурология. М.: Издательский центр «Академия», 2001.
13. Тимофеев Л. И., Тураев С. В. Словарь литературоведческих терминов. М.: «Просвещение», 1974.
14. Томашевский Б. В. Теория литературы. Поэтика. М.: Изд-во «Аспект Пресс», 1999.
15. Cela J. C. La colmena. Barcelona: Noguer, 1963.
16. Cela J. C. La familia de Pascual Duarte. Barcelona: Ediciones del Zodiaco, 1946.
17. Sobejano G. El epíteto en la lírica española. Madrid: Gredos, 1970.

**М. ЕПРЕМЯН – *О некоторых особенностях метафорического эпитета.*** – В данной статье рассмотрены различные интерпретации метафорического эпитета в современной лингвистике, затронут вопрос разновидностей метафорического эпитета и основные семантические признаки, рассмотрены как отличительные черты логического определения и метафорического эпитета, так и метафоры и метафорического эпитета. Представлены некоторые семантические и стилистические особенности метафорического эпитета в произведениях Камило Хосе Селы.

**Ключевые слова:** эпитет, метафора, метафорический эпитет, объект эпитетации, отличительные черты, оксюморон, олицетворительный метафорический эпитет

**M. YEPREMYAN – *On Some Characteristics of Metaphoric Epithet.*** – The present paper discusses various interpretations of metaphoric epithet in contemporary linguistics. It considers different types of metaphoric epithet and presents its main semantic characteristic features. The paper also studies the distinguishing features between logical attribute and metaphoric epithet, as well as those between metaphor and metaphoric epithet. An attempt is made to reveal some semantic and stylistic aspects of metaphoric epithet in the works of Camilo José Cela.

**Key words:** epithet, metaphor, metaphoric epithet, object of epithet, distinguishing features, oxymoron, personified metaphoric epithet

**Գուրգեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Քրիստինե ՍՈՂԻԿՅԱՆ**

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիրական համալսարան

**ՄՏԱՉԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՊԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**

Հոդվածի նպագակն է վերլուծել քաղաքական խոսույթը որպես մդաշահարկման առկայացման հիմնական լեզվական դիրույթ, պարզաբանել ժամանակակից քաղաքական խոսույթում կիրառվող մդաշահարկային ռազմավարությունները և լեզվական միջոցները, ինչպես նաև ներկայացնել դրանց ամենալարրեր մրային, հոգեբանական, հասարակական և մշակութային հայեցակերպերը:

**Բանալի բառեր.** քաղաքական մդաշահարկում, լեզվական մդաշահարկում, խոսույթ, քաղաքական խոսույթ, քաղաքական հաղորդակցություն, գործարանական առանձնահարկություններ, մդաշահարկային լեզվական միջոցներ

Մերօրյա աշխարհում կյանքի ընթացքի արագացմանը, հաղորդակցության և կապի ծավալների և միջոցների ավելացմանը զուգընթաց միջազգային և միջազնական հարաբերությունները ձեռք են բերել ավելի բազմաշերտ բնույթ: Քաղաքականությունը որպես վերոնշյալ փոխհարաբերությունների առկայացման ասպարեզ, դարձել է դժվար վերլուծելի մի հարթություն, որտեղ միմյանց են բախվում անհատների, ժողովուրդների, իշխանությունների, պետությունների և անզամ ողջ տարածաշրջանների հետաքրքրությունները, շահերն ու տեսլականները:

Տեղեկատվության համատարած և արագ հասանելիության պայմաններում յուրաքանչյուր անձ քաղաքական զարգացումների և վայրիվերումների մասին իր տեղեկացվածությամբ անուղղակիորեն ազդում է քաղաքական որոշումների և քաղաքական իրադարձությունների ընթացքի վրա: Իսկ կապի համատարած հասանելիության շնորհիվ այսօր յուրաքանչյուր ոք կարող է քաղաքականության հարավուների ասպարեզում իր կարծիքն ու կարիքները լսելի դարձնել:

Երկրի իշխանությունը, որի նպատակը միշտ չէ, որ ժողովրդի համար բարենպաստ կյանքի ապահովումն է, պատրաստ է գործարկելու ցանկացած լծակ քաղաքական որոշումներում բացարձակ մենիշխանություն ձեռք բերելու համար: Քաղաքական գործընթացների արդարացիությունն ապահովելու լավագույն միջոցը, իհարկե, մտաշահարկումն է՝ մանիպու-

յացիան, որը ամենավաղ ժամանակներից եղել է քաղաքականության ոլորտի ամենաառանցքային բնորոշումներից մեկը:

Շահադիտական իշխանության բուն նպատակը ժողովրդի տեղեկացվածության մակարդակի նվազեցումը և քաղաքացիների շրջանում տեղի ունեցող գործընթացների, ինչպես նաև դրանց արդյունքում ձևավորված իրականության մասին թյուր պատկերացում ստեղծելն է: Այս կերպ՝ իշխանությունները կխոսափեն ժողովրդի դիմակայությունից և հնարավորություն կունենան անխափան կերպով իրականացնել իրենց շահադիտական կառավարումը: Ինչպես դեռևս անտիկ ժամանակներում, այնպես և այսօր, այս նպատակի իրականացմանը միտված ամենահզոր միջոցը լեզուն է /Chilton, 2004/: Լեզվի հստակ կիրառությամբ՝ նպատակահարմար բառերի և արտահայտությունների ընտրությամբ, կոչական մեծ ներուժ ունեցող ոճական և ճարտասանական հնարների կիրառությամբ, օբյեկտիվ իրականությանը և սեփական գործողություններին հղում չանող շարահյուսական կառուցների գործածությամբ և այլ միջոցներով, բռնատիրական իշխանությունները լեզվականորեն շահարկում են մարդկանց աշխարհընկալումն ու իրականության ըմբռնումը՝ ապահովելու շարունակական հանրային ենթակայություն:

Պայմանավորված լինելով քաղաքականության ոլորտում տեղի ունեցող հանրային մտաշահարկման մեջ լեզվի՝ որպես հիմնական գործիքի շահադիտական կիրառությամբ՝ սույն հոդվածի նպատակն է դիտարկել քաղաքական խոսույթը՝ որպես մտաշահարկման առկայացման լեզվական տիրույթ, վերլուծել քաղաքական խոսույթում առկա մտաշահարկային ռազմավարությունները և դրանց իրականացման նպատակով գործածվող լեզվական կառուցները, ինչպես նաև բացահայտել վերջիններիս գործառության գործաբանական, մտային-հոգեբանական, հասարակական-մշակութային և մի շարք այլ առանձնահատկությունները:

Քաղաքականությունը հասարակական կյանքի այն տիրույթն է, որտեղ առկայանում է քաղաքական խոսույթը: Նմանապես՝ գիտական խոսույթը, կրթական խոսույթը և իրավական խոսույթը համապատասխանաբար նկարագրում են գիտության, կրթության և իրավական տիրույթները: Վան Դիյկը քաղաքական խոսույթը պարզապես սահմանում է որպես քաղաքական գործիչների խոսույթ՝ համարելով, որ «քաղաքականություն» եզրույթին ամեն քաղաքագետ կարող է տալ իր սեփական սահմանումը՝ այս կերպ հանգեցնելով եզրույթի բազմաքանակ մեկնությունների /van Dijk, 2002: 19-20/:

Նա նշում է, որ քաղաքական խոսույթը նախևառաջ բացատրվում է իր դերակատարներով կամ հեղինակներով, այսինքն՝ քաղաքական գործիչներով՝ շեշտելով, որ քաղաքական խոսույթի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում է քաղաքական գործիչների կամ քաղաքական հաստատությունների փոխփուլմներին, օրինակ՝ նախագահների, վարչապետների, կամ կառավարության այլ անդամնե-

րի, խորհրդարանների և կուսակցությունների միջև հաղորդակցությանը /van Dijk, 1997: 12/:

Հիմնվելով Բառանովի և Շեյգալի քաղաքական հաղորդակցության սահմանումների վրա /Բարանով, 2001, Շեյգալ, 2004/՝ Չուղինովը նկարագրում է այն որպես հաղորդակցություն, որը վերաբերում է քաղաքական խնդիրներին, ինչպես նաև հաղորդակցություն, որի սուբյեկտները քաղաքական գործիչները կամ քաղաքականության մասին գրող լրագրողներն են: Առավել լայն մոտեցմամբ՝ քաղաքական հաղորդակցությունն այն հաղորդակցությունն է, որը նվիրված է քաղաքական խնդիրներին կամ որում քաղաքական սուբյեկտները քաղաքական տեքստի հեղինակը կամ հասցեատերն են զուտ կառավարական, ոչ հանրային շրջանակներում /Վուդինով, 2012, 2006/:

Վաս Դիյկը, սակայն, նշում է, որ չնայած քաղաքական գործընթացներում իրենց խաղացած առանցքային դերին, քաղաքական գործիչները քաղաքականության ոլորտի միակ դերակատարները չեն: Նա կարևոր տեղ է հատկացնում նաև քաղաքական հաղորդակցության վերջնական հասցեատերերին՝ հանրությանը, ժողովրդին, քաղաքացիներին, լայն զանգվածներին և այլն /van Dijk, 1997: 13/:

Ուստի քաղաքական խոսույթի վերլուծության ժամանակ, ըստ Չուղինովի, յուրաքանչյուր առանձին քաղաքական տեքստ հարկ է գնահատել խոսույթի շրջանակներում, այսինքն՝ հաշվի առնել դրա ստեղծման և գործադրման հստակ հանգամանքները: Ըստ նրա՝ առանձնապես կարևոր են տեքստի հեղինակը և հասցեականությունը, դրա ստեղծման ժամանակը, վայրը և նպատակները, ինչպես նաև հեղինակի հաղորդակցական ուազմավարությունն ու մարտավարությունը: Այս մոտեցմամբ քաղաքական հաղորդակցության խոսույթային յուրահատկություններին անդրադառնալիս նա նկատում է, որ քաղաքական հաղորդագրությունը միշտ իր մեջ կրում է ոչ միայն տեղեկատվություն, այլև իրականությանը տրվող գնահատական: Եվ սա բացատրվում է նրանով, որ քաղաքական հաղորդակցության իրական նպատակը ոչ թե իրադրության օբյեկտիվ նկարագրությունն է, այլ հասցեատիրոջը համոզելը և նրան քաղաքական գործողությունների դրդելը /Վուդինով, 2012/: Այս հանգամանքի դիպուկ դրսևորումն ենք տեսնում նաև Սիմֆոնի և Մայերի կողմից դեռևս անտիկ դարաշրջանի հոեստրոների (Պլատոն, Ֆիցերոն, Արիստոտել) այն կարծիքի մեջքերման մեջ, թե քաղաքական գործիչները մշտապես գործածել են համոզիչ և մտաշահարկային ճարտասանությունը հանրությանը խաբելու և մոլորեցնելու համար՝ քաղաքական գործիչների և հաստատությունների նկատմամբ ավանդաբար և անգամ մինչ օրս տիրող հանրային անվստահության պայմաններում /Simpson and Mayr, 2010: 43/:

Քաղաքական հարաբերություններում, գործընթացներում, ինչպես նաև քաղաքական խոսույթում առկա հաղորդակցության մտաշահարկային առանձնահատկություններն էին, որ գրավեցին քաղաքական

խոսութիւն վերլուծության տեսաբանների ուշադրությունը (վան Դիյկ, Մունի և Էվանս, Շեֆներ, Մեյլաթ և Օսվալդ, Ռիգոտի, Շոմաս, Փոլ և Էլետ, Լիսկովսկի, Օրուել և այլն):

Ռիգոտին, օրինակ, հաղորդագրությունը համարում է մտաշահարկային, եթե «այն հասցեատիրոջ մտքում աղավաղում է աշխարհի մասին պատկերացումը՝ խաթարելու որոշում կայացնելու համար նրա ողջամիտ դատողությունը և ստիպելու ծառայել մտաշահարկողի շահին՝ սեփական շահին հետամուտ լինելու թվացյալության ներքո» /Rigotti, 2005: 68/:

Վան Դիյկը, շեշտելով գաղափարախոսության դերը քաղաքական խոսություն, ասում է, որ «Եթե կա հասարակական գործունեության մի տիրությութեան մեջ գաղափարախոսությամբ, դա, իհարկե, քաղաքականությունն է»: «Եվ քանզի գաղափարախոսությունը սահմանվում է որպես կոնկրետ խմբի անդամներին հատուկ հիմնական համոզմունք, սա նաև նշանակում է, որ քաղաքական խոսության այն միջավայրն է, որտեղ վավերացվում է քաղաքական գործիչների գաղափարախոսական ինքնությունը /van Dijk, 2002: 22/:

Խոսելով մտաշահարկման մասին՝ վան Դիյկը սահմանում է այն որպես հաղորդակցական գործելակերպ, որում մտաշահարկողը փորձում է կառավարել այլ մարդկանց, սովորաբար իրենց կամքին և ցանկությանը հակառակ: Ըստ նրա՝ «մտաշահարկումը պայմանավորված է ոչ միայն իշխանական դիրքի առկայությամբ, այլ ենթադրում է նաև վերջինիս չարաշահում»: Նրա կարծիքով, մտաշահարկումը ենթադրում է խոսությի միջոցով իրականացվող ոչ իրավաչափ ներազդում: Այս դեպքում մտաշահարկողները ներազդում են մարդկանց վրա՝ ստիպելով նրանց հավատալ ինչ-որ քանի կամ ծեռնարկել քայլեր, որոնք շահեկան են մտաշահարկողի համար և չեն բխում մտաշահարկվողի շահերից: Նա, հիմնվելով այլ տեսաբանների դիտարկումների վրա /Dillard, Pfau, 2002; O'Keefe, 2002/, նաև շեշտում է, որ մտաշահարկումը կարող էր նաև լինել իրավաչափ համոզական գործողություն, սակայն ընդգծում է, որ մտաշահարկման և համոզման գործելակերպերի միջև գոյություն ունեցող նկատելի տարբերությունն այն է, որ համոզման դեպքում խոսակիցները ազատ են հավատալու կամ գործելու ըստ իրենց ցանկության, անկախ նրանից՝ ընդունում են համոզող կողմի փաստարկները, թե՛ ոչ: Այնինչ մտաշահարկման դեպքում, ըստ վան Դիյկի, հասցեատերերն ավելի պասիվ դեր են խաղում. նրանք դառնում են մտաշահարկման գոհեր /van Dijk, 2006: 360/:

Մտաշահարկման իր ուսումնասիրության մեջ նա որդեգրում է եռաստիճան մոտեցում՝ դիտարկելով այն 1. հասարակական (քանի որ այն կապ ունի հասարակական խմբերի և դերակատարների միջև տեղի ունեցող շփման և իշխանության չարաշահման հետ), 2. իմացական/ճանաչողական (քանի որ մտաշահարկումը ենթադրում է ազդեցություն հաղորդակցման մասնակիցների մտքի վրա), և 3. խոսութային (քանի որ մտա-

շահարկումը գործադրվում է գրավոր և բանավոր խոսքի և տեսողական հաղորդագրությունների միջոցով) /van Dijk, 1998, 2001, 2006/:

Առավել հետաքրքրական է վան Դիյկի կողմից մտաշահարկման ուսումնասիրության իմացական-ճանաչողական հայեցակերպը: Խոսելով մտաշահարկման՝ մարդու մտքի վրա ունեցած ազդեցության մասին, նա գտնում է, որ թե՛ խոսությն առհասարակ, և թե՛ մտաշահարկային խոսությը մասնավորապես, առաջնայնորեն ազդում են մարդու կարճաժամկետ հիշողության վրա, ինչի արդյունքում բառերը, նախադասությունները, արտահայտությունները, ինչպես նաև արտաթեզվական ազդանշանները ընկալվում են որպես պատրաստի տրվող «իմաստներ» կամ «գործողություններ»: Նա շեշտում է, որ իմացական տեսանկյունից մտաշահարկումը որևէ արտառոց և գերբնական գործողություն չի պահանջում, այլ պարզապես կիրառում է խոսությին բնորոշ ամենահիմնական գործընթացները: Եվ քանի որ կարճաժամկետ հիշողության մեջ խոսությի ըմբռնումը ենթադրում է հնչյունային, ձևաբանական, շարահյուսական և բառհմաստային վերլուծության գործընթացներ, տարբեր լեզվական կառույցների միջոցով կարելի է այս կամ այն կերպ ազդել այդ շերտերից յուրաքանչյուրի վրա. օրինակ՝ ավելի հստակ, դանդաղ արտասանությունը, ավելի պարզ շարահյուսությունը և ավելի պարզ բառային միավորների կիրառումը օժանդակում են ըմբռնմանն ու հասկացմանը: Եվ ընդհակառակը. արագ, ոչ հստակ խոսքը, խրթին բառերով կազմված բարդ նախադասությունները, օրինակ՝ բժշկական խոսությում, նպատակ ունեն անհասկանալի մնալու հիվանդների համար: Հետևաբար, այս դեպքերում հասկացմանն ու ըմբռնմանը խոչընդոտելը կրում է հստակ դիտավորություն:

Վան Դիյկը նաև նշում է, որ մտաշահարկումն առավելապես ուղղված է մարդկանց կողմից մտաշահարկողին ձեռնտու արձագանքի շարունականության և տևականության ապահովմանը, և այդ պատճառով էլ մտաշահարկման վերջնական թիրախը, այնուամենայնիվ, երկարաժամկետ հիշողությունն է: Մտաշահարկման իմացանաչողական գործընթացները ենթադրում են, որ երկարաժամկետ հիշողությունը ոչ միայն պահպանում է սուբյեկտիվորեն մեկնաբանված անձնական փորձառությունը՝ որպես մտային կաղապարներ, այլև այնտեղ պահպանվող առավել կայուն, տևական, ընդհանրական և հասարակայնորեն ընդունված համոզմունքները և գաղափարախոսությունները: Ըստ նրա՝ մտաշահարկային խոսությի գլխավոր նպատակն է կառավարել մարդկանց հավաքական հասարակական պատկերացումներն ու համոզմունքները, քանի որ հենց դրանք են կառավարում մարդկանց վարքն ու խոսքը տևականորեն և բազմապիսի իրավիճակներում /van Dijk, 2006/:

Մեյլաթն ու Օսվալդը, տալով նմանատիպ սահմանում, նշում են, որ թեև մտաշահարկման ուսումնասիրության ժամանակակից մոտեցումներն առաջ են քաշել խոսությը մտաշահարկային որակելու մի շարք

չափանիշներ, խնդիրը դեռևս շատ հեռու է լուծված համարվելուց: Ահա այդ չափանիշներից մի քանիսը՝

1. Ծշմարդության խաթարում/պայմանականությունների խախտում,
2. Խոսողի շահի առկայություն,
3. Հաղորդակցական նպատակի ոչ բացահայտ, այլ ծածուկ լինելը,
4. *Unghiaլական անհավասարության նախապայմանը և*
5. *Մրաշահարկման դիրավորությունը* /Maillat, Oswald, 2009: 349/:

Ինչպես արդեն նշել ենք, լեզուն այն հզոր գործիքն է, որը, շահադիտական նկատառումների համաձայն, նպատակային գործածությամբ շրջանառվելով խոսություն, իրականացնում է մտաշահարկային գործառույթ: Չիլթոնն ու Շեֆները գտնում են, որ քաղաքական գործունեության մեջ լեզուն մասնակցություն ունի իր բոլոր մակարդակներով և կողմերով՝ գործարանական մակարդակ (շիումը խոսողի և լսողի միջև), իմաստաբանական մակարդակ (իմաստը, բառապաշարի կառուցվածքը), շարահյուսություն (նախադասությունների ներքին դասավորվածությունը), ինչպես նաև հնչյունական կողմ, որոնց համար դիտարկումն էլ կարևորվում է քաղաքական տեքստերի լեզվաբանական քննության գործում /Chilton, Schäffner, 2011/: Քաղաքական գործունեությունը չի կարող գոյություն ունենալ առանց լեզվի կիրառության, իսկ լեզվի դերը, մասնավորապես՝ դրա գործածությունը բառերի ընտրության ու ծևակերպումների իմաստով, քաղաքական գործիքների համար ունի ուազմավարական նշանակություն, որքան էլ որ վերջիններս ժխտեն այդ փաստը /Chilton, 2004; Chilton, Schäffner, 2011/: Նոյն կարծիքին է նաև Օրուելը: Նա գտնում է, որ սխալ է կարծել, որ «լեզուն պարզապես բնական աճ է, այլ ոչ գործիք, որը մենք ծևակիոխում ենք՝ ըստ մեր սեփական նպատակների» /Orwell, 1946/:

Քաղաքական նպատակներով իրականացվող լեզվական մտաշահարկման մեջ տեսաբանները առանձնացնում են մի շարք ուազմավարական քյլեր, որոնք իրականանում են ամենատարբեր լեզվաբանական կառուցների միջոցով: Վան Դիյկն, օրինակ, առանձնացնում է դրական ինքնաներկայացումը (positive self-presentation) և այլոց բացասական ներկայացումը (negative other-presentation): Որպես հասցեագրողի օգտին փաստերի վերապահորեն և կողմնակալ կերպով ներկայացման և բացասական իրադարձությունների և երևույթների մեջքը հակառակորդի վրա բարդելու տիպիկ միջոց: Այս երևույթը «քաղաքական քեռացում» անվանելով՝ վան Դիյկն այն համարում է մտաշահարկային խոսությի հիմնական ուազմավարություն /տե՛ս նաև Paul, Elder, 2006: 4/, որի շրջանակներում առանձնացնում է այնպիսի լեզվական միջոցներ, ինչպիսիք են.

- խոսքային մակրո ակտերը, որոնք շեշտում են «մեր՝ լավ» և «նրանց՝ վատ» կողմերը, օրինակ՝ մեղադրանք նրանց դեպքում, պաշտպանություն մեր դեպքում,

- բառապաշարի ընտրությունը (դրական բառեր ինքնաներկայացման և բացասական բառեր մյուս կողմին ներկայացնելու համար),
- շարահյուսական կառուցները՝ ներգործական և կրավորական կառուցների կիրառությունը որպես լեզվական միջոցներ, որոնք կիրառվում են համապատասխանաբար մտաշահարկող կողմի դրական գործունեությունը և հակառակ կողմի բացասական գործորդությունը մատնանշելու և պատասխանատվությունը քողարկելու համար,
- ոճական միջոցները և հնարները (չափազանցությունների (hyperbole) և մեղմասությունների (euphemism) գործածությունը դրական և բացասական իմաստներ արտահայտելու համար, ինչպես նաև փոխանունության և փոխաբերության կիրառությունը մտաշահարկող կողմի դրական և հակառակ կողմի բացասական հատկությունները շեշտելու համար),
- ծայնային և տեսողական արտահայտչամիջոցները (բարձր ծայնը կամ խոշոր և բավ գրվածքը դրական կամ բացասական իմաստների շեշտադրման համար) /van Dijk, 2006: 373; 2003/:

Նա առանձնացնում է մտաշահարկային ռազմավարության ևս մի միջոց՝ «մտաշահարկային նախատիպերը»՝ որպես հատուկ տիպի կեղծիքներ (fallacy), (օրինակ՝ հեղինակության կեղծիքը), որոնք դրդում են մարդուն հավատալ կամ կատարել որոշակի քայլեր. օրինակ՝ կաթոլիկներին դիմել, ասելով, որ Հռոմի Պապը հավատում է կամ խորհուրդ է տալիս որևէ գործողություն, կամ մուսուլմաններին դիմելիս շեշտել, որ Ղուրանը խորհուրդ է տալիս կոնկրետ գործողություն /van Dijk, 2006/:

Չիլթոնը՝ դիտարկելով մտաշահարկումը հաղորդակցական ակտերի հիմնական տեսությունների տեսանկյունից, առանձնացնում է քաղաքական ռազմավարության մի քանի օրինակ՝ հարկադրումը/պարտադրումը (coercion), օրինականացումն ու ապօրինականացումը (legitimization and deligitimization), ներկայացումն ու խեղաթյուրումը (representation and misrepresentation) /Chilton 2004; Chilton, Schäffner, 2011, տե՛ս նաև Simpson, Mayr 2010/: Նա, ուշադրություն դարձնելով Գրայսի՝ քանակի, որակի, համապատասխանության և ծնի չորս սկզբունքներին, ինչպես նաև Հաբերմասի իմացարանական շրջանակին ու վավերականության չորս պնդումներին, նշում է, որ վերոնշյալ քաղաքական մտաշահարկային ռազմավարությունները գործնականում փոխկապակցված են և որ ուղղակիորեն ոտնահարում են խոսքային ակտի վերոնշյալ սկզբունքները: Որպես այդ ռազմավարությունների ազդեցության հիմնական ոլորտ՝ նա առանձնացնում է նախ երկարաժամկետ գիտելիքը՝ անվանելով այն «շրջանակ» (frame) և սահմանելով որպես մի կառուց, որը «կապ ունի իրադրությունների ընթոնման (conceptualization) և լեզվում դրանց արտահայտման հետ /Chilton, 2004/:

Մտաշահարկային քաղաքական խոսույթի իր վերլուծության մեջ նա նաև ուշադրություն է դարձնում այնպիսի առանցքային գործոնների, ինչպիսիք են խոսույթի դերակատարները, իրադարձությունները, ժամանակը, տարածությունը և հասարակությունը, իրականությունն ու բարոյականությունը և այլն, որոնք դրսնորվում են լեզվական արտահայտման միջոցով և որոնք առանցքային դեր ունեն իր նշած քաղաքական ռազմավարությունների լեզվական առկայացման գործում /Chilton, 2004/:

Մունիկ և Էվանսը, մեջբերելով Արիստոտելի՝ լսարանին համոզելու երեք հայտնի գործոնները՝ լոգոսը, պաթոսը և էթոսը, որտեղ լոգոսը բառերն են և հենց ինքը՝ փաստարկը, պաթոսը՝ էմոցիաները կամ էմոցիոնալ կազմը կոնկրետ գաղափարի կամ խնդրի հետ, իսկ էթոսը՝ հասցեագրող անձնավորության անձի դերի ազդեցությունը, գտնում են, որ քաղաքական համոզումը, ինչպես համոզման մնացած բոլոր կերպերը, հենվում են վերոնշյալ երեք գործոնների վրա: Քաղաքական մտաշահարկման լեզվական միջոցների՝ նրանց կողմից առաջարկվող ցանկը քիչ է տարբերվում վերոնշյալ տեսաբանների ներկայացրած միջոցներից: Նրանք, ինչպես վան Դիյկը, քաղաքական համոզման ամենակիրառելի գործիքներից են համարում քաղաքական հակադրությունը՝ մեր և նրանց գործելակերպերի, քայլերի, ունեցած դերակատարության և նպատակների դրական և բացասական բևեռացումը: Առանձնացված այլ միջոցներից են եռամաս թվարկումը՝ նույն շարահյուսական կառուցի եռակի կիրառումը նույն նախադասության մեջ, որն, ըստ նրանց, բավականին հաճախ է հանդիպում մտաշահարկային տեքստերում, զուգահեռությունը, կրկնությունը, կրավորական կառուցները՝ որպես քերականության մակարդակի մտաշահարկային միջոց, դերանունների՝ հատկապես առաջին և երկրորդ դեմքերի դերանունների կիրառությունը, ինչպես նաև փոխաբերությունը, միջտեքստայնությունը և այլն /Mooney, Evans, 2015/:

Չոնս ու Պիեչին էլ մտաշահարկային խոսույթին իրենց անդրադարձում երևան են հանում մտաշահարկային լեզվի կիրառության գործաբանական առանձնահատկությունները, ընդգծելով կանխենթադրույթն (presupposition) ու ներիմաստը (implicature) որպես լսարանին համոզելու և վերջինիս վրա ներազդելու միջոց, և վերոնշյալ լեզվական միջոցներին ավելացնում նաև ածականների՝ հատկապես համեմատական աստիճանի ածականների կիրառությունը, սեռական հոլովի կիրառությունը, ստորադասական կառուցները և հարցերը՝ տրված հաստատական կառուցների փոխարեն /տե՛ս Thomas et al, 2005/:

Խոսելով քաղաքական խոսույթում անգլերենի աղավաղված կիրառության մասին՝ Զ. Օրուելն առանձնացնում է այնպիսի լեզվական կառուցներ, ինչպիսիք են «մեռնող» (գործածությունից դուրս եկող) փոխաբերությունները (Dying Metaphors), գործարկիչները կամ բայական «կեղծ վերջույթները (operators or verbal false limbs)», ցուցադրական առոգանությունն ու անհմասսր բառերը: «Մեռնող» փոխաբերությունների

շարքում նա առանձնացնում է այնպիսի բառեր և արտահայտություններ, ինչպիսիք են, օրինակ՝ hotbed, Achille's heel, on the order of the day, stand shoulder to shoulder, ring the changes on արտահայտությունները, որոնք, ըստ հեղինակի, «մաշված փոխարերությունների մի հսկայական կույտ են, որ կորցրել է ողջ գուգորդային ներուժը», և «ապարզապես գործածվում է այն պարզ պատճառով, որ հնարավորություն է տալիս խոսողին խուափել սեփական խոսքը ծևակերպելու համար արտահայտություններ հորինելու անհրաժեշտությունից» /Orwell, 1946: 255/: Նա նաև շեշտում է, որ այս արտահայտությունները հաճախ կիրառվում են առանց խոսողի կողմից դրանց բուն իմաստի գիտակցման: Գործարկիչները կամ «բայական կեղծ վերջույթները» կառուցներ են, որոնք խոսքը լցնում են հավելյալ վանկերով՝ վերջինիս հաղորդելով համաչափ արտահայտություն: Այս դեպքում հստակ իմաստ արտահայտող պարզ բայերը (օրինակ՝ kill, mend, spoil, break, stop) փոխարինվում են գործողության կամ երևոյթի բուն իմաստը մեղմացնող արտահայտություններով, ինչպիսիք են, օրինակ, make contact with, be subjected to, give rise to, give grounds for, have the effect of, play a leading part (role) in, make itself felt, take effect արտահայտությունները: Նմանատիպ լեզվական կառուցները, որպես կանոն, ասվածին լրացնուի կարևորություն են հաղորդում: Մտաշահարկային լեզվական կառուցների այս կարգում Օրուելն անդրադառնում է նաև բայի ներգործական սեռի փոխարեն կրավորական սեռի կառուցների կիրառությանը:

Ցուցադրական առօգանությունը ենթադրում է այնպիսի բառերի կիրառություն, որոնք կանխակալ դատողությանը հաղորդում են գիտական անկողմնակալություն և արդարացնում այն: Հեղինակն անհմաստ բառեր է համարում այն բառերը (հիմնականում որակական ածականները), որոնք ցույց չեն տալիս որևէ հստակ որակական հատկանիշ, այլ երևոյթին տալիս են չեզոք և վերացական որակում: Այս տիպին են պատկանում հատկապես արվեստի քննադատության մեջ կիրառվող խիստ վերացական բառերը, որոնց շարքում առանձնացնում է, օրինակ՝ sentimental, plastic, dead, natural միավորները /Orwell, 1946/:

Քաղաքական ճգրտության (political correctness) ապահովման և քաղաքական մտաշահարկման նպատակով կիրառվող լեզվական հնարների ցանկը չի սահմանափակվում վերոբերյալով: Այստեղ կարելի է ավելացնել այնպիսի ոճական հնարներ, ինչպիսիք են, օրինակ՝ կրկնությունը, բառախաղը, նոյնաբանությունները, բաղաձայնութը, ժարգոնային բառերի գործածումը, ընդհանրացումը, համեմատությունը /Paul, Elder, 2006: 16/ և այլն:

Սահմանափակվելով մտաշահարկման խոսութային-գործաբանական առանձնահատկությունների և դրանք իրականացնող մտաշահարկային լեզվական հնարների վերոնշյալ ուսումնասիրությամբ՝ կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես իրավացիորեն փաստում է վան Դիյկը,

Նմանատիպ լեզվական կառույցները ինքնին մտաշահարկային չեն, այլ մտաշահարկային գործառույթ են իրականացնում որոշակի հասարակական/քաղաքական համատեքստում և հստակ գործաքանական հարաշավիերի առկայության դեպքում միայն /van Dijk, 2006/: Իսկ տեքստը մտաշահարկային գործառույթ է իրականացնում իր լեզվական և գործաքանական առանձնահատկությունների փոխազդակցության շնորհիվ: Մտային ներազդման գործում կարևոր է ոչ միայն այն, թե ի՞նչ է ասվում, այլև այն, թե ո՞վ է ասողը և ովքե՞ր են լսողները, ի՞նչ հասարակական դիրք ունեն նրանք, հաղորդակցական ինչպիսի՞ պայմաններում և արտավեզվական ի՞նչ համատեքստում է ասվում խոսքը և այն:

Լեզվական ներազդման այս մեխանիզմը բավականին խրթին կառուց է և անցնում է առկայացման բավականին բարդ ուղի: Լեզուն, լինելով վերացական համակարգ, մարդու մտքի վրա ներազդում է հաղորդակցման մեջ իր կիրառական առկայացման, այսինքն՝ խոսքի միջոցով: Արդյունքում ձևավորվում է այնպիսի մի խոսույթ, որում առկայանալու և գործարկվելու է մտաշահարկումը: <Ետևապես կարելի է ասել, որ մտաշահարկումը (և հատկապես քաղաքական մտաշահարկումը) լեզվագործաքանական երևույթ է, որի իրացման գործում իր լուրջ դերակատարումն ունի ինչպես լեզուն, այնպես էլ վերջինիս կիրառությունը պայմանավորող և կանխորշող խոսութային-գործաքանական միջավայրը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Баранов А. Н. Введение в прикладную лингвистику. М.: Эдиториал УРСС, 2001.
2. Шейгал Е. И. Семиотика политического дискурса. М.: Гнозис, 2004.
3. Чудинов А. П. Дискурсивные характеристики политической коммуникации // Политическая лингвистика. Вып. 2 (40), М., 2012.
4. Чудинов А. П. Политическая лингвистика. М.: Флинта: Наука, 2006.
5. Chilton P. & Schäffner C. Discourse and Politics // *Discourse Studies: A Multidisciplinary Introduction*. London: Sage Publications, 2011.
6. Chilton P. Analyzing Political Discourse: Theory and Practice. London: Routledge, 2004.
7. Dillard J. P., Pfau M. The Persuasion Handbook: Developments in Theory and Practice. Thousand Oaks, CA: Sage Publications Inc., 2002.
8. Maillat D. and Oswald S. Defining Manipulative Discourse: The Pragmatics of Cognitive Illusions // *International Review of Pragmatics*, vol. 1, 2009.
9. Mooney A., Evans B. Language, Society and Power: An introduction (4th edition). New York: Routledge, 2015.
10. O'Keefe D. J. Persuasion: Theory & Research. Thousand Oaks, CA: Sage Publications, 2002.

11. Orwell G. Politics and the English Language. London: Horizon, 1946.
12. Paul R., Elder L. Thinker's Guide to Fallacies: The Art of Mental Trickery and Manipulation. USA, Foundation for Critical Thinking Press, 2006.
13. Rigotti E. Towards a typology of manipulative processes // *Manipulation and Ideologies in the Twentieth Century: Discourse, Language, Mind*, Amsterdam/Philadelphia: John Benjamins, 2005.
14. Simpson P., Mayr A. Language and Power: A Resource Book for Students. Abingdon: Routledge, 2010.
15. Thomas L., Wareing Sh., Singh I., Peccei J. S., Thornborrow J., Jones J., Language, Society and Power: An Introduction, London: Routledge, 2004.
16. van Dijk T. Discourse and Manipulation // *Discourse and Society*, vol. 17, Issue 3, Sage Publications, 2006.
17. van Dijk T. Ideology: A Multidisciplinary Approach. London: SAGE Publications, 1998.
18. van Dijk T. Multidisciplinary CDA: A Plea for Diversity // *Methods of Critical Discourse Analysis*. London: Sage Publications, 2001.
19. van Dijk T. Political discourse and Ideology // *Analisi del discurs polític*. Barcelona: Universitat Pompeu Fabra. IULA, 2002.
20. van Dijk T. What is political discourse analysis? // *Political Linguistics*. Amsterdam: John Benjamins, 1997.

**Г. КАРАПЕТЯН, К. СОГИКЯН – *Лингвопрагматические характеристики манипуляции в политическом дискурсе*.** – Цель статьи представить политический дискурс как главный языковый домен реализации манипуляции, исследовать разные манипулятивные стратегии, существующие в сегодняшнем политическом дискурсе, разные языковые средства, с помощью которых данные стратегии осуществляются, а также выявить его самые разные психологические и социокультурные особенности.

**Ключевые слова:** политическая манипуляция, языковая манипуляция, дискурс, политический дискурс, политическая коммуникация, прагматические характеристики, манипуляционные языковые средства

**G. KARAPETYAN, K. SOGHIKYAN – *On the Linguo-Pragmatic Specificities of Manipulation in Political Discourse*.** – The aim of the paper is to present political discourse as the major linguistic domain wherein manipulation is objectified, to elucidate the various manipulative strategies found in modern-day political discourse and the linguistic means through which public manipulation is instigated, as well as to expound the different mental, psychological, social, cultural aspects thereof.

**Key words:** political manipulation, linguistic manipulation, discourse, political discourse, political communication, pragmatic characteristics, manipulative lingual structures

## Գուրգեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Քրիստինե ՍՈՂԻԿՅԱՆ

Երևանի Վ. Բիյուտիքի անվան պետական  
լեզվահասարակագիրական համալսարան

### ՕՐՈՒԵԼՅԱՆ «ԵՐԿՄԻՏՔԸ» ԵՎ «ՆՈՐԻՆՈՍՔԸ» ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հոդվածում ներկայացվում է Զ. Օրուելի «1984» վեպում դեռ գրած Երկմիգի և Նորիսուքի՝ որպես քաղաքական մտաշահարկման հղոր խոսութային և լեզվական գործիքների լեզվաբանական վերլուծությունը: Աշխարհանքը նախ դիմումում է լեզուն՝ որպես քաղաքական մտաշահարկման ամենահղոր և ամենաարդյունավել միջոց: Այնուհետև ուսումնասիրվում է Երկմիգը՝ որպես լեզվական մտաշահարկման գրագիրեսակ՝ ներկայացված ճանաչողական աններդաշնակության հետ հակադրության միջոցով: Այս հիմքի վրա այնուհետև պարզաբանվում են դրա ամենապարբեր հոգեբանական, մտային և հասարակական-քաղաքական առանձնահավկությունները: Հոդվածում այնուհետև վերլուծվում է Նորիսուքը՝ որպես քաղաքական մտաշահարկման առավել արդյունավել մրածանաչողական գործիք:

**Բանալի բառեր.** Օրուել, 1984, Երկմիգը, Նորիսուք, քաղաքական մտաշահարկում, լեզվական մտաշահարկում, քաղաքական խոսույթ, քաղաքական հեղնանք

Զ. Օրուելի «1984» վեպի բովանդակային առանցքը ամբողջատիրական կառավարությունների կողմից բնակչության քաղաքական մտաշահարկումն է: Վեպը, լինելով համաշխարհային գրականության նշանավոր ստեղծագործություն, հեղինակի՝ բռնատիրական հասարակարգերի վարած մտաշահարկային քաղաքականության դեմ տարած գաղափարական և ստեղծագործական պայքարի վերջին ամենահղոր հարվածն է: Վեպում հեղինակը բավականին պատկերավոր կերպով առաջադրում է քաղաքական մտաշահարկման գործընթացի ներակա գործոնները՝ բռնի ուժի գործադրումից մինչև խեղաթյուրված լուսավորություն և մարդկային կյանքների անխսափան ու ամենահաս վերահսկողություն: Սակայն շատ ավելի նշանակալի են քաղաքական մտաշահարկման լեզվական արտահայտման յուրահատկությունները, որոնց վեպում հեղինակը արժանացրել է մանրակրկիտ լեզվագործաբանական մեկնաբանության /Orwell, 2012: 343-355/:

Օրուելը լեզուն դիտում է որպես քաղաքական մտաշահարկման ամենահղոր գործիք և «ի ցուց է դնում, որ լեզուն կարող է գործածվել քաղաքական նպատակներով՝ մարդկանց մոլորեցնելու և մտաշահար-

կելու համար ձևավորելով այնպիսի մի հասարակություն, որում մարդիկ աներկայորեն կինազանդվեն իրենց իշխանությանը և անգիտակցաբար կընդունեն ողջ քաղաքական քարոզությունը որպես փաստացի իրականություն» /Berkes, 2000/: Օրուելն, ըստ Էության, մտաշահարկումը ներկայացնում է «լեզու-միտք-իրականություն» եռամիասնության միջոցով՝ գտնելով, որ մարդն իրականությունն ընկալում, ճանաչում և ըմբռնում է լեզվի միջոցով, և որ լեզվի միջոցով կարելի է խեղաթյուրել ճշմարտությունն ու կատարելապես շահարկել մարդու միտքը, այսինքն՝ լեզվականորեն միջամտել մարդու աշխարհընկալման և իրականության ճանաչման բնականոն գործընթացին մտացածին, ոչ իրական և թյուր մեկնաբանված իրողությունների կանխամտածված և շահադիտական հրամցման միջոցով: «Քաղաքականությունն ու անգլերենը» հոդվածում խոսելով քաղաքական և հասարակական նպատակներով լեզվի միտումնավոր կերպով աղճատված, անհստակ, այլակերպված կիրառության մասին՝ գրողը նշում է, որ «եթե միտքն աղավաղում է լեզուն, լեզուն էլ կարող է միտքն աղավաղել» /Orwell, 1946/: Հենց այս առանցքային փոխազդեցության վրա է հիմնվում Զ. Օրուելը քաղաքական մտաշահարկման իր ուսումնասիրության ժամանակ:

Լեզվի այսպիսի մեկնաբանությամբ Օրուելն, ըստ Էության, հարում է լեզվաբանական հարաբերականության տեսության այն հիմնական գաղափարին, համաձայն որի լեզուն և նրա կառուցները սահմանում են մարդկային մտածողությունը՝ այդպիսով ունենալով նաև մտքի սահմանափակման, այսինքն՝ աշխարհաճանաչման և քննադատական ու վերացարկված մտածողության սահմանափակման ներուժ:

Լեզվի՝ մարդու միտքը և մտածողությունը ձևավորելու և սահմանելու հնարավոր կարողության մասին խոսվել է դեռ 20-րդ դարի 30-ական թվականներից: Էդուարդ Սեպիրի և Բենջամին Լիի Ուորֆի կողմից առաջադրված տեսությունը, որը նաև անվանում են Սեպիր-Ուորֆի հիպոթեզ /Whorf, 1956/, առաջարկում է այն դրույթը, որ լեզվի ներակա կառուցները անմիջականորեն սահմանում և կանխորոշում են մարդկային մտածողությունն ու աշխարհայացքը: Հետևաբար, որքան հագեցած է լեզուն բարդ վերականական կառուցներով (որոնք իրենց հերթին արտացոլում են տարբեր վերացական կարգեր), եղանակավորում և վերաբերմունք արտահայտող միջոցներով (վերաբերականներ, մակրայներ, ինչպես և ոչ նյութական և գագամունք-հույզ արտահայտող բառային միավորներ), այնքան բազմակողմանի և բազմաշերտ է լեզվակրի կողմից աշխարհի և իրողությունների ճանաչումը և դրանց տրվող գնահատականը՝ պայմանավորված այդ երևույթների և հասկացությունների անվանման համար լեզվում առկա ատադով և նյութով: Վերջիններիս բացակայությունը կամ աղավաղումը, հետևաբար, հանգեցնում է իրականության թյուր կամ թերի ընկալման և աղճատված աշխարհայացքի ձևավորման: Ի դեպ, ըստ լեզվաբանական հարաբերա-

կանության տեսության, լեզուն կարող է ազդել մարդկային մտքի և ճանաչողության 3 տարբեր ոլորտների վրա՝

- մարդու ընկալումների ու ճանաչողության վրա, ինչպիսիք են գոյնի, ժամանակի, դարածության, չափի և այլ երևութների ընկալումը,
- անհատի ճանաչողության կառուցվածքի և նրա մոտ ծևավորված աշխարհայացքի վրա,
- բուն տրամաբանության կառուցվածքի և տրամաբանական համարվող ցանկացած երևութիւն ընկալման վրա /Rogers & Steinfatt, 1999/:

Եվ իրոք՝ լեզուն մարդկային ըմբռնողականության և աշխարհընկալման այնպիսի միջոց է, որն ի գորու է կողավորելու, պարունակելու և հաղորդելու թե՛ օբյեկտիվ իրականությունն ու բացարձակ ճշմարտությունը, թե՛ շահադիտական և մտաշահարկային նպատակներով ծևակերպված կեղծիքը: Քանի որ լեզուն մարդկային հաղորդակցության, ինչպես նաև տեղեկատվության պահպանման և փոխանցման թերևս ամենահզոր համակարգն է, դրա միջոցով կարելի է այլափոխել ոչ միայն ներկա իրականությունը, այլ նաև խմբագրել անցյալը, ծևափոխել պատմությունը և «նորաստեղծ իրականությունը» հաղորդել մարդուն իրեւ իրողություն: Եվ քանի որ լեզուն համարվում է մարդկային մտածողության բնատուր և ամենախորը կառուցքը, մարդը մտածում և որպես իրողություն է ընդունում այն, ինչ իրեն հաղորդվում և փոխանցվում է լեզվի միջոցով: Նման լեզվական ներազդման արդյունքում էլ ծևավորվում է որոշակիորեն քարտեզագրված աշխարհայացք և մտածելակերպ, որն էլ կանխորոշում է մարդու սոցիալական վարքագիծն ու գործունեությունը (Տե՛ս Sapir and Whorf, Chilton, Foucault և այլք):

Զ. Օրուելի «1984» վեպում քաղաքական մտաշահարկման ռազմավարությունների նկարագրման հիմքում ընկած է ճշգրիտ և հիմնավորված լեզվական կառուցքը: Այս յուրահատկության շնորհիվ էլ վեպը խոսույթի քննադատական վերլուծության տեսանկյունից մշտապես ունեցել է խոշոր գիտական և տեսական արժեք: Վեպում իրականության խիստ հոռեւտեսական արտապատկերում (նախարարությունների մեծությունը, ավերված շենքերը, կեղտոտ փողոցները), մշտական պատերազմական վիճակը, հասարակության նկատելի շերտավորումը՝ արտահայտված վեպի կերպարների վարքագծային և խոսքային վարվեցողությամբ (ներքին կուսակցության, արտաքին կուսակցություն, պրոլետ (աշխատավոր դասակարգ)), առօրյա կյանքի վերահսկողությունն ու բռնի ուժի կիրառումը մտքի ոստիկանության կողմից, ինչպես նաև կուսակցության տարածած գաղափարախոսությունը հենց այն համատեքստն է, որում առկայանում և իրենց մտային ներազդման գործառությն են իրականացնում մտաշահարկային լեզվական կառույցները: Լեզվական արտահայտման յուրահատկությունների հետ միասին մտաշահարկումը վեպում

Ներկայացնում է փոխներազդող և փոխայմանավորող երկու երևոյթների՝ Երկմտքի (Doublethink) և Նորխոսքի (Newspeak)<sup>1</sup> միջոցով:

Երկմիտքը, ըստ Էության, մտաշահարկային խոսույթի արդյունքում ծևավորված մտավոր կարողություն կամ վիճակ է՝ միաժամանակ հավատալու երկու հակադիր գաղափարների: Ահա թե ինչպես է հեղինակը սահմանում Երկմիտքը վեպում. «Երկմիտքը մղքում միաժամանակ երկու հակադիր համոզմունք ունենալու և դրանց միաժամանակ հավափառությունն է <...> Դիվավորյալ սպեր ասել՝ դրանց անկեղծորեն հավափառվ, մոռանալ ցանկացած փաստ, որն այլևս ծեռնկու չէ, և հետո, երբ դրա կարիքը նորից զգացվի, մոռացության գրկից եկ քաշել այն՝ որքան ժամանակով որ անհրաժեշտ է, ժիստել օրյեկտիվ իրականության գոյությունը՝ շարունակաբար հաշվի նստելով դրա հետ: Այս բոլորը անժիստելիորեն պարփառիր են: Անգամ Երկմիտք բառը գործածելու համար անհրաժեշտ էր Երկմիտքի կիրառություն, քանի որ այս բառը գործածելով՝ մարդն ընդունում է, որ իսաղ է անում իրականության հետ. Երկմիտքի մի նոր ակտով մարդը ջնջում է այս գիրելիքը, և այսպես շարունակ՝ սուսրը ճշմարդությունից միշտ մեկ քայլ առաջ զցելով»<sup>2</sup> (Orwell, 2012: 244):

«Իմանալ և չիմանալ, գիրակցել ողջ ճշմարդացիությունը, բայց և ասել զգուշորեն մղածված սպեր, միաժամանակ ունենալ երկու իրարամերժ կարծիք՝ գիրակցելով, որ դրանք բացառում են միմյանց, բայց հավափառ երկուսին է, կիրառել դրամարանությունն ընդդեմ դրամարանության, ժիստել բարոյականությունը՝ միաժամանակ ընդունելով այն, հավափառ, որ ժողովրդավարություն չի կարող լինել և որ հենց Կուսակցությունը ժողովրդավարության հովանավորն է, մոռանալ՝ ինչ պարփառվոր են մոռանալ, հետո, անհրաժեշտ պահին վերականգնել այն հիշողությանդ մեջ, և հետո նորից արագ մոռանալ, և որ ամենակարևորն է՝ նոյն գործընթացը կիրառել հենց բուն գործընթացում. սա էր ամենակարևոր նրբությունը՝ գիրակցաբար անգիրակցություն առաջանել, և հետո, կրկին, չճանաչել հիպնոսի այն քայլը, որ հենց նոր կարգարեցիր: Անգամ «Երկմիտք» բառը հասկանալը պահանջում էր Երկմիտքի կիրառում» (Orwell, 2012: 40-41):

Երկմտքի մտային ներազդման մեխանիզմը բավականին բարդ և բազմաչափումային երևոյթ է. կեղծված, մտացածին, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությունը, խոսությային հստակ պայմաններում լեզվական տարբեր կառույցների միջոցով փոխանցվելով մարդուն, վերջինիս գիտակցության մեջ առաջացնում է հակադրություն հիշողության մեջ արդեն իսկ ամրագրված տեղեկույթի հետ: Այնուհետև, իշխանական ուժի ազդեցության տակ, շարունակական քարոզության միջոցով վավերացվելով՝ Երկմիտքն աստիճանաբար արդեն իսկ գոյություն ունեցող տեղեկույթը և սկսում է վերջինիս հետ զբաղեցնել հավասար դիրք՝ աստիճանաբար ներազդելով այնպիսի խորքային մա-

կարդակների վրա, ինչպիսիք են մարդու համոզմունքներն ու արժեհամակարգը: Արդյունքում մարդու մոտ տեղի է ունենում արժեքների փոխվագում (compromization of values), նոր ստացված արժեքը հիմք է դառնում նոր համոզմունքի համար, որի հիման վրա էլ ձևավորվում է հասարակական վարքը և քայլերը կանխորոշող այլափոխված մտածելակերպը:

Երկմիտքը՝ որպես մտածական և ճանաչողական վիճակ, համեմատվել է ճանաչողական աններդաշնակության (cognitive dissonance) հետ, քանի որ վերջինս նույնպես կապված է երկու հակադիր գաղափարների փոխգործակցության հետ: Ճանաչողական աններդաշնակությունը երկու հակադիր գաղափարների ազդեցությամբ ձևավորված ճանաչողական անհամապատասխանությունն է, որի արդյունքում մարդն ունենում է մտավոր լարվածություն և անհարմարության զգացողություն: Երաժշտության համանմանությամբ, միաժամանակ հնչող երկու հնչյունները (ինտերվալ կամ միջակայք), լսողի կողմից կարող են ընկալվել որպես համահունչ և լրարահունչ: Համահնչության (consonance) դեպքում այս միաժամանակյա հնչողությունը դրուեկան է և ընդունելի: Տարահնչության (dissonance) դեպքում միջակայքը լսողի մոտ առաջացնում է լարվածություն և սպասում՝ լսելու տարահունչ հնչյունների լուծումը համահունչ ինտերվալի մեջ: Երկմտքի դեպքում, ի հակադրումն ճանաչողական աններդաշնակության, գաղափարների հակադրության արդյունքում առաջացող լարվածություն կամ որևէ այլ ֆիզիկական-հոգեբանական հակագործություն չի ենթադրվում. գաղափարները համահունչ են, համագոյակցում են և հավասարապես ընդունվում և ըմբռնվում են մարդու կողմից:

Վեպում Երկմիտքը ներկայացվում է նաև որպես անցյալի ու պատմության կեղծման և մարդկային հիշողության այլափոխման հիմնական միջոց: «Եվ ինչպե՞ս կարող ես հասկարել ամենաակներս փասկը, եթե սեփական հիշողությունիցդ դուրս դրա մասին որևէ հիշագույն գոյություն չունի:» (Orwell, 2012: 41): Օվկիանիայում քաղաքական ռեժիմը վերացրել էր տեքստի՝ որպես տեղեկութիւն և հատկապես՝ անցյալի, ժամանակագրության, փաստերի արձանագրման, պահպանման և փոխանցման գործառույթը: Ավելին, լեզուն նոյնպես ամլացված էր այդ նույն գործառույթից: Հետևաբար, այլևս անհնար էր վավերացնել անցյալը և դրա հետ կապված մարդկային հիշողությունը: Անցյալի հիշողության և ներկայացվող այլափոխված իրականության հակադրության արդյունքում նկատվող ճանաչողական աններդաշնակությունը բավականին լավ է պատկերված հենց գլխավոր հերոսի մտավոր-հոգեբանական ապրումների միջոցով. «Կուսակցությունն ասում էր, որ Օվկիանիան երբեք էլ Եվրասիայի հետ դաշինքի մեջ չի եղել: Բայց ինքը՝ Ուինսթոն Սմիթը, գիտեր, որ Օվկիանիան ընդամենը չորս լրարի առաջ Եվրասիայի դաշնակիցն էր: Բայց որդե՞ղ էր այդ գիտելիքը: Միայն իր սեփական գիտակցության մեջ, որն ամեն դեպքում վաղ թե ուշ պետք է

ոչնչացվեր (Orwell, 2012: 40): «Ուինսթոնը չէր կարողանում հսկակ մրգաբերել մի ժամանակահարված, երբ երկիրը պատերազմի մեջ չէր եղել: Բայց ակնհայր էր, որ իր մանկության դարիներին խաղաղության մի բավականին դրական ընթացք է եղել, բանի որ մրգաբերում էր բոլորին ապշահար արած օդային հարձակման դեպք» (Orwell, 2012: 38): «Պահանջվում էին միայն անթիվ հաղթանակներ սեփական հիշողությանդ նկարմամբ: «Իրականության կառավարում» էին ասում դրան, Նորիսուքում՝ «Երկմիտք» (Orwell, 2012: 40):

Գործադրվելով որոշակի մտաշահարկային կառուցների միջոցով՝ Երկմիտքը գործածվում էր նաև ներկա իրականության ընկալումն աղավաղելու նպատակով: Երկմտքի գործադրման լեզվական կառուցների իր դասակարգմամբ նմանվելով Օրուելին՝ Լուտցն, օրինակ, առանձնացնում է չորս հիմնական լեզվական միջոց՝ մեղմասությունները, ժարգոնային բառապաշարի կիրառությունը, «gobbledygook»-ն ու «beurocratese»-ը, որոնք նա պարզապես սահմանում է որպես լսարանին բառերի մեծ քանակով ճնշելը, բառերի մեծ կուտակումով բուն միտքը հստակ չհայտնելը, և ուժնացված լեզուն, որը խոսքին ավելացնում է չափազանցված լրջություն և կարևորություն /Lutz, 1997/:

Օվկիանիայի չորս նախարարությունների անվանումները՝ **Ճշմարտության նախարարությունը**, **Սիրո նախարարությունը**, **Առատության նախարարությունը** և **Խաղաղության նախարարությունը**, լեզվի միջոցով իրականության այլափոխված, հեգնական արտապատկերման տիպիկ օրինակներ են: Դրանցից յուրաքանչյուրն իրականում պատասխանատու էր ամբողջովին հակառակ գործառույթների համար: Սիրո նախարարությունն, օրինակ, զվարկում էր քաղաքական այլախոհների խոշտանգմամբ, ճշմարտության նախարարությունն ապահովում էր քաղաքական քարոզությունը, կառավարում էր լրատվությունը, և զբաղվում էր փաստաթղթերի փոփոխմամբ՝ այդ կերպ խմբագրելով պատմությունը, Առատության նախարարությունը զբաղվում էր սովի և աղքատության միջոցով բնակչության կառավարմամբ, իսկ Խաղաղության նախարարությունն, իհարկե, զբաղված էր պատերազմով: Քաղաքական հեգնանքի (political irony) միջոցով իրականությունն աղճատված կերպով ներկայացնող արտահայտություններ են նաև ճշմարտության նախարարության երեք կարգախոսները՝ «Պատերազմը խաղաղություն է», «Ազատությունը ստրկություն է», «Տգիտությունն ուժ է», ինչպես նաև «Չիմացությունն ուժ է», երկու գումարած երկու հավասար է հինգ» քարոզչական արտահայտությունները:

Վեպում երմիտքը լեզվականորեն արտահայտվում է նաև Նորիսուքի որոշ միավորներում: Այդպիսիք են, օրինակ՝ **goodsex**, **joycamp**, **ownlife**, **goodthinkful** բառերը, որոնցում դրական իմաստ արտահայտող բառերի օգնությամբ հեգնականորեն քողարկվում է իրականում խիստ բացասական իրականությունը: **Joycamp** բառը, որը նշանակում է «ուրա-

խության ճամբար», իրականում վայր էր, որտեղ մարդկանց ստիպում էին զբաղվել տանջալից ֆիզիկական աշխատանքով: Նմանապես՝ **goodthinkful** բառը, որը նշանակում է «բարի կամ լավ բաներ մտածող», որպես որակում տրվում էր այն մարդուն, ով մտածում էր Կուսակցության մտաշահարկային գաղափարախոսությանը համաձայն, այլ ոչ երբեք՝ դրան դեմ:

Ի ամփոփումն, քաղաքական հեգնանքի միջոցով գուգահեռաբար համադրելով հակադիր գաղափարները, իրողություններն ու տեղեկությունները՝ երկմիտքն իր լեզվական կառուցների միջոցով հնարավորություն էր տալիս շահարկելու մարդու աշխարհընկալումն ու օբյեկտիվ իրականության ըմբռնումը՝ պահովելով արդյունավետ, սակայն հակադրության մեջ օբյեկտիվ իրականության մասին գոյություն ունեցող պատկերացման պատճառով վտանգված հարաբերական ենթակայությունը: Սակայն երկմտքին փոխարինելու է գալիս «Նորխոսքը», որը, հիմնված լինելով լեզվի՝ մարդու միտքը և մտածողությունը ձևավորելու բացառիկ կարողության վրա, ապահովում է վերջիններիս բացարձակ ու կատարյալ շահարկում՝ դրա միջոցով ապահովելով նաև մարդու կատարյալ և անխախտ ենթակայությունը:

Մտաշահարկման միջոցով հանրության կատարյալ և անխափան հպատակություն ապահովելու նպատակով (որը երկմտքի գործադրման դեպքում կարող էր կասկածի տակ դրվել մարդու գիտակցության մեջ իրականության արդեն իսկ շահարկված ըմբռնման հետ գուգահեռաբար գոյակցող օբյեկտիվ իրականության պատճառով) Օրուելը վեպում մտաշահարկումը խոսությային մակարդակից տանում է ավելի խորքային, լեզվական մակարդակ՝ ներկայացնելով մտաշահարկումը լեզվի՝ որպես համակարգի միջոցով իրականացվող երևոյթ, որը և անվանում է «*Newsppeak*», մեր թարգմանությամբ՝ «**Նորխոսք**»:

Վեպում Նորխոսքը, ինչպես արդեն նշել ենք, ամբողջատիրական կառավարության կողմից ստեղծված և պարտադրված կերպով հանրային գործածության մեջ դրված կող էր, նշանային համակարգ, լեզու, որն ուղղված էր լեզվական մտաշահարկման միջոցով երաշխավորելու հանրության կողմից «Անգլիական սոցիալիզմի» գաղափարախոսության անխափան ընդունումը: Կառավարության տեսլականն էր կիրառությունից դուրս մղել «հինխոսքը» (*Oldspeak*), այսինքն՝ անգլերենը և մարդկային լյանքի բոլոր ոլորտներում գործածության մեջ մտցնել Նորխոսքը: Այս նախաձեռնության իրականացման հիմնական ներուժը Նորխոսքի կարողությունն է սահմանափակել մարդկային մտածողությունը՝ դարձնելով այն կուսակցության մտաշահարկող գաղափարախոսության գործադրման համար նպաստավոր միջավայր: Հիմնվելով այն գաղափարի վրա, որ լեզուն կարող է կառուցել և ձևավորել մարդկային մտածողությունը, Օրուելը սրանով ուղղակիորեն ի ցույց է դնում լեզվի ներգրավվածությունն իշխանական ուժի չարաշահման և

հանրային մտաշահարկման գործում: Նա կարծում է, որ մտածական և ճանաչողական շրջանակի ընդգրկունությունն ուղիղ համեմատական է լեզվահամակարգի բարդությանը:

Ըստ Չիլթոնի՝ Նորխոսքը «նվազեցված բարդությամբ, քիչ վերացարկումներով ու առանց ինքնահղման (self-reference) լեզու է» /Chilton, 1988: 37/: Այստեղ տեղին է մեջբերել նաև Չիլթոնի կողմից Մ. Էդելմանի՝ «սահմանափակող լեզվի» սահմանման մեկնաբանությունը. «Սահմանափակող հանրային լեզվի հիմնական միտումը խոսութիւ շրջանակի նեղացումն է, երբ թույլ է տրվում քննարկել միայն կոնկրետ թեմաներ (հաճախ այդ թեմաներն առասպելական են իրենց բնույթով)՝ իրական գործընթացին, պատճառականությանը և պատասխանատվությանն արվող աղոտ հղումներով, ինչպես նաև չթույլատրելով որևէ քննադատություն: Այս նպատակին կարելի է հասնել լեզվական միջոցներով՝ կոնկրետ բառապաշտի ընտրության կամ ստեղծման, ոչ հստակ քերականական կառույցների ընտրության, ինչպես նաև այլոց հետ հաղորդակցման ընթացքում որոշակի մարտավարության կիրառության միջոցով» /Chilton, 1988: 37; Edelman, 1977/: Լեզվաբանական հարաբերականության հիմունքից բխող այս գաղափարի հիման վրա էլ Օրուելը մարմանվորել է լեզվագործաբանական սկզբունքների այս միահյուսումը մեկ լեզվական մարմնի՝ Նորխոսքի մեջ՝ փորձելով ցույց տալ, թե ինչպես է լեզուն ծառայում որպես գործիք՝ մտաշահարկելու մարդկանց և ուղղորդելու նրանց մտքերն ու գործողությունները նախասահմանված նպատակին:

Իր գործառույթով Նորխոսքը նման է համակարգչային ծրագրավորման լեզվի, որի օգտագործման հիմքում ընկած են հրամանների շղթաները, օր.՝ «*find somewhere options / tr '' 'n' / sort / uniq -c / sort -k1.1nr / head -10*»: Հետաքրքիր է այն փաստը, որ յուրաքանչյուր հրաման կոչված է կատարելու մեկ հստակ գործողություն և բերելու կոնկրետ արդյունք: Հրամանի կողմից հրահանգված գործողությունից բացի, համակարգչը այլ գործողություն չի կարող իրականացնել: Եվ ինչպես համակարգիչը չի կարող կատարել հրաման, որն իրեն չի տրվել, Նորխոսքով խոսողներն էլ չեն կարող գործել, մտածել կամ ապրել այն ճանաչողական կաղապարից դուրս, որը հաղորդում է նրանց Կուսակցությունը Նորխոսքի միջոցով: Օժտված պարզեցված քերականությամբ, իմաստներով և արտասահմանությամբ՝ Նորխոսքը նախագծված է ներկայացնելու որոշակի հրամաններ՝ հօգուտ Կուսակցության մտաշահարկային գաղափարախոսության՝ երաշխավորելով կատարյալ հպատակություն ու հավատարմություն ոչ միայն խոսքով, այլև գործով:

Որպես միտքը սահմանափակող լեզու՝ Նորխոսքը ստեղծվել է անգլերենի ծևաբանական, քերականական, և արտասահմանական կանոնների զանգվածային վերափոխման միջոցով, և համընդհանուր պարզեցումը կարելի է համարել վերջինիս ստեղծման առանցքային սկզբունքը: Վեաի վերջին՝ «Հավելված» կոչվող գլխում հեղինակը համակարգված

կերպով ներկայացնում է Նորխոսքի լեզվաբանական և մտաշահարկային առանձնահատկությունները:

Նորխոսքի քերականական կառուցվածքն, օրինակ, չափազանց պարզունակ է: Այն ենթադրում է խոսքի մասերի փոխակարգում (conversion) առանց որևէ սահմանափակման, որի համաձայն գոյականն, օրինակ, կարող է գործածվել որպես բայ, ածական, մակրայ և այլն: Բացակայում է բայերի անկանոնությունը. արդյունքում բոլոր բայերի վաղակատար դերբայը (participle II) կազմվում է *-ed* (*goodthinked*) վերջավորությամբ: Նմանապես, բոլոր մակրայները կազմվում են *-wise* (*fullwise*, *constructionwise*, *speedwise*, *goodthinkwise*, *etc.*), իսկ բոլոր ածականները *-ful* (*goodthinkful*, *speedful*, *etc.*) վերջածանցով: Այսպիսով, Նորխոսքում լիովին վերացված է անկանոնության ցանկացած դրսնորում:

Պարզեցման նույն սկզբունքի համաձայն՝ Նորխոսքի բառապաշարը խիստ աղքատիկ է: Այս լեզվում բառերը դասակարգվում են 3 խմբի՝ առօրյա կյանքում կիրառվող բառեր, թագարական նպատակների համար ստեղծված բառեր, և գ) գիտական և տեխնիկական եզրույթներ (Orwell, 2012: 344-355): Բառերը, որոնք արտահայտում էին հակիմաստ, «լնդրիմադիր» իմաստներ, այսինքն՝ իմաստներ, որոնք դեմ էին Կուսակցության գաղափարախոսությանը, անցանկալի էին և դուրս էին հանվում լեզվի բառապաշարից: Մնացած բառերը, ինչպես նաև այն բառերը, որոնք դեռ պետք է ստեղծվեին, բացառապես մենիմաստ էին: Բազմիմաստությունը բացառվում էր՝ լիովին պարզեցնելով լեզվի իմաստային շրջանակը: Յուրաքանչյուր բառ ուներ իր հստակ, ուղիղ իմաստը. «Դրա բառապաշարն այնպես էր կառուցված, որ Կուսակցության անդամի նկատի ունեցած ցանկացած իմաստի հաղորդեր ճշգրիկ և հաճախ նրբագոյն արդարականությունը միևնույն ժամանակ բացառելով բոլոր այլ իմաստները, ինչպես նաև դրանց հանգելու անուղղակի մեթոդները: Սա մասամբ արվում էր նոր բառեր ստեղծելու, բայց առավելապես անցանկալի բառերը հեռացնելու միջոցով, ինչպես նաև այն բառերի բացառմամբ, որոնց իմաստները դեմ էին Կուսակցության գաղափարախոսությանը: Եվ առհասարակ, հնարավորինս վերացվում էին բոլոր երկրորդական իմաստները» (Orwell, 2012: 343-344):

Սակայն իմաստային (semantic) սահմանափակումը, որն արտահայտվում է բացարձակ մենիմաստությամբ, Օրուելի կողմից նախատեսված միակ լեզվաբանական փոփոխությունը չէ: Իմաստային սահմանափակման հիման վրա նա ներկայացնում է նաև Նորխոսքի սահմանափակ գործաբանական առանձնահատկությունները. ««Ազար» բառը դեռ պահպանվում էր Նորխոսքում, բայց այն կարող էր կիրառվել միայն այնպիսի դարրողություններում, ինչպիսիք են «Այս շոնն ազար է ոչիններից» կամ «Այս դաշտն ազար է մոլախովից»: Այն չէր կարող գործածվել իր հին՝ «քաղաքականակես ազար» կամ «մղբով ազար»

իմասդներով, քանի որ քաղաքական և մշակող ազադությունն այլևս գոյություն չունեին անգամ որպես գաղափարներ, այդ իսկ պարճառով անհրաժեշտարար անանուն էին» (Orwell, 2012: 318):

Սա խոսում է այն մասին, որ փաստացիորեն Կուսակցության գաղափարախոսությունից բացի, գոյություն չուներ որևէ այլ համատեքստ, իրադրություն կամ իրականություն, որում բառերը կարող էին այլ բան նշանակել: Ըստ Էության, գոյություն ուներ միայն մեկ բառային, թերականական և արտալեզվական համատեքստ, որում Նորխոսքի բառերն արտահայտում էին բացառապես մեկ իմաստ:

Նորխոսքի վերոնշյալ լեզվական (բառակազմական, թերականական, արտասանական) և գործաբանական առանձնահատկություններն առանձնակի հետաքրքրություն են հաղորդում վերջինիս քննությանը թարգմանության տեսանկյունից այն պատճառով, որ Նորխոսքի թարգմանությունն, ըստ Էության, մի ողջ լեզվահամակարգի թարգմանություն է և ենթադրում է դրա համարժեք վերաստեղծումը թիրախ լեզվի կառուցների և սկզբունքների հիման վրա:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Վեպի հայերեն թարգմանվածքում /Orwell, 2012/ Doublethink և Newspeak բառերը համապատասխանաբար թարգմանվել են «Կրկնամիտք» և «Նորալեզու»: «Երկմիտք» և «Նորխոսք» բառերը բնագրային բառերի թարգմանության մեր առաջարկած տարբերակներն են:

2. Վեպից մեջբերված բոլոր պարբերությունների թարգմանությունը մերն է – Գ. Կ.:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Berkes J. Language as the “Ultimate Weapon” in Nineteen Eighty-Four. Language in George Orwell’s Nineteen Eighty-Four, 2000 // URL: [http://www.berkes.ca/archive/berkes\\_1984\\_language.html](http://www.berkes.ca/archive/berkes_1984_language.html) (Retreived February 27, 2000; Modified May 9, 2000)
2. Chilton P. Orwellian language and the media. London: Pluto Press, 1988.
3. Edelman M. Political Language: Words that Succeed and Policies that Fail. New York: Academic Press, 1977.
4. Lutz W. The New Doublespeak. Why No One Knows What Anyone’s Saying Anymore. USA: HarperPerennial, 1997.
5. Orwell G. Politics and the English Language. London: Horizon, 1946.
6. Rogers E., Steinfatt T. Intercultural Communication. USA: Waveland Press Inc., 1999.

7. Whorf B. L. The Relation of Habitual Thought and Behavior to Language // *Language, Thought, and Reality: Selected Writings of Benjamin Lee Whorf*. Cambridge, Massachusetts: MIT Press, 1956.
8. Orwell G. Nineteen Eighty-Four. London: Penguin Books, 2012.

**Г. КАРАПЕТИАН, К. СОГИКЯН – «Двоемыслие» и «Новояз» Дж. Оруэлла как инструменты политической манипуляции.** – В статье представлены результаты анализа методов лингвистической манипуляции *Двоемыслие* и *Новояз* Дж. Оруэлла как двух дискурсивных инструментов политической манипуляции, отраженных в романе “1984”. Язык представлен в статье как наиболее эффективное средство, применяемое в политической манипуляции. Двоемыслие как метод лингвистической манипуляции рассматривается в противопоставлении с когнитивным диссонансом, служащим основанием для последующих более детальных психологических, умственных и социальных характеристик. В статье представляются также лингвистические особенности Новояза как наиболее эффективного когнитивного средства политической манипуляции.

**Ключевые слова:** Оруэлл, 1984, Двоемыслие, Новояз, политическая манипуляция, лингвистическая манипуляция, политический дискурс, политическая ирония

**G. KARAPETYAN, K. SOGHICKYAN – *The Orwellian “Doublethink” and “Newspeak” as Tools of Political Manipulation.*** – The purpose of this paper is the linguistic study of Orwellian Doublethink and Newspeak as powerful discursive and linguistic tools of political manipulation presented in the novel “Nineteen Eighty-Four”. The paper first presents language as the most powerful and effective tool used in political manipulation, elucidates Doublethink as a means of linguistic manipulation viewed in contrast with cognitive dissonance, which then serves as a firm foundation for expounding its more detailed psychological, mental, and social characteristics, and proceeds to the description Newspeak as a cognitively more effective linguistic tool for political manipulation.

**Key words:** Orwell, 1984, Doublethink, Newspeak, political manipulation, linguistic manipulation, political discourse, political irony

## Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ

Երևանի Վ. Բյուտովի անվան պետական  
լեզվահասարակագիրական համալսարան

### ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՄՊԼԻԿԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՑՆԵՐՈՒՄ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածը նվիրված է քաղաքավարության իմպլիկավորուրայի դեսակների դրսնորումների և դրա համարեղ կառուցման բնույթի ուսումնամիրությանը պաշտոնական հարցազրույցներում:

Պաշտոնական հարցազրույցները արդացողում են խոսողի և խոսակցի միջև առկա մեծ սոցիալական գործածությունը, ինչը ենթադրում է քաղաքավարության աստիճանի բարձրացում և պարսպանքի նվազեցում: Այս առումով քաղաքավարության դրսնորումներն ընդգծվում են դիմելածնի հայություկ բառերի և լեզվական միջոցների կիրառությամբ: Պաշտոնական համապետքսկն արդացողում է քաղաքավարության իմպլիկավորուրայի դեսակների առկայացման առանձնահատկությունները, մինչդեռ քաղաքավարության իմպլիկավորուրայի համարեղ կառուցումն ի հայտ է գալիս հաղորդակցվող մասնակիցների ակտիվ խոսքային փոխազդեցության ընթացքում:

**Բանալի բառեր.** պաշտոնական հարցազրույց, համարեքսվր, գործարանություն, անուղղակի պահկածք, քաղաքավարության, իմպլիկավորուրա, միավորություն, մասնավոր իմպլիկավորուրա, ընդհանրացված իմպլիկավորուրա

Իմպլիկատուրան՝ որպես գործարանական երևոյթ, գրավեց լեզվաբանների ուշադրությունը 1967 թ. Հարվարդի համալսարանում Փ. Գրայսի կողմից դասախոսությունների մի ամբողջ շարք կարդալուց և դրան հետևած մի շարք հրապարակումներից հետո: Գործարանության մեջ իմպլիկատուրա եզրաբառը առաջադրվել է Փ. Գրայսի կողմից: Իմպլիկատուրան ասույթի ենթադրվող իմաստն է, այն կարող է նախադասության իմաստի մաս կազմել կամ հետևել այն համատեքստից, որում առկայացվում է այդ նախադասությունը /Grice, 1967/:

Քաղաքավարություն և իմպլիկատուրա հասկացությունները գործարանության կարևորագույն հասկացություններից են: Մի շարք լեզվաբանների պնդմամբ՝ քաղաքավարության իմպլիկավորուրան ձևավորվում է մասնակիցների անուղղակի վարքագծի արդյունքում /Brown and Levinson, 1987; Leech, 1983; Haugh, 2003/: Համաձայն Ռ. Արունելի հաղորդակցության համագործակցային կառուցողական կաղապարի՝ քաղաքավարության իմպլիկատուրան առաջանում է հաղորդակցվող մասնակից-

ների քաղաքավարի փոխազդեցության ընթացքում, ինչի արդյունքում ի հայտ է գալիս քաղաքավարության իմպլիկատուրայի *համարեղ կառուցումը* /Arundale, 2005/:

Սույն երևույթը և դրա տեսակները՝ *իրախուսող քաղաքավարություն* (enhancement politeness) /Leech, 1983/, *փոխհարուցող քաղաքավարություն* (compensatory politeness) /Brown and Levinson, 1987/, *դիմացինի արժանիքները գնահատելու քաղաքավարություն* (demeanour politeness) /Leech, 1983/, պայմանական քաղաքավարություն (provisional politeness), (քաղաքավարության այս տեսակը բնորոշ է միայն հարցազրոյցի ոչ պաշտոնական ոճին, որտեղ հարցազրոյցավարը հավասարապես կիսվում է զրուցակցի հետ իր կարծիքով և զգացողություններով) /Haugh, 2005/, *քացասական քաղաքավարություն* (negative politeness) (այս տեսակը դրսևորվում է մասնակիցների պաշտոնական հարաբերությունների արդյունքում) /Brown and Levinson, 1987/ ձևավորվում են հաղորդակցվող մասնակիցների քաղաքավարի փոխազդեցության արդյունքում:

Չնայած Փ. Գրայսի, Զ. Սերլի այն պնդմանը, որ այս երկու հասկացությունները սերտորեն կապված են միմյանց հետ /Grice, 1967; Searle, 1975/, չնախաձեռնվեց համապարփակ փորձ դրանց միջև գոյություն ունեցող կապը ուսումնասիրելու համար: Ինչպես պնդում են Փ. Բրաունը և Ս. Լեվինսոնը՝ քաղաքավարությունն ի հայտ է գալիս, եթե հասցեատերը փոխանցում է իր քաղաքավարի մտադրությունների արդյունքում մասնավոր իմպլիկատուրաների տեսքով /Brown and Levinson, 1987: 6, 95; Brown, 1995: 169/: Վերջիններիս պնդմամբ՝ քաղաքավարությունը ձևավորվում է հասցեատիրոջ քաղաքավարի մտադրությունների արդյունքում մասնավոր իմպլիկատուրաների տեսքով /Brown and Levinson, 1987: 6, 95; Brown, 1995: 169; Brown, 2001/: Քաղաքարության սույն տեսության հիմնադիրներից են նաև Զ. Լիչը /Leech, 2003/ և Մ. Տերկուրաֆին /Terkourafi, 2003/, ովքեր պնդում են, որ քաղաքավարությունը կարող է ձևավորվել ինչպես մասնավոր, այնպես էլ ընդհանրացված իմպլիկատուրաների տեսքով: Մ. Տերկուրաֆիի կողմից առաջադրված քաղաքավարության սկզբունքի հիմքում ընկած է այն դրույթը, որ քաղաքավարությունը կարող է ձևավորվել ինչպես կոնկրետ, այնպես էլ ընդհանուր իմպլիկատուրաների տեսքով /Terkourafi, 2003, 2005/:

Զ. Լիչը առանձնացնում է քաղաքավարության հետևյալ սկզբունքները՝ եղիր քաղաքավարի, նրբանկատ, մեծահոգի, գովարանող, համեստ, հաշտ և կարեկցող /Leech, 2005: 17–18/: Օրինակ՝ եթե հյուրին առաջարկում ենք որևէ բան խմել, ավելի քաղաքավարի է ասել “What would you like to drink?” (Ի՞նչ կցանկանաիք խմել), ինչը, համաձայն Լիչի՝ պարունակում է քաղաքավարություն՝ մեծահոգության սկզբունքի համաձայն:

Քաղաքավարության սկզբունքը համընդհանուր է մարդկային հաղորդակցության համար, ինչը թույլ է տալիս խուսափել հաղորդակցական անհամաձայնությունից: Հարկ է նշել, որ համաձայնության հնարա-

վոր է հասնել միայն այն դեպքում, եթե մասնակիցները հետապնդում են միևնույն նպատակները երկխոսության ընթացքում /Leech, 2005: 7/: Ելնելով այս ամենից՝ Լիչը սահմանում է քաղաքավարությունը հետևյալ կերպ. քաղաքավարությունը ծնավորվում է, եթե մասնակիցը մեծ կարևորություն է տալիս այն ամենին, ինչը վերաբերում է լսողին, այլ ոչ իր սեփական անձին /Leech, 2005: 13/:

Ա. Կալիան պնդում է, որ քաղաքավարությունը ծնավորվում է ճիշտ այնպես, ինչպես մասնավոր խոսքային իմպլիկատուրաները քաղաքավարության և համագործակցային սկզբունքի արդյունքում /Kallia, 2004: 145/: Կալիան առաջադրում է քաղաքավարության հետևյալ ծնակերպումը՝ «Եղեք պատշաճ և՛ ծնի, և՛ բովանդակության մեջ».

- Ենթասկզբունք 1՝ Մի եղիր սպասվածից ավելի քաղաքավարի,
- Ենթասկզբունք 2՝ Մի եղիր սպասվածից ավելի քիչ քաղաքավարի /Kallia, 2004: 161/:

Քաղաքավարության մեկ այլ՝ ավելի ընդլայնված մոտեցում է առաջադրում Մ. Տերկուրաֆին /Terkourafi, 2005: 237/: Նրա պնդմամբ՝ քաղաքավարությունը ծնավորվում է խոսողական-ներգործական փոխազդեցության արդյունքում: Կալիայի քաղաքավարության տեսության տարրերությունը Տերկուրաֆիի առաջադրած քաղաքավարության տեսությունից այն է, որ Կալիայի պնդմամբ՝ քաղաքավարության ծնավորումը կախված է խոսողի մտադրությունների իրազեկությունից, մինչդեռ Տերկուրաֆին պնդում է, որ քաղաքավարության իմպլիկատուրայի ծնավորումը կախված է խոսողի մտադրությունների իրազեկությունից միայն կոնկրետ համատեքստում:

Քաղաքավարության տեսության մեկ այլ մեկնաբանություն հիմնվում է այն դրույթի վրա, որ քաղաքավարությունն ակնկալվում է խոսողի կողմից այն դեպքում, եթե վերջինս չի ցուցաբերում բարձր կարծիք իր մասին: Մյուս կողմից, քաղաքավարությունը ենթադրվում է, եթե հասցեատերը չի ակնկալում, որ խոսողը բարձր կարծիքի է հասցեատիրոց և ոչ իր սեփական անձի մասին /Haugh, 2003/:

Հարկ է նշել, որ քաղաքավարության սկզբունքները կարող են իրականացվել տարրեր լեզվական միջոցներով: Հետևյալ օրինակում այն դրսևրվում է բառային միջոցով. “*Could you lend me your electric drill?*” նախադասությունն ավելի քաղաքավարի ծն է, քան “*Could I borrow your electric drill?*” նախադասությունը /Կոջանովա, 2009: 249/:

Խոսելով քաղաքավարության սկզբունքի մասին՝ S. Օգանեզովան նշում է, որ հաղորդակցման սուբյեկտը ոչ միշտ է կարողանում արտահայտել իր սեփական մտքերն ու ցանկությունները կամ զրուցակցի հանդեպ ունեցած իր պահանջները: Զրուցակիցը ձգտում է հասնել մաքսիմալ արդյունավետության հաղորդակցման ընթացքում, ինչի

արդյունքում նա չի կարողանում ուղղակի կերպով արտահայտել իր մտքերը /Օգանզովա, 2011: 187/:

Ըստ S. Ֆուլմենկովայի՝ քաղաքավարությունն այն սոցիալական երևույթներից է, որի շնորհիվ միջանձնային հաղորդակցությունը դառնում է հարթ, արդյունավետ և առանց կոնֆլիկտների /Փորմենկովա, 2005: 10/:

Հարկ է նշել, որ քաղաքավարության իմպլիկատուրայի համատեղ կառուցման բնույթը հիմնվում է Ռ. Արունդելի հաղորդակցության համագործակցային կառուցողական կաղապարի վրա /Arundale, 1999/: Համաձայն Արունդելի հաղորդակցության համագործակցային կառուցողական կաղապարի՝ քաղաքավարության իմպլիկատուրան առաջանում է հաղորդակցվող մասնակիցների քաղաքավարի փոխազդեցության ընթացքում, ինչի արդյունքում ի հայտ է գալիս քաղաքավարության իմպլիկատուրայի համատեղ կառուցումը: Հետևաբես, քաղաքավարության իմպլիկատուրան ի հայտ է գալիս մասնակիցների ակտիվ խոսքի փոխանակման ընթացքում: Այսպիսով, քաղաքավարության իմպլիկատուրան հիմնվում է այն դիտարկման վրա, որ ինչ որ բան ակնարկելու արդյունքում ձևավորվում է քաղաքավարություն /Brown and Levinson, 1987; Leech, 1983; Haugh, 2002/:

Այժմ դիտարկենք ԱՄՆ նախակին նախագահ Բարաք Օբամայի հետ պաշտոնական հարցազրույթից մի հատված, հյուսիսամերիկան խմբագիր Ջոն Սոփելի հետ, որտեղ բազահատվում են քաղաքավարության իմպլիկատուրայի տեսակների դրույտումներ, ինպես նաև քաղաքավարության իմպլիկատուրայի համատեղ կառուցումը պաշտոնական երկխոսության ընթացքում:

*SOPEL: "Mr. President, you're about to fly to Kenya, to your ancestral home. Given the al-Shabaab attacks on the West Gate mall and Garissa University, I'm sure your secret service could've suggested other countries for you to visit. But you wanted to go to Kenya".*

Ակնհայտ է, որ Սոփելն արտահայտում է իր բարձր կարծիքը նախագահի մասին՝ ձևավորելով իրախուսող քաղաքավարություն. “Given the al-Shabaab attacks on the West Gate mall and Garissa University, I'm sure your secret service could've suggested other countries for you to visit. But you wanted to go to Kenya”:

Վերլուծենք հետևյալ հատվածը, որտեղ նախագահի բառերը պարունակում են իմպլիկատուրա այն մասին, որ նա առաջին նախագահն է, ով պայքարում է ազգերի և ժողովուրդների անհամախմբվածության դեմ: Օբամայի բառերը հիմք են դառնում նաև իրախուսող քաղաքավարության, եթե նախագահն արտահայտում է իր հարգանքը Քենիայի և Էթիոպիայի մասին. “So I'll be the first US president to not only visit Kenya and Ethiopia, but also to address the continent as a whole, building off

*the African summit that we did here which was historic and has, I think, deepened the kinds of already strong relationships that we have across the continent”:*

Վերլուծենք հետևյալ հատվածը, որտեղ նախագահի խոսքը հիմք է դառնում մեկից ավել քաղաքավարության իմպլիկատուրայի տեսակների.

*“The more we can encourage entrepreneurship, particularly for young people, the more they have hope. Now that requires some reforms in these governments that we continue to emphasise. Rooting out corruption, increased transparency and how government operates, making sure that regulations are not designed just to advantage elites, but are allowing people who have a good idea to get out there and get things done”.*

Ակնհայտորեն, Օբաման արտահայտում է իր մեծ հարգանքը երիտասարդների վերաբերյալ և ծևավորում է իրախոսող քաղաքավարությունը. Նախագահի խոսքից պարզ է դառնում, որ Վերջինս արտահայտում է իր մեծ հարգանքը հասարակ ամերիկացու նկատմամբ՝ ցուց տալով, որ բարձր կարծիքի չէ իր մասին չնայած իր բարձր սոցիալական դիրքին: Այսախով, Օբաման ծևավորում է դիմացինի արժանիքները գնահատելու քաղաքավարություն:

Դիտարկենք հետևյալ հատվածը, որը հիմք է դառնում իմպլիկատուրաների և փոխհատուցող քաղաքավարության ծևավորման համար.

1. SOPEL: *Well, haven't the Chinese got there first in Africa? You're going to go to the African Union Building, which was built with Chinese money, you're going to travel along Chinese-built roads, you're going to go past endless Chinese traders on those roads.*

2. OBAMA: *Well, the - what is true is that China has - over the last several years, because of the surplus that they've accumulated in global trade and the fact that they're not accountable to their constituencies, have been able to funnel an awful lot of money into Africa, basically in exchange for raw materials that are being extracted from Africa.*

*And what is certainly true is that the United States has to have a presence to promote the values that we care about. We welcome Chinese aid into Africa. I think we think that's a good thing. We don't want to discourage it.*

Ինչպես պարզ է դառնում Սովետի 1-ին մուտքից, ժխտական հարցական օժանդակի կիրառությունից հետևում է այն իմպլիկատուրան, որ նաև թե հարց է ուղղում նախագահին, այլ արտահայտում է իր կարծիքը. “Well, haven't the Chinese got there first in Africa?”:

Այնուհետև, Օբամայի 2-րդ մուտքից ակնհայտ է դառնում, որ իմպլիկատուրան ճիշտ է ընկալվել Օբամայի կողմից, քանի որ նախագահը նշում է այն փաստը, որ Չինաստանի ներդրումները Աֆրիկայում կատարվել են փոխանակման հիմքի վրա. “Well, the - what is true is that China has - over the last several years, because of the surplus that they've accumulated in global trade and the fact that they're not accountable to their

*constituencies, have been able to funnel an awful lot of money into Africa, basically in exchange for raw materials that are being extracted from Africa”:*

Նախագահը ողջունում է Զինաստանի տրամադրած օգնությունը Աֆրիկայում՝ կիրառելով “I think we think” կառուցք, որն, անշուշտ, անորոշություն է փոխանցում իր կարծիքին. “I think we think that's a good thing”: Ակնհայտորեն, “We don't want to discourage it” նախագահը ևս մեկ անգամ ի հայտ է գալիս այն իմացիկատուրան, որ նախագահը հավանություն չի տալիս Զինաստանի այդ քայլին և ողջունում է նրանց ընդամենը չիհասթափեցնելու համար՝ քաղաքավարությունից դրդված: Նախագահն այնուամենայնիվ իր հարգանքն է արտահայտում Զինաստանի հանդեպ և ձևավորում է փոփոխակուցող քաղաքավարություն:

Դիտարկենք հետևյալ հատվածը, որը պարունակում է իմացիկատուրաներ, այդ թվում քաղաքավարության իմացիկատուրաներ.

*1. SOPEL: I'm going to suggest there may be one other difficult issue when you're there. And that's the issue of homosexuality, gay marriage, after the Supreme Court ruling. I mean, the deputy president in Kenya, who you're going to meet, Mr Ruto, he said - "We have heard that in the US they have allowed gay relations and other dirty things."*

*2. OBAMA: Yeah. Well, I disagree with him on that, don't I? And I've had this experience before when we've visited Senegal in my last trip to Africa. But in a press conference, I was very blunt about my belief that everybody deserves fair treatment, equal treatment in the eyes of the law and the state. And that includes gays, lesbians, transgender persons. I am not a fan of discrimination and bullying of anybody on the basis of race, on the basis of religion, on the basis of sexual orientation or gender. And I think that this is actually part and parcel of the agenda that's also going to be front and centre, and that is how are we treating women and girls.*

Ակնհայտ է, որ Սոփելը խոսում է քննարկվելիք խնդիրների մասին քենհայում “may” մոդալ բայի կիրառության միջոցով, ինչը նվազեցնում է կարծիքի սաստկությունը և հիմք է դառնում քաղաքավարության: Սա, անշուշտ, ընդգծում է Սոփելի և Օբամայի պաշտոնական հարաբերությունները: Հարկ է նշել, որ իմացիկատուրան չէր ձևավորվի “is” օժանդակ բայի նախընտրության դեպքում:

Ինչպես պարզ է դառնում, Սոփելը մեջբերում է փոխնախագահ պարուն Ռութերի խոսքերը ԱՄՆ-ում տիրող իրավիճակի և օրենքների մասին, որտեղ նկատում ենք “they” հոգնակի դերանվան կիրառությունը: Ակնհայտորեն, հոգնակի դերանվան դիտավորյալ կիրառությունը հասցեագրված է նախագահ Օբամային: Այսպիսով, դերանվան կիրառությունը թույլ է տալիս նվազեցնել պարուն Ռութերի կարծիքի սաստկությունը և հիմք է դառնում քաղաքական քաղաքավարության. “I mean, the deputy president in Kenya, who you're going to meet, Mr Ruto, he said - "We have heard that in the US they have allowed gay relations and other dirty things”:

Ակնհայտորեն, Սովելի խոսքից ծևավորված իմպլիկատուրան ճիշտ է ընկալվում Օբամայի կողմից, քանի որ վերջինս 2-րդ մուտքում կիրառում է անջատական՝ “*don't I*” հարցը, որը պարունակում է իմպլիկատուրա այն մասին, որ նախագահ Օբաման համաձայն չէ պարոն Ռութերի քննադատական կարծիքի հետ. “*Well, I disagree with him on that, don't I?*”: Օբամայի խոսքից հետևում է այն իմպլիկատուրան, որ վերջինս անհիմն է համարում պարոն Ռութերի քննադատությունը՝ մեկնաբանելով, որ բոլորն այդ թվում և փոքրամասնությունները պետք է ունենան հավասար իրավունքներ, և հենց այդ նույն մարտավարությամբ է նա առաջնորդվում թույլ սերի ներկայացուցիչների հարցում: Նախագահը մեծ կարևորություն է տալիս կանանց իրավունքների պաշտպանության խնդրին, ինչը ենթադրվում է շրջման կիրառությունից, որտեղ օժանդակ բայց դրվում է ենթակայի առաջ. “*and that is how how are we treating women and girls*”:

Վերլուծենք հետևյալ հատվածը, որտեղ հարցազրուցավարը քաղաքավարի թույլատվություն է փորձում ստանալ “*can*” մոդալ բայի կիրառության միջոցով, ինչը բնորոշում է հարցազրուցի պաշտոնական թույլթը: Այսպիսով, Սովելը թույլտվություն է հարցնում նախագահից անցնելու հաջորդ թեմային՝ ստանալով վերջինիս համաձայնությունը:

1. *SOPEL: Can we just move from difficult conversations that you're about to have in Kenya and the excruciatingly difficult conversations that you had in getting the Iran nuclear deal? I'm sure some people would say that yes, you've set out the case where there is no pathway to a nuclear bomb now for Iran.*

2. *OBAMA: Yes.*

Դիտարկենք հետևյալ հատվածը, որտեղ ծևավորվում են իմպլիկատուրաներ, ինչպես նաև ի հայտ է գալիս քաղաքավարության իմպլիկատուրայի համատեղ կառուցումը.

1. *SOPEL: You talk about the 2% defence spending in Britain. I'm right in thinking that there was quite a bit of pressure put on from here, saying it would be very bad if you didn't.*

2. *OBAMA: I wouldn't say pressure. I think I had an honest conversation with David that Great Britain has always been our best partner. Well, you know, I guess you could go back to 1812 and that would you know, that*

3. *SOPEL: When we tried to burn this place down?*

4. *OBAMA: Yeah, right, right. But that's ancient history*

5. *SOPEL: History.*

Ակնհայտ է դառնում, որ Սովելի հարցից հետևում է այն իմպլիկատուրան, թե ինչպիսին է նախագահի արձագանքը և մեկնաբանությունը բրիտանիայի վարչապետ Դևիդ Քեմերոնի լարված դիրքորոշման վերաբերյալ: Ինչպես նկատում ենք, Սովելը նախընտրում է իրականությունը ներկայացնել անդեմ ծևով՝ հնարավորություն տալով նախագահին անդրադառնալ կամ չանդրադառնալ իր և Քեմերոնի լարված հարաբե-

բովածուներին: Անշուշտ, Սովելը ձևավորում է բացասական քաղաքավարություն:

Ակնհայտորեն, 2-րդ մուտքում նախագահի խոսքից պարզ է դառնում, որ իմպիկատուրան ճիշտ է ընկալվել Օբամայի կողմից, քանի որ վերջինս մեկնարանում է Քեմերոնի դիրքորոշումը: Ուշադրության է արժանի այն, որ նախագահը փորձում է չհամաձայնել Սովելի այն մտքի հետ, որ իրավիճակը լարված է “would” օժանադակ բայի օգնությամբ: Ակնհայտորեն, Օբաման ձևավորում է քաղաքավարություն. “I wouldn’t say pressure”: Նախագահի բառերից ձևավորվում է մեկ այլ իմպիկատուրա այն մասին, որ նախագահը Քեմերոնին չի համարում լավ գործընկեր՝ ի տարբերություն Մեծ Բրիտանիայի: Ինչպես նկատում ենք, նախագահը դիմում է Բրիտանիայի վարչապետին անվամբ, ինչը պարունակում է իմպիկատուրա այն մասին, որ նախագահն անլուր է վերաբերում Քեմերոնին. “I think I had an honest conversation with David that Great Britain has always been our best partner”:

Միաժամանակ նախագահը ձևավորում է փոխհարուցող քաղաքավարություն՝ արտահայտելով իր բարձր կարծիքը Մեծ Բրիտանիայի մասին՝ չնայած նրան, որ Օբաման իր խոսքում ակնարկում է 1812-ի աններելի դեպքերի մասին. “Great Britain has always been our best partner”. Well, you know, I guess you could go back to 1812 and that would you know, that”: Ինչպես նկատում ենք, նախագահն անուղղակի կերպով է անդրադառնում այդ դեպքերին, որտեղ ուշադրության են արժանի “could” մոդալ բայի անցյալ ձևը և “would” անցյալ պայմանականի կիրառությունը: Այս կերպ նախագահը ձևավորում է քաղաքավարություն:

3-րդ մուտքից պարզ է դառնում, որ նախագահի խոսքից ձևավորված իմպիկատուրան ճիշտ է ընկալվում Սովելի կողմից, քանի որ նա նշում է բրիտանացիների՝ Սպիտակ Տունը այրելու փորձի մասին: 4-րդ մուտքից ևս մեկ անգամ ակնհայտ է դառնում, որ իմպիկատուրան ճիշտ է ընկալվում, քանի որ հաստատելով Սովելի խոսքերը՝ Օբաման ձևավորում է մեկ այլ քաղաքավարության իմպիկարուրա՝ վերագրելով այդ իրադարձությունները անցյալին. “but that’s ancient history”: Այնուհետև, 5-րդ մուտքից պարզ է դառնում, որ քաղաքավարության իմպիկարուրան համարեղ կառուցված է, քանի որ Սովելը չի վերագրում այդ ամենը անցյալին՝ համարելով դա կարևորագույն պատմական փաստ:

Դիտարկենք հետևյալ հատվածը, որտեղ, պաշտոնական հարաբերություններից ենելով, հարցազրուցավարը փորձում է ակնարկել նախագահին, որ անհարմար է զգում ուղղել տվյալ հարցը և միայն երկխոսության ընթացքում ի հայտ է գալիս քաղաքավարության իմպիկարուրայի համարեղ կառուցումը.

1. SOPEL: Except that you've kind of got this deal, you've got Cuba, diplomatic relations, healthcare reform embedded, major trade deal with Asia. It's not a question of journalist.

2. OBAMA: *Climate change agenda with China.*
3. SOPEL: *Okay, so it's not*
4. OBAMA: *I've got a pretty long list.*
5. SOPEL: *Okay, so it's not a question that a journalist often asks, what's gone right?*

Ակնհայտորեն, Սոփելը նշում է նախագահի ներգրավվածության մասին մի շարք նախագծերում, որն ուղեկցվում է հերթական հարցի անուղղակի թույլտվությամբ: Այս կերպ, Սոփելը ցույց է տալիս, որ անհարմար է զգում ուղել այդ հարցը, սակայն ստիպված է դա անել հարցազրուցավարի՝ իր դերից ելնելով: Այսպիսով, Սոփելը ծևավորում է *քաղաքավարության իմայիկավորության*. “*Except that you've kind of got this deal, you've got Cuba, diplomatic relations, healthcare reform embedded, major trade deal with Asia. It's not a question of journalist*”:

Ակնհայտորեն, նախագահն ընկալում է Սոփելի հարցի իմայիկատուրան՝ հարցի անցանկալի լինելու մասին, այնուամենայնիվ, Օբաման չի փորձում շրջանցել ենթադրվող հարցը՝ ժամանակ տալով Սոփելին ուղել ենթադրվող հարցը. “*Climate change agenda with China*”:

3-րդ մուտքում Սոփելը, չստանալով նախագահից մերժման ակնարկ, նորից փորձում է հայցել նախագահի ներողամտությունը և վերջնականապես համոզվել, որ նա չի ցանկանում փոխել թեման և հետո միայն ուղել իր հարցը. “*Okay, so it's not*”:

4-րդ մուտքում, նախագահը չի փորձում թեման փոխելու մասին ակնարկ անել՝ ազատություն տալով Սոփելին ուղել այն, եթե ցանկանում է. “*I've got a pretty long list*”:

5-րդ մուտքում Սոփելը, վերջնականապես համոզվելով, որ նախագահը դեմ չէ ենթադրվող հարցին, վերջապես Օբամային ուղղում է հարցը. “*Okay, so it's not a question that a journalist often asks, what's gone right?*”: Այսպիսով, կարող ենք նշել, որ քաղաքավարության իմայիկատուրան համատեղ կառուցված է, քանի որ նախագահն, ընկալելով Սոփելի քաղաքավարի ակնարկը, նրան հնարավորություն է տալիս ուղել հարցը՝ չնայած հարցի ենթադրվող անցանկալի բովանդակությանը:

Այսպիսով, կարեի է եզրակացնել, որ քաղաքավարության իմայիկատուրան գործարանության նորագույն հասկացություններից է, որն ի հայտ է գալիս հաղորդակցվող մասնակիցների անուղղակի պահվածքից: Քաղաքավարության իմայիկատուրայի համատեղ կառուցման բնույթը ի հայտ է գալիս հաղորդակցական հոսքի դնթացքում՝ կախված տարբեր արտավեզվական գործոններից:

## REFERENCE

1. Arundale R. Pragmatics, Conversational Implicature and Conversation // *Handbook of Language and Social Interaction*, NJ: Lawrence Erlbaum Associates Publishers, 2005.
2. Arundale R. An Alternative Model and Ideology of Communication for an Alternative to Politeness Theory // *Pragmatics*, N 9, 1999.
3. Brown P., Levinson S. Politeness. Some Universals in Language Usage. Cambridge: Cambridge University Press, 1987.
4. Brown P. Politeness Strategies and the Attribution of Intentions: the Case of Tzeltal Irony // *Social Intelligence and Interaction*, Cambridge: Cambridge University Press, 1995.
5. Grice P. Studies in the Way of Words, Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1967.
6. Kallia A. Linguistic politeness: The Implicature Approach // *Multilingua* 23, 2004.
7. Haugh M. The Intuitive Basis of Implicature: Relevance Theoretic Implicitness versus Gricean Implying // *Pragmatics*, N 12, 2002.
8. Haugh M. Anticipated versus Inferred Politeness // *Multilingua*, N 22, 2003.
9. Haugh M. The importance of 'Place' in Japanese Politeness: Implications for Cross-Cultural and Intercultural Analyses // *Intercultural Pragmatics*, 2-1, 2005.
10. Leech G. Principles of Pragmatics. London: Longman, 1983.
11. Leech G. Towards an Anatomy of Politeness in Communication // *International Journal of Pragmatics*, N 14, 2003.
12. Leech G. Politeness: Is There an East-West Divide? // *Journal of Foreign Languages* (Shanghai International Studies University), N 6, 2005.
13. Searle J. Indirect Speech Acts // *Syntax and Semantics*, vol. 3, New York: Academic Press, 1975.
14. Terkourafi M. Generalised and Particularised Implicatures of linguistic politeness // *Perspectives on Dialogue in the New Millennium*, Amsterdam: John Benjamins, 2003.
15. Terkourafi M. Beyond the Micro-level in Politeness Research // *Journal of Politeness Research*, N 1, 2005.
16. Кожанова А. В. Концепции языковой вежливости (краткий теоретический обзор) Вестник МГЛУ. Выпуск 557, 2009.
17. Оганезова Т. С. Причины имплицирования информации в процессе коммуникации // Вестник Ленинградского государственного университета им. А. С. Пушкина, 2011.
18. Фурменкова Т. В. Средства реализации принципа вежливости в американском варианте современного английского языка (на примере речевых актов общения, просьбы, приветствия). Калининград, 2005.

**В. АКОПЯН – *О формировании импликатуры вежливости и ее представлении в официальных интервью.*** – Цель статьи – исследовать характер и свойства импликатуры вежливости в официальных интервью. Импликатура вежливости – это сравнительно новая концепция в области прагматики. Для достижения успешной коммуникации интерактантам необходимо использовать определенные стратегии, позволяющие создать максимально комфортные условия общения. В целом, при анализе материала, в статье рассматриваются особенности формирования импликатуры вежливости, способы ее проявления, а также лексические и синтаксические средства, которыми выражается вежливость в официальных интервью.

**Ключевые слова:** официальное интервью, контекст, прагматика, непрямое поведение, импликатура вежливости, намерение, частная импликатура, обобщенная импликатура

**V. HAKOBYAN – *On the Co-Constitutive Nature of Politeness Implicature and its Reflection in Formal Interviews.*** – The paper analyses the nature of politeness implicature in formal interviews. Politeness implicature is a comparatively new concept in the field of pragmatics. Notably, politeness arises by virtue of implying something from the interaction of participants in particular contexts to maintain desired social relationships. Overall, the analysis carried out reveal the co-constitutive nature of politeness implicature, the ways of its manifestation, as well as the lexical, syntactic means which trigger politeness implicatures in official interviews.

**Key words:** formal interview, context, pragmatics, indirect behavior, politeness implicature, intention, particularized implicature, generalized implicature

**Նարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ԿԱՆԿԱՎԱՐԿԱԾԸ ՈՐՊԵՍ  
ՎԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԻՄԱՍ**

Սույն հոդվածում քննության են առնվում երկխոսության մեջ կանխավարկածի դիրքավորյալ և ոչ դիրքավորյալ դրսորման առանձնահավելությունները: Ուսումնասիրության հիմքում ընկած են վերանվանական հարաբերությունները՝ որպես կանխավարկածի դարբերակման հիմնական չափորոշիչներ: Կանխավարկածն ամրագրված է լեզվի կառուցվածքում, ուստի առնչվում է զույր բառային միավորների ոլորտին և հայտնի է յուրաքանչյուրին: Հարուկ ուշադրություն է դարձվում նախադասության որևէ անդամի՝ որոշակի ընգծումն՝ շեշտադրմամբ կամ առողջանությամբ արդասանությանը, ըստ այդմ էլ դրվագը անդամը կարելի է համարել նախադասության դիրքավորություն արդահայրող կանխավարկած: Այսինքն, խոսողի սույն կարգիվ մուշեցման միջոցով է նախադասության այս կամ այն անդամը որակավորվում որպես դրվագը կանխավարկած և արդահայրում կանխամշակած ներիմասը:

**Բանայի բառեր.** Կանխավարկած, վերանունություն, վերանվանական հարաբերություններ, երկխոսություն, կանխամշածված ներիմասը, ոչ կանխամշածված ներիմասը, խոսքային մշտադրություններ, բառային միավոր, լեզվական միավոր

Կանխավարկածը (entailment) ներակայման տեսակ է, իմաստային միավորների և երկու իրողությունների միջև եղած հարաբերություն, որն ընկալվում է տրամաբանությամբ: Հարաբերությունները վերագրվում են նախադասությունների միջև այնպիսի պայմանականություններին, երբ երկրորդ նախադասության ճշմարտացիությունը անմիջականորեն բխում է առաջինից /Lyons, 1977: 85; Crystal, 1998: 136; Renkema, 2004: 136; Meyer, 2005: 174; Denham & Lobeck, 2009: 325; Verschueren & Ostman, 2009: 141/: Այսինքն, երկրորդ նախադասությունը բխում է առաջինից և, ինչպես կտեսնենք օրինակում, ինքնըստինքյան ընկալվում է որպես «դասակարգում»:

- A. If fifteen *cows* are browsing on a hillside, how many of them eats with their heads pointed the same direction?
- B. The whole fifteen.
- A. You have lived in the country. (Twain, 78)


Վերոնշյալ օրինակում դասնիհնգ կովեր արածում են՝ fifteen *cows* are browsing արտահայտությունը ենթադրում է, որ դասնիհնգ կենդանիներ են արածում՝ fifteen *animals* are browsing, ուստի առաջին նախադասության ժխտման դեպքում ինքնաբերաբար ժխտվում է նաև երկրորդը՝ If fifteen *cows* are not browsing, it means fifteen *animals* are not browsing either:

Բացի այդ, օրինակում գործածված յուրաքանչյուր բառ ինքնին ենթադրում է որևէ դասակարգում: Եթե կանխամտածված շեշտը դրվի միայն արտահայտության վրա, նույն սկզբունքով կարելի է ենթադրել, որ fifteen *cows* are browsing կամ fifteen *cows* are eating, կամ fifteen *cows* are not browsing, հետևաբար՝ fifteen *cows* are not eating: Վերանվանական դասակարգումը շարունակելով՝ կարելի է անդրադառնալ նաև animal-browsing և man-eating իմաստային դաշտի ճանաչմանը:

Հարկ է նշել, որ վերանունությունը (հյորում) համարվում է կանխավարկածի տարբերակման հիմնական չափորոշիչը: Յուրաքանչյուր բառ լսելիս կամ արտաքերելիս՝ առաջին պատկերացումները, որ անցնում են խոսակիցների մտքով, առնչվում են այդ բառի՝ համապատասխան բառաշարում ունեցած տեղին, դիրքին և տարբերակիչ առանձնահատկություններին, որոնց շնորհիվ յուրաքանչյուր լեզվական միավոր իր ուրույն տեղն ունի տեսակային խմբում: Այսինքն, կանխավարկածի ընկալումն անմիջական կապ ունի այն իմաստային դաշտի ճանաչման և ընկալման հետ, որտեղ գործում է տվյալ բառը: Եթե առաջնորդվենք այս սկզբունքով, կանխավարկածի հարաբերությունն ամրագրված է լեզվի կառուցվածքում, այսինքն, այն առնչվում է զուտ բառային միավորների ոլորտին և հայտնի է յուրաքանչյուրին: Ուստի, կարելի է ասել, որ կանխավարկածի հիմնական աղբյուրը լեզվական միավորների միջև վերանվանական հարաբերություններն են /Palmer, 1981: 87; Cruse, 1986: 91; Lyons, 1995: 127; Croft & Cruse, 2004: 143; Meyer, 2005: 174; Denham & Lobeck, 2009: 325/, որոնք ամրագրված են յուրաքանչյուրիս գիտակցության մեջ:

- A. Can I have some more *beer*?
- B. You know where it is. (Baldwin, 28)

Գարեջուր՝ *beer* բառի ցանկացած կիրառում յուրաքանչյուրս ընկալում ենք ընդհանուր առմամբ որպես սննդային միավոր, որն ըմաելիք է, հետևաբար հեղուկ է, ալկոհոլ, ոչ քաղցր և այլն: Մեր ընկալումը տվյալ լեզվական միավորի արտահայտած կանխավարկածն է, որը նույնանում է նրա վերանվանական հասկացույթի հետ:



Ֆ. Ո. Պալմերը առաջ է քաշում որոշակի անհերքելի լեզվական միավորների առկայության մասին փաստարկը, ըստ որի, եթե կանխավարկածի դեպքում մի դրույթը պայմանավորված է մյուսով, ապա բոլոր հնարավոր դեպքերում, եթե այդ դրույթը ճիշտ է, ապա հետևաբար նաև մյուսն է ճիշտ /Palmer, 1988: 203/: Այսինքն, կանխավարկածի առկայությունն անմիջականորեն կապված է լեզվական միավորների՝ անձի գիտակցության մեջ ամրագրված կարծրատիպային բովանդակություններով, եթե բարիմաստն արդեն իսկ ներառում է տվյալ վերաբերյալի էության մասին որոշակի տեղեկություն: Այն անձի գիտելիքի և տրամաբանության առանցքային կարգն է, քանի որ հանդիսանում է իրեն շախկապված և իրենից բխող մյուս գիտելիքների և տրամաբանական հարաբերությունների՝ համարժեքության և հակասության հիմքը: Նման լեզվական միավորները ենթադրում են կանխավարկած, որի իսկությունը փոփոխության ենթակա չէ բոլոր այն դեպքերի համար, եթե բառն օգտագործվում է առանց փոխաբերությունների, իր ուղղակի բառարանային իմաստով:

A. You think I am some kind of unnatural **mother**?

B. What? No, wait a minute.

A. You are not going to give me another thought, are you, now you know I've **got a kid**. (Tyler, 116)

Ցանկացած իրականության մեջ mother լեզվական միավորը, գործածվելով իր ուղղակի իմաստով, արտահայտում է այն հասկացությունը, որ մայր կարող է կոչվել նա, ով երեխա է լուս աշխարհ բերել, ով պետք է բացառապես իգական սեռի ներկայացուցիչ լինի, ով իր կենսաբանական կարգավիճակով կին է, և որ մայրանալու համար մոտավոր հավանական սահմանափակ տարիք և ֆիզիոլոգիական հասունացման և զարգացման շրջան գոյություն ունի: Այսպիսով, mother բառը կրում է միևնույն կանխավարկածը՝ Mother is a female, who is a woman, an adult, who has given or is going to give a birth to someone և այլն: Ուստի, ցանկացած համատեքստում, որտեղ այն կիրավում է ուղղակի իմաստով, այն անձը, ում մայր են կոչում, պետք է համապատասխանի վերոնշյալ բնութագրիչներին: Չենք

կարող ասել, որ որևէ մեկը մայր է, սակայն չունի երեխա, տղամարդ է, տարիքային առումով որևէ սահմանափակում չունի և այն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր լեզվական միավոր ունի իրեն հատուկ բնութագրիչներ և որոշակի վերանվանական դասակարգում լեզվի բառաշարային համակարգում՝ կարծում ենք, որ միևնույն նախադասությունը կարող է ունենալ ավելի քան մեկ կանխավարկած, քանի որ նախադասության յուրաքանչյուր անդամ, որպես լեզվական միավոր, ունի իր կանխավարկածը: Այսինքն, նախադասության գլխավոր և երկրորդական անդամներից ցանկացածը, որպես որոշակի գործառույթ ունեցող բառ կամ խոսքի մաս, կարող է հանդես գալ որպես կանխավարկած, քանի որ յուրաքանչյուր լեզվական միավոր ունի տարբերակիչ բնութագրիչներ, որոնք ամրագրված են տվյալ լեզվին ծանոթ յուրաքանչյուրի գիտակցության մեջ:

Մեր կատարած դիտարկումների արդյունքում եկել ենք այն հետևողայն, որ կանխավարկածը ներիմաստի այն տեսակն է, որտեղ համեմատաբար քիչ են դիտավորությունները, իսկ նախադասության այն անդամը, որը տվյալ կառուցում «աչքի է ընկնում» որպես կանխամտածված կանխավարկած, սովորաբար արտաքերվում է որոշակի շեշտադրմամբ և առողանությամբ: Այսպիսի դիտավորությունը հուշում է խոսողի այնպիսի խոսքային մտադրությունների մասին, որոնք արտակարուցին ներակա միջոցներով լրացնուիչ իմաստային նրբերանգներ են հաղորդում:

Զ. Յովը կանխավարկածը տեսակների է բաժանում՝ ըստ նախադասության մեջ իրենց ունեցած դիրքերի /Yule, 1996: 33/: Այսինքն, հաշվի են առնվում տվյալ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները՝ նախադասության անդամների կանոնակարգված հաջորդականությունը: Այս սկզբունքի հիման վրա էլ Զ. Յովը տարբերակում է կանխավարկածի երկու տեսակներ՝

### 1. Ետնահենքային կանխավարկած (background entailment)

- A. Let's see the *heel*.
- B. What? What do you call it. (Tyler 108)

Վերոնշյալ օրինակում, և առհասարակ անգլերեն լեզվում, նախադասության խնդիրը սովորաբար գտնվում է ստորոգյալից հետո: Ուստի, եթե խնդիրն ընդունենք որպես կանխավարկած, այն կիամարվի ետնահենքային կանխավարկած:

### 2. Առաջնահենքային կանխավարկած (foreground entailment)

- A. Did *you* ever see me?
- B. *Muriel* did. (Tyler, 100)

Անգլերենում առաջնահենքային կանխավարկածի օրինակ է նախադասության ենթական, որը հիմնականում տեղակայվում է ասույթի

սկզբում՝ այսպիսով՝ որպես կանխավարկած համարվելով առաջնահենքային:

Զ. Ֆինքն իրավացիորեն նկատում է, որ Զ. Յուլը, կանխավարկածները խմբավորելով ըստ նախադասության մեջ նրանց ունեցած դիրքի, չի անդրադառնում նախադասության շարահյուսական կառուցվածքի որոշ առանձնահատկությունների, քանի որ կրավորական կառուցների դեպքում առաջարկված հերթակայությունը խախտվում է /Finch, 2000: 164/:

- A. There is one thing good about all this. The wood in front of us is likely clear.
- B. The ebb has made a good while; **our stores should be uncovered.** Volunteers to go and bring in pork. (Stevenson, 113)

Տվյալ կրավորական կառուցը ներգործական կառուց դարձնելու դեպքում նախադասության ենթական՝ stores, կդառնա նախադասության խնդիրը՝ They/We should uncover the stores:

Կարծում ենք, դիտավորության առկայության դեպքում կրավորական կառուցների ընտրությունը պատահական չէ: Այս կերպ օրինակում ավելի շատ կարևորվում է այն փաստը, որ տարածքները պետք է մաքրվեն անտառածածկութից, քան այն, թե ովքեր դա կանեն: Այսինքն, երկխոսության ժամանակ, ըստ հաղորդվող տեղեկատվության կարևորության և խոսքի օգտագործման նպատակի, խոսողն է որոշում, նախադասության որ անդամն ընդգծել որպես տվյալ նախադասության կանխավարկած, ուստի, կարելի է ասել, որ նման դեպքերում կարևորվում է խոսքն արտաքերողի գործոնը և նրա խոսքային մտադրություններն ու դիտավորությունները:

Կանխավարկածի դիտարկման շրջանակներում, կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նախադասությունների միջև կանխավարկածի հարաբերությունը միակողմանի է: Եթե մի դրույթ յուրաքանչյուր գործածման դեպքում ենթադրում է մեկ այլ դրույթ, դա չի նշանակում, որ երկրորդ դրույթի յուրաքանչյուր կիրառություն նույնպես ենթադրում է առաջինի առկայությունը /Lyons, 1977: 180/: Այսինքն, եթե որևէ չերևույթ հանդիսանում է մյուսի՝ յ-ի հետևանքը, ամենայն էլ չի նշանակում, որ տվյալ հետևանքի՝ չ-ի առկայության պատճառը հենց յ-ն է:

- A. It weren't the grounding that didn't keep us back but a little. We blowed out a cylinder head.
- B. Good gracious! Anybody hurt?
- A. No'm. **Killed a nigger.** (Twain, 282)

Ուղղակի իմաստով ցանկացած գործածման ժամանակ սպանել՝ kill բառն իր մեջ ամփոփում է այն կանխավարկածը, որ նա, ում սպանել են, մահացել է՝ If a nigger was killed, he died: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ սկականը մահացել է՝ a nigger died ասույթը համապատասխա-

նաբար ենթադրում է, որ սևականի մահվան պատճառն անպայման պետք է սպանությունը լինի՝ If a nigger died, he was killed: Տվյալ օրինակում նաև ո՞մ, killed a nigger պատասխանն ունի ներիմաստ, քանի որ ցոյց է տալիս խոսողի անմարդկային և խորական վերաբերմունքը սևական-ների նկատմամբ, ինչն էլ, վերանվանական տեսանկյունից դիտարկելիս, ենթադրում է խոսողի կողմից այլ՝ սուբյեկտիվ դասակարգում ներիմաստից ընկալելի, սակայն փոխաբերություն արտահայտող վերանվանական խմբում:

Այսպիսով, կանխավարկածները դիտարկելով խոսքում դիտավորյալ և ոչ դիտավորյալ արտահայտման տեսանկյունից, կարծում ենք, որ միայն խոսողի սուբյեկտիվ մոտեցումն է նախադասության այս կամ այն անդամը «դարձնում» տվյալ ասույթի կանխամտածված կամ ոչ կանխամտածված կանխավարկածը: Այսինքն, եթե խոսողը նախադասության ցանկացած անդամ միտումնավոր արտասանում է որոշակի ընգծումով՝ շեշտադրմամբ կամ առողանությամբ, տվյալ անդամը կարելի է համարել նախադասության դիտավորություն արտահայտող կանխավարկած, որը պայմանականորեն կանվանենք կանխամրցածված կանխավարկած, իսկ նախադասության մյուս անդամների այն բնութագրիչները, որոնք լսելով՝ խոսակիցները դրանց լեզվական նշաններից ընկալում են որոշակի հասկացություններ և պատկերացնում դրանց տեղն ու դերը շրջակա միջավայրում, կարելի է անվանել բառիմասկային կամ ոչ կանխամրցածված կանխավարկածներ: Քանի որ յուրաքանչյուր խոսք ունի որոշակի ուղերձ, հիմնական իմաստն արտահայտելու համար գործածված առանցքային բառն էլ յուրաքանչյուր արտաբերված նախադասության կանխամտածված կանխավարկածն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Croft W., Cruse D. A. Cognitive Linguistics. Cambridge: Cambridge University Press, 2004.
2. Cruse D. A. Lexical Semantics. Cambridge: Cambridge University Press, 1986.
3. Crystal D. The Cambridge Encyclopedia of the English Language. Cambridge: Cambridge University Press, 1998.
4. Denham K., Lobeck A. C. Linguistics for Everyone: an Introduction. Boston: Cengage Learning, 2009.
5. Finch G. Linguistic Terms and Concepts. London: Palgrave Macmillan, 2000.
6. Lyons J. Semantics. Cambridge: Cambridge University Press, 1977.
7. Lyons J. Linguistic Semantics: an Introduction. Cambridge: Cambridge University Press, 1995.
8. Meyer P.G. Synchronic English Linguistics: an Introduction. 3<sup>rd</sup> edition. Berlin: Gunter Narr Verlag, 2005.

9. Palmer F.R. Semantics. Cambridge: Cambridge University Press, 1981.
10. Palmer F.R. Semantics (2<sup>nd</sup> ed.). Cambridge: Cambridge University Press, 1988.
11. Renkema J. Introduction to Discourse Studies. USA: John Benjamins Publishing, 2004.
12. Verschueren J., Ostman J.O. Key Notions for Pragmatics. USA: John Benjamins Publishing, 2009.
13. Yule G. Pragmatics. Oxford: Oxford University Press, 1996.
14. Baldwin J. Another Country. New York: Dell Publishing Co., 1962.
15. Stevenson R.L. Treasure Island. USA: A Signet Classic, 1981.
16. Twain M. The Adventures of Huckleberry Finn. New York: An Apple Paperback, 1989.
17. Tyler A. The Accidental Tourist. New York: Berkley Books, 1978.

**Н. МАНУКЯН – «Логическое следование» как гипонимическое выявление имплицитности.** – Целью данной статьи является изучение гипонимии как способа выявления имплицитности в английском диалоге. «Логическое следование» рассматривается как один из видов имплицитности, которая имеет разные способы выражения. В статье также выявляются методы выявления имплицитности в диалоге, где важную роль играют ударение, интонация и фактор субъективности в речи.

**Ключевые слова:** логическое следование, гипонимия, гипонимические отношения, диалог, преднамеренная имплицитность, непреднамеренная имплицитность, вербальное намерение, лексема, лингвистическая единица

**N. MANUKYAN – *Entailment as a Hyponymy-Based Type Implicitness.*** – The aim of the present paper is the study of expressive features of entailments from the point of view of intentionality and unintentionality in dialogue. Entailment refers to the sphere of lexical units and its hyponymic classification is known to everyone. Hyponymic relations are considered to be the main criteria for identification of entailment. Special attention is paid to intonation and emphasis that make a lexeme/lexemes intentionally expressed entailment of a sentence. Also an attempt is made to comprehend and point out the motives of the speaker for expressing intentional implicitness in speech.

**Key words:** entailment, hyponymy, hyponymic relations, dialogue, intentional implicitness, unintentional implicitness, verbal intentions, lexeme, linguistic unit

Ոռղա ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ  
Կարինե ՇԱՀԲԱԶՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ  
ՀՈՒԶԱԱՐՏԱՀԱՅՏՅԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է արյունակցական ազգակցություն արդարակայողություն գոյականների հուզական դրսնորումների վերլուծությանը: Կիրառվելով հաճախ ընդունելիան փոխհարաբերությունների ոլորտից դուրս՝ ազգակցության անվանահամակարգի գոյականները մատնանշում են սոցիալ-մշակութային, տնտեսական, քաղաքական, էթնիկական և այլ կապեր: Հոդվածի նպագրակն է ցոյց տալ, թե ինչպես են ազգակցություն արդարակայող գոյականները գործածվում որպես խոսակցի մեջ զգացմունքներ առաջացնելու մարդավարություն՝ լեզվական այլ միջոցների հետ համակցվելով:

**Բանալի բառեր.** ազգակցության անվանումներ, սոցիալական գործառույթ, խոսքային ակտ, հուզական դրսնորումներ, ցուցաբառեր (դեհկողիկ), խոսքային մարդավարություն

Ազգակցության անվանահամակարգի միավորները (գոյականները) միշտ չեն, որ կիրառվում են նոյն ընտանիքի անդամների նկատմամբ: Այդ գործածությունը երբեմն դուրս է գալիս ընտանելիան փոխհարաբերությունների ոլորտից և տեղափոխվում այլ հարաբերությունների ոլորտ՝ մատնանշելով սոցիալ-մշակութային, տնտեսական, քաղաքական, էթնիկական և այլ կապեր: Ազգակցության այս բազմաթիվ ընկալումների գոյությամբ է բացատրվում ազգակցության գոյականների «հեղեղը» պաշտոնական և առօրյա երկխոսություններում, որոնց մեջ արդիական են համարվում երկու գլխավոր գործառույթ՝ ազգակցական կապերը և դրանց հուզարտահայտչական դրսնորումները՝ վատ կամ լավ արարքների արժևորումով:

Սույն հոդվածում մենք փորձում ենք կատարել արյունակցական ազգակցություն արտահայտող գոյականների հուզաարտահայտչական դրսնորումների վերլուծություն և ցոյց տալ, թե ինչպես են դրանք գործածվում որպես խոսակցի մեջ զգացմունքներ առաջացնելու մարդավարություն՝ լեզվական այլ միջոցների հետ համակցվելով:

Ազգակցական հարաբերություններ արտահայտող գոյականների տարատեսակ գործածությունները և դրանց հուզաարտահայտչական դրսնորումները հաստատում են ոչ միայն խոսակցի հետ յուրահատուկ կապ հաստատելու մտադրությունը, այլ նաև ընդգծում են խոսողի կողմից մատնանշված ազգակցությունը այնպիսի մի շահեկան փաստար-

կի վերածելու նպատակը, որն ընդունակ է թուլացնելու կամ ուժեղացնելու խոսքային մյուս ակտերը:

Դիտարկվելով որպես բազմատեսակ ազգակցական հարաբերությունների արտահայտման միջոց՝ ազգակցության տերմինների կիրառությունն ընկալվում է որպես քաղաքավարական ակտ այնքանով, որքանով այն թույլ է տալիս ստեղծել և պահպանել սոցիալական կապեր և հետևել հասարակության մեջ գործող նորմերին: Միջանձնային պլանում ազգակցության անվանումների գործածությունն ընդունվում է որպես քաղաքավարական ակտ, որովհետև նրանք ծառայում են արժևորելու խոսողի և խոսակցի փոխհարաբերությունները /Kerbrat-Orecchioni, 1992: 168/: Մնացած դեպքերում «ազգակցության անվանումները ծառայում են որպես մեղմացուցիչներ, որոնցով խոսողը ցուցաբերում է զգուշավորություն այն ամենի նկատմամբ, ինչը վերաբերում է խոսակցի կյանքին, ինչպես նաև ձգտում է, որ իր անձնական տիրուպթը (մարմնական, տարածական կամ ժամանակային) հասանելի չլինի խոսակցի համար առանց իր թույլտվության» /Kerbrat-Orecchioni, 1992: 167/: Լսինսոնը և Բրաունը կատարել են քաղաքավարական մարտավարության շատ հետաքրքիր դասակարգում, որտեղ դիմելածները ներկայացված են որպես դրական քաղաքավարության մարտավարություններ /տե՛ս՝ Kerbrat-Orecchioni, 1992: 167/: Մեր նպատակից դուրս համարելով լեզվական քաղաքավարության տեսության վերլուծությունը՝ նշենք միայն, որ ըստ բրաուն-լսինսոնյան դասակարգման՝ ազգակցության անվանահամակարգի միավորները պատկանում են վերը նշված դիմելածների շարքին՝ արտահայտելով խոսակցի հանդեպ յուրատեսակ ուշադրություն: Այսինքն՝ ազգակցության անվանումները բազմաթիվ արժեքների կրողներն են (գրույցի ճիշտ կազմակերպում, միջանձնային հարաբերությունների դեկավարում) և կիրառվում են իբրև լեզվական ակտի կարգավորողներ: Մեր կողմից ընտրված օրինակները վերցված են տարբեր բնագավառներին պատկանող երկխոսություններից, ինչպես օրինակ՝ խոսակցություններ ընտանիքում, խաղահրապարակում, հասարակական տրանսպորտում, դպրոցական, ակադեմիական միջավայրում, գեղարվեստական գրականության մեջ և այլն: Այդ օրինակները վկայում են ազգակցության անվանումների բազմաթեքության մասին: Գործածելով հատկապես ազգակցության տերմիններ՝ խոսակիցները ձգտում են մեղմացնել սպառնալից, վտանգավոր արարքները, կամ էլ փորձում են ընդգծել ցանկացած գնահատելի արարք:

Ազգակցության տերմինների բազմաթիվ ընկալումները և դրանց հուզարտահայտչական արժեքները և՝ ֆրանսերենում, և՝ հայերենում իրենց ազդեցությունն են թողնում դրանց ասելու ձևի, ինչպես նաև՝ ազգակցության անվանահամակարգի միավորներով ստեղծված քերականական կառույցների վրա: Օգտագործվելով որպես նախադասության տարբեր անդամներ և կոչականներ՝ այդ գոյականները ենթարկվում են ձևաբանական և իմաստաբանական տարբեր փոփոխությունների, ինչ-

ախսիք են բառերի միացումը, ածանցումը և իմաստի ընդլայնումը կամ նեղացումը: Առօրյա խոսքում ազգակցության անվանահամակարգի միավորների՝ որպես կոչական գործածության բազմաթիվ ծերերից կարելի է թվարկել.

1. գրավոր խոսքի ոճ՝ գրական լեզվի մակարդակ

ա) ֆրանսերենի ստանդարտ բառապաշարը ներկայացնող ազգակցության անվանումները՝ *fils, père (papa), mère (maman), cousin, frère, oncle* և այլն,

բ) ստացական դերանվանական ածական+ԱՏ (adj. possessif+TP)՝ *mon frère, mes frères, mon père, mon cousin, ma sœur, mon enfant* և այլն,

2. բանավոր խոսքի ոճ՝ խոսակցական մակարդակում՝ *tonton, fiston, tata, grand-pa, grandma* և այլն,

3. արգոյի ոճ՝ վերլան (verlan), խոսակցական մակարդակում՝ *sita* (անգլերեն *sister* բառից առաջացած), *répé (père), rémé (mère), réfré (frère), résé (soeur)* և այլն,

4. ազգակցության փոխառյալ անվանումներ՝ *byg-mamy (grand-mère), pater (père), mater (mère)* և այլն:

Ազգակցության անվանահամակարգի միավորները ստանում են որոշ հուզական-արտահայտչական արժեքներ հետևյալ դեպքերում՝

1. խնդրանքի խոսքային ակտում,

2. ներողություն խնդրելու խոսքային ակտում,

3. հանդիսավոր ողջունների և ելույթների ժամանակ,

4. ողջամտության կոչ անելիս,

5. ոչ կոչական գործածության դեպքում:

1. **Խնդրանքը** գլխավորապես կամային ակտ է և մշտապես գտնվում է լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Լեզվական քաղաքավարության շրջանակներում խնդրանքի ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը բխում է այն փաստից, որ այն համարվում է «ներխոժում» ուրիշի տարածք, ուսնագույն վերջինիս գործելու ազատության նկատմամբ, այսինքն՝ ակտ, որով խոսողը դրդում է խոսակցին չմերժել իրեն: Ներդաշնակ շիման ձգտող խոսակիցների համար խնդրանքը ծառայում է հաղորդակցման ակտը մեղմացնելուն, մյուսի «դեմքը» պաշտպանելուն: Այդ նպատակով խոսակիցներն օգտագործում են տարբեր միջոցներ, ինչպիսիք են անուղղակի ծևակերպումները, բառային մեղմացուցիչները և այլն: Բառային մեղմացուցիչների ցանկին են պատկանում նաև ազգակցության անվանահամակարգի միավորները: Այսպիսով, խնդրանքը կարող է «մեղմացվել», եթե խոսողը այդ ընթացքում գործածում է ազգակցության որևէ տերմին՝ ցույց տալու համար խոսակցին, թե ինչպես է նրան ընդունում: Այլ կերպ ասած՝ որևէ ազգակցության տերմինի միջոցով խոսողը կառուցում է հատակ հարաբերության տիպ և ցույց է տալիս, որ խնդրանքը չի կարող դիտվել որպես հարկադրանք, այլ

ավելի շուտ որպես մի ակտ, որն արժեքավորում է և հաստատում է, օրինակ՝ եղբայրների միջև եղած հարաբերությունը: Երբեմն մերժումը դրա շնորհիվ դառնում է անհնար. լսողը ենթարկվում է այսպես կոչված բարոյական ճնշման, ինչպես հետևյալ օրինակում: Գործողություն կատարողը մի տարեց կին է, որը չի կարողանում օգտվել նոր սարքից և խնդրում է երիտասարդ ծառայողին օգնել իրեն.

- Ecoutez-moi, mon fils, j'aimerais que vous me veniez en aide. Je ne peux pas me servir de cet appareil.

Ուղեկցվելով քաղաքավարական այլ ցուցիչներով (vous անձնական դերանունը, պայմանական եղանակի գործածությունը) *mon fils* ազգակցության գոյականն այստեղ օգտագործված է շահարկային նպատակով, որի հուզական ենթատեքստը երիտասարդի մեջ արթնացնում է որդիական զգացումներ: Ստացվում է, որ գործնական, պաշտոնական հարաբերությունը տեղափոխվում է «ընտանեկան դաշտ» և երիտասարդը պատկերացնում է իր մորը, որն օգնության կարիք ունի: Այսպիսով, անձանոթ երիտասարդի նկատմամբ *mon fils* բառի հիմնավորված գործածությունը դրական ազդեցություն է թողնում և տարեց կինը հեռանում է գոհ:

2. **Ներողությունը** խոսքային ակտ է, որն ունի սոցիալական գործառույթ: Ինչպես նշում է Գոֆմանը, ներողությունը խոսքում կատարում է «վերականգնող դեր»: Խոսողը միաժամանակ կատարում է թե՝ վիրավորելու, թե՝ ներողություն խնդրելու գործողություն: Ներողության խոսքային ակտով նա ձգտում է «փոխել վիրավորական համարվող որևէ գործողության նշանակությունը, այն դարձնել առավել ընդունելի» /Goffman, 1973: 113/: Կերբրատ-Օրեքիոնին նշում է, որ ներողություն խնդրելիս «վիրավորողը ցուց է տալիս վիրավորվածին, որ չնայած հասցրած վիրավորանքին (այս կամ այն պատճառով), անկախ ամեն ինչից ցանկանում է, որ խոսակցությունն ընթանա հարաբերականորեն ներդաշնակ ձևով» /Kerbrat-Orecchioni, 1992: 167/:

Ներողություն խնդրել խոսողի համար ինքնարերաբար նշանակում է նվաստանալ, քանի որ վերջինս ստիպված է ընդունել և ափսոսալ, որ վիրավորել է խոսակցին: Մյուս կողմից, ներողությունն իրավիճակը շտկող ակտ է, որի նպատակն է վերաարժեքավորել վիրավորված խոսակցի տիրությունը և վերականգնել խաթարված հարաբերությունները: Ներողությունը ներկայանում է իբրև «խոսակիցների տիրությունների հավասարակշռության վերականգնման բարդ գործողություն»: Ազգակցության տերմինները նույնպես կարող են հաղես գալ որպես սպառնալիքի մեջմացուցիչներ և արժևորման (հարգանքի ընդգծման) միջոցներ: Ազգակցության տերմինների՝ իբրև վիրավորանքի մեջմացուցիչների գործածությանը հաճախ կարելի է հանդիպել ինչպես առօրյա կենցաղային խոսակցություններում, այնպես էլ գրական տեքստերում: Ահա մի օրինակ՝ վերցված առօրյա կյանքից: Խոսակցությունը տեղի է ունենում ուղևորի (Client: Cl.) և տաքսու վարորդի (Chauffeur: Ch) միջև.

Cl: Moi, **mon frère**, j'ai oublié de te dire que j'avais un billet de 500 euros.

Ch: **Vous les gens-ci** vous entrez d'abord, parce que tu savais qu'en me disant que tu n'avais pas la monnaie, j'allais te laisser...

Cl: Mon ami je t'en supplie ne dis pas ça, je suis quand même un vieux, tu penses que... je ne prends pas ton taxi sans payer.

Ուղևորը մեքենա նստելուց առաջ մոռացել է վարորդին ասել, որ ինքն ունի միայն 500 եվրո արժողությամբ թղթադրամ: Ընդունված կարգ է, որ հասարակական տրանսպորտ նստելուց առաջ ուղևորները նման դեպքերում նախօրոք պետք է տեղեկացնեն վարորդին, որ մանր գումար չունեն: Տաքսի նստելուց անմիջապես հետո նա տեղեկացնում է վարորդին և միաժամանակ ներողություն է խնդրում: Այստեղ հետաքրքիր է այն փաստը, որ խոսողն ընտրում է մի խոսքային (մակրո)մարտավարություն, որը բարկացած է երկու միկրո-գործողություններից: 1. ներողություն խնդրելը՝ ներիր ինձ, որն ուղեկցվում է եղբայր (եղբայրս) բառով և 2. իր սխալի մեկնաբանումը՝ ես մոռացս քեզ ասել, որ ունեմ միայն 500 եվրո արժողությամբ թղթադրամ: Այս վերջին հատվածը նշանակում է, որ խոսողն ընդունում է իր մեղքը, ներողություն է խնդրում: *Mon frère* արտահայտությունն այստեղ ունի երկու շահարկային նպատակ: Մի կողմից այն ծառայում է հոգական եղանակով իրավիճակը շտկող խոսակցություն սկսելուն, որի նպատակն է ստեղծել ընկերական, բարեկամական մթնոլորտ, մյուս կողմից՝ փոքրագույնի հասցնել վիրավորանքի աստիճանը: Այդպիսով մենք ներկա ենք դիմելածնի (կոչականի) «պրագմատիզմիայի», որը պարզ դիմելածնից դառնում է այսպես ասած «զինաթափող» միջոց, որով հաճախորդը առաջինն է սկսում խոսակցությունը՝ փորձելով միաժամանակ մեղմացնել խոսակցի հնարավոր բացասական արձագանքը: *Mon frère* արտահայտությունը ծառայում է արժևությունու խոսակցի անձը, նրա նկատմամբ հարգանք ցուցաբերելով, ինչը դուրս է գալիս ծառայությունների պատկերացումների շրջանակից: Այլ կերպ ասած՝ վարորդ-ուղևոր հարաբերությունը վերածվում է առավել լայն և արժեքավոր սոցիալական հարաբերության՝ եղբայրության: Հարաբերությունների այսպիսի ընդգծումը, որն ավելի հոգական է, քան գործնական, նշանակում է սխալի ուղղում, կամ գոնե վիրավորանքի մեղմացում:

3. Ազգակցության գոյականների հոգաարտահայտչական գործածության մենք հանդիպում ենք նաև առօրյա և հանդիսավոր **ողջույնի խոսքերում**, երկրի ղեկավարի, թագավորի, հոգևոր հովվի, կամ պարզապես որևէ ձեռնարկության ղեկավարի ելույթներում, երբ վերջիններս դիմում են ժողովրդին և հանդես գալիս որևէ կոչով: Այստեղ ազգակցության տերմինների գործածությունն ունի երկու գործառույթ: Նախ և առաջ այն թույլ է տալիս լսարանը դարձնել թիրախ, այնուհետև շիման մեջ մտնել նրա հետ: Ողջույնի խոսքերում և ելույթներում

գործածվում են հիմնականում ազգակցության այնպիսի անվանումներ, ինչպիսիք են *chers frères, mes enfants* և այլ հավաքական կոչականներ, որոնցով խոսողները ծգում են ուշադրության գրավել՝ հիշատակելով լսարանի անդամների ընդհանուր ծագումը, և փորձում նրանց ներքաշել գործողության մեջ: Այլ կերպ ասած, դա լսարանի «կարծրատիպի» մարտավարություն է /Amossy, 2006: 45/:

Ահա ողջույնի մի խոսք.

- *Fils de mes ancêtres, je vous salue !*

Այսուել թագավորը դիմում է իր ժողովորդին: *Fils de mes ancêtres* արտահայտությունը, որով սկսվում է նրա ճառը, կոլեկտիվ կոչական է, որը կիրառվում է այնպիսի լսարանի նկատմամբ, որտեղ կան և կանայք, և՝ տղամարդիկ:

Ազգակցություն արտահայտող գոյականի գործածությամբ ստեղծված իրական կամ կեղծ ազգակցական հարաբերությունն անհրաժեշտ է, որպեսզի վնասազերծվի խոսակիցներից մեկի նկատմամբ սպառնալիք համարվող ցանկացած խոսակցական ակտ: Այդ գործածությամբ ազգակցության անվանումները ընդգծում են համագործակցության կոչ անող *écouте, écouтеz-moi* արտահայտությունների հաղորդակցական գործառույթը:

4. **Ողջամտության կոչը** հաճախ նախորդվում է այնպիսի մասնիկներով, ինչպիսիք են *écouте, νογος, νον* և այլն: Այն սովորաբար ծառայում է մեղմացնելու խոսակիցների միջև եղած տարածայնությունները՝ կոչ անելով խոսակցին լինել ողջամիտ և ըմբռնումով մոտենալ իրավիճակին, խոսքի բովանդակությանը և խոսքային ակտին: Այն դիմելածները, որոնք ուղեկցում են ողջամտության կոչին, ամենից առաջ ծառայում են մեղմացնելու խոսակցի «դեմքին» ուղղված սպառնալիքը: Ահա մի խոսակցություն, որը տեղի է ունենում միևնույն թագավորի երկու կանանց՝ երիտասարդ թագուհի Մարի-Լուիզ Մանգվայի և տարեց թագուհի Յանի միջև (վերցված Դ.Նդաշի-Տանի «La reine captive» վեպից): Այս խոսակցության մեջ, Մանգվան, այլ թեմաների հետ, ի միջի այլոց, տեղեկացնում է իր ճնշվածության, տիրության, թագավորական պալատը լքելու և նոյնիսկ մեռնելու ցանկության մասին: Նրա խոսակիցը փորձում է նրան հակառակը համոզել: Կարդանք օրինակը.

- *Mère, il y a mille pensées qui m'accablent depuis ce soir. Et puis... Tout me donne envie de disparaître, de me donner la mort ou bien de partir d'ici, par une nuit obscure.*

- *Non, ma fille. Sois sérieuse. Tu sais bien qu'à cause du serment de fidélité qui te lie au roi, tu ne dois connaître d'autre homme que lui. Il y a quelques années, une de nos cœrpouses mourait ici, parce qu'elle avait osé... Et tu parles de te donner la mort ! Tu sais bien que les cadavres de ceux qui se donnent la mort sont*

*laissés aux corbeaux, maudits. Finalement, tu ne peux que supporter ...* (Ndachi-Tagne, 1986, p. 89).

Այս տխուր խոսակցության շարունակության մեջ, որտեղ երիտասարդ թագուհին հայտարարում է, թե չգիտի այլևս որ սրբին նվիրվի, տարեց թագուհին ողջամտության կոչ է անում իր ամուսնու երիտասարդ կանանցից մեկին խոսքային բարդ մարտավարության միջոցով, որը բնորոշվում է հատկապես *ma fille* տերմինի առկայությամբ: Այդ տերմինը նախորդված է *now* մասնիկով, որի նպատակն է բացահայտորեն ընդգծել Յառուի անհամաձայնությունը, որն առավել բացահայտ է դառնոմ *sois sérieuse* արտահայտության մեջ: Ողջամտության այս կոչը առավել ընդգծվում է հաջորդ օրինակում, որը կարող է որակվել որպես դաստիարակչական: Թագուհի Յառուն հիշեցնում է սոցիալական տարրուները, որպեսզի ազդի երիտասարդ թագուհու զգացմունքների վրա և բացահայտի նախնիների ավանդույթների օտարման անհնարինությունը: Այդ նպատակով նա հիշատակում է նախնիների որոշ ավանդույթներ, որոնք Մանգվան (ինչպես նաև մնացած բոլոր թագուհիները) պարտավոր է հստակորեն հարգել և պահպանել՝ հավատարմություն, հնազանդություն, հակառակ դեպքում նա հիշեցնում է սպասվելիք վլունգները և այն դաժան վերաբերմունքը նրանց հանդեպ, ովքեր ինքնասպան են լինում: *Ma fille* արտահայտության միջոցով Յառու թագուհին շեշտը դնում է *mère - fille* հարաբերության վրա՝ մոռանալով իրենց մեջ գոյություն ունեցող այլ հարաբերության (այն է՝ միևնույն ամուսնու երկու կանայք) մասին: Երկխոսության մեջ առկա մայր-դուստր հարաբերությունը նպատակ ունի հաստատելու խոսողի հեղինակավոր դիրքը և զգացմունքային վերաբերմունքը երիտասարդ թագուհու նկատմամբ, դիրք, որի հիման վրա ողջամտության կոչը դառնում է հիմնավորված: *Ma fille* բառակապակցությունը, իբրև քնքշանքի ցուցիչ, Յառու թագուհուց ստեղծում է խորիրդատուի կերպար, որը ցանկանում է ոչ թե վախեցնել իր խոսակցին, այլ ստիպել նրան գիտակցել այն վտանգները, որոնք կրիւն երիտասարդ թագուհու ընդունած որոշումներից: Հետևյալ օրինակում ողջամտության կոչը իրականացվում է *tu es folle, ma fille* արտահայտության միջոցով: Ազգակցության գոյականը այստեղ խաղում է առաջնային, հիմնական դեր:

- *Tu veux alors dire que la femme doit demeurer toujours l'ordure qu'elle est dans ce village ? [...] Les temps doivent changer. Vous devez vous dire que celui qui veut traverser une rivière à gué ne doit pas avoir peur de se mouiller. Les temps changent.*

- *Tu es folle, ma fille. Qui a jamais eu l'audace de changer le cours d'une rivière ?* (Ndachi-Tagne, 1986, p. 127-128).

Տարեց թագուհու՝ ինչպես վերը նշված, այնպես էլ հետագա խորհուրդների նպատակը պարզ է՝ համոզել Մանգվային հրաժարվել իր հեղափոխական գաղափարներից: Այդ խոսքը իրականացվում է լեզվական բազմաթիվ միջոցների համակցմամբ, որոնց մեջ կան *ma chère fille* և *ma fille Mangwa* արտահայտությունները: Այս կոչականների միջոցով Յայու թագուհին իրականում կառուցում է հարաբերությունների երկու տիպ, որոնք ունակ են մեծացնել ողջամտության իր կոչի ազդեցության ուժը՝ հորիզոնական հարաբերություն (զգացմունք, հուզականություն և համերաշխություն) և ուղղահայաց հարաբերություն (կենտրոնացած այնպիսի տարրերի վրա, ինչպիսիք են տարիքի տարբերությունը, խելամտությունը և հեղինակությունը):

5. Ազգակցություն արտահայտող գոյականները պահպանում են իրենց հուզական հարանշանակությունը նաև **ոչ իբրև կոչական գործածվելու** դեպքում: Խոսակցական լեզվին բնորոշ ազգակցության որոշ անվանումներ, ինչպիսիք են *maman, papa, papi, péré, mamie, témé, tonton, tati* ունեն հուզական մեծ հարանշանակություն և տարբերվում են ընտանիքի նույն անդամներին մատնանշող գրական բառերից, ինչպիսիք են՝ *mère, père, grand-mère, grand-père, oncle, tante*: Այս երկու ոճերին պատկանող բառերը հավասարապես օգտագործվում են և՝ կոչական, և՝ ոչ կոչական գործառություններով, որպես նախադասության տարրեր անդամներ՝ ենթակա, հատկացնուցիչ, խնդիր և այլն: Օրինակ՝ *maman* բառը հուզականություն արտահայտող նշան է, որը ջերմության և մտերմության տպավորություն է թողնում: Հույզի ազդեցությունը իրականում գալիս է այդ բառի նշույթավորված բնույթից: *Maman* և *mère* բառերի ունեցած հուզական ազդեցության տարբերությունը երևում է հետևյալ օրինակներում՝

1. *Aujourd’hui, maman est morte.* (A. Camus, *L’Etranger*, p.7)

2. *Aujourd’hui, ma mère est morte.*

Առաջին նախադասության մեջ կա հուզական ենթատեքստ, որը չի զգացվում երկրորդում:

Ահա ևս մեկ օրինակ, որտեղ առկա են ընտանեկան հարաբերություններ արտահայտող երկու տեսակ գոյականներ (գրական և խոսակական ոճի):

... *Dans le petit salon gisaient les corps de nos deux cousins morts. Les militaires nous firent descendre et le cauchemar continua. Au bas de l’escalier se trouvait le corps d’un des gardes, le corps de papa, le sergent Badje. Plus loin le corps d’un oncle maternel, Moussa Kao, celui d’une tante de maman et d’autres... C’était vraiment une vision cauchemardesque et nous avions tous l’impression d’un cauchemar et que nous allions nous réveiller, mais hélas... /www. koinai. net / sur-le-vif / niger-1974-ce-qui-n-a-pas-été-dit /*

Այստեղ մենք հանդիպում ենք և՝ խոսակցալան ոճի, և՝ գրական ոճի ազգակցության տերմինների: Ի տարբերություն վերջինների (*cousins, oncle, tante*)՝ որպես կոչական հանդես եկող խոսակցական ոճի ազգակցության գոյականները (*papa, maman*) առանց որոշակիչների, ինքնաբերաբար մատնացոց են անում պատմողի ազգականներին, որը տեքստում հայտնվում է առաջին դեմքով: Եթե մենք փորձենք դրանք փոխարինել տու քեր և մա մեր ձևերով, պատմությունը կընդունի առավել չեղոք երանգ, մինչդեռ *papa* և *maman* ձևերով ընթերցողն իրեն ավելի կապված է զգում տեքստին (ինչպես A. Camus-ից վերցված օրինակում, որտեղ մտերմության զգացողություն կա):

Ազգակցության անվանահամակարգի միավորների գործածությունը ոչ իբրև կոչական (ինչպես վերը նշված օրինակներում) ունի մի շարք լեզվաբանական առանձնահատկություններ: Ահա դրանցից երկուսը.

1. Ինչպես նկատում է Պերրետը /Perret 1970: 112-118/, ազգակցության անվանում-կոչականներն ունեն դեհկտիկ բնույթ, երբ նրանք օգտագործվում են առանց որոշակիչի, նրանք հողում են կատարում խոսողի ընտանիքի անդամներին: *Maman* բառը, որն անհրաժեշտաբար նշանակում է *ma mère*, հանդես է գալիս որպես դեհկտիկ: Հաջորդ օրինակում հանդիպում ենք *maman* բառի երկու տեսակ.

*Tous les ans, c'est-à-dire le dernier et l'autre, Papa et Maman se disputent beaucoup pour savoir où aller en vacances, et Maman se met à pleurer et elle dit qu'elle va aller chez sa maman, et moi, je pleure aussi parce que j'aime bien Mémé, mais chez elle il n'y a pas de plage, et à la fin on va où veut Maman et ce n'est pas chez Mémé. (Jean-Jacques Sempé et René Goscinny, Les Vacances du petit Nicolas)*

*Maman* բառը *sa maman* արտահայտության մեջ սովորական ազգակցության տերմին է, *mère* բառի հոմանիշը: Մինդեռ *maman* բառի մյուս երեք գործածությունները (մեծատառով, առանց որոշակիչի) բոլորն էլ մատնանշում են խոսողի մորը: Այլ կերպ ասած, այդ երեք *maman*-ները հանդես են գալիս որպես դեհկտիկ: Այդ առանձնահատկությունը նկատվում է նաև իբրև կոչական գործածվող ազգակցության տերմիններում:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ազգակցության տերմինները միշտ չեն, որ հանդես են գալիս դեհկտիկների նման որպես «մաքուր» ցուցային բառեր՝ *je, ici, maintenant* բառերի նման. Երբ նրանք օգտագործվում են որոշակիչի հետ, նրանք հանդես են գալիս որպես «սովորական» բառեր:

2. *Papa* և *maman* ասել չի նշանակում միայն դիմել ինչ-որ մեկին, այլև նրան ասել, թե ինչպիսին ես իրեն ընդունում: Այդ իմաստով, ինչպես նկատում է Պերրետը, դիմելու գործողությունը ներառում է ստորոգում, որն առկա է նույնիսկ ազգակցության տերմինների ոչ կոչական գոր-

ծածության մեջ: Ազգակցական բնույթի բառի օգնությամբ պատմողը բացահայտ կերպով ներկայացնում է իր ընտանեկան հարաբերությունը:

Որպես եզրակացություն նշենք, որ ազգակցության տերմինները ներկայացնում են տարբեր արժեքներ՝ ունակ փոխակերպվելու այնպիսի «գործիքների», որոնք ուղղված են հաղորդակցական լարվածությունը մեղմացնելուն կամ ընդգծելուն: Սոյն հոդվածում մենք փորձեցինք ցույց տալ, որ ազգակցության տերմինների հուզական գործածությունն ի հայտ է գալիս հաղորդակցական առավել լայն շրջանակներում, որոնցում խոսակցական այլ մարտավարությունները թույլ են տալիս առավել ընդգծել գործածվող տերմինների հուզական բնույթը և դրանց օգնությամբ խոսակցի վրա ներգործելու հնարավորությունները:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Դեմք հասկացությունը լեզվական քաղաքավարության տեսության մեջ առաջ է քաշվել է. Գոֆֆմանի կողմից 1973թ. *La présentation de soi* աշխատության մեջ: Մի փոքր ավելի ուշ՝ 1978թ., նույն հասկացությանն անդրադարձել են Բրաունը և Լսինսոնը, որոնք լեզվական քաղաքավարության տեսության շրջանակներում յուրաքանչյուր անհատի համար սահմանում են երկու դեմք՝ «դրական դեմք» (որը համապատասխանում է ինքնասիրահարվածությանը) և «բացասական դեմք» (յուրաքանչյուրի տարածքը) /տե՛ս Kerbrat-Orecchioni, 1992: 167/: Նշենք, որ ներխուժումը այդ տարածք կարող է դիտվել որպես ոսնձգություն: Այսպիսով՝ փոխգործակցության ընթացքում մասնակիցներն անում են ամեն բան, որպեսզի պաշտպանեն իրենց և խնայեն խոսակցի և՝ դրական, և՝ բացասական դեմքերը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Amossy R. L'argumentation dans le discours. Paris: Armand Colin, 2006.
2. Goffman E. La présentation de soi (traduit de l'anglais). Paris: Les Editions de Minuit, 1973.
3. Kerbrat-Orecchioni C. Pour une approche contrastive des formes nominales d'adresse // *French Language Studies*, N 20, 2010.
4. Kerbrat-Orecchioni C. Les Interactions verbales, vol. 2. Paris: Armand Colin, 1992.
5. Kerbrat-Orecchioni C. Les Interactions verbales, vol. 3. Paris: Armand Colin, 1998.
6. Mulo Farenkia B. Exploitations argumentatives des termes de parenté au Cameroun // *Philologie im Netz*, 53, 2010.

- 
7. Perret D. Les appellatifs: analyse lexicale des actes de parole // *Langages*, N 17. 1970.
  8. Camus A. *L'Etranger*. Paris: Gallimard, 1957.
  9. Sempé J.J., Goscinny R. *Les Vacances du petit Nicolas*. Paris: Éditions Gallimard, 1994.
  10. [www. koinai. net / sur-le-vif / niger-1974-ce-qui-n-a-pas-été-dit / l'article / Moussa est blessé//](http://www.koinai.net/sur-le-vif/niger-1974-ce-qui-n-a-pas-ete-dit/l-article/Moussa-est-blesse/)

**Р. МЕЛИКСЕТЯН, К. ШАХБАЗЯН – Эмоциональные выражения компонентов системы терминов родства.** – Данная статья посвящена анализу эмоциональных выражений терминов кровного родства. Отмечено, что система терминов родства не всегда применяется только для обозначения кровного родства и часто выходит за рамки родственных отношений, обозначая социально-культурные, экономические, политические, этнические и другие отношения. Цель статьи – показать, как термины родства в сочетании с другими лингвистическими средствами используются как стратегические способы пробуждения чувств в собеседнике.

**Ключевые слова:** термины родства, социальная функция, речевой акт, эмоциональные выражения, дейктические слова, речевая стратегия

**R. MELIKSETYAN, K. SHAHBAZYAN – *Emotional Expressions of the Components of Kinship Terminological System*.** – The present paper is devoted to the analysis of emotional expressions of blood kinship terms. The kinship terminology system is not always applied only to family members. Its application often goes beyond the scope of family relations thus denoting socio-cultural, economical, political, ethnic and other relations. The paper aims at showing how kinship terms are used as a strategy of evoking feelings in the interlocutor in combination with other linguistic means.

**Key words:** kinship terms, social function, speech act, emotional expressions, deictic words, speech strategy

**Լիլիթ ՍԱՐՈՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԶՈՑՈՎ  
ԺԱՄԱՆԱԿԻ ՑՈՒՑԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ  
ԱՌԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ**

Սույն հոդվածի նպագակն է ուսումնասիրել խապաներենում ժամանակի ցուցայնություն արտահայտող գոյականների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: Այն նվիրված է գոյականների՝ որպես անվանման միջոցների դիրքարկմանը, որդեղ, սակայն, վեր են հանվում և վերլուծության են ենթարկվում դրանց ոչ միայն, անվանողական, այլև ցուցայնական դրսնորումները: Լեզվի զարգացման արդի փուլում գոյականները՝ որպես ժամանակի արտահայտման բառային միջոցներ, հագլաւագես կարևորվում են հաղորդակցական գործընթացում առավել հակիրճ ծևով ժամանակային ցուցում իրականացնելու դեսանկյունից:

**Բանալի բառեր.** Ժամանակ, գոյական անուն, հաղորդակցական ակդ, ցուցայնություն, ցուցայնական բառեր, ժամանակի ցուցայնություն, անվանողական գործառույթ, ցուցայնական գործառույթ

Ժամանակի բարդ հասկացությունը կապված է մարդկային գոյի և նրա աշխարհընկալման հետ, որն անմիջականորեն կապվում է մեզ շրջապատող իրականության և լեզվի մեջ այդ իրականության արտացոլման ժամանակային տեղայնացման և կողմնորոշման հետ:

Ժամանակի կարգն արտացոլման որոշակի ոլորտ չունի, և դրա մասին ցանկացած պատկերացում ծևավորվել է գիտակցական այլ ոլորտների ու կարգերի հարաբերությամբ:

Հաղորդակցական ցանկացած ակտի ժամանակ խոսքային իրադրության կարևոր նախապայմաններ են մասնակիցների, տեղի և ժամանակի առկայությունը և դրանց վերաբերյալ ցուցումն է, իենց ցանկացած լեզվում ապահովում է հաղորդակցման գործընթացը: Հետևաբար՝ յուրաքանչյուր լեզվում կան հատուկ միջոցներ, որոնք իրականացնում են այդ ցուցումը և լեզվաբանության մեջ համարվում են ընդհանրույթ, իսկ ցուցայնությունը՝ ընդհանրույթային կարգ:

Խոսքային գործառույթի հիմնական տարրերի մասին խոսելիս Ռ. Յակոբսոնը կիրառել է Օ. Յեսպերսենի եզրը՝ ցուցայնական տարրերը շիֆտերներ (shifters) անվանելով: Նա ծևակերպել է այս կարգը որպես լեզվի կողի տարրեր, որոնք պարտադիր հղում են պարունակում ցանկացած տեղեկության վերաբերյալ: Ըստ նրա՝ տիպիկ շիֆտերներ են անձնական դերանունները, Զ. Պիրսը կիրառել է «փնդեքս» եզրը, Ռասմուն անվանել է դրանք «եսակենտրոն բառեր», Սմիրնիցին այդ բառե-

10. Jacobs G.M. & Zhang S. Peer Feedback in Second Language writing Instruction: Boon or bane. Proc. The American Educational Research Association, San Francisco. ERIC Document Reproduction Service No. ED 306 766. April 1989.
11. Scrivener J. The Essential Guide to English Language Teachin. Pearson Education, 2010.
12. Lyons J. Semantics. Cambridge: Cambridge University Press, 1977.
13. Bauer L. Morphological Productivity. Cambridge: Cambridge University Press, 2001.
14. Cotton D., Falvey D., Kent S. Market Leader Upper-Intermediate Teacher's Book. Pearson Longman, 2007.
15. Maier-Fairclough J., Butzphal G. Career Express Teacher's Book. Garnet Education, 2011.
16. Dictionary of Merriam-Webster, online dictionary // URL: <https://www.marriam-webster.com>.
17. Business Dictionary, online dictionary // URL: [www.businessdictionary.com](http://www.businessdictionary.com).

- 
18. Sgroi D. Happiness and Productivity: Understanding the Happy-Productive Worker, SWF-CAGE Global Perspectives Series, October 2015.
  19. Doward J. Happy people really do work harder. Science. The Guardian, UK, 2010 // URL: <https://www.theguardian.com>.>jul>

**Լ. ՍԱՐԳՍՅԱՆ – Ուսանողների «արտադրողականության» բարելավումը անգլերեն լեզվի ուսուցման գործընթացում.** – Մեր օրերում տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում ուսանողների «արտադրողականությունը» լեզվի ուսուցման գործընթացում ոչ մի աճ չի տեսել: Սույն հոդվածում ուսումնասիրվում են այն գործուները, որոնց պատճառով ուսանողների «արտադրողականությունը» չի բարելավվում: Հոդվածում փորձ է արվում ուղիներ գտնել ուսանողների «արտադրողականությունը» բարձրացնելու ուղղությամբ, որի համար առաջարկվում է կիրառել լեզվի ուսուցման հաղորդակցային մեթոդը (CLT): Հեշտը դնելով ուսանողակենտրոն ուսուցման վրա (Student-Centered approach): Հոդվածում ուսումնասիրվում է նաև այն, թե ինչպես են խմբակային աշխատանքները խթանում ուսանողի ներգրավվածությունը:

**Բանալի բառեր.** արտադրողականություն, լեզվի դասավանդման հաղորդակցային մոտեցում, ուսանողակենտրոն ուսուցում, հաղորդակցային նպատակ, ուսուցման «ուղղակի» ներգրավման մոտեցում

**Լ. ՍԱՐԳՍՅԱՆ – Повышение «производительности» у студентов при изучении английского языка.** – При всей доступности технологических достижений в процессе изучения английского языка, роста «производительности» у студентов не наблюдается. Выявление первопричин стагнации «производительности» у студентов является важнейшим фактором при обучении иностранного языка. Данная статья посвящена проблеме оптимизации процесса обучения иностранному языку путем интенсивного применения коммуникативного подхода в обучении иностранным языкам (CLT), а также подхода, ориентированного на потребности студентов (Student-Centered Approach). В статье в частности, рассматривается преимущество групповых работ, направленных на развитие коммуникативных навыков и умений студентов, а также пути повышения мотивации у изучающих иностранные языки.

**Ключевые слова:** производительность, коммуникативный подход преподавания языка, подход, ориентированный на потребности студентов, коммуникативная цель, «активный» подход

## Գայանե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խ. Արովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

### ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոդվածի նպատակն է բացահայտել ու վերլուծել գերմաներենի՝ որպես երկրորդ օրար լեզվի քերականական այնպիսի երևոյթներ, որոնք կարելի է իրրև պրանսպողիցիա (վերադաշնակում) կիրառել գերմաներենի դասավանդման գործընթացում այն ուսանողների համար, որոնք ունեն ոռուսերենի կամ անգլերենի՝ որպես առաջին օրար լեզվի լեզվական ուսակություններ ու հմտություններ: Հոդվածում հանգամանալից ներկայացված են քերականական փոխներթափականցման ի հայր գալու մեխանիզմները: Ներկայացված են լեզվական այն մակարդակները, որուելու դրսուրվում է քերականական փոխներթափականցումը: Հոդվածում դիմարկված են քերականական այն երևոյթները, որոնք բովանդակում են գերմաներենի հետ հայերենի, ռուսերենի և անգլերենի համընկնումները:

**Բանալի բառեր.** փոխներթափականցում, երկլեզվություն, ձևաբանական փոխներթափականցում, շարահյուսական փոխներթափականցում, պրանսպողիցիա, թարգմանության ուազմավարություն, լեզվական նյութի ներմուծում

Գիտատեխնիկական առաջընթացը ու գլոբալացումը որակապես փոխել են հարաբերությունները մարդկանց ու պետությունների միջև: Այդ պայմաններում ընդլայնվում ու ամրապնդվում են կապերը բիզնես գործընկերների, պետական պաշտոնյաների, կառավարության և գործարար ընկերությունների միջև, փորձ է արվում պահպանել միջմշակութային համագործակցությունը, շփումները երկրների միջև, նպաստել այլ մշակույթների ուսումնասիրությանը: Այս բոլոր գործընթացները սերտորեն կապված են հաղորդակցման հիմնական միջոցի՝ լեզվի հետ: Այս գործընթացում առանձնահատուկ դեր ունի երկլեզվությունը: Երկլեզվությունը և լեզուների շփումը բարենպաստ պայմաններ են ստեղծում լեզվական փոխներթափականցման դրսուրման համար:

Ըստ Վ. Վաֆեևի, լեզուների դասավանդման մեթոդիկայում փոխներթափականցումը (ինստերֆերենցիա) դիտարկվում է իրրև սովորողի կողմից «նրա նախկին լեզվական փորձի չգիտակցված փոխանցման արդյունք, իրրև մայրենի լեզվի արգելակող ազդեցություն ուսումնասիրվող երկրորդ լեզվի վրա, որը դժվարացնում է օտարալեզու համակարգի հաջող տիրապետումը» /Վաֆեև, 1988: 101/: Այս տեսակետից ցանկացած օրար լեզվի

ուսուցման գործնթաց անխուսափելիորեն բախվում է օտար լեզուն սովորողի կողմից նրա նախկին լեզվական փորձի փոխանցման արդյունքում առաջացած սխալների ու նոր լեզվի լեզվական կառուցները յուրացնելու գործնթացում առաջացած խոչնդուների հաղթահարման խնդրին: Դրանք առաջանում են լեզվական տարբեր բնագավառներում՝ քերականական, հնչյունաբանական, բառային (հմաստաբանական), ուղղագրական և այլն: Երկրորդ օտար լեզվի ակտիվ քերականական երևոյթները ուսուցանելիս անհրաժեշտ է հաշվի առնել առաջին օտար լեզվի և մայրենի լեզվի միջամտության և՝ դրական (տրանսպոզիցիա), և՝ բացասական (հնտերֆերենցիա) ազդեցությունները (Hufiesen, Neuner, 2003: 180/: Այդ նպատակին է ծառայում տարբեր լեզուների համապատասխան երևոյթների զուգադրումը, որը սովորաբար կատարվում է երեք մակարդակներում՝ ծկի, բովանդակության և գործառության (Tak, 1979: 58/:

Բովանդակության մակարդակում՝ քերականական երևոյթները զուգադրվում են տարբեր լեզուներում նրանց նմանությունների ու տարբերությունների տեսանկյունից: Եթե որոշ քերականական երևոյթներ համընկնում են որևէ մակարդակում, ապա կարելի է ակնկալել դրական փոխանցում (տրանսպոզիցիա), ինչը կիշտացնի նոր խոսքային կարողությունների ու հմտությունների ծևավորումը: Նման երևոյթների հատուկ մատուցման ու մշակման անհրաժեշտություն չկա, քանի որ այս քերականական երևոյթին ուսանողները բավականաչափ տիրապետում են առաջին օտար լեզվից (Мусланова, 1973: 128/: Չհամընկնող տարբերը կարող են լինել խնդրահարույց լեզվի դասավանդման գործնթացում ու դառնալ փոխներթափանցման (հնտերֆերենցիայի) պատճառ, որը անհրաժեշտ է հաղթահարել հատուկ վարժությունների միջոցով:

Լեզուների միջև առկա համընկնող քերականական երևոյթների մեկնաբանումը օգնում է ակնհայտ դարձնել այն երևոյթները, որոնք անգերենի կամ նաև ռուսերենի /իբրև 1-ին օտար լեզու/ քերականությանը տիրապետելու դեպքում հեշտությամբ կյուրացվեն հայ ուսանողների կողմից՝ գերմաներենը սովորելիս: Տրանսպոզիցիայի երևոյթը հատկապես մեծ է ազգակից լեզուների ուսումնասիրության ժամանակ: Նրանց կառուցվածքատիպաբանական նմանությունները և ուսուցման գործնթացում դրանց օգտագործումը հեշտացնում են նոր լեզվի յուրացման գործնթացը: Ուսուցանվող օտար լեզուների վրա մայրենի դրական ազդեցության մասին իրենց աշխատություններում ընգծել են բազմաթիվ լեզվաբաններ, ինպես Լ.Ս. Վիգոսովին /Ենցուական աշխատությունների մասին համընկնում ու ունեն միմյանցից շեղումներ, բավականին խնդրահարույց են ու կարող են սխալների պատճառ դառնալ: Ուստի այդ քերականական խոչնդունները հաղթահարելու ու յուրացնելու համար պահանջվում են հատուկ վարժություններ ու մատուցման ծևեր:

Դիտարկումները ցույց են տալիս, որ օտար լեզուների բաժնի ուսանողները, նույնիսկ օտար լեզվի լավ իմացության դեպքում, երբեմն սխալներ են թույլ տալիս, որոնց պատճառը հաճախ լեզվական փոխներթափանցումն է: Դրա դրսևորումներից մեկը՝ քերականական փոխներթափանցումը լեզվաբանության մեջ ամենից հաճախ բանավեճերի թեմա դարձած երևոյթներից է: Բազմաթիվ հայտնի լեզվաբաններ, ովքեր զբաղվել են փոխներթափանցման երևոյթով, սկզբում կասկածի տակ են դրել այն տեսակետը, թե մի լեզվի քերականական որևէ կառուց կարող է ազդել մեկ այլ լեզվի վրա: Այդ կարծիքն է ժամանակին հայտնել օրինակ Է. Սեպիրը. «Մենք ոչ մի տեղ չենք հանդիպում ծևաբանական փոխազդեցության, բացի մակերեսային ծևերից» /Սեպիր, 1993: 233/: Սակայն եղել են նաև լրիվ հակառակ կարծիքներ: Գ. Շուխարդտը պնդում էր. «Նոյնիսկ այդքան սերտ կապված ծևոյթները, ինչպիսիք են հոլովիչները, երաշխավորված չեն օտարալեզու նյութի ազդեցությունից» /Schuchardt, 1928: 195/:

Քերականական փոխներթափանցումը ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մի լեզվի քերականական միավորների կազմությունը, փոփոխություններն (խոնարհում, հոլովում և այլն) ու համաձայնությունները (ենթակա-ստորոգյալ, հատկացուցիչ-հատկացյալ, որոշիչ-որոշյալ և այլն) օտար լեզուն սովորողի կողմից փոխանցվում են նոր յուրացվող լեզվում գոյություն ունեցող նմանատիպ տարրերի վրա: Այսպիսով, փոխներթափանցումը առաջանում է այնտեղ, որտեղ միմյանց են հանդիպում երկու լեզուների անհամապատասխանությունները: Ընդ որում, քերականական փոխներթափանցումը առավել հաճախ է ի հայտ գալիս ոչ ազգակից լեզուների փոփոխարաբերության ժամանակ /Եցանա, 2010: 127/: Ներկայումս լեզվաբանության մեջ տարրերակվում են քերականական փոխներթափանցման ծևաբանական ու շարահյուսական տեսակները:

Ըևաբանական փոխներթափանցումը վերաբերում է լեզվի ծևոյթների ու խոսքի մասերի մակարդակներին: Մայրենի լեզվի բառակազմական տարրեր միջոցներն ու դրանց փոփոխությունների համակարգը կարող են փոխանցվել նոր յուրացվող լեզվի նորմերի վրա: Փոխներթափանցման կարող են ենթարկվել գրեթե բոլոր խոսքի մասերը:

Շարահյուսության հիմնական խնդիրը լեզվի շարահյուսական միավորների և դրանք պայմանավորող քերականական հարաբերությունների ըննությունն է: Շարահյուսական միավորներն են՝ նախադասության անդամները, բառակապակցությունները և նախադասությունները: Այս միավորների մակարդակում է ի ենթ ի հայտ է գալիս շարահյուսական փոխներթափանցումը: Քանի որ նոր լեզուն սովորողների խոսքը դեռևս կատարյալ է, ուստի օտար լեզվով հաղորդակցման ընթացքում մարենի լեզուն այս կամ այն ժամանությունը «հենարան» օգտագործելու անխուսակելի է, ուստի անխուսափելի է նաև լեզվական փոխներթափանցումը: Օտար լեզվի դասավանդման գործընթացում փոխներթափանցման հաղթահար-

ման ուղիներից մեկը շիվոյ լեզուների քերականական համընկնող ձևերի տեղին ու հմուտ կիրառումն է: Եթե սովորողները հայ ուսնողներ են, այդ համընկնումները կարելի է դիտարկել ուսերենի կամ անգլերենի հետ համեմատության մեջ, քանի որ այդ լեզուները նրանց համար կարող են համարվել իբրև 1-ին օտար լեզու:

Այս առումով առանձին դիտարկման են արժանի քերականական այն երևոյթները, որոնք համընկնում են գերմաներենում ու անգլերենում՝ իբրև առաջին օտար լեզու, ու մասնակիորեն նաև հայերենում՝ իբրև մայրենի լեզու: Դրանց առկայությանը անշուշտ մեծապես նպաստում է այդ լեզուների ծագումնաբանական ընդհանրությունը: Այս դեպքում արդեն գործ ունենք **տրասպողիցիայի** հետ: Ըստ խոսքի մասերի դրանց դրսևորումները բավականին ակնհայտ են:

Անձնանունների պատկանելության արտահայտումը այդպիսի օրինակներից մեկն է, որտեղ անգլերենի ու գերմաներենի կառուցները համընկնում են ձևի ու բովանդակային մակարդակներում: Օրինակ՝ Karl's bag (անգլ.), Karls Tasche (գերմ.): Սակայն գործառական մակարդակում նրանք համընկնում են միայն մասնակիորեն: Անգլերենի Karl's bag ձևին համապատասխանում են գերմաներենի երկու հոմանիշային ձևեր՝ Karls Tasche և die Tasche von Karl: Նշենք, որ գերմաներենում նախընտրելի է անգլերենին համընկնող -s մասնիկով կազմված ձևը: Սակայն անգլերենում կան գերմաներենի von նախդիրով կազմվող ձևերին համապատասխանող of նախդիրով կազմված ձևեր՝ the museums of Moscow, գերմ.՝ die Museen von Moskau:

Որոշյալ հոդի օգտագործումը գերմաներենում ու անգլերենում ներքոհիշյալ դեպքերում համընկնում է ինչպես բովանդակային այնպես էլ գործառական մակարդակներում /Բերբերյան, 2010: 442/: Համընկնման այս դեպքերը գերմաներենի դասավանդման գործընթացքում տրանսպողիցիայի լավագույն օրինակներ են, եթե սովորողը տիրապետում է անգլերենին՝ իբրև 1-ին օտար լեզվի:

– Գոյականներից առաջ, որոնք միակն են իրենց տեսակի մեջ և անգլերենում, և՝ գերմաներենում գործածվում է որոշյալ հոդ (անգլ. the Sun, the Earth, գերմ. Die Sonne, die Erde):

– Աշխարհի չորս կողմերի հետ (անգլ. the north, the south, գերմ. der Norden, der Süden...):

– Աշխարհագրական անունների հետ՝ գետերի, ծովերի, օվկիանոսների, լեռնաշղթաների անունների հետ. (անգլ. the Thames, գերմ. die Elbe, die Alpen....):

Հոդի բացակայության դեպքերի համրնկնումները նույնպես քիչ չեն, ու դրանց ճշգրիտ կիրառումը գերմաներենի դասավանդման գործում, անհամեմատ կիեշտացնի հայալեզու սովորողի համար գերմաներենի յուրացումը: Օրինակ՝ անորոշ հոդի կիրառումը (գերմաներենում ու անգլերենում) և հոդի բացակայությունը (հայերենում), երբ առարկայի

մասին խոսվում է առաջին անգամ, ինչպես նաև նրա գործածումը հաջորդող համատեքստում, եթե առարկան արդեն ծանոթ է, լեզուների համեմատությամբ մատուցելը կարելի է համարել լավագույն մեթոդը այս քերականական երևույթը հաջորդությամբ ուսուցանելու համար (Սա գիրք է: Գիրքը նոր է: (անգլ.) This is a book. **The** book is new. (գերմ.) Das ist **ein** Buch. **Das** Buch ist neu):

Ինչպես վերը նշվեց՝ քերականական համընկնումներ կարելի է տեսնել գրեթե բոլոր խոսքի մասերի մոտ: **Ածականների** դեպքում, օրինակ, ամենաշատ համընկնումներ տեսնում ենք ածականի համեմատության աստիճանների կազմման մեջ: Ածականի բաղդատական աստիճանի կազմելու համար և՝ գերմաններենում, և՝ անգլերենում օգտագործվում է **-er** վերջածանցը: Իսկ գերադրական աստիճանի համար օգտագործվում է **-est** վերջածանցը անգլերենում, ու **-st** գերմաններենում (**-est** գործածվում է, եթե ածականը վերջանում է **-d**, **-t**, **-s**, **-ß**, **-x**, **-tz**, **-z**, **-st** վերջավորություններով) /Բերբերյան, 2010: 235/: Օրինակ՝ անգլ. **deep – deeper – deepest**, գերմ. **heiß – heißer – heißest**: Ե՛վ անգլերենում, և՝ գերմաններենում կան անկանոն ածականներ, որոնք իհարկե ոչ բոլորն են հոմանիշներ: Հոմանիշ բառերի առկայության հիշատակումն ու դրանց մատնանշումը կօգնի քերականական այս առանձնահատկության մտապահումն ու յուրացումը: Անշուշտ կան նաև տարբերություններ: Օրինակ՝ գերմաններենում միավանկ բառերը բաղդատական ու գերադրական աստիճաններում ստանում են **ումլաութ** /ձայնակիրխություն/: Սակայն արդեն առկա նմանությունները քերականական այս երևույթում օգտակար են լեզուն և հեշտությամբ սովորեցնելու, և՝ յուրացնելու համար ու այս գործում կարող են ստանձնել տրանսպորտայի դեր:

Առանձնանում են նաև այնպիսի քերականական երևույթներ, որոնք ունեն համապատասխանություններ ոուսերենում և գերմաններենում: Իհարկե, ոուսերենի քերականության մեջ այնպիսի երևույթները, որոնք կարելի է օգտագործել գերմաններենի ուսուցման գործընթացում, իբրև դրական փոխներթափականցում, զգայիրեն քիչ են: Հենվելով ոուսերենի վրա նոյնպես կարելի է մշակել մի շարք մոտեցումներ: Դրանցից է, օրինակ՝ ածականի **վերջավորությունների** միջոցով գոյականի սերի դրսւորման ձևը և ածականի հոլովումը ոուսերենում ու գերմաններենում (ռուս. новая книга, большое ведро, старый дом, գերմ. neues Buch, schöne Frau, alter Tisch):

Փոխներթափականցման հաղթահարման **ուղիներգ** մեկն էլ մալրենի ու առաջին օտար լեզուի հնարավոր բազասական ազդեցության օրիենտիվ գնահատումն, ու շփվող լեզուների գուգադրման միջոցով մատուցելն է:

Գերմաններենի ու հալերենի համադրման պարագայում ամենահաճախ հանդիպող բազասական ազդեցությունը ի հայտ է գալիս նախադասության մեջ ստորոգլայի դիրքի հետ կապված: Գերմաններենում ստորոգլայի երկրորդ ամրագրված դիրքը նախադասության մեջ հաճախ է խախտվում հայերենի նախադասության ու բառակապակցությունների

ազատ կառուզի ազդեցությամբ: Բայի հետ կապված փոխներթափանցման հաճախ հանդիպող դեպքեր են նաև ստորադասական նախադասությունները: Այս պարագալում հաճախ հայալեզու ուսանողները երկրորդական նախադասության ստորոգլայր օգտագործում են ազատ դիրքով՝ գերմաներենում ամրագրված վերջին դիրքի փոխարեն:

Օրինակ՝ Ինձ ասագին,որ նա **գայու է** եռկու օրից:

Man hat mir gesagt, dass er in zwei Tagen **kommt**.

Գերմաներունում ենթակայի ու ստորոգլայի համաձայնության ըերականական կատեգորիան լուրացնելիս ստվորողները նույնպես կարող են բախվել գերմաներենի համապատասխան կատեգորիայի վրա մայրենի լեզվի ունեցած բացասական ազդեցությանը: Օրինակ՝ Եթե 2 ենթակաները մեկ միասնություն են կազմում, ապա ստորոգյալը գերմաներենում դրվում է եզակի թվով: Մինչդեռ հայերենում նման դեպքում ստորոգյալը հոգնակի է գործածվում:

Alt und jung **arbeitet** im Feld.

Ահել ու ջահել **աշխատում են** դաշտում:

Ինտերֆերենցի խնդիրը կա նաև մեկից բարձր թվականի հետ գոյականի օգտագործման ժամանակ: Հայերենում այն դրվում է եզակի թվով, իսկ գերմաներենում՝ հոգնակի:

Օրինակ՝ Ես գնում եմ **երեք խնձոր** իմ աղցանի համար:

Ich kaufe **drei Äpfel** für meinen Salat.

Ուստերենի՝ իբրև 1-ին օտար լեզվի տիրապետման պայմաններում գերմաներեն սովորողների մոտ փոխներթափանցման պատճառով ամենահաճախ հանդիպող սխալը ուստերեն գոյականների սեռերի նույնականացումն է գերմաներենի հետ: Սա վերաբերում է հատկապես անշունչ առարկաներին, որոնց դեպքում կենսաբանական սեռը ոչնչով չի կարող օգնել: Օրինակ՝ Եթե ստվորողը գիտի ուստերենում գրենական պիտույքների սեռերը (ռուս. քնից, տերած, րոշկա-իգական սեռ), ապա կարող է մեխանիկորեն սխալմամբ դրանք վերագրել գերմաներեն համապատասխան գոյականներին (das Buch-չեզոք սեռ, das Heft-չեզոք սեռ, der Kugelschreiber- արական սեռ), ինչը հանգեցնում է քերականական սխալի: Այդ պատճառով անհրաժեշտ է գերմաներեն գոյականները սկզբից ի վեր ուսուցանել իրենց հատկանշական որոշիչ հոդերով ու գիտելիքների որոշակի մակարդակից սկսած ներկայացնել նաև սեռերի տարբերակմանը նպաստող կանոններ:

Փոխներթափանցման համար մեծ ասպարեզ է հաղիսանում նաև թարգմանությունը, որը լեզվի ուսուցման ու յուրացման գործընթացի անբաժանելի մասն է: Համարժեքության ու համապատասխանության հասնելու նպատակով թարգմանիչը յուրաքանչյուր դեպքում հենվում է որոշակի գործիքակազմի վրա և փորձում է հավատարիմ մնալ թարգմանվող տեքստի ժանրին ու բնագրի լեզվի նորմերին:

Հ. Քրինգսը թարգմանության ռազմավարությունները սահմանում է որպես թարգմանչի «պոտենցիալ գիտակցված ծրագրեր, որոնք ուղղված են կոնկրետ թարգմանության խնդրի լուծմանը՝ որոշակի թարգմանական գործի սահմաններում» (Kring, 1986: 18/։ Միևնույն ժամանակ, Քրինգսը առանձնացնում է մակրոռազմավարություններ՝ թարգմանության խնդիրների լայն շրջանակի լուծման ընդհանուր մեթոդներ, և միկրոռազմավարություններ՝ կոնկրետ խնդրի լուծման հատուկ մեթոդներ։ Մակրոռազմավարության շրջանակներում Վ. Ն. Կոմիսարովը դիտարկում է թարգմանության երեք փուլեր. բնօրինակի նախաթարգմանական վերլուծություն, տեքստի բուն թարգմանությունն ու հետթարգմանական վերլուծությունը, այսինքն՝ տեքստի վերամշակումը և ստուգումը։ Նշվում է, որ շատ դեպքերում թարգմանիչը անտեսում է առաջին և երրորդ փուլերը (Комиссаров, 2000: 92/։

Շատ հաճախ թարգմանվող տեքստերում հանդիպում են թարգմանական միավորներ, որոնց ճգրիտ թարգմանված ձևին հասնելու համար անհրաժեշտ է շրջանցել քերականական փոխներթափանցման թակարդները։ Այդ միավորները կարող են լինել բառեր, արտահայտություններ կամ էլ քերականական կառույցներ, որոնք գերմաներենից հայերեն ու հակառակը որպես բոլորվին այլ կառույցներ են թարգմանվում։ Օրինակ՝ (գերմ.) «Zurückbleiben, bitte!» արտահայտությունը, որը հնչում է տրանսլիպտային միջոցում, հայերենում թարգմանվում է որպես նախադասություն։ «Զգուշացե՛ք, դոները փակվում են»։

Արտահայտության ու նախադասության անհամապատասխանություններ ու փոխներթափանցման աղբյուր են նաև ասույթները, ասացվածքներն ու կոչերը։ Օրինակ՝ (գերմ.) Hals und Beinbruch!- Հաջողություն: (գերմ.) Ohne Fleiß, kein Preis! - Ով աշխատի, նա կուտի: Գերմաներենից հայերեն թարգմանության գործընթացին հաճախ հատկանշական է կրավիրական (Passiv) կառույցի փոխարինումը ներգործական (Aktiv) կամ չեզոք սեռի կառույցով։ Այսպես օրինակ, Er wurde von einem Wagen angefahren. Նրան հարվածեց մեքենան։ Կամ, նա վրաերթի ենթարկվեց։ Շարահյուսական փոխարինումները (ինչպես օրինակ պարզ նախադասությունները բարդով) նույնպես քիչ չեն գերմաներենից հայերեն թարգմանելիս (Ich sah ihn kommen. Ես տեսա, թե ինչպես էր նա գալիս)։

Փոխներթափանցման վերը նշված դեպքերից խուսափելու համար անհրաժեշտ է դրանք ուսուցանել համապերսպերի միջոցով, կամ հենց սկզբից ներկայացնել արդահայտության համապատասխան թարգմանությունը։ Նույնպիսի անհամապատասխանություն հաճախ հանդիպում ենք նաև «kein - οչ մի» ժխտական մասնիկի գործածման դեպքում։ Գերմաներենում kein մասնիկով ժխտվում են գոյականները։ Մինչդեռ հայերեն թարգմանությունը ճիշտ է, եթե կազմվում է որպես բայի ժխտում։

Ich habe kein Buch. (գերմ.) - Ես գիրք չունեմ։

Այսպիսով, մեկ լեզվի՝ մյուսի վրա ազդեցության սկզբունքները հատկապես կարևոր են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր թարգմանիչների համար, քանի որ մի լեզվից մյուսը թարգմանություն կատարելը պահանջում է էլ առավել հմտություններ, քան պարզապես տարբեր լեզուներով հաղորդակցվելը:

Օտար լեզվի ուսուցման ընթացքում լեզվական նյութի վրա աշխատանքը անհրաժեշտ է այնպես կազմակերպել, որ սովորողը քայլ առ քայլ հաղթահարելով նյութի հետ կապված տարբեր բնույթի դժվարությունները, կարողանա այն օգտագործել խոսքային գործունեության տարբեր տեսակներում: Քանի որ լեզուն ինֆորմացիա հաղորդելու և ընդունելու միջոց է, ուստի ուսուցման յուրաքանչյուր աստիճան և օղակ պետք է ուղղված լինի լեզուն կիրառելու ունակության ձևավորմանը:

Օտար լեզվի՝ իբրև լեզվական նյութի հետ աշխատանքի գլխավոր խնդիրն է դրա ներմուծումը՝ բացատրությունը, յուրացված լինելու մակարդակի ստուգումը և սովորողի մոտ մատուցված նյութի կիրառման նախնական ունակությունների ձևավորումը: Իսկ ինչպես հայտնի է լեզվաբանության մեջ ներմուծման կարևորագույն օղակներն են բացահայտումը, ձևը և օգտագործումը /Փոլոմկին, Լիւաս, 1975: 73/:

Նշանակության բացահայտման եղանակները երկուսն են՝ լեզվական ու արտալեզվական, որոնք իրենց հերթին ունեն ենթաեղանակներ:

Ձև ասելով նկատի է առնվուած տվյալ լեզվական միավորի արտասանությունը, գրությունը, կառուցվածքը և քերականական ձևը: Իսկ օգտագործման առանձնահատկությունները ներկայացնելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել մայրենի ու օտար լեզուներում դրանց իմաստային ծավալների համապատասխանությունն ու անհամապատասխանությունը, որոնց հիման վրա էլ սովորողին ցուց տալ դրանց օգտագործման ոլորտները: *Օգտագործման* առանձնահատկությունները մայրենիում /Երբեմն նաև առաջին օտար լեզվում/ ու նոր ուսուցանվող օտար լեզվում և դրանց անհամապատասխանությունը ինտերֆերենցիայի հիմնական պատճառներից մեկն է: Իսկ ինտերֆերենցիայի պատճառով առաջացող դժվարությունները պետք է հաղթահարվեն մեթոդական տեսակափորման հիման վրա կառուցված վարժությունների միջոցով: *Օգտագործման* առանձնահատկություններից է նաև տվյալ լեզվական միավորի այլ միավորների հետ կապակցելու օրինաչափությունները, որոնք չպետք է վրիպեն դասավանդողի ուշադրությունից:

Օտար լեզվի դասավանդման գործընթացը սկսվում է դասավանդողի կողմից լեզվական նյութի մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Այդ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նրան ճիշտ ընտրելու ուսուցման եղանակները՝ անշուշտ հաշվի առնելով թիրախային խմբի լեզվական նախկին փորձն ու հմտությունները: Հաջորդ քայլը լեզվական նյութի /մեր դեպքում քերականական նյութի/ նշանակության բացահայտումն է, որը իրագործվում է լեզվական /թարգմանական ու ոչ թարգմա-

նական/ ու արտալեզվական /գործողության կամ առարկաների ցուցադրում, միմիկա/ եղանակներով: Հաջորդ քայլով դասավանդողը պետք է տարբեր եղանակներով ստուգի, թե որքանով է նոր նյութը յուրացվել սովորողների կողմից: Այս աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել նոր քերականական նյութի հետ մայրենի կամ առաջին օտար լեզվում հավանական առկա համընկնումներին:

Քերականական ձևերի ճշգրիտ ուսուցումը կայուն հիմք է հաղորդակցական ունակության ձևավորման համար:

Լեզվական փոխներթափանցումը (ինտերֆերենցիա) ամենահետաքրքիր երևոյթներից մեկն է, որը ի հայտ է գալիս տարբեր լեզուների փոխադարձ շփումների արդյունքում: Փոխներթափանցման հայթահարումը օտար լեզվի յուրացման գործընթացում գլխավոր նպատակներից մեկն է, այդ պատճառով դրա ուսումնասիրությունն ու գործնական վերլուծությունը շատ կարևոր են: Փոխներթափանցման ուսումնասիրությունները չեն կրոցնում իրենց արդիականությունը միջազգային շփումների աճող ինտենսիվության պատճառով:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բերբերյան Ն., Եղիազարյան Է. Գերմաներեն, բուհական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2010:
2. Багана Ж., Хапилина Е. В. Контактная лингвистика: Взаимодействие языков и билингвизм. М.: Флинта, Наука, 2010.
3. Белякова Г.А. Восприятие назализации в условиях разных фонологических систем: Автореф. дисс. ... канд. филол. наук. Л., 1981.
4. Вафеев Р.А. Выражение причинно-следственных отношений в русском и татарском языках, учеб. пособие. Югорск: ЮГУ, 1988.
5. Выготский Л.С. Проблемы дефектологии. М.: Просвещение, 1995.
6. Гак В.Г. Межъязыковое сопоставление и преподавание иностранного языка // *Иностранные языки в школе*, 1979, № 3.
7. Комиссаров В.Н. Общая теория перевода. М.: ЧеРо, совместно с «Юрайт», 2000.
8. Мусланова Л. Г. К экспериментальному исследованию взаимодействия фонем трех языков при обучении говорению на втором иностранном языке // *Научные труды по методике преподавания иностранных языков*, № 80. М., 1973.
9. Сэпир Э. Язык // Сэпир Э. Избранные труды по языкоznанию и культурологии. М., 1993.
10. Фоломкина С.К., Лившиц О.Я. Ознакомление учащихся с новым языковым материалом при обучении устной речи. Обучение устной речи и чтению. М., 1975.

- 
11. Щерба Л.В. Языковая система и речевая деятельность. Л., 1974.
  12. Drosdowski G., Müller W. ua. Duden Rechtschreibung der deutschen Sprache, Band 1, Manheim; Leipzig; Wien; Zürich: Dudenverlag, 1996.
  13. Hufeisen B., Neuner G.. Mehrsprachigkeitskonzept. Tertiärsprachenlernen. Deutsch nach Englisch. Strasbourg: Council of Europe Publishing, 2003.
  14. Krings H.P. Was in den Köpfen von Übersetzern vorgeht. Eine empirische Untersuchung zur Struktur des Übersetzungsprozesses an fortgeschrittenen Französischlernern. Tübingen: Narr, 1986.
  15. Schuchardt H. Hugo Schuhardt-Brevier/ ed. L. Spitzer. Halle, 1928

**Г. ОГАННЕСЯН – Пути преодоления грамматической интерференции в процессе преподавания немецкого языка.** – Цель настоящей статьи – выявить и проанализировать такие грамматические явления немецкого языка, которые могут быть использованы в процессе обучения немецкого как второго иностранного студентов, у которых есть языковые навыки русского или английского как первого иностранного языка. В статье подробно рассмотрены механизмы возникновения грамматической интерференции. Изучены и представлены те лингвистические уровни, в которых она проявляется ярче всего.

**Ключевые слова:** интерференция, двуязычие, морфологическая интерференция, синтаксическая интерференция, транспозиция, стратегия перевода, введение учебного материала

**G. HOVHANNISYAN – Ways of Overcoming Grammatical Interference in the Process of Teaching German.** – The aim of the present paper is to analyze and reveal some grammatical phenomena in the German language which can cause cross-linguistic transfer during foreign language acquisition, namely German, taught to the students who already have linguistic experience in English or Russian. The paper covers the mechanisms that bring about grammatical interference in detail, thus considering language transfer (both positive and negative) to support the acquisition of the German language.

**Key words:** interference, bilingualism, morphological interference, syntactic interference, transposition, translation strategy, introduction of training material

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համեստ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

## ՄՈԴ ԳՈՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ՈՒ.Բ. ԵՅԹՍԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

20-րդ դարի իոլանդացի բանասրեղծ, դրամագործ Ուիլյամ Բաթեր Եյթսի մուսան, նրա Բեագրիշեն, նրա Հալլուան հայրնի նացիոնալիստ Մոդ Գոնն էր, որի ներկայությունն ակներև է գրողի՝ սիրո թեմայով գրված բանասրեղծություններում: Անընդհակը հեռանալով ու հեռացվելով իր մուսայից՝ Եյթսը նրան նոյնացնում էր վարդի, ասդվածուիիների և հոմերոսյան հերոսիների հետ: Այս հոդվածում քննարկվում են մուսա Մոդ Գոնի բազմաթիվ խորհրդանշները, որոնք արդացուում են նրա կերպարի առանձնահավկությունները՝ ամփոփված գրողի սրեղծագործության մեջ:

**Բանալի բառեր.** մուսա, Մոդ Գոն, վարդ, հոմերոսյան խորհրդանշներ,  
Հեղինե

«Երևակայությունն ավելի շատ ապրում է նվաճված կնոջ, թե կորցրած կնոջ վիա». իր «Աշտարակը» բանատեղծության մեջ հենց այսպես է Եյթսը ծևակերպում պոետական սիրո և դրա ներշնչանքից ծնվող պոեզիայի գլխավոր հարցադրումը /Yeats, 2000: 132-133/: Օլիվիա Շեքսպիրին ուղղված իր նամակում հետազայում Եյթսը կգրեր, որ սարսափելի է ցանկանալն ու չտիրանալը, ինչպես սարսափելի է ունենալն ու չցանկանալը /Yeats, 1954: 810-811/: Հենց այս փուլերով էլ զարգացել են Եյթսի ու իր կյանքի մուսայի՝ Մոդ Գոնի հարաբերությունները: 1889 թվականին է գրողը Լոնդոնում հանդիպել իոլանդացի նացիոնալիստ Գոնին, որը մեծ ազդեցություն է ունեցել Եյթսի կյանքի, գաղափարների և ստեղծագործության վրա: Յեյսթի անպատճախան սերը գեղեցիկ հեղափոխականի հանդեպ դառնում է գրողի պոեզիայի շարժիչ ուժը: Զորս անգամ Եյթսին մերժելուց հետո Մոդ Գոնը 1903 թվականին ամուսնանում է կաթոլիկ նացիոնալիստ Զոն Մաքրայի հետ: Եյթսի երևակայությունն արարելու էր կորցրած կնոջ շնորհիվ:

Ոհմանտիկական ավանդույթի համաձայն, պոետը սիրահարվում է մուսային, որը ներշնչում է նրան և խթանում պոեզիայի արարման ընթացքը: Ինչպես ասպետական գրականության ժամանակներում, ասպետ-պոետը ծառայում է մուսա-դամային՝ աստվածացնելով նրան. «Դա-

ման, որին 12-րդ դարի Պրովանսի տրուբադուրները կոչում էին դոննա, ըստ էության, իր մեջ արտացոլում է Աստվածամոր պատկերը, որին ասպետը պաշտում էր» /Էդոյան, 2009: 38/: Տրուբադուրների լիրիկային Եյթսն ամենայն հավանականությամբ ծանոթացել է Գվինիցելիի և Կավալկանտիի բանաստեղծությունների թարգմանություններով՝ կատարված Ռոսսետտիի կողմից, որը նոյնպես, ինչպես Շելլին և Բլեյքը, բանաստեղծի գրական հիմնական հետաքրքրությունների շարքում է եղել:

Դանտեի սերը անհասանելի մուսայի հանդեպ Եյթսն իր ինքնակենսագրություններում որակել է որպես «տենչանքի տառապանք» /Hassett, 2010: 67/, որն էլ, ըստ Եյթսի, ոգեշնչել է Դանտեին դառնալ քրիստոնեության գիշավոր հանճարը, ինչպես նա նրան անվանում է «Ego Dominus Tuus» բանաստեղծության տասնութերորդ տողում /Yeats, 1966: 70/: Դանտեի համար պաշտամունքի առարկան Բեատրիչեն էր, Պետրարկայի համար՝ Լաուրան: Պոետ-մուսա հարաբերության այս մոդելը հետագայում արտապատկերվում է հետմիջնադարյան գրականության մեջ՝ պահպանելով ամենակարևոր առանձնահատկությունը. դաման պիտի անհասանելի լիներ, որովհետև մուսան հենց իր ֆիզիկական բացակայության շնորհիկ է ոգեշնչում պետին:

Եյթսի խորհրդանշային համակարգը Ուիշարդ Էլմանը՝ գրողի ամենահայտնի ուսումնասիրողներից մեկը, իր “The Identity of Yeats” աշխատության մեջ բաժնում է երկու շրջանի՝ մինչև 1900 և 1915-1929 թվականները: «Վաղ համակարգը՝ գրում է նա, - մեծամասամբ կազմված էր ծանոթ խորհրդանշիչներից՝ օգտագործված անսովոր կերպով, մինչդեռ ուշ շրջանի համակարգը ներառում էր ավելի քիչ հայտնի խորհրդանշիչներ, որոնք Եյթսի շնորհիկ սկսում էին ծանոթ թվալ» /Ellmann, 1964: 63-34/: Հենց այս սկզբունքով էլ Եյթսը ընտրում էր Մոդ Գոնի խորհրդանշիչները՝ նրան իր վաղ շրջանի պոեզիայում նոյնացնելով ընթերցողին ծանոթ վարդի, աստվածութինների, հոմերոսյան հերոսութինների հետ:

Մոդ Գոնի ներշնչանքով գրված ամենակարևոր ժողովածուներից մեկը՝ «Վարդը», բաղկացած է քսաներկու բանաստեղծություններից: Այն տպագրվել է 1893 թվականին՝ մի շրջանում, երբ Եյթսը դեռ հովս ուներ Գոնի հետ հարաբերություններ ձևավորելու: Դրա շնորհիկ էլ այս ժողովածուի բանաստեղծություններին հատուկ չէ ուշ շրջանի ստեղծագործություններին բնորոշ տիրությունը: Ժողովածուի գիշավոր խորհրդանշն էլ հենց դարձել է դրա վերնագիրը: Վարդն այստեղ բազմիմաստ է, բայց բոլոր դեպքերում էլ խորհրդանշիչ երկու հիմքերը իոլանդիան և Մոդ Գոնն են, որոնք շատ հաճախ նոյնանում են Եյթսի պոեզիայում:

Իոլանդական առասպելների մեջ երկիրը շատ հաճախ անվանվում է “Roisin Dubh”, որը թարգմանաբար նշանակում է մուգ վարդ: Վարդի խորհրդանշիշը ասոցացվում է նաև Աֆրոդիտեի հետ, և քանի որ Մոդ Գոնը Եյթսի համար աստվածութի էր, խորհրդանշիշի ընտրությունը պատահական լինել չէր կարող: Աֆրոդիտեն երկրային սիրո աստվածութին

Էր /Seward, 1960: 10/: Միջին դարերում Երկրային-հեթանոսական սիրուն փոխարինելու եկավ քրիստոնեական սերը, և վարդը դարձավ Աստվածամոր, աստվածային սիրո խորհրդանշիշը՝ փոխարինելով Աֆրոդիտեի վարդին: Դանտեի վարդը նույնպես խորհրդանշում էր աստվածային ոլորտը: Վարդը Եյթսի սուրբեկտիվ հույզական աշխարհը կապում էր աստվածային էությանը, որի մարմնավորումը Երկրի վրա իր համար Մոդ Գոնն էր:

Ով էր երազում, թե գեղեցիկն անցնում է որպես երազ:

Այս կարմիր շուրթերի համար՝ իրենց ամրող թախծով հպարտությամբ,

Շախծով, որ ոչ մի

նոր հրաշք չի պակասի,

Տրոյան մի ակնթարթում դարձավ բարձր գերեզման

Եվ Ուսնայի երեխաները մահացան: /Yeats, 2000: 27/

«Աշխարհի վարդը» բանաստեղծության մեջ վարդ-Մոդ Գոնի հավերժական գեղեցկությունը Եյթսը նույնացնում է Հեղինեի գեղեցկության հետ, որը Երկրների թշնամանքի պատճառ էր դարձել: Եթե Հեղինեն տրոյացիների և հույների կովայննարոն էր, Մոդ Գոնի հավերժ գեղեցկությունը հայտնվում է Իոլանդիայի և Անգլիայի միջև՝ կարծես կանխորշելով սարսափելի գեղեցիկի ծնունդը, որի մասին Եյթսը հետագայում գրելու էր իր «Զատիկ, 1916» բանաստեղծության մեջ: Նացիոնալիստ-հեղափոխական Մոդ Գոնն իրապես ժամանակի Իոլանդիայի խորհրդանշին էր՝ գեղեցիկ, ազատատենչ ու անվախ: Նրա համար ոչ միայն Տրոյան է ընկնում, այլև իին իոլանդական լեգենդի Ուսնայի երեք որդիները՝ Նաեիսին, Անլին և Արդանը, որոնց մահվան պատճառն էր դարձել գեղեցկուիի Դեկրդրեն: Իոլանդական դիցաբանության այս հերոսութին տառապանքի խորհրդանշին է, քանի որ բազմաթիվ տղամարդիկ սիրահարվում էին նրան՝ դարձնելով Դեկրդրենի գեղեցկությունը դժբախտ վեճերի պատճառ: Գոնին նման խորհրդանշիներ տալով՝ Եյթսը նաև կանխատեսում էր այն ողբերգական ընթացքը, որը գալու էր ազատատենչ-նացիոնալիստական գաղափարների հետևանքով, որոնց առաջամարտիկն էր գրողի մուսան: Այս մասին նաև ակնարկում է ժողովածուի «Սիրո գութը» (1892) բանաստեղծության մեջ՝ մատնանշելով «մարդկանց, որոնք առ ու ծախ են անում» (Home Rule կուսակցությունը) Իոլանդիայի ապագան և սպառնում իր սիրեցյալին /Yeats, 1966: 13/:

«Սիրո վշտի» մեջ, որը գրվել է 1891 թվականին՝ Գոնի և Եյթսի հանդիպումից երկու տարի անց, գրողը նորից օգտագործում է դասական գրականությունից վերցված ծանոթ ալեգորիաներ՝ կնոջ ճակատագիրը համեմատելով թափառող Ողիսևսի ճակատագրի հետ: Մոդ Գոնն այստեղ նորից ներկայանում է թախծոտ կարմիր շրթունքներով՝ հպարտ, ինչպես «սպանված Պրիամոսը» /Yeats, 2000: 29/, և երբ նաև «ծագում է» (հայտնվում է Եյթսի կյանքում), փոխվում է մարդու սքողված պատկերը:

Այս բանաստեղծության մեջ երևում է Եյթսի լիրիկային բնորոշ երկ-վածությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ շերտերի: Մինչև կնոջ «ծագումը» մոլորակի վրա (ինչպես և Եյթսի կյանքում) տիրում է ներդաշնակությունը՝ նկարագրված առաջին տան մեջ: Մարդու «լացը»՝ տառապանքը, կարծես սքողված է բնության մեջ: Նրա ծագումից հետո սակայն «տերևների ներդաշնակությունը» դառնում է «տերևների ողբերգ»: Այս տողերը կարելի է մեկնել թե՛ որպես աշխարհաստեղծման աստվածաշնչյան ալեգորիա, թե՛ որպես ինքնակենսագրական բովանդակություն ունեցող պոեզիա, հատկապես, որ Եյթսը Մոդ Գոնի հետ իր առաջին հանդիպման մասին գրել է. «Ես քանանեթք տարեկան էի, երբ սկսվեց իմ կյանքի անհանգստությունը» /Smith, 1990: 34/:

«Աշխարհի վարդը» բանաստեղծության վերջին տան մեջ Եյթսը պատկերավորում է Աստծոն, ում կողքին կա աստվածուիի (անգլերեն «her» բառը հուշում է սեռային պատկանելությունը, իսկ հրեշտակների և Աստծո ոլորտում կանացի էությունը նոյնպես պիտի աստվածային լիներ): Աստվածուիի-վարդ-Գոնի գերեցկությունը, փաստորեն, ժամանակ չի ճանաչում, իսկ Աստված աշխարհը կանաչ ճանապարհ է դարձնում նրա թափառող ոտքերի համար: Հնարավոր է, որ «թափառող» բարի ընտրությամբ Եյթսը հաստատում էր սեփական մտավախությունը, որ Մոդն այդպես էլ իրեն չէր ընտրի:

Ծնկի՛ եկեք, հրեշտակապետեր, ծեր մշուշուր բնակագրեղում,  
Մինչև դուք կլինեիք, կամ սրբեր կրաբախեին,  
Հոգնաբեկ բարին մի քայլ հետ էր Նրա գահից:  
Նա սրեղծել էր աշխարհը որպես խողածածկ ճանապարհ  
Նրա թափառող ողբերի համար: /Yeats, 2000: 27/

«Աշխարհի վարդին» հաջորդում է «Խաղաղության վարդը», որում Եյթսը շարունակում է վարդ-Գոնի գովերգումը՝ այս անգամ նրա գեղեցկությանը հաղորդելով այնպիսի հզորություն, որ անգամ հրեշտակապետ Միքայելը պիտի թողներ իր գործերն ու աստղերից պսակ գործեր Մոդ Գոնի համար /Quiller-Couch, 1971: 864/: Աստվածաշնչի վերջին գրքի՝ Սուլր Հովհաննես ավետարանչի հայտնության տասներկուերորդ գլխում նկարագրվում է, թե ինչպես է Միքայել հրեշտակապետն իր հրեշտակների հետ հաղթում Սատանային: Եյթսի բանաստեղծության մեջ հրեշտակապետն այլևս չի մտածում Աստծո պատերազմների մասին, և Աստված էլ դադարեցնում է դրանք.

Եվ Աստված կիրամայեր դադարեցնել իր պատերազմը՝  
Ասելով, որ ամեն ինչ լավ է  
Եվ հանդարդորեն կսրեղծեր խաղաղությունը վարդի  
Խաղաղությունը՝ դրախսիք: /Quiller-Couch, 1971: 864/

Եյթսի համար խաղաղության՝ դրախտի և դժոխքի, Աստծո և մարդկության (մեղավորների), վերևի և ներքևի ներդաշնակության ապավենը դառնում է Մոդ Գոնը՝ խաղաղության վարդը, որը պիտի միավորեր իրարամերժ աշխարհները: Եյթսը Մոդ Գոնի մեջ փնտրում էր նաև սեփական գոյության «վերևի» ու «ներքևի»՝ հոգևոր-երկնային և զգացական-երկրային ցանկությունների ներդաշնակությունը, դրա համար էլ կնոջը բանաստեղծության մեջ տեսնում ենք սրբացված: Նոյնիսկ հրեշտակապետերը պիտի ծառայեին նրան:

Եյթսի պոեզիայում վարդը միանշանակ խորհրդանիշ չէ: Այն միաժամանակ արտացոլում է այն բոլոր մտքերն ու երևոյթները, որոնք երիտասարդ Եյթսի ուշադրության կենտրոնում էին: «Վարդը գեղեցիկ կինն է, նշում է Մ. Ի. Սեհինենը, կատարյալ սերը, ալքահեսթը (ունիվերսալ լուծիչ, որ փնտրում էին ալքիմիկոսները), պոետական երևակայությունը, հոլանդիան՝ որպես գարնան վերածնված աստվածուիի, լուծված ներհակությունները, քաղաքականությունը՝ որպես թաքնված կիրք, և գեղեցկության հոգին բնության մեջ» /Seiden, 1962: 153-54/: Միևնույն՝ «Վարդը» ժողովածուի մեջ անգամ իրար հաջորդող բանաստեղծություններում վարդը մի դեպքում խորհրդանշում է հոլանդիան («Վարդը ժամանակի խաչի վրա», «Կովի վարդը»), մյուս դեպքում՝ կնոջը՝ Մոդ Գոնին: Եվ սա պատահական չէ, քանի որ Մոդ Գոնը, լինելով բրիտանացի, նվիրել է իր կյանքը հոլանդիայի անկախության գաղափարին, և ոգեշնչել Եյթսին անել նոյնը:

Հեղինե-Մոդ Գոն խորհրդանիշի վերլուծության համար կարևոր է հոմերոսյան հերոսութու այն նկարագրությունը, որը Եյթսը տալիս է մահվանից մեկ տարի առաջ գրված «Երկարատ ճանճը» բանաստեղծության մեջ, որի ամեն տունը նվիրված է մի պատմական կերպարի՝ Հովհոս Կեսարին, Հեղինեին և Միքելանջելոյին հաջորդաբար: Բանաստեղծության մեջ Եյթսը կարևորում է լուսական դերը այս երեք կերպարների գործերի մեջ: Անգամ կենդանիների ձայները պիտի չխանգարեն Կեսարին, երբ նա մտածում է ճակատամարտերի մասին /Yeats, 1966/, նոյն կերպ էլ Միքելանջելոն պիտի աշխատի լուսական մեջ, որպեսզի կարողանա ստեղծագործել: Հեղինեին նոյնպես լուսական պետք Սպարտան թողնելու և Պարիսի հետ Տրոյա գնալու որոշումը կայացնելու համար, և նա միամտորեն կարծում է, թե ոչ ոք չի տեսնում՝ ինչ խառնաշփոթի են պատրաստվում իր ոտքերը: Եյթսը Հեղինեին նկարագրում է որպես «մի մասով կին, երեք մասով՝ երեխա» /Yeats, 1966: 179/: կարծես հավասարելով նրան Մոդ Գոնին, որը «կես առյուծ էր, կես երեխա» գրողի մեկ այլ՝ «Անարժան գովասանքի դեմ» բանաստեղծության մեջ /Yeats, 1966: 33/: Այս համեմատություններն արտացոլում են կործանարար կնոջ նախատիպը՝ հպարտ, և միևնույն ժամանակ անմեղ սեփական գեղեցկության համար, ինչպես երեխան: Հեղինեն «հիխականի» վեցերորդ երգում ասում է, որ Արամազդը (Զևս) իրեն ու Պարիսին դժխտեմ բախստ է վիճակել, որպեսզի «գալոց մարդկանց

մոտ էլ դառնան առակ ու երգ» /Հոմերոս, 1987: 136/: Նույն սկզբունքով Մոդ Գոնը Եյթսի խոսքերին, թե առանց նրա ինքը դժբախտ է, պատասխանել է. «Դու երջանիկ ես, որովհետև ստեղծում ես գեղեցիկ պոեզիա նրանց, ինչն անվանում ես դժբախտություն, և հենց դրանով ես դու երջանիկ: Ամուսնությունը քեզ համար ձանձրալի սիրային կապ կլիներ: Պոետները երբեք չպիտի ամուսնանան: Աշխարհը պիտի շնորհակալ լինի ինձ քեզ հետ չամուսնանալու համար» /Jeffares, 1988: 102/:

Մուսային իր աներկրա նվիրման մասին բանաստեղծը հաստատել է օրագրում կատարած գրառումով. «Լավագույն բաները, որ ես արել եմ և դեռ անում եմ, փորձ են բացատրելու ինքս ինձ նրան: Եթե նա հասկանար, ես գրելու պատճառի պակաս կունենայի» /Hassett, 2010: 88/: Այս մտորումները հիմք են դարձել նաև նույն՝ 1910 թվականին գրված մեկ այլ բանաստեղծության («Բառեր») համար, որում Եյթսը նորից քննարկում է իր մուսայի կողմից հասկացված լինելու խնդիրը.

*Եթե նա այդպես աներ, ով գիտի,  
Ինչ կզբունք մաղից  
Գուցե ես թողնեի աղքաղ բառերը  
Եվ գոհությամբ ապրեի: /Yeats, 1966:32/*

Եյթսը գոհությամբ ապրում էր նաև անհասանելի մուսայի ներշնչմամբ՝ գիտակցելով, որ Մոդ Գոնի ներկա բացակայությունն էր իր սիրո պոեզիայի հիմքում: «Եյթսի կորուստի շեշտադրումը, ինչպես Մոդ Գոնի շարունակական կորուստը, խիստ էական դեր ունի իր ստեղծագործության մեջ և կազմում է իր ռոմանտիզմի տարբերակող առանձնահատկությունը», - գրում է Բ. Արքինսը /Arkins, 2010: 21/: «Անարժան գովասանքի դեմ» բանաստեղծության տողերում պոետը շնորհակալ է լինում նրան «իր ուժը նորացնելու» համար, իսկ իրենց սերը սահմանում որպես «գաղտնիք երկուսի միջև՝ հպարտի և հպարտի» /Yeats, 1966: 33/:

«Կին, որին երգել էր Հոմերոսը» (1910) բանաստեղծության մեջ Եյթսը հպարտ Մոդ Գոնին նվիրած իր կյանքը համարում է «հերոսական երազ»՝ հակադրելով այն ներկայում տիրող մոխրագույնին: Այյուծ-Մոդ Գոնը համեմատվում է կնոջ հետ, որին երգել էր Հոմերոսը, և որը «քայլում էր քաղցր հպարտությամբ՝ կարծես ամայի վրայով քայլեր»: Անգամ մուսայի քայլը Եյթսը մոտեցնում է աստվածային ոլորտին՝ Մոդ Գոնի միֆականությունը դարձնելով ավելի կարևոր, քան նրա ֆիզիկական գոյությունը: «Սիրեցյալը մոռանում է ապրող կնոջը, - Եյթսին մեջբերելով՝ գրում է Բ. Արքինսը, - որ մտածի Հեղինեի մասին» /Arkins, 1990: 82/: Մուսան այս բանաստեղծության մեջ Տրոյան կործանող գեղեցիկի ու ենկարնացիան է: Հեղինեն իր ժամանակի աշխարհի ամենագեղեցիկ կինն էր և Տրոյական պատերազմի պատճառը, ինչպես և Եյթսի աշխարհի ամենագեղեցիկ կին Գոնն էր պատճառը պոետի ողբերգության:

Նա հրեղեն արյուն ուներ  
Երբ երիտասարդ էի ես  
Եվ քայլում էր այնպես հպարտ քաղցրորեն  
Կարծես ամպի վրայով քայլեր  
Կին, որին երգել էր Հոմերոսը  
Այդ կյանքն ու նամակները  
Թվում են երազ հերոսական: /Yeats, 2000: 63/

Ծարունակելով հոմերոսյան խորհրդանշների օգտագործումը «Զկա երկրորդ Տրոյա» (1910) բանաստեղծության մեջ՝ Եյթսը Մոդ Գոնին պատկերում է մուլք երանգներով: Նրան նորից Հեղինեի հետ համեմատելով՝ Եյթսը մեղադրում է Գոնին հեղափոխական Իոլանդիայում տիրող բռնության համար, քանի որ նա «ստվորեցնում էր անգետ մարդկանց ամենաբիրտ ճանապարհները» /Yeats, 2000: 64/: Մոդ Գոնը միշտ ավելի արմատական մոտեցում է ունեցել Իոլանդական հեղափոխությանը: 1916 թվականին նրա ամուսին Զոն Մաքրոյդը մասնակցել է բրիտանացիների դեմ Զատկի կատաղի ապստամբությանը: Եյթսն իր գաղափարներով միշտ դեմ է եղել բռնի ապստամբությանը՝ հետագայում գրելով իր ամենահայտնի բանաստեղծություններից մեկը՝ «Զատիկ, 1916»-ը, որում ժամանակի իրողությունները նա որակում է որպես «սարսափելի գեղեցիկ»: Առաջ բերելով չորս հոետորական հարց՝ Եյթսը նախ մտորում է, թե «ինչու ինքը պիտի մեղադրի նրան իր օրերը վշտով լցնելու համար»: Հետո պոետը կատարում է երկրորդ հարցադրումը. արդյո՞ք Մոդ Գոնը կարող էր խաղաղ լինել, եթե իր գեղեցկությունը «բնական չէր նման ժամանակների համար» /Yeats, 2000: 64/:

Մուսայի հասցեին ուղղված մեղադրանքներից հետո այս երկրորդ հոետորական հարցով Եյթսը սկսում է արդարացնել նրան: «Ուրիշ ժամանակների» Մոդ Գոնի ազնվականությունը թույլ չի տալիս իրեն խաղաղ լինել ներկա ժամանակում: Երրորդ հարցով Եյթսը շեշտադրում է Գոնի անկարողությունը անելու որևէ այլ բան, քան այն, ինչի համար պոետը սկզբում մեղադրում էր նրան.

Ինչու, ի՞նչ կարող էր նա արած լինել՝  
Լինելով այն, ինչ էր:  
Մի՞թե ուրիշ Տրոյա կար նրա համար, որ այրեր: /Yeats, 2000: 65/

Հեղինե-Մոդ Գոնի քայլերի մեղավորը դառնում է այն ժամանակը, որում նա ապրում էր: «Պոետը, գրում է Ոիչարդ Էլմանը, քննադատում է Տրոյայից զուրկ ներկան՝ հերոսականորեն ոյցուավառ չլինելու համար» /Ellmann, 1964: 112/: Նման ժամանակներում Մոդ Գոնը խաղաղ լինել չէր կարող: Նրա խաղաղությունը, Եյթսի բնորոշմամբ գալիս է ժամանակի և տարիքի հետ, ինչպես նա գրում է «Խաղաղություն» բանաստեղծության

մեջ: Այստեղ նոյնպես Մոդ Գոնը պատկերվում է որպես հոմերոսյան ժամանակների ծնունդ, որը հիմա «հերոսի վարձ է դարձել» /Yeats, 1994: 74/: Այս տողով Եյթսը նորից ակնարկում է Գոնի հերոս-ամուսին Մաքրայոին, որը ժամանակին կովել էր հարավաֆրիկյան պատերազմում: Սակայն նրա «վարձը» դառնալով՝ հոմերոսյան գեղեցկուիին Եյթսի մտքերից դուրս չի մղվել: Շարունակելով վերլուծել նրա կերպարը՝ գրողը կրկին ներկայացնում է Գոնի՝ իրեն այդքան գրավող հակադրությունները.

Որքան նուրբ բարձր գլուխ,  
 Այդ ամբողջ խսկությունը գրավչության միջև  
 Ամբողջ քաղցրությունը միջև զորության  
 Խաղաղություն, որ ի վերջո է գալիս  
 Եկավ, երբ ժամանակն իր ծնին էր դիմել: /Yeats, 1994: 74/

Այսպես վարդ-աստվածուիի-Հեղինե Մոդ Գոնն անցնում է խաղաղ վիճակի նաև Եյթսի պոեզիայում: «Կանաչ սաղավարտը և այլ բանաստեղծություններ» ժողովածուի վերջին բանաստեղծությունը՝ «Շագանակագույն պեննին» կարծես ամփոփում է Եյթսի սիրային փնտրությունները.

Ես շնչացի՝ շա՛տ երիտասարդ եմ  
 Հեկո՝ մեծ եմ արդեն  
 Դրա համար մի պեննի զցեցի  
 Որ պարզեմ, թե կարող եմ սիրել: /Yeats, 1994: 79/

Պեննին սկսում է խոսել հեղինակի հետ ու հորդորում է նրան գնալ և սիրել լեղին, եթե նա երիտասարդ է ու գեղեցիկ: Բայց հերոսը «մտածում էր սիրո մասին մինչև աստղերն արդեն փախել էին» /Yeats, 1994: 79/: Ինչպես 1905-ին տպագրված «Մի սիրիր շատ երկար» բանաստեղծության մեջ, Եյթսի սերը «այլևս նորածն չէ» ու նման է հնացած երգի /Yeats, 2000: 61/: Գ. Ս. Փրասերն այս առումով գրում է. «Եյթսն ուներ արմատական, ողբերգական, կոպիտ սխալի զգացում Մոդ Գոնին իր մոտեցման առումով: Այն իմաստով, որ նա հենց սկզբից պիտի դադարեր հապաղել ու նայել ու բանաստեղծություններ գրել, այլ փոխարենը պիտի ֆիզիկապես անմիջականորեն հետամտեր նրան» /Fraser, 1977: 61/: Եյթսն ու Մոդ Գոնը 1908 թվականին, երբ արդեն վաղուց անցել էին «սիրո ժամանակները», Փարիզում մի գիշեր են անցկացնում միասին, որից հետո էլ Գոնը շարունակում է հարաբերություններ չունենալ պոետի հետ: 1916-ին նա վերջին անգամ ամուսնության առաջարկություն է անում Գոնին և մերժվելով՝ մեկ տարի անց, երբ ինքն արդեն 52 տարեկան էր, ամուսնանում է 25 տարեկան Զորջի Հայ-Լիդսի հետ, և պոետի ստեղծագործական կյանքում սկսվում է նոր փուլ, որն ամբողջապես կապված էր իր կնոջ «ինքնարերական գրությունների» հետ:

Ու.Բ. Եյթսի և Մոդ Գոնի երկարամյա հարաբերությունը բանաստեղծի սիրո թեմայով գրված լավագույն ստեղծագործությունների հիմքն է եղել: Իր պոետական ներշնչանքի խորհրդանշների ընտրության մեջ գրողը փնտրում էր իր Գոյության Միասնության՝ ներդաշնակության լուծումը: Վարդը և աստվածային ոլորտից ընտրված խորհրդանշները հակադրվում են կործանարար ուժ ունեցող Հեղինեին, քանի որ իրական կյանքում Մոդ Գոնը Եյթսի համար Հեղինե էր, բայց նա նրան ուզում էր տեսնել խաղաղության վարդի դերում: Մոդ Գոնի խորհրդանշների մեջ կա մեկ կարևոր ընդհանրություն: Ընդունելով մուսայի «հեռու լինելու» կարևորությունը իր բանաստեղծությունների ստեղծման համար՝ Եյթսը ենթագիտակցաբար Մոդ Գոնին պատկերել է այդ հեռավորությունն ու անհասանելիությունը շեշտադրող խորհրդանշներով: Թե՛ Վարդը, թե՛ աստվածուհիները, թե՛ Հեղինեն առաջին հերթին հեռու են ու անհասանելի (վարդի դեպքում դա կարելի է բացատրել փշերի առկայությամբ): Վարդը, որի աստվածային գեղեցկությունը հրամայում էր չմոտենալ իրեն, Հեղինեն, որ «այս աշխարհից չէ», մատնանշում են ներշնչող մուսայի ներկա բացակայության կամ անհասանելիության կարևորությունը պոեզիայի արարման գործընթացում: Նման սիմվոլիկայի ընտրությունը թերևս շառկապվում է այն սկզբունքի հետ, որ երևակայությունն արարում է կորցրած կնոջ շնորհիվ: Սա կարելի է փաստել նաև այն հանգամանքով, որ Մոդ Գոնին «գտնելուց»՝ նրա հետ Փարիզում գիշերն անցկացնելուց հետո Եյթսի պոեզիայում նրա ներկայությունը դադարում է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Arkins B. Greek and Roman Themes in Yeats // *Irish Literary Studies*: Vol. 32; Builders of My Soul. Savage: Barnes and Noble Books, 1990.
2. Arkins B. The Thought of W. B. Yeats. Germany: Peter Lang, 2010.
3. Ellmann R. The Identity of Yeats. New York: OUP, 1964.
4. Fraser G. S. Essays on Twentieth Century Poets. Leicester: Leicester University Press, 1977.
5. Hassett J. M. W. B. Yeats and the Muses. Oxford: OUP, 2010.
6. Jeffares A. N. W. B. Yeats, A new biography, London and New York: Continuum, 1988.
7. Quiller-Couch A. The Oxford Book of Victorian Verse. Oxford: Clarendon Press, 1971.
8. Seiden M.I. William Butler Yeats: The Poet as a Mythmaker. Michigan: Michigan State University Press, 1962.
9. Seward B. The Symbolic Rose. New York: Columbia University Press, 1960.
10. Smith S. W.B. Yeats: A Critical Introduction, Basingstoke: Macmillan, 1990.
11. Yeats W.B. Letters / Edited by Allan Wade. London: Rupert Hart-Davis, 1954.

- 
12. Yeats W.B. Selected Poems. London: Penguin Classics, 2000.
  13. Yeats W.B. Selected Poems and Two Plays of William Butler Yeats. New York: Collier Books, 1966.
  14. Yeats W.B. The Works of W. B. Yeats. Hertfordshire: Wordsworth Editions Ltd., 1994.
  15. Էդոյան Հ. Շարժում դեպի հավասարակշռություն: Երևան: Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, 2009:
  16. Հոմերոս, Իլիական: Երևան, Երևանի համալսարանի հրատարակություն, 1987.

**Г. АРАКЕЛЯН – *Символы Мод Гонна в поэзии У.Б. Йейтса.*** – Музой ирландского поэта и драматурга XX века У.Б. Йейтса была известная националистка Мод Гонн, присутствие которой проявляется в любовных стихотворениях автора. Находясь всегда вдали и отчужденным от своей музы, Йейтс отождествлял ее с розой, богинями и гомеровскими героями. В данной статье рассматриваются многие символы музы Мод Гонн, которые отражают черты ее характера, представленные в творчестве поэта.

**Ключевые слова:** муз, Мод Гонн, роза, Гомеровские символы, Елена

**H. ARAKELYAN – *The Symbols of Maud Gonne in W.B. Yeats's Poetry.*** – The muse, the Beatrice, the Laura of the 20<sup>th</sup> century Irish poet and dramatist W.B. Yeats was the well-known nationalist Maud Gonne whose presence is felt in the love poems of the author. Always being away and alienated from his muse, Yeats identified her with the Rose, goddesses and homeric heroines. The paper examines the many symbols of the muse Maud Gonne, which reflect the features of her character represented in the works of the poet.

**Key words:** muse, Maud Gonne, Rose, Homeric symbols, Helen

**Համեստ ԱՌԱՔԵԼՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ՈՒ.Բ. ԵՅԹՍԻ «ՏԵՍԻԼՔԻ» ԵԶՈԹԵՐԻԿ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ  
«ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍԸ» ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

20-րդ դարի իոլանդացի դրամապուրգ, բանասրեղծ Ուիլյամ Բաթեր Եյթսի սկեղծագործության վրա մեծ ազդեցություն են թողել իր և կնոջ «հնքնաբերական գրությունները», որոնք կապարվում էին հոգի-հաղորդողների ներգործությամբ: Դրանց շնորհիվ ծնվել է գրողի «Տեսիլք» էջոթերիկ աշխարհությունը, որի գետությունը նրա ուշ շրջանի բանասրեղծությունների խորհրդանշների վերլուծության բանալին է: Այս հոդվածում քննարկվում են պոետի սկեղծագործության մեջ առանցքային դեր ունեցող «Երկրորդ գալուսը» բանասրեղծության գաղափարներն ու խորհրդանշները, որոնց հիմքը «Տեսիլք» էջոթերիկ գետությունն է:

**Բանալի բառեր.** Երկրորդ գալուսը, էջոթերիկ գետություն, պարմության փիլիսոփայություն, գալարներ, Մեծ անիվ, հակադրական և առաջնային ժամանակաշրջաններ

Ուիլյամ Բաթեր Եյթսը գալարների, Մեծ անիվի, լուսնի փուլերի, և ընդհանրապես, «Տեսիլք» (1937) մեջ դրված ամբողջ տեսությամբ փորձում էր, ինչպես ինքն է նշում, պատմությանը և այն ամենին, ինչ կատարվում է աշխարհում, տալ «փիլիսոփայական» բացատրություն /Yeats, 1989: 190/: «Տեսիլքում» նկարագրվող տեսության հիմնական խորհրդանիշը, որը Եյթսին փոխանցել էին իր հոգի-հաղորդողները, ընթերցողին ներկայանում է մշակված տարբերակով. Երկու փոխներթափանցող պատվող կոներ կամ գալարներ, որոնք միահյուսված են, բայց միևնույն ժամանակ հակաբնույթ: Այս կոները խորհրդանշում են բոլոր հակադիր երևույթները, որոնք կազմում են իրականությունը՝ թե՛ մեկ անհատի, թե՛ պատմական շրջանի կտրվածքով: «Երկրորդ գալուստը» բանաստեղծության մեջ կոների հակաշրջման հետևանքով առաջացող առաջնային և հակադրական ժամանակաշրջանների տեղափոխության պոետական պատկերումն է: Այս ստեղծագործության խորհրդանշային համակարգի վերլուծության հիմքը նույնպես գրողի էջոթերիկ տեսություններն են:

Հաղորդողները աշխարհաստեղծման, հոգու դատաստանի, մարմնավորումների, Եվրոպայի պատմության մասին տեղեկությունները տալիս էին ամենատարբեր խորհրդանշների՝ կոների, շրջանակների, և այլ պատկերների միջոցով, որոնց ապակողավորումը գրողը սկսել է 1920 թվականից հետո: Իրեն փոխանցված Երկրաչափական սիմվոլիզմի ապակողավորմանն անդրադառնալիս Եյթսը որպես ներշնչման աղբյուր է մատնանշում Էմպեդոկլեսի Սիրո (Love, Concord)՝ միավորման ուժի, և

Պայքարի (Strife, Discord)<sup>1</sup> բաժանման ուժի շրջանակը /Yeats, 1989: 16/, որոնց հարաբերակցությամբ էր փիլիսոփան բացատրում աշխարհաստեղծումը: Եյթսի համակարգում մի կոնը խորհրդանշում է միասնությունը (Concord), մեկը, Աստծուն, օբյեկտիվը, հաստատունը, սերը, օրը, արևը, կյանքը, իսկ մյուսը (Discord)<sup>2</sup> անջատությունը, բազմաթիվը, մարդը, սուբյեկտիվը, փոփոխականը, ցանկությունը, գիշերը, լուսինը, մահը: Եյթսը համարում է, որ սուբյեկտիվն ու օբյեկտիվը հավերժ պայքարի մեջ են միմյանց դեմ. «Սուբյեկտիվը փորձում է առանձնացնել մարդուն մարդուց, օբյեկտիվը վերադարձնում է մեզ ընդհանուրին, որտեղից սկսել ենք» /Yeats, 1989: 53/: Աշխատության նախաբանում գրողն իր հաղորդողների հիմնական առաքելությունը համարում է այն հավաստումը, որ «մարդու բոլոր ձեռքբերումները ծնվում են իր իրական էության հակառակի հետ կոնֆլիկտից» /Yeats, 1989: 11/: Եյթսի պոետիկան հիմնված է հենց «հակասությունների տեսության» վրա, որի համար հիմք կարող է ծառայած լինել նաև Բլեյքի հայտնի «Առանց հակասության չկա առաջընթաց» /Blake, 2004: 181/ միտքը: Ոիշարդ Էլմանը, սակայն, իր «The Identity of Yeats» աշխատության մեջ Եյթսի գալարները չի համարում սովորական տիեզերական հակասությունների խորհրդանիշներ. «Մի գալարի ծայրը մյուսի հիմքն է» /Ellmann, 1964: 153/: Այս առումով Եյթսի համակարգը աղերսակցվում է Հեգելի այն դրույթի հետ, որ յուրաքանչյուր թեզ ենթադրում է հակառակ, կամ, այլ կերպ ասած, յուրաքանչյուր շարժում իր մեջ կրում է իր ավարտի հիմքը, որը պայմանավորված է հետ շարժման գոյությամբ: Այսպես գալարները դառնում են նիցշեյան հավերժական վերադարձի խորհրդանիշները՝ կազմելով Մեծ Անիվի երկու հակառակ բևեռները: «Այս անիվը յուրաքանչյուր ավարտուն շարժումն է մտքի կամ կյանքի», - գրում է Եյթսը /Yeats, 1989: 60/: Մեծ Անիվը բաժանվում է 28 փուլերի՝ լուսնային ամսվա օրերի քանակով, որոնցով անցնում են երևույթները՝ վերջում վերադառնալով առաջին փուլին և այդպիսով վերսկսելով շրջապտույտը: Մեծ Անիվի առաջին փուլը անլուսին գիշերն է, որից սկսվում է ամեն ինչ, իսկ լիալուսինը տասնինգերորդն է: Այս փուլերում մարդկային փոխակերպում չի կատարվում, քանի որ մարդու կյանքն առանց երկու գալար-կոնների պայքարի գոյություն ունենալ չի կարող, իսկ սրանք բացարձակ օբյեկտիվի և բացարձակ սուբյեկտիվի տիրույթներն են: «Մարդը ծգտում է իր հակառակին կամ իր դրության հակառակին, տասնինգերորդ փուլում ծեռք է բերում օբյեկտը, եթե դրան հնարավոր է հասնել, և նորից վերադառնում է առաջին փուլին», - գրում է Եյթսը /Yeats, 1989: 60/:

Ըստ աշխարհակերտման Եյթսյան մոդելի՝ յուրաքանչյուր երկու հազարամյակը մեկ գալաների հակառաջման պատճառով աշխարհում ահոելի հեղաշրջումներ են լինում: Գրողը «Տեսիլքի» նախաբանն ավարտում է Էզրա Փաունդին ուղղված նամակով, որի վերջում առաջարկում է այն տեսլականը, որ յուրաքանչյուր երկու հազար տարին մեկ «աշ-

խարհում ինչ-որ բան է կատարվում, որ դարձնի մեկին սուրբ, մյուսին՝ աշխարհիկ, մեկին՝ իմաստուն, մյուսին՝ հիմար, մեկին՝ վայելուչ, մյուսին՝ գարշելի, մեկին՝ աստվածային, մյուսին՝ սատանայական» /Yeats, 1989: 21-22/: Հնարավոր է երկրաչափորեն չափել աշխարհի ներդաշնակությունը, նժառների շարժումը, և կանխագուշակել «այդ երևույթի» գալու ժամանակը: Սա կապված է Մեծ անիվի ընթացքի հետ, որի մեկ ամբողջական շրջապտույտի տևողությունը հաշվարկվում է չորս հազար տարի, հետևաբար առաջնային (primary) և հակադրական (antithetical) գալարներից յուրաքանչյուրի շարժմանը բաժին է հասնում երկու հազարը, որից հետո առաջնային է դառնում հակադրականը:

Քրիստոնեական շրջանը Եյթսը համարում է առաջնային շրջան. «Մինչև Քրիստոսի ծնունդը կրոնն ու կյանքը բազմատվածային էին՝ հակադրական: Քրիստոսի ծնունդից հետո կրոնական կյանքը դառնում է առաջնային, իսկ աշխարհիկ կյանքը՝ հակադրական – մարդը տալիս է կայսրին իրերը, որոնք կայսրին են» /Yeats, 1989: 192/: Վերջին տողում Եյթսն ուղիղ հղում է կատարում Մատթեոսի ավետարանի այն հատվածին, որում Քրիստոսը փարիսեցիներին ասում է. «Գնացե՛ք, տվե՛ք կայսրինը՝ կայսեր, և Աստծոնը՝ Աստծոն»: Գրողն ակնարկում է երևույթների պատկանելության և գոյության կանխամտածվածությունը՝ այս դեպքում մասնավորեցնելով ժամանակների կանխորոշված լինելը: «Տեսիլի» երկրորդ գրքում լրանի փուլերի մասին (որոնք համընկնում են առաջնային և հակադրական գալարների հետ) խոսելիս Եյթսը մատնանշելով Հեգելին, գրում է. «Նա տեսնում է քաղաքակրթության ամբողջ գործնթացը որպես փախուստ Բնությունից, որը մասամբ հաջողվել է Հունաստանին, և ամբողջապես՝ Քրիստոնեությանը» /Yeats, 1989: 149/: Հակադրելով բնությունն Աստծոն՝ նա շարունակում է. «Երբ Անիվի իմ առաջին մեծ դիագրամը նկարվեց ինձ համար, առաջին փուլից մինչև տասնինգերորդ փուլի միջակայքում գրված էր «Բնություն», իսկ տասնինգերորդից մինչև առաջին միջակայքում «Աստված» էր գրված» /Yeats, 1989: 149/: Բնությունը, աշխարհիկը, «կայսրինը» ապրել է իր ժամանակը մինչև քրիստոնեություն, և մարդն արդեն «կայսրինը տվել է կայսերը»: Եկել է Աստծո՝ առաջնային ժամանակը. «Սերը սկսեց գերակայել աններդաշնակությանը, ցերեկը՝ գիշերվան» /Yeats, 1989: 182/: Գրողն ակնարկում է երևույթների պատկանելության և գոյության կանխամտածվածությունը՝ այս դեպքում մասնավորեցնելով ժամանակների կանխորոշված լինելը:

Եյթսը հակադրական ժամանակները (հակադրական գալարի տիրապետման ժամանակները) համարում էր էքսպրեսիվ, հիերարխիկ, բազմակի և կոպիտ, մինչդեռ առաջնային ժամանակները՝ դոգմատիկ, աստիճանավորված, միավորող, մարդկային, և որ ամենակարևորն է՝ խաղաղ: Գրողի տեսության համաձայն՝ քրիստոնեական շրջանն ավարտվում է առաջնային գալարի շրջապտույտով, և դրան նորից հետևելու է հակադրական շրջանը:

ՊԿՐՊԵԼՈՎ ՈՒ ՊԿՐՎԵԼՈՎ ԸՆԴՀԱՅՆՎՈՂ ԳԱԼԱՐՈՒՄ՝  
 Բազեն չի լսում բազեպանին:  
 Իրերը փշրվում են, կենդրոնը չի պահում  
 Լոկ քառու է արձակված աշխարհում,  
 Արյամբ մթագնած հոսանքն է արձակված, և ամենուր  
 Անմեղության ծեսն է խորպակված:  
 Հավագույներին ամեն համոզմունք է պակասում, իսկ  
 վարագույները  
 Հի են կրոպ սասպիկությամբ: /Yeats, 2000: 124/

Քրիստոսի ծնունդով սկսված ժամանակաշրջանի գալարի պտույտի մեջ Եյթսը վերհանում է բազեի խորհրդանիշը: Դենիս Դոնոհոյուն իր “Yeats” (1971) աշխատության մեջ գրում է. «Ծատ ընթերցողներ ցանկանում են թարգմանել բազեապանությունը հատուկ քաղաքական ենթատեքստով, բայց ես կարծում եմ, որ այն ավելի չարագույժ ազդեցություն ունի, քան մասնավոր՝ մատնանշելով կառավարման կորստի և պաշտոնական կարգի անկման առաջին նշանները» /Donoghue, 1971/: Քաղաքական ենթատեքստն այստեղ կարող էր վերաբերել միայն Իոլանդիա-բազեի ազատագրմանը Բրիտանիա-բազեպանից, սակայն Եյթսն ավելի լայն առումով այս խորհրդանիշով շեշտում է բազեպանի կառավարման կորուստը, որը գալարի շարժման հետևանքով հայտնվել է ներքեւում, իսկ բազեն բարձրացել է վերև, ինչի արդյունքում էլ այլևս չի լսում: «Էականորեն բազեի կապի կորուստը ակնարկում է մարդու առանձնացումը իր բոլոր իդեալներից, որոնք թույլ են տվել իրեն կառավարել սեփական կյանքը՝ լինեն դրանք կրոնից, փիլիսոփայությունից, թե պոեզիայից» /Ellmann, 1964: 259/: Բանաստեղծության երրորդ տողում ամեն ինչ բացատրվում է. կենտրոնն այլևս չի կարողանում պահել և իրերը փշրվում են, քանի որ նոր՝ հակադրական ժամանակները գալարի շարժման հետևանքով դառնում են առաջնային:

Վարահապես ինչ-որ հայրնություն է մոտ  
 Վարահապես մոտ է Երկրորդ Գալուստը:  
 Երկրորդ Գալուստը: Հազիվ դուրս եկան այդ բառերը  
 Երբ *Spiritus Mundi*–ից մի մեծ պատկեր  
 Անհանգստացրեց հայացք. անապատի ավագների մեջ մի դեղ  
 Մի կերպարանք՝ մարմնով առյուծի և մարդու գիտով  
 Հայացրով՝ դարարկ և անգութ, ինչպես արևը  
 Շարժում է իր դանդաղ ազդրերը, երբ նրա շուրջքոլորը  
 Անապատի վրդոված թռչունների սրբերներն են երերում: /Yeats, 2000: 124/

Սկզբնական սկագիր տարբերակում Եյթսն այս բանաստեղծությունը վերնագրել էր «Երկրորդ ծնունդ» /Bloom, 2009: XV/, բայց վերջնական տարբերակում գաղափարը կապվում է Քրիստոսի Երկրորդ գալստյան հետ՝ բանաստեղծության վերջին տողում վերահաստատելով քրիստոնեական աղերսը Բեթղեհեմի պատկերով: Բայց եթե դա «Երկրորդ գալստյան» նկարագրություն է, ապա այն սուրբ Հովհաննեսի «Հայտնության» Երկրորդ գալուստը չէ, եթե հաշվի չառնենք Երկու նկարագրությունների գալուստներին նախորդող աշխարհակրօճանման ընդհանուր տրամադրությունները: Նորման Ջեֆարեսն այս առումով գրում է. «Բազեն մարդու խորհրդանշիչն է՝ ներկա քաղաքակրթության, որը հեռացել է Քրիստոսից, ում ծնունդը հայտնությունն էր, որը Քրիստոնեության սկիզբն էր» /Jeffares, 1968: 203/: Ինչպես բազեն այլևս չի լսում բազեապանին, ժամանակակից քաղաքակրթությունն էլ չի լսում Քրիստոսին:

Քրիստոնեությունը արևմտյան քաղաքարկրթության հիմքն է. այս դրույթից ելնելով՝ Եյթսը առաջնային ժամանակները վերագրում է հենց Արևմտաքին՝ ակնարկելով, որ հակադրական ժամանակը հասնի առաջին փուլին, կամ նոր ժամանակների սկզբին, հակադրական Արևելքը կծնի Արևմտաքին, և ծնված Երեխան, կամ ժամանակը կլինի հակադրական» /Yeats, 1989: 187-188/: Ի դեպ, Արևելք ասելով՝ Եյթսը նկատի ունի ոչ թե Հնդկաստանն ու Չինաստանը, այլ այն Արևելքը, որն ազդել է Եվրոպական քաղաքակրթության վրա՝ Միջին Ասիան, Միջագետքը և Եգիպտոսը: Գուցե դրա համար էլ «Երկրորդ Գալուստում» նոր ժամանակների «Երեխայի»՝ հրեշի խորհրդանշիջը նմանեցված է սփինքսի:

Համոզված լինելով, որ մոտենում է Երկրորդ Գալուստը՝ Եյթսը *Spiritus Mundi*-ից («Երկրի ոգի») մի մեծ պատկեր է տեսնում: Եյթսն իր գրություններում *Spiritus Mundi*-ն սահմանում է որպես «պատկերների ընդհանուր պահեստատոն», որը դադարել է որևէ մեկ անհատի կամ հոգու սեփականություն լինել» /Ross, 2009: 220/: Ոգին կարծես գրողին հուշում է ահագնացող տեսարանը. անապատից Երևում է հրեշի պատկերը՝ հակադրվելով բազեին: Չնայած Ոգու ներշնչած պատկերն արդեն կա, հրեշը դեռ ֆիզիկական աշխարհում չի ծնվել:

Ցիկլային մութ տեսիլքները նորից շաղկապվում են բիբլիական գալստյան հետ, բայց եթե մարդու Որդին «գալիս է Երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով» (Մտ 24: 30), ապա Եյթսի հրեշը՝ դատարկ և անգութ հայացքով, որը խորհրդանշում է նրա այլ ոլորտներից լինելը, կուզը դուրս գցած է սողոսկում դեպի իր ծնունդ.

Նորից մութն է ընկնում, բայց հիմա ես գիտեմ,

Որ քան դարերի քարացած քունը

Խանգարվեց մղձավանջով ճոճվող օրորոցի

Եվ ի՞նչ կոպիկ գազան է, որի ժամն է եկել վերջապես,

Կուգեկուզ քայլում դեպի Բեթղեհեմ, որ ծնվի: /Yeats, 2000: 124/

Քսան դարերը նշելով՝ Եյթսը հիշեցնում է մեկ գալարի շրջապտույտի ժամանակը՝ երկու հազար տարին, որն այս դեպքում սկսվել էր Քրիստոսի ծնունդով: Քարացած քնի մեջ հակադրական գալարն էր, և դրա հետ կապված ամեն ինչ: Առաջնային-քրիստոնեական շրջանում «քնած» անցյալը սպասում է իր վերածնդին:

Վերջում Եյթսը գազանի որպիսությունը, անգամ նրան նկարագրելուց հետո, դնում է հարցական նշանի տակ: «Տեսիլքում» մեկնաբանությունը տրվում է այսպես. «Ես արդեն ասել եմ այն, ինչ կարող էր ասվել: Մանրամասները Տասներեքերորդ Կոնի գործն են, կամ ցիկլի, որը կա յուրաքանչյուր մարդու մեջ, և ամեն մեկի կողմից անվանվում է իր ազատությունը: Անկասկած, քանի որ այն կարող է անել ամեն ինչ և գիտի ամեն ինչ, գիտի՝ ինչ է անելու սեփական ազատության հետ, բայց պահում է գաղտնիքը» /Yeats, 1989: 219-220/: Տասներեքերորդ Կոնը Եյթսի համակարգում արտվյուտի, անանձնական աստվածայինի, Աստծո խորհրդանիշն է: Ռիչարդ Էլմանը նշում է, որ Եյթսը, Աստծուն նման մեխանիկական անուն տալով, տեղ չի թողնում մարդակերպ Աստծո՝ հատկապես քրիստոնեական Աստծո քննարկման համար /Ellmann, 1964: 159/: Աստված նրա մոտ «այն» է՝ առարկայական:

Ներկա առաջնային շրջանին հաջորդող հակադրական շրջանն ուրվագծելուց բացի, Եյթսը նաև անդրադարձել է նախորդ հակադրական շրջանին, որը Քրիստոսի ծննդից առաջ է եղել: «Տեսիլքի» վերջին գիրքը սկսելով 1923 թվականին գրված «Լեդան և կարապը» բանաստեղծությամբ՝ գրողը ցույց է տալիս, որ Քրիստոսի ծնունդով ավարտվել է նախորդ հակադրական շրջանը, որը, ըստ Եյթսի, սկսվել էր Լեդայի բռնաբարությամբ: Զորջին Մելքիորին Եյթսին նվիրված իր 1970 թվականի աշխատության մեջ նշում է, որ պոետը Հեղինեի ծնունդը (Լեդայի բռնաբարությունը), Քրիստոսի ծնունդը և այն, ինչը դեռ պիտի լինի («Երկրորդ գալուստը»), համարում է աշխարհի պատմության երեք գլխավոր ճգնաժամերը, որոնցից յուրաքանչյուրը փոխել է առկա կարգը և բերել նոր քաղաքակրթության շրջան /Melchiori, 1960/:

Այսպես Եյթսը Լեդայի հղիությունը համեմատում է սուրբ Մարիամի հղիության հետ՝ երկուան էլ համարելով պատմական նոր շրջանի սկիզբ: Իզուր չէ, որ Լեդայի և Զևսի լեզենդի մասին «Տեսիլքում» խոսելիս Եյթսն օգտագործում է «ավետում» (annunciation) բառը, որն աղերսվում է Գաբրիել հրեշտակի ավետման հետ: Հունական քաղաքակրթության սկիզբը մերժել էր նախորդ (տրամաբանորեն՝ նորից առաջնային) քաղաքակրթությունը՝ դառնալով դրա «հակաթեզը»: Եյթսը համարում է, որ նոր քաղաքակրթության սկզբի ավետումը եկել է Լեդային: Այդ ավետումը պատկերացնելիս նա «միայն անկյունում թաքնված մի թռչուն և մի կին» է տեսնում /Yeats, 1989: 195/: Թոշունը՝ կարապի փոխակերպված Զևսն է, իսկ կինը՝ Լեդան, և նրանց կենակցման հետևանքով սկսվում է նոր՝ հակադրական շրջանը.

Ցնցումը՝ երանքի մեջ ծնում էր այնպեղ  
Պապը՝ կոպրված, այրվող փանիքն ու աշբարակը  
Եվ Ազամեմնոնին՝ մահացած: /Yeats, 2000: 149/

Այսպիսով, իր «Երկրորդ գալուստը» բանաստեղծությամբ Ու. Բ. Եյթսը ևս մեկ անգամ շեշտադրում է աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների էզոթերիկ հիմքը, որը, ըստ նրա համակարգի, կապված է գալարների շարժման հետ: Գրողն ուրվագծում է նոր՝ հակադրական ժամանակի «Երեխայի» մոտավոր պատկերը, բայց հարցական նշանի տակ՝ մանրամասները թողնելով արտվութին: Իսկ թե երբ է լինելու այս հայտնությունը, կամ Եյթսյան «Երկրորդ գալուստը», նշվում է Լեդի Գրեգորիի օրագրում 1925 թվականի նոյեմբերին կատարված գրառման մեջ, ըստ որի՝ Եյթսի կանխատեսմամբ այն լինելու է «ոչ առաջիկա երկու հարյուր տարում» /Ross, 2009: 222/:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Blake W. The Complete Poems: “The Marriage of Heaven and Hell”. England: Clays Ltd., 2004.
2. Bloom H., Hobby B. Rebirth and Renewal: Bloom's Literary Themes. New York: Blooms Literary Criticism, 2009.
3. Donoghue D. William Butler Yeats. Modern Masters. New York: Viking Press, 1971. // URL: <https://goo.gl/XCDfqT>
4. Ellmann R. The Identity of Yeats. New York: OUP, 1964.
5. Jeffares A.N. A Commentary On the Collected Poems of W.B. Yeats. Stanford: Stanford University Press, 1968.
6. Melchiori G. The Whole Mystery of Art, Pattern into Poetry in the Work of W.B. Yeats. London: Routledge & Kegan Paul, 1960.
7. Ross D.A. Critical Companion to William Butler Yeats: A Literary Reference to His Life and Work. New York: Facts On File Library of World Literature, 2009.
8. Yeats W.B. A Vision: The Revised 1937 Edition. The Collected Works of W.B. Yeats; Volume XIV. New York: Macmillan, 1989.
9. Yeats W.B. Selected Poems. London: Penguin Classics, 2000.

**Г. АРАКЕЛЯН – Эзотерическая теория «Видения» У.Б. Йейтса в стихотворении «Второе пришествие».** – На творчество ирландского драматурга и поэта XX века У.Б. Йейтса в значительной степени повлияли автоматические писания автора и его жены, которые были вдохновленными душами-коммуникаторами. Благодаря этим писаниям была создана эзотерическая работа под названием «Видение». Теория этой книги служит ключом к анализу символики в поздней поэзии Йейтса. В данной статье рассматриваются идеи, основанные на метафизической теории «Видения» и символизм одного из самых значимых стихов поэта под названием «Второе пришествие».

**Ключевые слова:** Второе пришествие, эзотерическая теория, философия истории, спирали, Большое колесо, антитетичные и первичные периоды

**H. ARAKELYAN – The Esoteric Theory of W. B. Yeats's “A Vision” in the Poem “The Second Coming”.** – The works of the 20<sup>th</sup> century Irish dramatist and poet W. B. Yeats were greatly influenced by his wife's and his own automatic writings inspired by soul-communicators. It was thanks to those writings that the esoteric work entitled “A Vision” was created. Its theory serves as a key to the analysis of symbolism in Yeats's later works. The paper examines the symbols and the main ideas of one of the most significant poems in Yeats's works entitled “The Second Coming”. The latter is based on the metaphysical theory of “A Vision”.

**Key words:** “The Second Coming”, esoteric theory, the philosophy of history, gyres, the Big Wheel, antithetical and primary periods of time

**Արմինե ԲԲՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ՇԱՄԱՆԻՉՄԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ  
Թ. ՀՅՈՒՅԻ ԵՎ Թ. ԹՐԱՆՍԹՐՈՄԵՐԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Շամանիզմի դրսությունը առավել ընդգրկուն ուսումնասիրության արժանացավ XX դարում Միջա Էլիադեի կողմից, ում շնորհիվ պոետները իրենց պոետական դեսիլի հանգուցալուծումը գրան շամանիզմի ապաքինման գործնթացում: Հենց այս կերպ են արդահայքում իրենց ներքին հոգեբանական լուծումներն ու աշխարհայացքը սկեղծագործող-շամաններ համարվող պոետներ անգլիացի Թ. Հյուզն ու շվեդ Թ. Ռերանսթրոմերը: Նրանց համար շամանիզմը հոգեկան բավարարվածության հասնելու մի միջոց է, որն էլ նրանց հնարավորություն է գրալիս կերպելու հետաքրքիր բանասրեղծական երկեր: Շամանիզմի մեջ կիրառվող կենդանական սիմվոլներն ու բոլոր ապրիրուսները կարելի է գրնել վերը նշված երկու պոետների բանասրեղծական գարբեր ժողովածուներում:

**Բանալի բառեր.** Շաման, շամանիզմ, աշխարհայացք, ապաքինում, պոետական դրսիլ, շամանական գրանս, կյանքի ծառ, ոգիներ

XX դարասկզբին ազգագրագետների համար խորթ էր կամ էլ ոչ ճշգրտորեն էր օգտագործվում շաման, կախարդ, մոգ, վիուկ և այլ հասկացությունները, քանի որ բավականին բարդ էր բացահայտել այդ աշխարհայացքի տեր մարդկանց, որոնք իրենց մեջ կրում են մոգական և կրոնական ուժեր: Հետագայում այդ տերմինները լայնորեն իրենց տարածումը գտան «քաղաքակիրթ» ծողովուրդների կրոնական պատմության հետազոտություններում: Սակայն որոշ ազգագրագետներ պնդում են, որ դեռևս իին հնդկական, իրանական, գերմանական, չինական և անգամ բարելոյնան շամանիզմի հնարներ են եղել, որոնք սակայն միայն լավագույնս ուսումնասիրվել են XX դարում: Սակայն պետք է ավելացնել, որ չնայած շամանը բավականին նույնացվում է մոգի և կախարդի հետ, այնուամենայնիվ շամանը և շամանիզմը առանձին ուսումնասիրության առարկաներ են: Ցանկալի է, որ շաման և շամանիզմ բառերը սահմանափակվեն իրենց իմաստներով, սակայն միևնույն է շամանը բավականին մոտ է կանգնած մոգին և հերիմին. չէ որ նա և՛ բուժում է, և՛ իրագործում է իրաշք: Շամանը նաև հանդիսանում է հոգիներին կառավարող, հաճախ նրան վերագրվում են նաև քրմի, պոետի և միստիկի հատկանիշները: «Շամանիզմը» իր բուն էությամբ ծագել է սիրիյան և կենտրոնական Ասիայի կրոնական դրսւուրումներից:

Արկտիկական գոտում շամանական հմայությունը (Էկստազը) հանդիսանում է ինքնաբուխ և սահմանափակ երևոյթ, և միայն այս ոլորտում կարող է խոսվել «մեծ շամանության» մասին, այսինքն՝ այն արարողության մասին, որը ավարտվում է խսկական կատալեպտիկական տրանսվ, որի ժամանակ էլ հոգին, ինչպես ընդունված է համարել, հեռանում է մարմնից, և ճանապարհորդում է դեպի երկինք կամ էլ դժոխք: Սուրարկատիկական շրջաններում շամանը՝ արդեն ոչ որպես զոհ տիեզերական ազդեցությանը, չի հասնում իրական ինքնաբուխ տրանսին և ստիպված է թմրամիջոցների կամ դրամատիկական խաղերի՝ «հոգու ճամփորդության» միջոցով կիսատրանս ուժերի կանչել:

Շամանական վիճակին հասնելու համար բնորոշ միջոցներ են հանդիսանում հիվանդությունները, երազները, զմայլանքները, որոնք պարոգեն երևոյթներ են: Երբեմն այդ եզակի հոգեվիճակները վերագրվում են նրան, ինչը համարվում է «ընտրյալ» վերսից, և ծառայում է միայն շամանի համար նոր բացահայտումներ կատարելու միջոց: Բայց ամենից հաճախ հիվանդությունները, երազները կամ զմայլանքները իրենք իրենցով իսկ կազմում են նվիրում, այսինքն՝ սովորական մարդուն վերածում են շամանի, ով էլ ծառայում է ծիսականին:

Հաճախ շամանի կամ հերիմի վարքագծի դրսևորումները էականապիսի և հոգեկան հիվանդությունների ծևով դիտվում է որպես դիմացինին բուժելու և օգնելու միջոց:

Եվ այսպես, շամանության մեջ կարևոր բուժումն է, ինքնատիրապետումը, հավասարակշռությունը, որոնց էլ հնարավոր է լինում հասնել միայն շամանական պրակտիկայով զբաղվելուց հետո:

Իհարկե նման էկստատիկ վիճակից հետո միշտ և ամենուր սկսնակ շամանը և տեսական, և գործնական ուսուցման է անցնում փորձառու վարպետների մոտ: Եվ միևնույն է հենց այդ հոգեվիճակն է համարվում որոշիչ գործոն, որը և արմատապես և կտրուկ փոփոխության է ենթարկում «ընտրյալ» անձի կրոնական կարգավիճակը:

Գերագոյն երկնային մարմնի կատարած դերը, որն առաջանում է անդրիմայական տարածության մեջ, կամ էլ հակառակը, մահացած շամանների ոգիների կամ դևերին վերագրվող իմաստներում, կախված է տարբեր կողմնորոշումներից: Հնարավոր է, որ այդ կողմնորոշումները պայմանավորված են տարբեր կամ էլ անգամ իրար հակառակ կրոնական հասկացություններով: Այսպես թե այնպես՝ նրանք վկայում են երկարատև էվոլյուցիայի մասին, և անկասկած, պատմության մասին, որը այս փոփի ուսումնասիրության ժամանակ կարող է ուրվագծել միայն վարկածների ծևով:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ազգի շամանական տեխնիկան բավականին տարբեր է ծեսերի և արարողությունների առումով: Յուրաքանչյուր ազգ ունի իր շամանական հագուստը, իր շամանական առարկաները, որոնցով էլ կատարվում են հմայությունները: Սակայն կան մի

քանի առարկաներ, որոնք ընդհանուր են բոլոր շամանական տեխնիկայի տիրապետողների համար, և բավականին կարևոր են այդ ակտերի կատարման գործում: Այդ պարագաներից են հայելիները, դիմակները, ուսկորները (կենդանիների), կմախճները, դափերը /Մ. Էլոած, 1998: 54/:

Շամանները այդ տրանսը կատարելու համար շատ հաճախ են օգտվում կենդանիներից, հատկապես ծիերից և եղնիկներից, որոնք հիմնականում համարվում են խորհրդանշական կենդանիներ: Ահա այստեղ էլ դրսեւորվում է անհմայստական ֆենոմենը, որը և առկա է նաև XX դարի անգլիացի պոետ Հյուզի և Նորեյյան մրցանակակիր շվեդ պոետ Ռոմաս Շրանսթրոմերի պոեզիայում: Շամանները օգտվում էին դափերից, որոնք և համարվում էին շամանների «ծիերը»: Դափի և շամանի հագուստների վրա հիմնականում պատկերված է լինում կյանքի ծառը՝ կենդանիներով և թռչուններով զարդարված, որոնց օգնությանն էլ դիմում էր շամանը, որպեսզի թափառեր ողջ տիեզերքում: Կյանքի ծառը շամանի համար պատուհան է բացում դեպի ողջ աշխարհ: Շամանիզմի տեսությանն առավել մոտ է կանգնած Հյուզի «Վոդվո» բանաստեղծական ժողովածուն: «Վոդվո» բանաստեղծական ժողովածուի համանուն բանաստեղծությունն ընթերցելիս Հյուզի հոեստորական հարցերը հուզում են նաև ընթերցողին, և դա է, որ Հյուզին և ընթերցողին միավորում է, և ստեղծագործությունը ստանում է համամարդկային նշանակություն.

Ի՞նչ եմ ես? Այս վայրը ատելով, թողնում եմ տերեւները  
Գետի եզրին, հետևում եմ օդում աննշան բծերին, որոնք գետեզրին են.

Ես մտնում եմ ջուր: Ու՞մ հետ պիտի կիսեմ  
Բաժակով ջուրը, ինչպես նաև մահճակալը, որ վերևում եմ տեսնում.

Ինձ համար գետի հունը շատ պարզ է  
Ի՞նչ եմ անում այստեղ կեսօրին: Ինչո՞ւ եմ համարում, որ

այս գորտը հետաքրքիր է, քանի որ կասկածում եմ, որ  
նրա ներքին գաղտնիքն իմ սեփականն է: Արյո՞ք այս սևազգեստները  
Ինձ ճանաչում են և

Տեսե՞լ ենք իրար նախկինում և արյոք համապատասխան եմ իրենց  
աշխարհին:

Ինձ թվում է, թե  
Ես կտրված եմ գետնից, բայց ոչ արմատից, սակայն գցում են.  
առանց միջադեպի .Ես չունեմ ոչ մի հարց:

Ամրանալով այն ամենին, ինչի միջոցով կարող եմ գնալ առաջ,  
Ինձ, կարծես, ազատություն են տվել  
այս տեղանքի. ուրեմն, ի՞նչ եմ ես (թարգմ.՝ Ա.Բրյանի) (Hughes, 1982: 87):

«Վոդվո»-ում Հյուզը փորձում է ոչ միայն ոգեկոչել էակներին, այլև նրանց շարժող էներգիան: «Նվազարկումներ պարկապղուկի համար» (“Pibroch”) և «Գայլերի ոռնոցը» (“The Howling of Wolves”) բանաստեղծու-

թյունները խաղում են էության հետ՝ ֆենոմենալ դետալները թողնելով ընթերցողի երևակայությանը:

«Փիբրոչ»

Միանման վարվելով ապրողի հետ, մեռնողի,

Ծովը կանչում է ճիշով՝ անհմաստ ու միալար,

Հավանաբար երկնքի հայտնությունից խիստ հոգնած,

Նա արթուն է մնացել, բյուր գիշերներ սուլահար,

Չի ունեցել նպատակ և չի եղել ինքնախաբ:

Քարը նման է նրան: Խճաքարի պես

Բանտված, ոչինչ չկա աշխարհում:

Ստեղծվել է, որ քնի կամ էլ հանկարծ գիտակցի,

Որ միջուկը արևի

Էմբրիոնն է Արարչի:

Նրա վրա՝ պիրկ քամի,

Որ կարող է քարի պես

Զուլվել միայն ոչնչին:

(թարգմ. Ա. Հարությունյան) (Ա. Հարությունյան: 2000: 570)

«Վոդվո» ժողովածուի պատմություններում պատմվող ծեսերն ու իրադարձությունները, անշուշտ, նման են շամանական ծեսերին: Այստեղ ևս շաման է ընտրվում, ով պետք է անցնի բարդ հոգեվիճակային ծեսի միջով, որի շնորհիվ պիտի դեմ առ դեմ կանգնի այն հոգու առջև, ով նրան նոր աշխարհներ պիտի բացահայտի: Ըստ Հյուզի, շամանը մի օր կանչ է լսում և «նա կամ պիտի շաման դառնա, կամ էլ մեռնի» /Hughes, 1994: 58/: Իսկ ահա ըստ Թոմաս Թրանսթրոմերի՝ շամանը միջոց է ներթափանցելու մարդկանց մեջ, նրանց ներաշխարի և նրանց աշխարհների մարդկանց մեջ: Թրանսթրոմերի «Արահետներ» բանաստեղծական ժողովածուն արձարձում է փնտրտութի և այլոց ներաշխարի թափանցելու գաղափարները, ընդ որում, ինչպես Հյուզի մոտ այնպես էլ Թրանսթրոմերի մոտ նկատում ենք ոչ միայն հոգեկան, այլ նաև ֆիզիկական բավարարվածության պահանջ, որը տրվում է փնտրտութի միջոցով: Թրանսթրոմերի այս ժողովածուի «Առաջապահ ուղեկալ» բանաստեղծության մեջ հանդիպում ենք և կենդանական կերպին՝ օձի տեսքով, որը շատ հաճախ հայտնվում է Հյուզի պոեզիայում, և շամանին, ով սկսում է թռչել և միաձուվել կանացի մարմնին:

Վրանում գաղց օդն է գերակշռում. մի մեծ օձ,

Որը այրող թույն և ֆշոցներ է կուլ տվել.

Գարնանային գիշերը միանգամայն լուր է.

Եվ սպասում է բացվող օրվան սառը քարերի մեջ:

Դրսի սառնության մեջ ես սկսում եմ ճախրել,

Ինչպես շամանը. ճախրում եմ դեպի նրա մարմինը,

Բիկինիի շրջանում սպիտակ գծեր կան.

Մենք դրսում՝ արևի տակ էինք: Մամուռը տաք էր:

Ես թռչում էի ջերմ պահերի վրայով,  
Սակայն երկար չկարողացա մնալ.

Նրանք սուլում էին իմ հետևից.

Ես քարերի միջից դուրս սողացի: Այստեղ եմ և հիմա:

Առաքելությունս է լինել այնտեղ, որտեղ պետք է լինեմ:  
(Transtromer, 2006: 116) (թարգմ.՝ Ա.Բրյան)

Ազատության գաղափարը, որն այստեղ առաջ է քաշում Թրանսթրոմերը, հատուկ է շամանին, ով կարողանում է տրանսի միջոցով ճախրել և լինել այն վայրերում, որտեղ իր առաքելությունը պիտի ինքը իրականացնի: Ըստ Թրանսթրոմերի շամանն այստեղ հանդես է գալիս որպես մարդարե, ով ունի իր առաքելությունը մարդկության առաջ, սակայն հանդես է գալիս օձի լրակյաց կերպարի ներքո: Նա չի ֆշացնում, քանի դեռ ժամանակը չէ, նա ծպտված է ամայի մի վայրում, սակայն իր ճիշտ ժամանակին կպոթուկա:

Իսկ ահա Հյուզի «Վողվո» բանաստեղծության մեջ նկատում ենք, որ նա ունի բազմաթիվ հարցադրումներ կապված իր էության հետ, ով շամանի նման կարողանում է ճախրել օդում, սակայն չի գիտակցում, թե ինքը որտեղից է գալիս և ուր պիտի գնա: Բայց մի բան հստակ է. նրան տրվել է ներքին ստեղծագործական ազատություն:

Հստակ կերպով նկատում ենք, որ սևազգեստ մարդիկ այս բանաստեղծության մեջ հոգիներ են, ովքեր փորձում են Հյուզի հետ հարցադրումների մեջ մտնել: Հյուզը այստեղ բնության երևույթների միջոցով ներկայացնում է շամանին, ով առանց վախենալու ջուրն է մտնում և ուսումնասիրում ամեն բան, ինչ թվում է անքննելի, անգամ գորտը, գետի հունը, ապակե բաժակը և այլն:

Նոյն բանն է կատարվում այդ ժողովածուի առաջին պատմվածքով՝ «Անձրևաձի» («The Rain Horse»), որտեղ տղամարդը հետապնդվում է ծիու կողմից և վախից ու բռնությունից է փախչում: Մեկ այլ պատմվածքով՝ «Բերքահավաք» («The Harvesting») ազարակատերը սպանում է ճագարին, սակայն հենց ինքն է վերածվում այդ վիրավոր և մեռնող կենդանուն: «Վերք» («The Wound») պատմվածքում պատմվում է պատերազմում վիրավորված զինվորի մտավոր ճանապարհորդության մասին: Այստեղ կատարվում է նոյն գործընթացը, ինչը տեղի է ունենում շամանների հետ. հոգին անջատվում է մարմնից ուժեղ ֆիզիկական ցավի պատճառով: Համբարձման ինիցիացիան ապագա շամանին թռչելու հնարավորություն է տալիս: Եվ ընդհանրապես, աշխարհում ընդունված է, որ կախարդներն ու շամանները կարողանում են թռչել, և ակնթարթում հաղթահարում են մեծ տարածություններ և երբեմն էլ դառ-

նում են անտեսանելի: Դժվար է որոշել, արդյոք բոլոր մոգերն են կարողանում ապրել զմայլվածության զգացումը այդ դասընթացի ժամանակ, թե դա պարզապես ծիսակարգ է համբարձման ձևով. այսինքն արդյոք նրանք գտել են թոշելու կախարդական ունակությունը արարողակարգի կամ զմայլվածության ապրումի ժամանակ, որը դարձել է նրանց շաման դառնալու վկայությունը: Կարելի է թույլատրել, որ նրանց առնվազն որոշ մասը, ըստ ըրտեյան, ստանա այդ շամանի կոչումը: Շատ զեկուցներում վկայակոչվում է շամանների և կախարդների թոշելու փաստը, սակայն չի նշվում այդ ունակությունը ստանալու միջոցը, և շատ հավանական է, որ այդ լրակյացությունը բացատրվում է շատ աղբյուրների ոչ ճշգրիտ լինելու պատճառով: Չնայած այս ամենին, շամանական կոչման և արարողության շատ դեպքերը հիմնականում և ուղղակիորեն կապված են համբարձման հետ: Ինչպես տեսնում ենք երկինք համբարձվելը հիմնարար դեր է խաղում շամանական արարողակարգում: Շառերի կամ սյան վրա մագլցելու ծեսերը, համբարձման առասպելները և մոգական թոփքը, հմայության համբարձման փորձը, առեղծվածային թոփքները դեպի երկինք և այլն, այս բոլոր տարրերը կատարում են որոշիչ ֆունկցիա շամանական կոչումներում և արարողություններում: Երբեմն այդ պրակտիկայի և կրոնական գաղափարների շարքը թվում է կապված են հին ժամանակների առասպելների հետ, երբ կապը երկնքի և երկրի միջև բավականին հեշտ է եղել: Այս տեսակետից շամանական ապրումները համարժեք են այդ առաջնային առասպելական ժամանակների վերադարձին, իսկ շամանը ներկայացված է որպես արտոնյալ անձ, ով ձեռք է բերում իր համար մարդկության երջանիկ կարողությունը առասպելական ժամանակներից:

Այս բոլոր ստեղծագործություններն ել կապված են շամանական տրանսի հետ և ամբողջությամբ այդ գործընթացների արտահայտություններն են իրենց տարրեր դրսւորումներում:

Հյուզը և Թրանսթրոմերը բավականին տպավորված են եղել Միքեա Էլիադեի «Շամանիզմի տեսության» ուսումնասիրությամբ, և հատկապես մեծ է եղել պուետների զարմանքը ոչ թե Էլիադեի «կրոնի», այլ հմայության վիճակում հոգևոր տարրեր ոլորտների միջև տեղի ունեցող շարժման տեխնիկայի նկարագրության վրա, հատկապես հոգիների և ոգիների միջև, ոեալ իրականության մեջ, պրակտիկ ճգնաժամի պայմաններում:

Հյուզը շամանի վարպետությունն արտահայտել է հետևյալ կերպ. «Շամանն ընտրվում է մի քանի հնարքներով. որոշ շրջաններում, հիմնականում հյուսիսամերիկյան հնդկացիների մեջ, թեկնածուն անցնում է անսովոր արարողությունների միջով՝ կա'մ ենթարկվում է ինքնախարազանման, կա'մ ծոմ է պահում այնքան ժամանակ, քանի դեռ հոգին (հիմնականում որևէ կենդանու) չի ներկայացել՝ դառնալով աշխարհի հետ իր կապը» (Ա. Եգանյան, 2010: 93):

Հարկ է նշել, որ վերոնշյալ շամանական ապաքինման գաղափարներն են հենց դրված այս երկու պոետների ստեղծագործությունների հիմքում: Նրանք շամանական գաղափարների և ատրիբուտների միջոցով ներկայացնում են յուրաքանչյուրն իր պոետական տեսիլը: Հյուզի համար իր պոետական տեսիլը սիրո կորստի, տագնապի և մահվան դեմ դուրս գալու գաղափարների շուրջ է, իսկ թրանսթրոմերի մոտ հանդիպում ենք մահվան հանդեպ վախի ապաքինող էֆեկտին: Այս երկու պոետներն ել հենց իրենց ստեղծագործող-շաման են համարում զուտ այն պատճառով, որ կարողանում են իրենց ստեղծագործությունների միջոցով հոգիների հետ խոսել, շփվել և ընկնել շամանական տրանսի մեջ: Նրանց համար գոյություն ունի ներքին հոգեբանական այլընտրանքային բուժում՝ շամանիզմը, որը մեծապես արտահայտված է նրանց բազմաթիվ բանաստեղծական ժողովածուներում:

Ինչպես մենք նկատում ենք, ապագա շամանի հակումը կարող է կանխորոշված լինել երազներում, հմայության մեջ կամ ել հիվանդության ժամանակ, որի ընթացքում հնարավոր է հանդիպում կիսագերբնական արարածների հետ՝ նախապատերի հոգիների, կենդանիների հոգիների հետ, կամ ել անսովոր երևոյթների արդյունքում. օրինակ՝ կայծակի հարված, դժբախտ պատահար և այլն: Սովորաբար այդ հանդիպումը սկիզբ է դնում շամանի և «հոգիների» միջև «սերտ բարեկամության», որն ել շամանի կարիերայի կանխատեսողն է:

Անհմայիստական կերպարները և տոտեմները, շամանության կարևոր խորհրդանիշները ամենագլխավոր դերն են զբաղեցնում թեղ Հյուզի և Թոմաս Թրանսթրոմերի պոեզիայում: Չնայած բանաստեղծներին դարեր է բաժանում առասպելականությունից, սակայն նրանք անդադար ձգտում են դեահ իրենց անհատական միֆը, առեղծվածը, շամանականը: Անհմայիստական կերպարների միջոցով բանաստեղծներն անընդհատ արտահայտում են մարդու բնականությունը, բնագդներն ու պահանջները և անվերջ բնությանն են ձգտում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hughes T. New Selected Poems. New York: Harper and Row, 1982.
2. Hughes T. Winter Poem: Occasional Prose: William Seammell. New York: Picador, 1994.
3. Transtromer T. The Great Enigma: New Collected Poems. UK: Bloodaxe Books Ltd., 2006.
4. Էլիադե Մ. Շամանիզմ: Архаические техники экстаза. Москва: София, 1998.
5. Հարությունյան Ա. Ընտրանի ամերիկյան և անգլիական պոեզիայի, Երևան, «Ապոլլոն» հրատ., 2000:

- 
6. Եգանյան Ա. Մարդկայինի որոնումը կենդանակերպի աշխարհում (Թեր. Հյուզ), Երևան, 2010:

**А. БРЯН – Трансформация и проявление теории шаманизма в поэзии Теда Хьюза и Томаса Транстромера.** – Теория шаманизма, тщательно изученная культурологом Мирче Элиаде, создала возможность для поэтов нового мифотворчества найти посредством шаманического исцеления объяснение своих поэтических видений. Именно таким образом психологические и личностные проблемы разрешаются у двух известных поэтов – Т. Хьюза и Т. Транстромера. Для них шаманистический транс является своеобразной формой творчества. В поэзии этих авторов часто встречаются животные символы и шаманистическая атрибутика.

**Ключевые слова:** шаман, шаманизм, мировоззрение, исцеление, поэтическое видение, шаманский транс, дерево жизни, духи

**A. BRYAN – Transformation of Shamanism and its Usage in T. Hughes and T. Tranströmer's Poetry.** – The theory of Shamanism thoroughly explored by the culturologist Mircea Elide provided the poets with the opportunity of new mythological design, where through shamanistic healing they could envisage there poetical revelations. Two prominent writers Ted Hughes and Tomas Tranströmer apply this method (shamanic healing) to resolve their own psychological and personal controversies. They view shamanistic trans as an exclusive form of creative art. We can often encounter animalistic symbols and shamanistic artifacts in their poetry.

**Key words:** shaman, shamanism, worldview, healing, poetic vision, shamanic trance, tree of life, spirits

**Արմինե ԲԲՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

## ՆՈՐ ՄԻՖԱՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՖԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

20-րդ դարում գրողների մեծամասնության համար առաջնային դարձավ միֆաստեղծման գաղափարը: Իսկ միֆաստեղծման համար կային բոլոր անհրաժեշտ պայմանները, քանի որ նոյն դարում բազմաթիվ աղեղների և երկու համաշխարհային պատերազմներին զուգընթաց, սրեղծվեցին մի շարք մշակութաբանական, փիլիսոփայական, հոգեբանական գեսություններ, որոնց հիման վրա էլ կառուցվեցին միֆաստեղծման նախադրյալները: Միֆաստեղծմանը ձգվող բանաստեղծներն ու գրողները իրենց սրեղծագործություններում սկսեցին ներառել ոչ միայն այուժեղային ուրույն գծեր և առանձնահարկություններ, այլ դրանցում զեղեղել գեսություններ և համադրել այլ գիտություններ: Կյոդ Լսի Սպրոսը բացադրում է միֆերը որպես խոսքի մի գրեսակ, որի միջջոցով բացահայտվում է տվյալ լեզուն:

**Բանալի բառեր.** միֆաստեղծում, միֆագիրակցություն, կառուցվածքաբանություն, անհարական միֆ, արխահզմ, միֆոպերիկություն, միֆոլոգիա, գետագործություն

Մարդկության պատմության մեջ ամեն ունի իրեն հատուկ անցումային շրջանն ու պատմության այն շրջադարձը, որով ուղեկցվել են գրողները՝ դարձնելով այդ իրադարձությունները հենք իրենց ստեղծագործությունների համար, սակայն ինչ միավորում է բոլոր դարերի գրողներին այն է, որ նրանք մշտապես անդրադառնում են մարդկության ծագմանն ու դրանից առաջ և հետո ստեղծված միֆերին: Միգուցե նրանցից շատերի համար միֆերին անդրադառնալը փախուստ էր իրենց իրականությունից, իրենք իրենցից և իրենց հուզող թեմաներից, սակայն ահա քանաներորդ դարում արդեն նկատում ենք, որ միֆերին անդրադառնալը ոչ թե փախուստ է, այլ վերադարձ դեպի իրականություն, վերադարձ դեպի մարդու էության ու բնության փոխազդեցությանը: Այս հավերժական վերադարձի մասին են խոսել Նիշշեն 19-րդ դարում և էլիոթը 20-րդ դարում, որից հետո քանաներորդ դարի գրեթե բոլոր ստեղծագործողները, ովքեր տեսնելով և զգալով պատերազմների, աղետների և արհավիրքների դառը հետևանքներն ու անդառնալի ցավը, փորձեցին վերադարձ կատարել դեպի նոր կյանք: Կյանք, որը միանգամայն կապված էր բնության հետ, դրանում ապրող և գոյությունը պաշտպանող կենդանիների և բոյսերի հետ, նախնիների շնչի և նրանցում եղած երևույթների հետ, գերբնական ուժերի և զարմանահրաշ իրողությունների հետ:

20-րդ դարի դարասկզբին տեղի է ունենում քրիստոնեական գաղափարների և մշակույթի ճգնաժամ, որը նաև նիշշեականության արդյունքն է: Տվյալ ժամանակաշրջանի գրականությունը՝ Էկզիստենցիալիզմ, մոդեռնիզմ, սյուրռեալիզմ, որդեգրությունը այդ բոլոր դրույթները: Որպես այս ամենի հետևանք մարդկային գիտակցությունը նոր մոդելներ սկսեց որոնել և հավերժական վերադարձի տեսության վրա կառուցվեց միֆի ստրուկտուրալիստական առանցքը:

20-րդ դարում գերմանացի փիլիսոփա Նիշշեն արտահայտեց մի գաղափար, ըստ որի Աստված մեռած է և այլս չկա: Սակայն ըստ մեր ուսումնասիրությունների նա ոչ թե բացահայտ հայտարարում է, որ Աստված պարզապես գոյություն չունի, այլ նկատում ենք մեղադրական աղերս. մարդկությունն է մեղավոր Աստծո չգոյության մեջ: «Ո՞ւ է Աստված, գոչեց նա, ես ծեզ կասե՞մ: Մենք նրան սպանե՞լ ենք՝ դուք և ես: Մենք ամենքս նրան սպանողնե՞րն ենք: Բայց ինչպե՞ս արեցինք մենք այդ: Ինչպե՞ս կարողացանք խմելով դատարկել ծովը: Ո՞վ մեզ սպունգը տվեց՝ ջնջելու ողջ հորիզոնը: Ի՞նչ արեցինք մենք, երբ այս երկիրը արձակեցինք իր արևին կապող շղթայից: Ո՞ւ է երկիրը հիմա գնում: Հեռու բոլոր արևներից: Արդյոք մենք շարունակ ցած չե՞նք գահավիժում: Եվ հե՞տ, մի կո՞ղմ, առա՞ջ, դեպի բոլոր կողմե՞ր: Կա՞ դեռևս վերև ու ներքև: Մի՞թե մենք մոլորված չենք խարխափում, ասես անվերջնական ոչնչում: ...Աստված մեռած է: Աստված մեռած էլ կմնա՛: Եվ մենք ենք նրան սպանել: Ինչպե՞ս սփոփոխենք մենք՝ բոլոր մարդասպաններից ամենամարդասպաններս» (թարգմ. Հակոբ Մովսեսի «Զաստվածների մթնշաղ» 1992, 259-271): Կարող ենք վստահաբար ասել, որ այս գաղափարից հետո նա իր հետագա փիլիսոփայական աշխատություններում զարգացնում է գերմարդու գաղափարը, ով զորեղ է Աստծուց և բոլորից: Ահա այստեղ կարծում ենք, որ գերմարդու նոր հայտնության հետ պիտի որ հայտնվեր նոր կրոն կամ նոր քրիստոնեություն: Ի վերջո Հակաքրիստոսի կերպար ստեղծող Նիշշեն իր գաղափարներով կարողացավ ազդեցություն թողնել և անգամ համոզել շատ գրողների, որ Աստված այլս չկա: Ահա այստեղ առաջ է գալիս արդեն մարդ՝ ինքն իր Աստված կերպարը. Այսինքն, յուրաքանչյուրն ինքն իր Աստվածն է: Նիշշեն հիմնականում քրիստոնեական դոգմաները վերլուծում է և վիճարկում: Նա ներկայացնում է կանոնիզացված գաղափարների ոչնչացումն ի օգուտ անհատականացման: Այս փնտրութիւնը մեջ Նիշշեն զարգացնում է ևս մեկ հայտնի տեսություն՝ «Հավերժական վերադարձի» տեսությունը, ըստ որի ճակատագրի հանդեպ սերը, որն իր մեջ է ներառում դիպվածն ու օերնքը, քառսն ու նպատակը, հավերժական վերադարձի անհրաժեշտություն են ստեղծում:

Այսպես, նախապայմանը դեպի այս վերադարձ հանդիսանում է միֆին և նոր միֆագիտակցությանն անդրադառնալը, նոր անհատական միֆեր ստեղծելն ու դրանցում ապրելը: Այս միֆերն արդեն շատ դեպ-

քերում սերտաճում են պոետական տեսիլքին, որը գտնում է իր արտահայտումը մահվան, սիրո, միայնության, վախի զգացողության միջոցով։ Այս առումով միֆագիտակցությունը կարևոր ասպեկտ է պոետիկ դաշտում, որը հնարավորություն է տայիս պոետին դիտարկել սեփական ես-ի հավերժական փնտրությունը։ Անհատական միֆի իրագործման չափորոշիչներն ու ճանապարհները հասկանալու և հստակեցնելու համար անհրաժեշտ ենք համարում անդրադարձ անել միֆ կոնցեպտի ստեղծմանը և կիրառմանը։

Ըստ տիպաբանական մոտեցման՝ միֆի ուսումնասիրությունը և գեղարվեստական գրականությունը ճանաչողության լրիվ իրարամերժ ծներ են, որոնք բոլորովովին այլ կերպ են տեսնում, նկարագրում և ընկալում իրականությունը, սակայն այս ամենի հետ մեկտեղ երկուսն էլ գոյություն ունեն զուգահեռաբար՝ տարբեր ժամանակներում առավել կամ նվազ չափով վերածվելով իրականության։ Միֆ և գրականություն փոխհարաբերության խնդիրը դիտարկել է դեռևս հնագոյն ժամանակներից, և դեռ շարունակվում է պահպանվել տեքստերի բովանդակային առանձնահատկություններն ուսումնասիրելիս։ Ըստ այդմ՝ տարբերակում ենք միֆական պատումներ և կենցաղային առօրեական պատումներ, որոնք թե՛ կառուցվածքային, և թե՛ բովանդակային հմաստներով էականորեն տարբերվում են իրարից։ Հնագոյն միֆական տեքստերում առկա է ժամանակի և տարածության ցիկլիկ բնույթը, բովանդակային առումով դրանք սերտորեն կապված են տիեզերաստեղծմանը, մարդաստեղծմանը, ինչպես նաև աստվածներին, կիսաստվածներին և ունեն արդեն արարողակարգային բնույթ։ Եվ ահա հնագոյն միֆերին բնորոշ բոլոր տիպաբանական առանձնահատկությունները իրենց դրսնորումն են ունենում քսաներորդ դարում՝ նպաստելով նոր միֆաստեղծմանն ու միֆագիտակցմանը։ Հնագոյն միֆերի սյուժեները դառնում են հիմնական թեմաներ, որտեղ սակայն կենդանական սիմվոլների դիմակի ներքո քողարկված է մարդը՝ իր ողջ ֆիզիկական էության և հոգական ապրումներով։ Տպավորություն է ստեղծվում, որ քսաներորդ դարում հնագոյն և կենցաղային միֆերը միաձուված են, իսկ մշակութային քրոնոտոպը՝ խախտված։

Միֆականացումը անշուշտ առավել ակնհայտ է դառնում Մոդեռնիզմի ժամանակաշրջանում, սակայն դրա արմատներն առավել վաղ են ձգվում՝ մինչև 19-րդ դարը։ Գրականության և գրաքննադատության մեջ առասպելականացումը եկավ փոխարինելու 19-րդ դարի Ռեալիզմին։ Գրական միֆականացման պարագայում գերադասում է հավերժական գաղափարականությունը, անվերջ կրկնվող միֆական կերպարներին՝ տարբեր «դիմակների» ներքո, որոնք նշանակում են, որ գրական և առասպելական հերոսները կարող են խաղալ բազմազան դերեր և փոխարինվեն տարբեր կերպարներով։

ժամանակակից գրականության մեջ միֆի վերածնունդը մասնավորապես հիմնված է «կենսական» սկզբունքների վրա, որոնք առաջարկվում էին Նիցշեի և Բերգսոնի փիլիսոփայություններում, Վագների արտասովոր երաժշտական փոխազդեցության հնչյուններում և Ֆրեյդի ու Յունգի հոգեվերլուծական տեսություններում: Այս ամենի հետ մեկտեղ նոր շունչ տրվեց առասպելին՝ մարդաբանական մոտեցմամբ, ինչպես արեցին Ֆրեյգերը և Մայինովսկին: Ըստ նրանց ուսումնասիրությունների, առասպելը անգամ համարվում է ծիսականից առաջացած երևույթ:

20-րդ դարը որպես մարդկության կործանարար դար, որպես մարդու ոգու և հոգեկան աշխարհի օտարման, անկման և ոչնչացման ժամանակահատված, պահանջում էր բացառապես միֆոպետիկություն, որը կարողանար հեղինակներին ուղղորդել դեպի նորից ապրելու և արարելու, բնությանը մերձենալու և մարդկային հոգու բացահայտելու դժվարին ճանապարհը: Նրանք վերստին ապրելու ցանկությունը արտահայտեցին միֆի տարր հանդիսացող առասպելներին անդրադառնալով և դրանց մեջ գտնելով կյանքի սկզբը, որն էլ կապվում էր անմիջապես բնության և դրանում առկա երևոյթների հետ:

Առասպելը մեզ ցույց է տալիս, թե ինչ կերպով է իրականությունը, ի շնորհիվ գերբնական ուժերի տարաբնույթ դրսևորումների, հասել իր կատարելագործմանն ու իրականացմանը:

Քսաններորդ դարի միֆագիտակցական մտքի ընկալմանը նպաստել է դեռևս տասնիններորդ դարի կեսերին արված ուսումնասիրությունները: Այս ժամանակահատվածի ուսումնասիրություններում միֆը դիտարկում էին որպես ծախողված կամ արխաիկ մտքի դրսևորման մի ծև, որը հաճախ նկարագրվում էր նաև որպես ժամանակակից գիտության պարզունակ կրկնություն: Օրինակ, անգլիացի մշակութաբան Թեյլորը միֆը բնորոշում էր որպես գրական բացատրության մի փորձ, որը տրվում է բնության երևույթներին: Մարդկության վաղ շրջանում նրանք ի վիճակի չեն բացատրել անդեմ բնության օրենքները և հետևաբար այս ամենը հանգեցրեց նրան, որ մարդիկ սկսեցին հոգիներ փնտրել անգամ անշունչ առարկաների մեջ, այսպիսով հող նախապատրաստելով անհմիզմին: Ըստ Թեյլորի, մարդկային միտքը էվոլյուցիայի է ենթարկվել զանազան փուլերի միջոցով, սկսելով առասպելաբանական գաղափարներից և աստիճանաբար առաջընթաց ապրելով դեպի գիտական գաղափարները: Թեյլորը միֆը դիտարկում է որպես միջոց, որը բացահայտում է աշխարհը: Նրա համար միֆի մեջ ծիսականը երկրորդական տեղ է զբաղեցնում ճիշտ այնպես, ինչպես տեխնոլոգիան գիտության մեջ: Տեխնոլոգիան հանդիսանում է գիտության գործիքը, իենց այդպես էլ ծեսն է միֆի համար (Segal, 1998: 14): Իհարկե, հարկ է նշել, որ ոչ բոլոր գիտնականներն են կիսում այս կարծիքը: Օրինակ ֆրանսիացի փիլիսոփա Լուսիեն Լեվի Բրուիլը կարծում է, որ «պարզունակ մտածողությունը մարդ-

կային մտքի պայման է, այլ ոչ թե պատմական զարգացման փուլ» /Mache, 1992: 8/:

Գերմանացի գրող Մաքս Մյուլլերի կարծիքով էլ միֆը լեզվամտածողության ախտն է: Նա շահարկում է այն միտքը, որ միֆերը առաջանում են ի շնորհիվ իին լեզուներում վերացական գոյականների բացակայության, ինչպես նաև չեզոք սեռ չունենալու նախապայմանով: Մարդածին ոճական հնարքները հիմնականում գրականության մեջ էին դրսևորվում, որն էլ տանում էր նրան, որ բնության երևույթները իրականում գիտակական (բանական) էակներ էին կամ էլ աստվածներ:

Միֆաստեղծման պատմական դինամիկան տարրալուծվում է հասարակության աճի դինամիկայի մեջ՝ (հնագոյն միֆերից մինչև արդի սոցիալական միֆերը) առաջացնելով միֆագիտակցման լուրջ մակարդակ, որն էլ իր հերթին բխում է արխահիկ միֆերի ճանաչողական էվոլյուցիայից:

Միֆաստեղծման և միֆագիտակցման ուսումնասիրման առաջին նախապայմանը հանդիսանում է այն, որ կարողանանք հասկանալ հնագոյն միֆերի անկման, դրանց դրսևորման դարձարման դրդապատճառները, ինչպես նաև դարեր հետո դրանց վերահանումը և կիրառման պատճառները: Նոր միֆաստեղծման տեսական պլատֆորմը սկզբնավորեց Լեվի Ստրոսի ստրուկտորալիստական տեսությունը:

Մեծ է նաև ֆրանսիացի անթրոպոլոգ Լևի Ստրոսի դերը 20-րդ դարի գրականագիտական և լեզվական նվաճումներում, ով համարվում է ժամանակակից ստրուկտորալիզմի նախահայրը: Նա նոյնպես առաջ է քաշում առասպելաբանական տեսության իր տեսակետը, ըստ որի նա չի համաձայնում Յունգի արքետիպերի տեսության միջոցով առասպելաբանության փոխանցումը և կարծում է, որ միֆական երևակայական պատկերացումները առաջին հերթին անհատի մոտ առաջանում են հասարակության մեջ, որն էլ փոխանցվում է սերնդեսերունդ: Լեվի Ստրոսը առավել կողմնակից է միֆի ազգամշակութային ասպեկտի հետ, որը մեծապես ազդում է անհատի և նրա շրջապատի ծևավորման վրա, այլ կերպ ասած՝ խորհրդանշությունը ոչ թե առարկաների և վիճակների տիրութում է, այլ առարկաների և մարդկանց հարաբերություններում: Սա բավականին տարբեր մոտեցում է առասպելաբանության տեսության վերաբերյալ: Ըստ Լեվի Ստրոսի՝ առասպելը միաժամանակ տարաժամանակյա պատում է, որն ամրագրում է պատմական անցյալը, և միաժամանակ բացատրում է ներկան և անգամ ապագան /Meletinsky, 1998: 59/:

Ե՛վ տարաժամանակյա, և՛ համաժամանակյա պատումները հանդիպում են միմյանց, որտեղ տարաժամանակյա պատումը զարգացնում է սյուժեն, իսկ համաժամանակյա պատումը բացահայտում է սյուժեի իմաստը: Չնայած Լեվի Ստրոսն ուսումնասիրում է առասպելի և՛ շարահյուսական, և՛ ծևաբանական կողմերը, սակայն նա առավել կենտրոնանում է մտքի կառուցվածքի, քան թե պատումի շարահյուսության վրա:

Լսի Ստրոսը բացահայտում է առասպեկի ընդհանուր էությունը երկու ճանապարներով: Առաջին դեպքում նա մեզ է ներկայացնում որևէ միֆոլոգիական սյուժեի ներքին տրամաբանական կապվածությունը. օրինակ է բերում Հյուսիսային Ամերիկյան հնդկական միֆը, երբ կաթ տվող կամ կերակրող կինը ուտում է մի ծուկ և մյուսը պահում, որ հետո ուտի, նույնիսկ երկրորդ էպիզոդում նա սպանում է մի հերոսի և կենդանի թողնում իր եղբորը: Այստեղ երկու դրվագներում էլ կա ներքին տրամաբանական կապվածություն: Երկրորդ դեպքում Լսի Ստրոսը փորձում է ապացուցել, որ միֆերը երկու էականորեն տարբեր սյուժեները սահուն կերպով միացնում են իրար: Այս դեպքում էլ նա օրինակ է բերում, երբ մահկանացուն ամուսնանում է աստղի կամ էլ որևէ բոյսի հետ: Եվ հետագա այուժեում մարդկային կյանքը և բուսականությունը սերվում են միմյանց: Թեմատիկ և շարահյուսական միությունը արդարացված է առասպելում, չնայած երեմն կարող է տարօրինակ սյուժե ունենալ, սակայն այն միշտ տրամաբանական է և խորհրդանշական:

Հարկ է նշել նաև, որ հենց Լսի Ստրոսի կողմից է առաջարկվում նաև առասպելում առկա ուացիոնալ կապը ինցեստի և առեղծվածի միջև, ինչպես օրինակ Էդիփի առասպելում և մի շարք այլ բանահյուսական պատումներում: Լսի Ստրոսի հիմնած ստրուկտորալիզմի գաղափարների շնորհիվ առավել հեշտ եղավ ուսումնասիրել առասպելը որպես կառուց, ծև և բռվանդակություն, այլ ոչ միայն դիտարկել որպես ժամանակակից գրականություն: «Կառուցվածքաբանության» (ստրուկտորալիզմ) տեսությունը և միֆերը ուղղված են դեպի հավաքական և անհատական մտածողությունները, նշանագիտական և ազգային նյութական կառուցվածքները: Իսկ ժամանակակից գրականությունն առավել ուղղված է միայն անահիտի ձևավորմանը և այնքան էլ չի կարևորում հավաքականի ուժն ու նշանակությունը: Այնուամենայնիվ, 20-րդ դարի մեծամասամբ ուսումնասիրողները միայն մեկ նպատակ էին հետապնդում. բացահայտել անձի ներքին առասպելը, որը ձևավորվում է հասարակության ներքին և արտաքին ազդակներից, ուսումնասիրել այդ առասպելի դրսուրումը, որը գերմարդկային ուժերի և ժառանգական երևակայական պատկերների արդյունքն է:

Լսի Ստրոսը բացատրում է միֆերը որպես խոսքի մի տեսակ, որի միջոցով բացահայտվում է տվյալ լեզուն: Նրա աշխատությունը միֆոլոգիայի կառուցվածքաբանության տեսություն է իրենից ներկայացնում, որը ձգտում է բացատրել, թե ինչպես են ֆանտաստիկ և կենցաղային հեքիաթները միանման կերպով արտահայտվում, անկախ մշակութային բազմազանությունից: Նա այս երևույթը բացատրում է նրանով, որ ինքը վստահ էր, որ չկա միֆի մի «վավերական» տարբերակ, այլ բոլոր միֆերը միևնույն լեզվի տարբեր դրսուրումներն են: Հենց այս պատճառով էլ Լեվի Ստրոսը միտված էր գտնել միֆի հիմնական տարրերը, որոնք նա անվանում էր միթեմներ: Լսի Ստրոսը միֆի յուրաքանչյուր տարբերակը

ապակողավորում է նախադասությունների միջոցով, որոնք բաղկացած են ենթակայի և գործառույթի հարաբերակցությունից: Միևնույն գործառույթն ունեցող նախադասությունները ստանում են միևնույն թիվը (եզակի կամ հոգնակի) և կապակցվում են իրար: Ահա հենց սրանք էլ միթեմներն են /“The Journal of American Folklore”, 1955: 428-444/:

Ըստ Լսի Ստրոսի, նախնադարում ապրող մարդը աշխարհը պատկերացնում էր երկու հակառակ թևեռներում. Տարածական առումով վերև, ներքև, հեռու, մոտիկ, աջ, ձախ, և ժամանակային՝ երկար ժամանակ առաջ, վերջերս, երեկ, այսօր, զգայական՝ սառը, տաք, փափուկ, կոշտ, թաց, չոր, ձայնային առումով՝ կամաց, բարձր, տեսողական՝ տեսանելի և անտեսանելի: Ահա հենց այս հակադրությունների գիտակցումով էլ պայմանավորված են հնագոյն միֆերի առաջացումը: Լսի Ստրոսը պնդում է, որ կենցաղային նման հակադրություններն էլ ծնում են մարդու ծագման, մահվան, զգայական միֆերը:

Լսի Ստրոսի կառուցվածքաբանական վերլուծությունը բացառապես հիմնված է միֆոլոգիական նյութի ուսումնասիրության վրա: Յակորսոնի հետ համատեղ Լեվի Ստրոսը սկսում է ուսումնասիրել այն հակադրությունների ցանկը, որոնք կերտում են ստրոփական, լեկսիկական և ոճական մակարդակի ստեղծագործությունները: Լեկսիկական հակադրումների մեջ էին սիրահարներ-գիտնականներ, տուն-տիեզերք, կյանք-մահ գաղափարները /Lévi-Strauss, 1963: 65/:

Այն, ինչ համապատասխանում է հնագոյն և ժամանակակից միֆերի էռությանը այն է, որ միֆերը հասարակության կառուցվածքային գաղափարային մասն են կազմում, որոնք օգտագործում են միֆոլոգիական ստրուկտուրաները և արքետիպերը որպես պրազմատիկ նպատակ. մարդն ինքն է կառուցում սոցիալական իրականությունը և այդ ամենի կենտրոնում սուբյեկտիվ և գաղափարային, ոչ իրական կերպարներին է առաջ բերում:

Արվեստում և գրականության մեջ 20-րդ դարի աղետների և առաջացած խնդիրների դեղատումը դարձավ առասպել կերտելու սեփական փորձերը: Բոլոր հեղինակները, ովքեր կարողացան կերտել և նորից ստեղծել միֆեր ու հեքիաթներ, արդեն կարողացան օգտվել նաև մի շարք ուսումնասիրողների և հոգեբանների աշխատություններից, դրանց միջև զուգորդումներ անցկացնել, համաձայնել կամ էլ մերժել նրանց տեսակետները: Նրանք հնարավորություն ունեին ոչ միայն ստեղծել սյուժե և բովանդակություն, որը որևէ ազդակ կհաղորդեր ընթերցողներին, այլ կարողացան բացատրել հերոսի և գրքի մյուս կերպարների վարքագծերը՝ ենելով ֆրեյդի և Յունգի հոգեբանական տեսակետներից, բացահայտել որոշ խորհրդանշիչներ և պատկերներ՝ օգտվելով ֆրեյզերի, Ֆրայի, Քեմփերի աշխատություններից, ընթերցողին ներկայացնել ծիսականը և ինիցիացիվ իրադարձությունները էիհադեհ և Մելիտինսկու մշակութային ուսումնասիրություններից:

Ինչ խոսք 20-րդ դարի գրականության համար մեծ նվաճում էր Լեվի Ստրոսի ստրուկտուրալիստական տեսությունը: Այն հատկապես նպաստեց նոր միֆաստեղծման և միֆագիտակցական մտքի առավել լայն դրսևորմանը, որը անհատական միֆ ստեղծող հեղինակներին մտածելու տեղիք տվեց կենցաղային, սոցիալական և զգայական միֆերի վերաբերյալ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Mache F. B. Music, Myth and Nature or the Dolphins of Arion. London: Routledge, 1993.
2. Meletinsky M. The Poetics of Myth. London: Routledge, 1998.
3. Segal R. A. The Myth and Ritual Theory: an Anthology. Malden, Mass.: Blackwell Publishers, 1998.
4. The Journal of American Folklore, vol. 68. No. 270, Myth; A symposium (October-December), American Folklore Society, 1955.  
URL: <http://www.jstor.org/stable/i223599> (ստուգված՝ 15.02.2018թ.)
5. «Զատուվածների մթնշաղ» թարգմ.՝ Հակոբ Մովսեսի - Երևան: Ապոլոն, 1992.

**Ա. ԲՐՅԱՆ – *Новое мифотворчество как результат структуралистического миропонимания.*** – Идеи миротворчества в XX веке стали основополагающими для большинства авторов. Все необходимые предпосылки были созданы временем для возникновения и развития идей мифотворчества. Мировые войны, ряд цивилизационно-культурных и психологических теорий способствовали идеям мифотворчества. Писатели XX века рассматривают возможность параллельных сюжетных линий и междисциплинарных подходов. Так, Клод Леви-Стросс представляет миф как своеобразный словесный дискурс, посредством которого раскрывается структура языка.

**Ключевые слова:** мифотворение, мифопонимание, структурализм, личный миф, архаизм, мифопоэтика, мифология, теория

**A. BRYAN – *New Mythmaking as a Structural Mythic Result.*** – Vast majority of authors in the XX<sup>th</sup> century appeal to the theme of new mythmaking. All necessary objectives have already existed for the development of the theory of mythmaking during this century. World Wars, cultural environment and psychological theories were the huge background for the ideas of new mythmaking. XX<sup>th</sup> century authors present the idea of parallel plots and inter-textual approaches. According to XX<sup>th</sup> Claude Lévi-Strauss presented the myth as a type of language discourse through which the structure of the language revealed.

**Key words:** mythmaking, realization of myth, structuralism, private myth, archaism, mythopoetic, mythology, theory

**Լուիզա ԳԱՍՊԱՐՅԱՆ**  
ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտ

**ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ Ն ԴԱՐԻ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Սույն հոդվածում քննության են առնվում իրակությունների թարգմանության խնդիրները իհնգերորդ դարի պարմագրական գրեստերում, մասնավորապես Ազաթանգեղոսի և Մովսես Խորենացու «Պարմութիւն Հայոց» երկերում: Հարկ է նշել, որ իրակությունները առանձնակի դժվարություն են սպեշտում թարգմանության ընթացքում և պահանջում են գրեստական և գործնական խորքային քննություն թարգմանչի կողմից: Հետազորության համար հիմք են ծառայել արևմտյան և արևելյան գրեստարանների դրույթներն ու պարմագրական գրեստերի բնագրերը և դրանց անգլերեն և ռուսերեն թարգմանությունները:

**Բանալի բառեր:** պարմագրություն, թարգմանություն, պարմական իրակություն, Մովսես Խորենացի, Ազաթանգեղոս

Դեռևս անտիկ ժամանակներից թարգմանական գործունեությունը հուզել է տեսարաններին և փիլիսոփաներին, որոնք փորձել են ձևավորել թարգմանական արվեստը մեկնաբանող օրինաչափություններ, որոնցից էին Հերոնոտոսի “Histories, mid-5th B.C.”, Քվինթիլիանի “Institutio oratoria, 96 C.E.”, Կիկերոնի “De Oratore, 55 B.C.”, Հորացիոսի “Ars Poetica, 20 B.C.”, Ավգուստինի “De doctrina Christiana, 428” աշխատությունները: Այսօր էլ, որպես ազգային մշակույթի կարևոր բնագավառ՝ թարգմանության գործունեության խորքային ուսումասիրությունը լեզվաբանության և գրականագիտության առանցքում է, որի կարևոր խնդիրներից մեկն է համարժեքության սկզբունքների ձևավորումը և գիտականորեն փորձարկված մեթոդների մշակումը:

Մեր հետազոտական ուսումնասիրության մեջ համարժեքության խնդիրը համակողմանիորեն քննության է առնվում ու պարզաբանվում հինգերորդ դարի պատմագրության բնագավառում, մասնավորապես՝ Ազաթանգեղոսի և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկերում և դրանց անգլերեն և ռուսերեն թարգմանությանների համեմատությամբ (անգլերեն թարգմանություն Ռ. Շոմսոնի – M. Khorenatsi, 1978/2006, Agatangelos, 1976, ռուսերեն թարգմանություն Գ. Սարգսյանի – M. Xorenatsi, 1990, Ք. Տեր-Դավթյանի և Ս. Արևշատյանի – Agatangelos, 2004):

Այս թարգմանությունների լույսի ներքո փորձ է արվելու ուսումնասիրելու պատմական իրակությունների փոխակերպությունը:

Պատմական իրակությունները՝ որպես ժողովրդի մտածողության ինքնատիպ դրսևորում, կարող են խոչընդոտ ստեղծել թարգմանության համարժեք փոխակերպության համար, քանի որ իրակությունները կամ իրույթները պատմագրության մեջ ունեն տվյալ դարաշրջանով պայմանավորված մշակութային լիցք, որոնք արտացոլում են ազգի պատմական արժեքային համակարգը և ճանաչողության գործընթացը /Cronin, 2006/:

Պատմական իրակությունների համարժեքության խնդիրը դեռևս համապարփակ լուծում չի ստացել, քանի որ այս միավորները որոշակի սոցիալ-պատմական դարաշրջանի արդյունք են և իրենց խորքում խտացնում են տվյալ դարաշրջանի պատմական կոլորիտը: Այստեղ կարևորվում է տարածաժամանակային գործոնը և դրանով պայմանավորված թարգմանական սկզբունքների մշակումը /Լատաշև, Սեմենով, 2005/: Բանն այն է, որ թարգմանիչը գտնվում է ժամանակային և սոցալ-պատմական մեկ այլ միջավայրում և նրա առանցքային խնդիրներից է կատարել համարժեք թարգմանություն՝ տվյալ դեպքում ելնելով հինգերորդ դարի պատմական իրակությունների իմաստարովանդակային առանձնահատկություններից, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ տալով մանրազնին ծագումնաբանական մեկնաբանություն ծանոթագրությունների մեջ:

Հարկ է նշել, որ Խորենացու և Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկերի հիմքում պատմականության սկզբունքն է, որտեղ պատմական դեպքերը քննվում են տեղի ու ժամանակի կոնկրետ պայմաններում /Զրբաշյան, Մահշանյան, 1980, Սարգսյան, 1991, և այլն/:

Ազաթանգեղոսի, Մովսես Խորենացու, և դրանց ռուսերեն, անգլերեն թարգմանական տեքստերի համեմատությամբ բացահայտվում են մի շարք պատմական իրակություններ, որոնք թարգմանվում են իմաստարովանդակային սկզբունքի համաձայն կամ հաճախ նաև գրադարձությամբ:

Բերենք Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկի պատմական իրակությունների անգլերեն և ռուսերեն թարգմանությունների համեմատությունը:

...Զի թէպէտ և էր Խոսրովու և դեպան արարեալ, զի իրեանց տոհմայինը ի թիկունս եկեսցեն և նոցա ընդրէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն, անտի սմա ծեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, յայնմ մարզէ և յիրեանց ի բուն աշխարհէն և ի քաջ ազգաց և ի մարտիկ զօրացն զի ի թիկունս հասցեն. սակայն տոհմը և ազգավետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր (էջ 38):

...And although Khosrov sent an embassy so that his relatives would support him with his own kingdom oppose (the Persian), and that there would also come to his aid (contingents) from the regions of the Kushans, brave and valiant armies both from that area and thier own land, yet his relatives, the cheifs and princes and leaders of the Perthians paid no heed (p. 39)

...несмотря на это, Хосров отправил к ним посланника, дабы (убедить) соплеменников выступить с тыла и подняться против царства Арташира и оттуда со стороны кушанов протянуть ему руку (помочи), храбрыми племенами и боевыми дружинами прикрыть его тыл с той стороны, с их исконной страны. Однако парфянские роды и вожди племен, нахарары и родоначальники власти Арташира, вместо того, чтобы (предпочесть) власть своего рода и братство (ст. 30).

Համատեքստում ներկայացված է, որ Խոսրովը ակնկալում էր իր ազգակիցների աջակցությունը, այդուհանդերձ նրա ջանքերը զուր էին: Անգլերեն թարգմանության մեջ լրումը, *ազգապետը, նախարարն, նահապետը* – *relatives, the chiefs and princes and leaders* պաշտոնական աստիճան պարունակող պատմական իրակությունները թարգմանվել են ըստ իմաստաբովանդակային սկզբունքի, որոնք, թեև չեն արտացոլում բնագրային իրակությունների ազգամշակութային լիցքը, այդուհանդերձ փոխանցում են բնագրային տարրերի հմաստային դաշտը: Ռուսերենում էլ վերոհիշյալ իրակությունները կարծես թե լիարժեք են փոխանցում միավորների հմաստը, ընդ որում նկատելի է նախարար (*нахарар*) միավորի գրադարձությունը (*роды и вождю племен, нахарары и родоначальники*), որի մեկնաբանությունը տրվում է ծանոթագրությունում և ունի հետևյալ բացատրությունը՝ *крупный элеменовладелец, князь: Հարկ է նշել, որ Ազգաթանգեղոսի անգլերեն թարգմանության մեջ պատմական իրակությունները չեն գրադարձվել, մինչդեռ ռուսերենում հանդիպում ենք գրադարձված միավորներ, այսաեւ օրինակ հետևյալ համատեքստում.*

Առ ինքն կոչէր զամենայն թագաւորս և զկուսակալս և զնախարարս և զօրաւարս և զաեւս և զիշխանս իւրու տէրութեանն (էջ 42):

He summoned all the kings and governors and princes and generals, and leaders and nobles of his kingdom and they held council (p. 43).

Он призвал к себе на совет всех царей, наместников, нахараров, полководцов, начальников и ишханов своей державы (ст.31).

Ընդհանուր առմամբ ճշմարիտ է Ն. Աղոնցի այն պնդումը, որ նախարարական վարչակարգի էությունը թեև արտացոլվում է պատմագրության մեջ և տայիս արժեքավոր տեղեկություն, այդուհանդերձ այն բավարար չէ վարչակարգի ամբողջական բնութագիրը տալու համար, մանավանդ որ հաճախ նախարարական վարչակարգին պատկանող եզրույթների կամ պատմական իրակությունների բուն իմաստը հասկանալու համար ստիպված ենք լինում կատարել ստուգաբանական և համատեքստային որոշ ուսումնասիրություններ: Բանն այն է, որ որոշ պատմական իրակություններ եկել են հնագույն ժամանակաշրջանից և, դարեդար փոխանցվելով, նոր իմաստային երանգավորում են ծեռք բերել: Հետևաբար հարկ է կատարել որոշակի անդրադարձ ալդ իրակությունների

պատմական շերտավորումը բացահայտելու համար /Ադոնց, 1987/: Թարգմանության մեջ պատմական իրակությունների գրադարձությամբ և տվյալ իրակության ծանոթագրության մեջ մանրազնին ստուգաբանությամբ կարծես թե հնարավոր է համակողմանի արտացոլել տվյալ դարաշրջանի նախարարական վարչակարգի դիրքը, տեղում ու դերը: Նախ նշենք, որ նախարար գրադարձված միավորի ստուգաբանությունը, ըստ Ն. Ադոնցի, դեռևս վերլուծության անհրաժեշտություն ունի, հավանաբար այն նշանակել է նահանգների կառավարիչ՝ *rectores*: Ըստ «Նոր Բառգիրք Հայկագեան Լեզուի» բառարանի /1981, հատոր 2, էջ 399/՝ այս միավորը ունի հետևյալ իմաստը՝ նախակին և գիշավոր արարեալ, այսինքն յիշխանութեան եղեալն կամ կարգեալն, սապրապ, մեծ իշխան գաւառի և նահանգի: Ինչ վերաբերում է իշխան գրադարձված միավորին, ապա այստեղ դժվար է միանշանակ տալ վերջինիս նշանակությունը: Բանն այն է, որ իշխան - իշխանություն պատմական իրակությունները իրարից տարբերվում էին իրենց քաղաքական կշռով և թագից ունեցած կախումով: Ծայրամասերում գտնվող իշխանությունները, և ամենից առաջ՝ այսպես կոչված բղեշխությունները համեմատաբար ինքնուրույն էին: Կային նաև ներքին իշխանություններ (Մամիկոնյաններ, Բագրատունիններ, Արծրունիններ, Խոռիսոռունիններ), մնացած մեծամասնությունը բաղկացած էր մանր իշխաններից, որոնք իրենց ծագումով և կալվածքների չափով շատ ավելի ցածր էին կանգնած և մեծ մասամբ ապաստան էին գտնում հզոր իշխանությունների ազեցության ներքո /Ադոնց, 1987/:

Եթե Ազաթանգեղոսի «Հայոց Պատմութիւն» երկում գրադարձված միավորներ գրեթե չկան, ապա Մովսես Խորենացու երկում հաճախ ենք հանդիպում պատմաբառերի գրադարձության սկզբունքին:

Այսպես, գրադարձության օրինակ է, բղեաշխ միավորը, որը պահանջում է մանրակրկիտ ստուգաբանություն և իմաստային վերլուծություն: Այսպես՝

Իսկ ընդդէմ լերինն Կակասայ կողմնակալ իհիսոսյ կարգէ զմեծ ու զիզոր ազգն, և նահապետութեանն անուն կարդայ բղեաշխ Գուգարացոց (էջ 128):

Opposite the Caucasus Mountain as governor of the north he appointed this great and powerful family and called the title of their principality the bdeashkh of the Gugarats'ik' (R. Thomson, 2006, p.138).

Наместничество северного края, расположенного против горы Кавказа, он поручает великому и могучему роду и присваивает его родовладычеству титул бдеашха Гугарского (ст. 64)

«Նոր Բառգիրք Հայկագեան Լեզուի» բառարանում /1979, հատոր 1, էջ 478/ բղեաշխ միավորը ստուգաբանվում է որպես՝ հիւպարոս, դուքս, սահմանակալ, կողմնակալ, կուսակալ, գօրավար: Ինչ խոսք, գրադարձությունը ևս թարգմանական միջոց է, բայց բղեաշխ պատմական իրակու-

թյան իմաստաբովանդային նշանակությունը համակողմանի կարտացողվեր, եթե անգլերեն տարբերակում այն ստանար հակիրճ մեկաբանություն և ծանոթագրություն: Այս առումով, *բրեաշխ* պատմաբառի գրադարձությունը համատեքստային վելուծություն է պահանջում: Այսպես, Հր. Աճառյանի մոտեցմամբ *բրեաշխը* իրանական բառ է և ունի տարբեր ծևեր: Հայերենին ամենամոտ ծևն է պահլավերեն *bitax*, որը նշանակում է դեղակալ, փոխարքա: Բդեշխները հին Հայաստանում չորս մեծ բդեշխությունների սահմանագլուխներն էին (Աղջնաց, Գուգարաց, Շոփք, Անգեղսոուն) /Կարքսյան, 1990, Աճառյան, 1971, Մալխասյան Ստ, 1981/: Երկրի պաշտպանության առումով *բրեշխները* ուսումնական կարևոր դեր էին կատարում, այն է՝ սահմաների պաշտպանությունը: Անգլերեն *լեզվի* պատմաբառերի զննական ուսումնասիրությունը բացահայտում է միջլեզվական համարժեք տարբերակներ ևս, որոնց իմաստները մոտենում են *բրեաշխ* միավորի իմաստին, ինչպես՝ 1. *viceroy* (լատ. *vice* – փոխ, ֆրանս. *roi – арքա* /see: <http://en.wikipedia.org/wiki/Viceroy>; Webster's Deluxe Unabridged Dictionary, 1979: 2036, Oxford Advanced Learner's Dictionary, 2001: 1445), 2. *duke - a nobleman of the highest rank* /Oxford Advanced Learner's Dictionary, 200: 391/: Ուսուերենում *բրեաշխ* միավորը ունի հետևյալ մեկնաբանությունը և կարող է փոխակերպվել այսպես՝ Եծեսիք, կնյազ, վладетель пограничной области (в Древней Армении—правитель каждого из четырёх пограничных нахарарств) /<http://bararanonline.com/բրեշխ/>:

Մանրազնին իմաստաբովանդակային ուսումնասիրություն է պահանջում հազարապես պատմաբառը: «Նոր Բառգիրք Հայկագեան Լեզուի» բառարանում այս միավորները ունի մի շարք նշանակություններ, այսպես՝ հազարապես - 1. պես և գլուխ հազարաց զօրու, 2. իշխան հրամանադր, հոգաբարձու, վերակացու, դուքս, ոսպոդիկան, նախարար, 3. գնդեսական վերակացու դան առքայի իշխանի /1981, հատոր II, էջ 2-3/:

Թեև հազարապես պատմաբառի կազմությունը կարող է որոշ աղերսներ ունենալ ուզմական գինվորական պաշտոնյայի հետ, այդուհանդերձ, հիմք ընդունելով Ն. Աղոնցի ուսումնասիրությունները, հազարապետությունը սահմանավում է որպես աշխարհապես ինամակալություն և գարածվում է դեհկանության, այսինքն՝ հողագործ գյուղացիության վրա /Աղոնց, 1987/:

Այսպես, Մ. Խորենացու քնազիր տարբերակի ուսումնասիրությունը բացահայտեց *հազարապետ* միավորի կիրառության երկու դեպք: Փորձենք քննության առնել *հազարապետ* միավորի նշանակությունը «Պատմութիւն Հայոց» երկում. այսպես՝

1. Իսկ Արտաւազդ յետ գնալոյն Սմբատայ առնու ի հօրէն՝ որում ցանկայրն, զիշխանութիւն օրացն ամենեցուն: Եւ նախանձ բերելով ընդ նմա եղբարազն ի գրգռութենէ կանազ հլրեանց. Վասն որոյ կարգէ

Արտաշես զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի (էջ 220):

After Smbat had withdrawn, Artavazd received from his father the object of his ambition—the command of the whole army. But because his brothers were jealous of him at the instigation of their wives, therefore Artashes made Vroyr, a wise and erudite man, hazarapet and entrusted to him all the affairs of the royal household (p. 193).

Поэтому Арташес назначает (из них) Вруйра, мужа мудрого и поэта, тысяченачальником и вверяет ему управление всеми делами царского дома (ст. 105).

2. Յանժամ արքային Պարսից Վոամայ կոչեցեալ ի դուռն զթագաւորն Հայոց զԱրտաշիր և զմեծն Սահակ, և խնդրէին ի նմանէ ամբաստանել զԱրտաշրէ. և նա հրաժարէր բնաւ ասել ինչ չար կամ բարի: Ապա հրամայէ հազարապետին Արեաց, որ էր Սուլթանեան Պահլաւ, զի հաւանեցուցե զնա խրատու սիրելութեան, որպէս զազգային (էջ 432):

Then the Persian king Vram summoned the Armenian king Artashir and Sahak the Great to court. They sought from the latter a denunciation of Artashir, but he absolutely refused to say anything, evil or good. Then he (Vram) ordered the minister of the Aryans, who was of the Surenean Pahlav, to persuade him by frieandly advice as his relative (335).

Тогда персидский царь Врам вызывал армянского царя Арташира и Сахака Великого ко двору, где сталу требовать, чтобы последний возвол обвинения на Арташира. Но он отказался высказать что-либо плохое или хорошее. Тогда царь велел тысяченачальнику арийцев из рода Сурена Пахлака убедить его как сородича дружескими увещеваниями (ст. 206).

Բնագրի՝ կարգէ Արտաշես զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս դանն արքունի հատվածի մանրազնին վերլուծությունը պարզաբանում է հազարապետը միավորի քաղաքացիական պաշտոն լինելու փաստը, քանի որ, ըստ համատեքստի, Վրոյրը ստանձնում է թարգավիրական տան վերակացուի պաշտոնը:

Երկրորդ օրինակի համատեքստից դժվար է կոահել հազարապետը պատմաբանի ռազմական, թե քաղաքացիական պաշտոնի նշանակությունը: Անգլերեն տարբերակի առաջին համատեքստում հանդիպում ենք *հազարապետի* (*hazarapet*) գրադարձված տարբերակը՝ *chancellor-կանցլերի* բառի ծանոթագրությամբ, իսկ երկրորդ տարբերակում թարգմանիչը կիրառում է *minister* միավորը: Գուցե *minister* և *hazarapet* միավորների իմաստները որևէ համատեքստում հատվում են միմյանց, բայցևայնական դժվարացնում են իրակության լիարժեք ընկալումը տվյալ ժամանակաշրջանում: Որևէ տարբերակներում *հազարապետը* թարգմանվել է ըստ բառապատճենման (*calque*) թարգմանական մեթոդի՝ *հազար-тысяч-*

ոյ, պեղո-հաշալինուկ, այն է՝ տայապեղալինուկ: Բառապատճենման մեթոդը ինչ-որ չափով ընթերցողին օգնում է պատկերացում կազմել պատմական իրակությունների ազգամշակութային լիցքի վերաբերյալ, այդուհանդերձ այս մեթոդի կիրառությունը պահանջում է նաև տողատակի մանրազնին ծանոթագրություն:

Այսպես, պատմագրական տեքստի, մասնավորապես՝ հինգերորդ դարի պատմական կոթողները թարգմանելիս առանձնակի դժվարություն են ներկայացնում ազգամշակութային բաղադրիչների՝ պատմական իրակությունների կամ պատմաբառերի թարգմանությունը: Հետևաբար, թարգմանիչը մշտապես բախվում է այն հարցին, թե ինչ համապատասխան մեթոդներ պետք է կիրառել բնագրին բնորոշ մշակութային երևույթները համարժեք վերաբերելու համար: Այսօրինակ լեզվամշակութային դժվարությունները հաճախ հաղթահարվում են ներըմբռմամբ, «անթարգմանելի» կաղապարների և թարգմանագիտական սկզբունքների մանրազնին ուսումնասիրությամբ ու կիրառությամբ, որն էլ հնարավորություն է տալիս ոչ միայն համապատասխանաբար փոխակերպելու թիրախ տեքստի բաղադրիչները, այլև նախադրյալներ է ստեղծում գրողի և թարգմանությունն ընթերցողի «բնական» փոխըմբռնման համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց /քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, ԵՊՀ, Երևան, 1983:
2. Աղոնց Ն. Հայաստանը Հուստինանոսի դարաշրջանում, Երևան, «Հայաստան» հրատ., 1987:
3. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց / քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, ԵՊՀ, 1981:
4. Մովսես Խորենացու Հայոց Պատմություն /թարգմ. ծանոթ. Ստ. Մալխայանցի, Երևան, «Հայաստան» հրատ., 1981:
5. Սարգսյան Գ. Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Երևան, ԵՊՀ, 1991:
6. Cronin M. Translation and Identity. London, New York: Routledge, Taylor & Francis, 2006.
7. Moses Khorenats'i "History of the Armenians" translation and commentary on the Literary Sources by R. W. Thomson: Caravan Books, Harvard University Press, 1978, edited in 2006.
8. Agathangelos "History of the Armenians" translation and commentary by R. W. Thomson, Albany: State University of New York Press, 1976.
9. Агатангелос, История Армении перевод с древнеармянского. Вступительная статья и комментарии К. С. Тер-Давтяна, С. С. Аревшатяна. Ереван, изд. «Наури», 2004.

10. Хоренаци М. История Армении, перевод с древнеармянского. Вступительная статья и комментарии Г. Саркисяна, Ереван, изд. Ереванского университета, 1990.
11. Латышев Л., Семенов А. Перевод, теория, практика и методика преподавания. Москва: Академия, 2005.

## ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Աճառյան Հր. Հայերեն արմատական բառարան, հատոր 4, Երևան, ԵՊՀ, 1971:
2. Նոր Բառզիրք Հայկագեան Լեզուի, հատոր 1, 2, Երևան, ԵՊՀ, 1979/1981:
3. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ. Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1980:
4. Oxford Advanced Learner's Dictionary. Oxford: Oxford University Press, 2006.
5. Webster's Deluxe Unabridged Dictionary. USA: Mass. Merriam Co. Publishers, 1979.
6. URL: <http://en.wikipedia.org/wiki/Viceroy> (April 2018)
7. URL: <http://bararanonline.com/բդեշի>

**Լ. ГАСПАРЯН – Проблема эквивалентного перевода исторических реалий в историографии 5-го века.** – Данная статья рассматривает проблему перевода реалий в историографических текстах пятого века, в частности в работах «История Армении» Агатангелоса и Мовсеса Хоренаци. Необходимо отметить, что исторические реалии труднопереводимы и требуют глубокого теоретического и практического анализа. Основой для данного исследования послужили точки подхода западных и восточных теоретиков, а также оригиналы исторических текстов и их переводы на английский и русский язык.

**Ключевые слова:** историография, перевод, историческая реалия, Мовсес Хоренаци, Агатангелос

**L. GASPARYAN – On the Problem of Equivalent Translation of Historical Realia in the 5<sup>th</sup> Century Historiography.** – The paper carries out along the lines of the 5th century historiographic texts and the translation of historic realia with special reference to the “History of Armenia” of Agatangelos and Movses Khorenatsi. Proceeding from the assumption that historical realia cause difficulties in the process of translation a thorough theoretical and practical analysis is carried out in the paper. The research is based on theories of the western and eastern theorists, as well as the originals of the historiographic texts and their English and Russian translations.

**Key words:** historiography, translation, historical realia, Movses Khorenatsi, Agatangelos

**ՀԵՂԻՆԵ ԹԱՄԱԶՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ԷԹՆԻԿ ԻՆՔՍՈՒԹՅՈՒՆԸ ԷՄԻ ԹԵՍԻ  
«ՀԱՃՈՒՅՔ-ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՄԲԸ» ՎԵՊՈՒՄ**

Սույն հոդվածում քննության է առնվում բարդ կառուց և սյուժեային գիծ ունեցող մի սկեղծագործություն, որտեղ միահյուսված են հիշողությունը և էթնիկ ինքնության մերժումը, որտեղ կա սեր և ապելություն, պահպանողականություն և դրանից ձերբազապում, որտեղ կա զգացմունք և հարաբերություն, բայց և այնպես առևա է հավերժական շարունակելիության գաղափար՝ համեմված ենթագիրակցությունից դուրս պրծած դեսիլքներով։ Հոդվածում կարևորվում են հենց այդ դեսիլքները, քանի որ դրանք սրիպում են էմի թեսնին և նրա հերոսուհիներին վերադառնալ իրենց ինքնության ակունքներին։ Սկեղծագործությունը առավել ընկալելի դարձնելու համար այն բաժանվում է ավագ սերնդի, այսինքն՝ մայրերի և երիկասարդ սերնդի՝ դուսպերի պատմությունների։

**Բանալի բառեր.** «Հաճոյք-երջանկություն ակումբը», էթնիկ ինքնություն, մայր-դուսպեր հարաբերություններ, ավագ սերունդ, կրտսեր սերունդ, հիշողություն

Յուրաքանչյուր էթնիկ խմբի մշակութային առանձնահատուկ տարրերը ի հայտ են գալիս արվեստի, գրականության և ժամանցի բնագավառներում։ Ասիա-ամերիկյան գրողները, արվեստագետները և ժամանց ապահովողները բարգավաճել են տարիների ընթացքում, քանի որ արտահայտել են իրենց ինքնությունը, ստեղծագործական միտքը, տաղանդը և իրենց համայնքի փորձը։ Նրանց ստեղծագործությունը ներկայացնում է փոխհարաբերություններ, բարդություններ և հակասություններ, որոնք կազմում են Ասիական Ամերիկան։

Վերջին տարիներին ասիա-ամերիկյան շատ արձակագիրներ արժանացել են ուշադրության և ճանաչում են ստացել իրենց ստեղծագործությունների շնորհիվ։ Նրանք իրենց գործերում ներառում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ԱՄՆ-ում մեծանալու առանձնահատկությունները, իրենց ծննդավայրից ԱՄՆ գաղթելը և այնտեղի կյանքին ադապտացվելը, սերը և ամուսնությունը, սիրելիների, ընկերների և ընտանիքի հետ հարաբերությունները։ Ասիա-ամերիկյան գրողների հազվագյուտ նորարարությունն այն է, որ նրանք ներգրավում են իրենց համայնքի փորձը, իրենց հարցերը և ինքնությունը սեփական գործերում։ Սա նրանց տալիս է ապրելու յուրահատուկ հեռանկար, բացահայտում է մեզ համար, թե ինչ է ասիա-ամերիկացի լինելը։

Մասնավորապես, ասիա-ամերիկյան բազմաթիվ գրողների համար դժվարություն կամ նույնիսկ հակասություն կարող է առաջանալ ընթերցողների լայն շրջանակի համար գրելիս, մի խնդիր, որը կընդգրկի ոչ ասիացիներին՝ միևնույն ժամանակ պատկերելով ասիա-ամերիկյան փորձը: Փաստորեն, ասիա-ամերիկյան շատ գրողներ իրար հետ վիճում են, թե արդյոք մի գործ կամ գրող բացառիկ հաջողության է հասնում կամ արդարացվում է՝ ասիացիների հանդեպ նվաստացուցիչ նախապաշտումնք առաջացնելով, առաջ քաշելով կարծրատիպեր՝ ոչ ասիացիներին դուր գալու համար կամ ամրողովին սխալ ներկայացնելով Ասիական Ամերիկան: Այնուամենայնիվ, անպայման չէ, որ հարցը սա լինի: Ասիա-ամերիկյան գրողների ստեղծած գրականության վերջին պայթյունը ցույց է տալիս թեմաների և հարցերի առատություն, որ պետք է ներկայացնել և բավականին ստեղծագործական ծիրք և տաղանդ ծեռք բերել ասիա-ամերիկյան հասարակության մեջ, որպեսզի նպատակն իրականացվի: Նորից, երբ հասկանում ենք քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային տարբերությունները ասիա-ամերիկյան գրողների միջև, պետք է նաև հասկանանք, որ ասիա-ամերիկյան ոչ մի ընդհանուր փորձ չկա: Ավելի շուտ, հավաքական և հազվագյուտ հիշողությունները կազմում են գլուխկոտրուկ, որը նրանց միացնում է, այլ ոչ թե բաժանում:

Էմի Թենի բացառիկ հոչակը ժանրի հաջողության վառ ապացուցն է: Ասիա-ամերիկյան գրականությունն ներառում է մշակույթների տարբեր շարքեր՝ չինական և ճապոնական մշակույթից մինչև հնդկական, կորեական և ֆիլիպինյան:

Ասիա-ամերիկացի գրող էմի Թենը սկիզբ դրեց ԱՄՆ-ում իր էթնիկ խմբի գրական ճանաչմանը, և շատ տաղանդավոր գրողներ հաջողություն են գտնում այնտեղ: Թենի առաջին գիրքը՝ «Հաճույք-Երջանկություն ակումբը», վաճառվեց չորս միլիոն օրինակով, իսկ ամենավերջին գիրքը՝ «Հայուր գաղտնի զգացումները», վերջերս է լույս տեսել: Բացատրություն չկա ասիա-ամերիկյան գրողների հանկարծակի հաջողության կամ էլ այս ճյուղի առանձնացման համար: Շատերը հույսով են, որ վերջիվերջո իրենց կվերաբերվեն որպես տաղանդավոր հեղինակների, այլ ոչ թե էթնիկ փոքրամասնության պիտակ կրողների: Էմի Թենը չի համարում իրեն միայն չինա-ամերիկացիների մասին գրող, չնայած իր հերոսները չինացիներ են կամ չինական ծագումով ամերիկացիներ: Նա ասում է, որ իր գրքերը առաջին հերթին ընտանեկան հարաբերությունների մասին են:

Սկզբնական շրջանում էմի Թենը պլանավորել է գրել «Հաճույք-Երջանկություն ակումբը»՝ որպես կարճ պատմվածքներ, սակայն հետագայում նրանք միացել են և դարձել մեկ վեպ: Պատմվածքը իր մեջ զուգակցում է և՝ կենսագրություն, և՝ ինքնակենսագրություն, հիշողություններ, պատմություններ, ժողովրդական հեքիաթներ:

Քննադատները նշում են, որ բավական գրականություն կա, ուր մենք տեսնում ենք մայրերի և դուստրերի պայքարը ինքնության համար, սակայն միայն էմի թենի մոտ, նշում է Մարիա Հենագը, կարելի է տեսնել՝ ինչպես է մայրերի դերը գերակայում: Քննադատները նույնպես նշում են թենի յուրահատուկ գրական ոճը՝ նկատի ունենալով վեպի տասնվեց պատմությունների կապակցվածությունը և դասակարգումը: Շատ քննադատներ նշում են, չնայած որ վեպի հերոսները չինա-ամերիկացիներ են, նրանց խնդիրները, պայքարը մեծ արձագանք են գտել բոլոր մարդկանց հոգիներում, նամանավանդ այն կանայք, որոնք ծնվել են Ամերիկայում: Քննադատները վեպը տարբեր տեսանկյուններից՝ քննադատները եկել են այն եզրահանգման, որ գիրքը ներկայացնում է ոչ միայն մայրերի և դուստրերի պայքարը, այլև տարբեր մշակույթների պայքար: Քննադատները ասում են, որ գիրքը հետազոտում է այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր են Ամերիկայի բոլոր ներգաղթյաների համար: Չնայած նրան, որ շատ քննադատներ վեպի մեջ տեսնում են միայն Չինաստանի և չինական մշակույթի առանձնահատկությունները, շատերը հասկանում են, որ վեպը անդրադառնում է բազմաթիվ համընդհանուր խնդիրների և թեմաների, որոնք հոգեհարազատ են մեզ բոլորին՝ անկախ տարիքից, սերից և ազգությունից:

«Հաճույք-Երջանկություն ակումբը» էմի թենի ամենահայտնի գրքերից մեկն է: Պատմության հիմքում չորս ընտանիքներ են, որոնք գաղթել են Չինաստանից Ամերիկա, և որոնք հիմք են դնում հետազայում շատ հայտնի դարձած «Հաճույք-Երջանկություն ակումբ»-ին: Այդ ակումբում խաղում էին Չինաստանում շատ հայտնի մահջոնգ խաղը: Խաղում էին հիմնականում փող կամ ուտելիք շահելու հույսով: Գիրքը ինքը կարծես մահջոնգ խաղը լինի. կազմված է չորս մասից, իսկ ամեն մասն էլ իր հերթին՝ չորս բաժնից, այսպիսով ստեղծվում է տասնվեց գլուխ: Երեք մայր (մայրերից մեկը մահանում է մինչև այս պատմությունը) և իրենց չորս զավակները կպատմեն իրենց կյանքի պատմությունները: Ամեն մասը սկսվում է խաղի հետ կապված մի պատմությամբ:

Էմի թենի «Հաճույք-Երջանկություն ակումբ»-վեպում չորս ընտանիքների՝ Վուերի, Չոնգերի, Հուունորի և Սեն-Քլեյրների մեջ ներկայացված են մայր և դուստր հարաբերությունները: Բոլոր մայրերը առաջին սերնդի գաղթյաներ են Չինաստանից, շատ վատ են խոսում անգլերեն և մնում են օտարերկրացի իրենց նոր աշխարհում: Աղջիկները բոլորը մեծացել և կրթվել են Ամերիկայում, ունանք անգամ ամուսնացել օտարերկրացիների հետ: Ընտանիքը միակ կառույցն է, որը մայրերին հնարավորություն է տալիս ապահովելու էթնիկ հաջորդականությունը, հիշելու և պատմելու անցյալի հետ կապված պատմությունները: Տառապելով Լենայի ծախողված ամուսնության պատճառով, Լենայի և չինական մտածելակերպի անհամատեղելիությունից՝ Յինգ-Յինգ Սեն-Քլեյրը անհանգստանում է, ինչպես և բոլոր մարերը. «Ամբողջ կյանքի ընթացքում ես նրան հետևում էի կարծես այլ ափից: Եվ իհմա ես պետք է պատմեմ նրան ամեն ինչ իմ

անցյալի մասին: «Դա միակ հնարավորությունն է մտնելու նրա մաշկի մեջ և ստիպելու նրան կանգնել ճիշտ ուղու վրա» /Amy Tan, 1991: 153/:

Իր մոր աչքերում չունենալով անցյալի մասին հիշողություններ անցյալի մասին՝ Լենան չի կարողանում հասկանալ, թե ինքը ով է և չի կարողանում գտնել իր տեղն ու դերը այս կյանքում: Միգուցե մոր հիշողություններով նա կկարողանա հավատ ծեռք բերել որոշակի կանոնների, դերերի, պահվածքի և արժեքների նկատմամբ, որոնք ապահովում են ընտանիքը և չինական հասարակությունը:

Էմի Թենի վեպում հիմնական թեմաներից մեկն է կերպարանափոխումը, թե ինչպես են մայրերն ուզում, որպեսզի իրենց դուստրերը չնմանվեն իրենց, չունենան դաժան կյանք: Այդ ամենի հետ մեկտեղ նրանք ցանկանում են, որ իրենց դուստրերը պահպանեն եթնիկ ինքնությունը և չմոռանան իրենց արմատների մասին: Պատմվածքի հերոսուհին մի ծեր կին է, որը ցանկանում է իր աղջկան մեծացնել Ամերիկայում և հասցնել մեծ ապագայի: Նա երազում է, որ աղջկը լավ ընտանիք կազմի, արժեք ունենա իր և ամուսնու համար: Տիկինը ցանկանում է, որ իր դուստրը խոսի մաքուր ամերիկյան անգլերենով, աշխատանքում հասնի հաջողությունների: Դառնալով հաջողակ՝ նա չպետք է մոռանա Չինաստանի հետ կապված հիշողությունները: Իր եթնիկ ինքնությունը չմոռանալու համար ծեր տիկինը շուկայից մի երկարավիզ բադ է գնում՝ նմանեցնելով կարապի, և ցանկանում է նվիրել աղջկան՝ հույս ունենալով, որ երկարավիզ բադը միշտ կիհշեցնի աղջկան իր հայրենի Շանհայը: Էմիգրացիայի ճանապարհին կորցնելով բադին՝ տիկինը աղջկա համար կարողանում է պահել միայն կարապի մեկ փետոր:

Թենը այս պատմության միջոցով կարողանում է ներկայացնել Ամերիկան. այն հաջողությունների, հնարավորությունների և երջանկությունների երկիր է: Եվ այդ երկրում տիկնոց երազանքը կիսով չափ իրականություն է դառնում: Աղջկը հասնում է այն բանին, որ հարգանք է վայելում շրջապատում և խոսում ամերիկյան անգլերենով: Միայն այստեղ կանայք սկսում են չհասկանալ միմյանց: Եվ ծեր կինը մահանում է ամերիկյան իրականության մեջ՝ չկարողանալով հակադրվել իր հիշողություններին, ինչպես նաև աղջկա մեջ չզարգացնելով եթնիկ ինքնությունը: Արմատները թույլ չեն տալիս, որ տիկինը հարմարվի նոր միջավայրին:

Այս մասի առաջին պատմության մեջ չինուիի Սույուանը, հաստատվելով Ամերիկայում, իր երեք ընկերուիիների հետ հիմնում է «Հաճոյք-Երջանկություն ակումբը», որտեղ միշտ վառ են մնում Չինաստանից բերված հիշողությունները և եթնիկ նկարագիրը: Սույուանը, չհասցնելով արտահայտել իր մտքերն ու երազանքները՝ կապված ակումբի հետ, ինչպես նաև չհասցնելով իրականացնել Չինաստանի հետ կապված իր բոլոր երազանքները, մահանում է: Հոր խնդրանքով Չինգ-Մեյը ակումբում զբաղեցնում է մոր տեղը: Մոր ընկերուիիները պատմում են նրան իր մոր հիշողությունների մասին, որոնց դուստրը տեսյակ չէր: Չինացի երեք կանայք

խնդրում են Զինգ-Մեյին իրականություն դարձնել մոր վաղեմի երազանքը: Տարիներ շարունակ Սույուանին տանջում էր հոգու ցավը, հիշողությունները, որոնք տարիներ շարունակ հանգիստ չէին տալիս իրեն, հիշողություններն ու երազանքները, որ այդպես էլ ի կատար չածվեցին: Պատերազմի ժամանակ մայրը կորցրել էր զոյգ աղջկներին և նրանց գտնելու երազանքը սրտում՝ մահացել: Զինգ-Մեյը որոշում է ի կատար ածել մոր երազանքը և հանգիստ տալ նրա հոգուն: Այս պատմության մեջ թենը փոքրիշատե բացահայտում է նաև այն փաստը, որ հաճախն մայրերի և դուստրերի միջև առաջանում են հակասություններ, և խոսքը էթնիկ ինքնության և ժառանգականության մասին է: Մայրերը միշտ ցանկանում են, որ աղջկները, ժամանակակից լինելով հանդերձ, պահեն իրենց էթնիկ ինքնությունը. հագնեն չինական հագուստ, որ կրում էին մայրերը ակումբում: Սակայն աղջկները միշտ ամաչում էին այդ տարօրինակ հագուստից, որ կրծքի վրա ասեղնագործված մետաքսէ ծաղիկներ ուներ, մեջքին պինդ կապած գոտի և պինդ, ձիգ կանգնած օձիքներ: Ակզենտական շրջանում նա ամաչում է «Հաճույք-Երջանկություն ակումբ»-ից՝ այն ամոթալի չինական սովորությ համարելով, մինչև այն պահը, երբ ակումբից նվեր է ստանում 1200 դրամ: Այդ պահից սկսած՝ նա իր առաջին քայլն է անում դեպի իր արևելյան ժառանգության հասկացողությունն ու ըմբռնումը:

Երկրորդ պատմության մեջ Էմի Թենը անդրադարձ է կատարում մահօնգ խաղի հարավային անկյունում նստող Էն-Մեյի կյանքին, որը շատ ծանր և դաժան մանկություն էր ունեցել: Նա մեծացել էր առանց մոր և հոր, տատի՝ Պոպոյի խնամքի տակ: Պոպոն սեփական դստերը դուրս էր վոնդել տնից, քանի որ վերջինս դարձել էր մի հարուստ ընտանիքի տղայի սիրուիին: Մի չինացի կնոջ համար, որի կյանքում բարոյականությունը դրված է առաջին գծի վրա, շատ անպատվաբեր էր տեսնել, որ սեփական դուստը ինչ-որ մեկի սիրուիին է: Էթնիկ, ավանդապաշտ հայացքներով այդ կինը թոռանը գրկել էր մորը տեսնելու հաճույքից: Պոպոն ամեն կերպ աշխատում էր Էն-Մեյի հիշողությունների մեջ մորը պատկերել չար և անբարո կերպարանքով: Չնայած այդ բոլոր հիշողություններին, երբ Էն-Մեյը հանդիպում է մոր հետ, բոլորովին այլ տպավորություն է ստանում նրանից: Մայրը նրա վրա բավականին նուրբ, խելացի, զգայուն կնոջ տպավորություն է թողնում, և աղջկա կյանքի ընթացքում մայրը միշտ հայտնվում էր հիշողությունների մեջ՝ լողացող կերպարանքով, չար ու անբարո, ինչպես ներկայացրել էր տատը, նուրբ և կանացի, ինչպես նրան տեսնում էր Էն-Մեյը:

Արդյոք ճի՞շտ է դատել ինչ-որ մեկի մասին՝ Ենելով իր սեռից: Ավանդական չինական գրականության մեջ շատ հաճախ հանդիպում ենք դեպքերի, երբ մարդու մասին կարծիք են կազմում՝ Ենելով նրա սեռական պատկանելությունից: Կանայք համարվում են ցածր էակներ: Նրանք կանգնած էին հասարակական շատ ցածր դիրքում: Չինական մշակույթում

գերիշխող դեր է խաղում արական սեռը: Տղամարդուց սպասումները աշխատանքի բնագավառում ավելի շատ էին, իսկ կինը մի անձայն էակ էր, որը պետք է մնար տանը: Նրանք հասկանում էին, որ իրենց մասին ոչ մեկը հոգ չի տանում, և դա ավելի ծանր է դարձնում ապագայի հանդեպ լավատեսությունը: Էմի Թենի «Հաճույք-Երջանկություն ակումբը» վեպում Էն-Մեյ Հոուն, Լինդո Ջոնզը և Յինգ-Յինգ Սեն-Քլեյրը մեծացել են ավանդական Չինաստանում, որտեղ գոյություն ունի սեռական խտրականություն: Նրանք առնչվում են լուրջ խնդիրների, որոնք կործանում են իրենց կյանքը: Միայն անցնելով դժվարին ճանապարհ և հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ կանայք կարողանում են վերադառնալ նորմալ կյանքի:

Էն-Մեյը, Լինդոն և Յինգ-Յինգը ստորագվում են տղամարդկանց կողմից կին լինելու և չինական ավանդույթների պատճառով: Էն-Մեյը ճնշվում է տարբեր պարագաներում: Նրա մորը հրավիրել էին ժամանակ անցկացնելու մի հարուստ առևտրականի՝ Վու Յինգի տանը: Գիշերը այդ մարդը մտնում է և բռնաբարում Էն-Մեյի մորը: Դա նոյնպես ցուցանիշն է այն բանի, որ Չինաստանում կնոջ հանդեպ հարգանք չկա: Էն-Մեյի մայրը, այդ դեպքից հետո ստիպված էր ապրել այդ մարդու հետ, քանի որ կին լինելով՝ չէր կարող պայքարել իր իրավունքների համար: Նա դարձավ այդ տղամարդու երրորդ կինը: Լինելով երրորդ կին՝ նա գրեթե ոչ մի իրավունք չուներ ամուսնու տանը: Էն-Մեյի ընտանիքը չընդունեց նրա մորը այդ դեպքից հետո, քանի որ նա խայտառակեց իր ընտանիքը: «Երբ ես երիտասարդ առջիկ էի Չինաստանում իմ տատիկը ասում էր, որ իմ մայրը ուրվական է» /Amy Tan, 1991: 180/: Էն-Մեյին ստիպել էին, որ նա մոռանա իր մորը և ապրի իր կյանքով: Անհեթեթ էր այն փաստը, որ Էն-Մեյին ասել էին մոռանալ մորը, քանի որ նա դարձել էր անկառավարելի: Կնոջ ինքնագնահատականի պակասը առաջացնում է ամոթի զգացում Մեյի ընտանիքում: Քանի որ Չինաստանում ընդունված է եղել բռնաբարությունը և բազմակնությունը, հենց այդ պատճառով Վու Յինգի արարքը դիտվում է ճիշտ կամ նորմալ, իսկ Էն-Մեյի մոր արարքը՝ սիսալ և ոչ ընդունելի:

Լինդո Ջոնզի պատմությունը փոխարերական իմաստով ցոյց է տալիս կանխակալ վերաբերմունքը կանանց հանդեպ: Տասներկու տարեկան հասակում Լինդոն նշանվում է թյանյուի հետ: Սա օրինակ է կանանց արհամարհանքի: Ոչ մեկը չի ցանկանում ունենալ նախօրոք որոշված ամուսնություն: Ամուսնությունը սրբություն է, և այն պետք է լինի երկու մարդկանց փոխադարձ սիրո հիման վրա: Դա առաջին հերթին անարդար է Լինդոյի հանդեպ: Սա ցոյց է տալիս, թե ինչպես են չինական ավանդույթները և իրականությունը ցավ պատճառում կանանց: «Ես՝ Լինդոս, մեկ անգամ զրհաբերել եմ իմ կյանքը՝ ծնողներիս տված խոստումը չդրժելու համար» /Amy Tan, 1991: 193/: Այստեղ Լինդոն նկատի ունի իր նախօրոք պլանավորված և անհաջող ամուսնությունը: Չինական ավանդույթներին հետևելը Լինդոյին թույլ չի տալիս դառնալու ինքնուրույն և ապրելու իր սեփական կյանքով: Նա անկարող է իր սեփական

որոշումները կայացնել: Լինդոն պատրաստակամ է զոհաբերել իր կյանքը հանուն ծնողների պատվի: Ուրիշին դժբախտացնելով՝ պատիվ ձեռք չեն բերում:

Յինգ-Յինգ Սեն-Քլեյրի կյանքը ցոյց է տալիս հարգանքի պակասությունը կնոջ հանդեպ: Իր մորաքրոջ ամուսնությունից հետո տասնվեց տարեկանում նա մասնակցում է խնջույքներին: Այնտեղ մի տղամարդ դանակով կտրում է ձմերուվը, որը խորհրդանշում է կուտության կորուստը: Այն տղամարդը, որը կնոջ հետ վարվում է նոյն կերպ, շատ դաժան է: Այս ամենը խորապես հուզում է Յինգ-Յինգին, բայց իր ուժը օգնում է իրեն հաղթահարելու այդ ցավը: <Ետագայում նա ամուսնանում է այդ մարդու հետ: Նա գնում է հյուսիս՝ բիզնես ճանապարհորդության: Յինգ-Յինգը իմանում է, որ ամուսինը ուզում է լքել իրեն օպերային երգչուհու պատճառով: «Ես՝ Յինգ-Յինգս, մտածել եմ նետվել լինը, ինչպես անում են շատ կանայք՝ դրդված ամորի զգացումից: Ես կպատմեմ նրան՝ Լենային, այն երեխայի մասին, որին սպանել եմ, որովհետու ես սկսեցի շատ ատել այդ մարդուն» /Amy Tan, 2002: 222/: Սա ցոյց է տալիս, թե ինչքան վատ է վարվել այդ տղամարդը Յինգ-Յինգի զգացմունքների հետ: Նա խոստացել է սիրել Յինգ-Յինգին, սակայն նրան լքելով՝ ցոյց է տվել իր անհարգայից վերաբերմունքը: Յինգ-Յինգը անկարող էր երրուէ իսկապես սիրել: Լենան նույնպես տառապում էր անհաջող ամուսնությունից: Նա ամբողջովին ենթարկվում էր ամուսնուն, և դա նրան շատ էր բարկացնում:

Պատմությունները խոսում են այն իրադարձությունների մասին, որոնք ծևավորում են մայրերի և աղջկների անհատականություն: Յուրաքանչյուր պատմություն հիմնված է կնոջ կյանքի ստեղծման կամ ինքնակրծանման վրա, երբ նրա անհատականությունը հավերժ մնում է անփոփոխիս: Մայրերը կասկածի տակ չեն դնում իրենց համոզմունքները՝ ենելով հիմնադիր մշակույթից, ինչով էլ միացել են իրար այդ ընտանիքները: Սակայն իրենց աղջկները շփոթված էին իրենց անհատականությունից:

Էմի Շենը, իր վեպում էթնիկ ինքնությունը քննարկելու ժամանակ օգտագործելով «հիշողություն» եզրույթը, առաջին հերթին նկատի է ունենում հիշողության կառուցվածքի պատմողական նախադրյալը, և երկրորդ՝ շեշտ է դրվում դրա հանրային-հոգեբանական մեխանիզմների վրա:

«Հաճույք-Երջանկություն ակումբը» վեպում թեմաներից մի քանիսն են՝ մայր-դուստր հարաբերությունները, ընտանեկան սպասումները, երազանքները և մշակույթների անհամատեղելիությունը: Այս երեք թեմաներից ամենագիտավորը մայր-դուստր հարաբերություններն են: Էմի Շենի այս ստեղծագործության մեջ մայրերը փորձում են դուստրերին դաս տալ, բայց դուստրերը չեն հասկանում: Վեպի հերոսուհի Զինգ-Մեյը և նրա մայրը՝ Սոյուան Վուն, լավ հարաբերություններ չունեին: Զինգ-Մեյը անգամ լավ չէր էլ ճանաչում իր մորը: «Ի՞նչ կարող եմ պատմել նրանց իմ մոր մասին: Ես ոչինչ չգիտեմ: Նա իմ մայրն էր» /www.pinkmwnkey.com.amy tan/:

Այս մեջբերումից կարելի է ակնհայտորեն տեսնել և հասկանալ, թե ինչքան խճճված են մայր-դուստր հարաբերություններ:

«Հաճույք-Երջանկություն ակումբ» վեաի նպատակն է ցույց տալ, որ այժմ ավագ սերունդների ավանդույթները դուրս են մղվում կրտսեր սերունդների կյանքից: Երեխաները կորցրել են իրենց ժառանգության մի մասը այն երկրի պատճառով, որտեղ նրանք մեծացել են, ինչպես նաև տարբեր մշակույթների ազդեցության պատճառով:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Tan A. The joy luck club. New York, 1989.
2. Tan A. Mother with a past. Maclean's, 1991.
3. [www.pinkmwnkey.com.amy tan/](http://www.pinkmwnkey.com.amy/tan/)
4. [www.sparknotes.com](http://www.sparknotes.com)

**Э. ТАМАЗЯН – Этническая принадлежность в романе «Клуб радости и удачи» Эми Тэн.** – В данной статье рассматривается роман со сложной структурой и сюжетной линией, где переплетаются воспоминание и отрицание этнической принадлежности, любовь и ненависть, традиционные ценности и отказ от них, где мы видим чувства и отношения, но, что важнее всего, нам наглядно демонстрируется идея вечного возвращения, перевоплощенная в подсознательные видения. Именно эти видения проходят через все произведение: сам автор и ее персонажи посредством этих видений возвращаются к своим этническим корням и переосмысливают свою этническую идентичность. Автор романа представляет читателю очень интересную технику повествования. В романе параллельно повествуются две истории: одна представляется старшим поколением, а другая – младшим.

**Ключевые слова:** «Клуб радости и удачи», отношения дочки-матери, этническая принадлежность, старшее поколение, младшее поколение, воспоминание

**H. TAMAZYAN – Ethnic Identity in Amy Tan's Novel “The Joy Luck Club”.** – The present paper is an attempt to discuss a novel with rather a complicated structure and story line where the rejection of ethnic identity and memory are perfectly blended. The hatred of conventionality and liberation from it is an opportunity to get eternal recurrence combined with subconscious visions. These visions are of special interests to us as they encourage Amy Tan and her characters to return to their identity roots. The plot of the novel is divided into parallel narratives; that is a story of an elder generation and of a younger one. These are the tools used by the author to encourage the reader to analyze the basic issues offered in the novel.

**Key words:** “The Joy Luck Club”, ethnic identity, mother-daughter relations, an elder generation, a younger generation, memory

**Ամայա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ  
Երևանի պետական համալսարան**

**ՄԵՂՔԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ  
ԿՈՆՑԵՊՏՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՄՈԴԵՐՆԻՍՏԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ (Զ. ԶՈՅՍ, Ա. ԿԱՄՅՈՒ,  
Ֆ. ԿԱՖԿԱ)**

Հոդվածն անդրադառնում է նախածին մեղքի և մոդեռնիստական գրականության մեջ մեղքի մոդելի փոխակերպման գործընթացին: Մոդեռնիստական գրականության մեջ մեղքը դառնում է այն հենակեղը, որի վրա բարձրանում են արսուրդը և էկզիստենցիալիստական գրականությունը: Մեղքը ասպրածաբանական խնդիր լինելուց վերածվում է փիլիսոփայական խնդիր: Մոդեռնիզմի հերոսը հայրարդում է, որ չի վախենում լինել մենակ կամ հավերժ սխալական, սակայն իր վախերի խոսքովանության ժամանակ կենդրունանում է մեղքի գերակայության վրա: Զոյսի, Կամյուի և Կաֆկայի հերոսների օգնությամբ փորձ է կատարվում բացահայտել մեղքի էությունը:

**Բանալի բառեր.** Նախածին մեղք, ազարություն, Ասպրած, արսուրդ, էկզիստենցիալիզմ, մոդեռնիզմ, գիտակցության հոսք, օդարում

Քրիստոնեական աշխարհում հավատի և իմացության կոնցեպտները հակադրվում են իրար: Կենաց ծառը մի դեպքում հանդես է գալիս որպես իմացության ծառ, մյուս պարագայում բացառում է հավատը, որովհետև առաջին մարդիկ չհավատացին դրախտին և ընտրեցին իմացությունը: Նրանք կորցրին Գանեթեմը: Արարջի ճանապարհները մեր ճանապարհները չեն: Մարդկային բովանդակ պատմությունը շարժվում է դեպի մեկ գերագույն նպատակ՝ բացահայտել Աստծո գոյությունը: Արարում ոչնչից, հրաշքներ և անձնավորված Աստված: Այստեղ էլ հակադրվում են կրոնական երկու հայեցակարգեր. «որովայն առանց արատի» և «մեղքի արգանդ»: Վտարված դրախտի չարացած զավակներն ընտրեցին աքսորի ու արտաքսման ճանապարհը: Կնոջ անմաքուր աճուկները, որ արարվել են տղամարդու մարմնից՝ ոչ Աստծո, այլ գեռունի զրիհ նմանությամբ մի դեպքում մեղքի սկզբանորյուրուն են, քանի որ կնոջ մարմինը ծննդաբերելուց հետո «անմաքուր է»: Կինը տղամարդու կողմից արարվեց և խարվեց զեռունի (Սատանայի) կողմից, մյուս կողմից միակ ճշմարիտ բանն այս աշխարհում մոր մարմինն է: Այս աշխարհում ամեն ինչ կարող է սուտ լինել՝ մայրական սիրուց բացի: Amor matris-ը հզոր զգացում է, սակայն կինը այս աշխարհ մեղք մերմուծեց: Մեղքի և ազատության կոնցեպտները բացահայտելու համար անհրաժեշտ է նյութը ներկայացնել նախածին մեղք - փիլիսոփայական մեկնաբանություններ - գրականության մեջ

պրոյեկտում եռամիասնությամբ: Մեղքն ու ազատությունը պետք է դիտարկել և՝ իբրև բիբլիական, և՝ Էկզիստենցիալիստական կատեգորիա: Մեղքի գոյաբանական փիլիսոփայության ծանրության կենտրոնը Աստծո կամքին անվերապահորեն հնազանդվելու միջոցով փրկության հասնելու գաղափարն է: Ինչպես Կանտն է նշում, «կատեգորիկ իմպերատիվ»-ը ձգտում է դեպի բարոյականություն, որը բացառում է մեղքի գոյությունը, սակայն մեղքը հիվանդության նման փոխանցվում է սերնդեսերունդ: Աստված այնքան հեռու է թվում և Աստծո լրության պարագայում նոյնիսկ աղոթքը կորցնում է իր ուժը: Մեղքի էությունն ըմբռնելու համար անհրաժեշտ է տարբերակել հավատ և կրոն հասկացությունները: Եթե Աստված չկա, կամ իմ Աստված սիրում է ինձ, ի՞նչ կարիք կա մտածելու մեղքերի թողության կամ փրկության մասին: Եթե պատկերացնենք, որ Աստված չկա, կյանքը հասկանալի կդառնա և այլս կարիք չի լինի բացատրել դաժանության, վախի, տանջանքի, մեղքի զգացումները: Մյուս կողմից եթե շարունակենք զարգացնել Աստծո բացակայության գաղափարը կիանգենք ամենաթողության, իսկ վերջում աբսուրդի: Կրկնենք հանրահայտ «Աստված իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ» արտահայտությունը, որը նոյնիսկ մեծանուն կինոռեժիսոր Բերգմանի հոգևորական հերոսն է կրկնում: Այո՛, նոյնիսկ Աստծո սպասավորներն են կասկածում իրենց հավատի մեջ ու հաճախ քարոզ կարդում դատարկ եկեղեցում: Մեղքը հանգեցնում է ցափի ու տառապանքի և՝ ֆիզիկական, և՝ հոգևոր պլանում: Երբ Աստված ուղարկեց իր որդուն՝ մարդկանց մեղքերը «մաքրելու», Հիսուսը անմարդկային ֆիզիկական ցավերի մատնվեց, խաչվեց և հարություն առավ: Մեր կողքին շատերն ունենում են ավելի դաժան ֆիզիկական ցավեր, բայց ո՞չ իրենք են փրկվում, ո՞չ էլ մարդկության մեղքերն են նվազում: Հոգևոր պլանում, իհարկե, ցավերն ավելի դաժան են. մեղքի գիտակցումը հանգիստ չի տալիս: Ինչքան էլ մարդն ապաշխարում է «դեռ մի բիծ կա» (Զ. Զոյս, «Ուշիսես», 2014, էջ 16): Խոսելով մոդեռնիզմի նմուշային վեպի մասին հարկ է նշել ժամանակի սուրբեկտիվ ընկալման մասին («Ուշիսեսում» դեպքերն ընթանում են 24 ժամվա ընթացքում): 3 մաս, 18 դրվագ պատմվում է մարդու «թափառումների» մասին: Ուշիս բառը հենց Ոդիսականի լատիներեն տառադարձումն է, ինչը հուշում է, որ վեպն անվերջանալի շղթայի ու որոնումների պատմություն է: Բաք Մալիգանը հրավիրում է Սթիվն Շեդալուսին աշտարակի տանիք, որտեղ նրանք ապրում են և վերսից գծային ճանապարհորդությունը սկսվում և շարունակվում է Լեոպոլդ Բլումի թափառումներով: «Ուշիսես»-ի առաջին մասում՝ թեկմաքիա գլխում, խոսվում է աստվածաբանության մասին: Առաջին տեսարանից սկսած մեզ ուղեկցում են կրոնական սիմվոլները: Թասը, որպես ժամերգության գավաթ դառնում է պատարագի ծաղրանմանակության գործիքներից մեկը: Հայելին ու ածելին՝ խաչաձև դրված, ներկայացնում են սպանդի նշանը. հոգևորականին իբրև եղեռնագործ: Դեղին խալաթն

առանց գոտու խորհրդանշում է կրոնը. մտայնության մեջ դեղինը, ի տարբերություն ոսկեգույնի, բացասական հավելահմաստ ունի, իսկ «առանց գոտու»-ն մաքրության ուխտի զանցանքն է: Մթիվն Դեղալուար նախամարտիրոսն է: «անհեթեթ անուն ունես» արտահայտությունն արդեն ուրվագծում է կապը՝ Մթիվն (Ստեփանոս) - Իկարոս (Թելեմաքոս) Դեղլը (Դեղալոս) - հայր (Ուկիես): Մալիգանի անունը ևս «Ուկիսես»-ի լեյտմոտիվներից մեկն է: Այն կապված է Հին Կտակարանի Մաղաքիա մարգարեի հետ, ով կանխատեսում է Եղիայի հայտնությունը: Զեյմս Ջոյսը կերպարի հոգևոր աշխարհի պատկերման ժամանակ գործածում է ներքին մենախոսություն, կամ ինչպես գրաքննադատներն են անվանում «անհրական ուղղակի խոսք», որը բնորոշվում է կերպարի և պատմողի խոսքի փոխներթափականցմամբ: Այսօրինակ ներտեքստային հաղորդակցությունը ներկայանում է որպես գրական երկերի անտրոպոգենտրիկ էությունն արտացոլող բարդ երկխոսություն՝ գիտակցության միաձուլում այլ ձայների՝ պատմողի և այլ հերոսների հետ: Այլ կերպ ասած ներքին մենախոսությունը կարելի է դիտարկել որպես երկխոսություն հեղինակի և ընթերցողի միջև: Այս պարագայում ընթերցողը ոչ թե սպառող է, այլ լիիրավ համահեղինակ, քանզի ընթերցողը և հեղինակը գտնվում են ճանաչողական միևնույն դաշտում: Զոյսի «Ուկիսես»-ում տեղ գտած բարդ կառուցներն արտացոլում են հաճախ հանդիպող միահյուսումներ՝ կերպարի գիտակցության հոսքի միաձուլումը այլ ձայների՝ պատմողի և այլ կերպարների հետ: Այստեղից է ծագել բազմաձայնություն՝ պոլիֆոնիա եզրույթը: Զոյսը ներխուժեց համաշխարհային գրականություն՝ որպես գիտակցության հոսքի հիմնադիր: Նա Իոլանդիայի անկախությունը դրեց խզված կոնֆլիկտի կենտրոնում և գծային ճանապարհորդություն սկսեց: Նա կամովին հրաժարվեց իր հայրենիքից: Իոլանդիան դադարել էր մշակութային կենտրոն լինել, իսկ Զոյսը կարծում էր, որ միայն համընդհանուր ալիքի մեջ կարելի է ստեղծագործել: Զոյսի տրիլոգը հետևյալն է՝ Դուրլինցիներ, արվեստագետի ծնավորման ճանապարհը («Երիտասարդ նկարչի դիմանկարը») և անորոշությունը («Ուկիսես»): Ցանկացած արվեստագետի ճանապարհ աքսոր է, լրություն, արվեստ (խորամանկություն) և խաղ բառի հետ: Զոյսը սկիզբ դրեց սիեմավորման արվեստին (նախապես ծրագրավորած), որտեղ յուրաքանչյուր բառ ոերուս է: «Ուկիսես»-ում խորալային երաժշտություն է լսվում (գիշերանոթ), Դուրլինը կաթվածի է ենթարկված, մարդիկ ովքեր չկան ավելի կարևոր դեր են կատարում («Քույրեր», «Մեղյալներ»), քան ողջերը: Զոյսը ներկայացնում է դուրլինցիներին ըստ տարիքային սխեմայի՝ մանկություն, պատանեկություն, հաստևություն և հանրային կյանք: Քահանա-կրոն-ճիզվիտներ եռամիասնությունը վեպում ներկայացնում է Զոյսի կրոնական հայացքները: Զառայելու լեյտմոտիվը կազմում է շոյսյան ստեղծագործությունների պոիֆոնիայի մաս, իսկ պոլիֆանիան հենց մոդեռնիզմի առանձնահատկություններից մեկն է: Հեղինակի մի-

